Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1872
1485
1486

ՏԱՐԵՐՔ

# ԲԱՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ


ԶՈՐ ՅՕՐԻՆԵԱՑ

ՏԷՐ ՊՕՂՈՍ Վ. ԷՄՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԿԵՍԱՐԻՈՅ
ԿԱՊԱԴՈՎԿԱՑԻՈՑ


---

*Գնասցեն թագաւորք ի լոյս քո,*
*և հեթանոսք ի ծագել լուսոյ քոյ։*
Ես. Կ. 3։

---

## ՀԱՏՈՐ Բ.

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

---

9167

# ԲԱՐՈՅԱԿԱՆ
# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ
## ԲԱՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

---

ՅԼԹ. Ասացաք (Բ) ի սկզբան անդ՝ թէ Փիլիսոփայութիւնն է գիտութիւն ճշմարտի և բարւոյ։ Կատարեցաք Տերամբ զառաջին մասն, այն է զտեսական կամ զիմացական Փիլիսոփայութիւնն, որոյ առարկայն էր մի միայն ճշմարտութիւն. Մնայ մեզ այժմ զերկրորդն ճառել, այն է զբարոյն. քանզի ճանաչել զճշմարտութիւն միայն է, և առնել զբարին և խորշել ի չարէն՝ կամաց։ Յառաջնոյն զգիտութիւն, և յայսմանէ զառաքինութիւն, և յերկուցունց ի միասին զերջանկութիւն ստանալ ուսանիմք։ Նա ցուցանէ մեզ զմեզ, զԱրարիչն մեր. և սա ազգի ազգի առաքինութեանցն կիրառութեամբ՝ և զնոցայն հիմունս և զաղբիւրս ծանուցանելով, և զկանոնս և զպարտաւորութիւնս մարդկային բանական բնութեանն՝ ընդ միմեանս և ընդ Արարիչն ամենեցուն առաջի մարդկային կամաց ներկայ կացուցանելով՝ տայ մեզ ստանալ զԱստուած, որ է վախճանն ամենայն արարածոց։

Առաջէն ծանուցեալ զպաշտօն և զվախճան այսր գիտութեան, յայտ անտի լինի՝ թէ յո՛ր գերագոյն աստիճան օգտի կայ. քանզի արժանաւորութիւն գործոցն յարժանաւորութենէ անտի վախճանին ինմաստաւորի. որքան գերագոյն իցէ վախճանն, այնքան գերագոյն լինին և գործքն, որով ոք ժամանէ վախճանին. զի միջոցն սիրի և խնդրի ո՛չ վասն ինքեան, այլ վասն վախճանին. Նոյնպէս Բարոյական Գիտութեանս պաշտօն ըստ աստուածաբանութեանն՝ գոլով ուղղել զվարս և զբարս մարդկան,

ուսուցանելով զբարութիւն կամ զառաքինութիւն, և առաջի աչաց դնելով զօրէնս բնութեան և զարարածոյն ընդ մեծանս և զիւրաքանչիւրոյն ընդ Արարչին իւրեանց պարտս և պաշտօն, և հուսկ ուրեմն զյաւիտենական երջանկութիւն, խնդրէ զի խնդրելի է յաւիտենական երջանկութիւնն, սիրէ զի սիրելի է առաքինութիւնն, գերագոյն է, զի զնպատակն իւր զերջանկութիւն բարձեալ հանգուցանէ յէակն էից հանուրց գերագոյն։ Ուստի գերագոյն է և գիտութիւնն Բարոյական Իմաստասիրութեան, զոր քաջ սահմանեցին զոլ ընդհանրապէս [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible], և կամ [illegible] [illegible]։

ՅԺ. ԶԲարոյական Փիլիսոփայութիւնն վասն գլխաւոր երկուց առարկայից, որք մասունք են բարութեան, բաժանեմք յերկուս մասունս, այն է՝ ի [illegible] [illegible], և [illegible] [illegible]. զի Բարոյական Գիտութիւնն ճառէ զօրինաց և զկանոնաց՝ որով ուղղին կամ վարին բարք մարդկան և վարք. իսկ երկրորդ մասն՝ զ՚ի յօրինաց անտի բղխեալ զյարաբերութիւն պարտուց և պաշտամանց արարածոյն յինքեանս և առ Աստուած ծանուցեալ ուսուցանէ։ Յառաջինն խորհիմք զմարդոյն իբրև առանձինն հետազօտելով զվախճան նորա, զմարդկային գործս նորա, և զօրէնս բնութեան նորա. իսկ յերկրորդն՝ ոչ առանձնապէս, այլ յընկերակցութեան բազմաց նմին բնութենակցացն՝ որոնելով զառ միմեանս զյարաբերութիւն և զպարտաւորութիւն իրաւանց և պաշտամանց։

---

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ Ա.

### ՅԱՂԱԳՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՅԺԱ. ԶԲարոյական Գիտութենէն երրակի խօսիլ կարեմք. Նախ զայնմանէ՝ յորոյ շնորհս և ազդեցութիւն գնին և լինին մարդկային գործողութիւնք, այսինքն ըզվախճանէն. երկրորդ՝ զնոյն մարդկային գործողութեանց՝ և զբարոյականութենէ նոցին և զթէութեանց. երրորդ՝ զկանոնաց և զսկզբանց, որք ծնանին զպարտաւորութիւն մարդկային գործողութեանց, այն է՝ զբնական օրինաց։ Եւ յիրաւի, զառաջինն ունել պարտի տեղի այն որ առաջին է ի մտի, և զօրութեամբ և ազդեցութեամբ իւրով լինի որ ինչ լինին. արդ մարդն՝ որ է բանական կենդանի՝ միշտ գործէ վասն վախճանին, սկսանի սապեալ ի վախճանէն, և գործէ վասն վախճանին, և հասանէ նմին վախճանի։ Երկրորդ՝ ծանուցեալ մեր զբնութիւն այսր վախճանի, տեսցուք զգործսն զոր մարդս բանական կենդանի ի կիր առնու. և առ ի հասանել նաքիմբ վախճանին, ո՞րպիսի թէութեամբ, կամ յորո՞ց թէութեանց և սկզբամբք ընդունակ և բաւական լինին ժամանել վախճանին. երկրորդ՝ ուստի իցէ սկիզբն պարտաւորութեան մարդկային գործողութեանց։ Վասն որոյ յերիս գլուխս տրոհեմք զառաջին մասնդ. Նախ՝ զվախճանէ մարդկային գործողութեանց, երկրորդ՝ զմարդկային գործողութեանց և զբարոյականութենէ նոցա. երրորդ՝ զօրինաց կամ զկանոնաց և զսկզբանց, յորոց ծագի պարտաւորութիւն մարդկային գործոյ։

## ԳԼՈՒԽ Ա.

### ՑԱՂԱԳՍ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ՅԽԲ. Զայս գիտեմք և անտարակոյս եմք՝ թէ ամենայն որ բերի ի բարութիւնն ընդհանուր հարկաւորապէս, թէ՛ չարքն և թէ՛ բարիք ցանկան բարութեան ժամանել իմիք. բայց թշուառութիւն մարդկային տկարութեանն, զի ոչ գտանեն ուղղապէս ի մասնաւորն՝ թէ այս ինչ կամ այդ բարութիւն իցէ ճշմարտապէս բարութիւնն, զոր հարկաւ բնութեանն խնդրեմք, թէ ոչ. և յայնմ ազատաբար բերի։ Ուստի երբեմն ճառել կարեմք զվախճանէ մարդկային գործողութեանց. նախ՝ թէ է՞ ի մարդն բնական և հարկաւոր զօրութիւն տարերելոյ ի բարին ընդհանուր. երկրորդ՝ արարած բարութիւնք վախճան են մարդկային գործոց երկրորդականք, բայց ոչ վերջին վախճան. երրորդ՝ առարկայ վերջին վախճանի մարդոյ կամ մարդկային երջանկութեան է մի միայն գերագոյն բարին, այն է՝ Աստուած. զորս առանձին յօդուածովք ցուցցուք։

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՑԱՂԱԳՍ ԲՆԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԿԱՒ ՏԱՐԵՐԵԼՈՑ ՅԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՈՒԹԻՒՆ ԻԲՐԵՒ Ի ՎԱԽՃԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ՅԽԳ. Զորօրինակ միտք մարդոյ հարկաւ բերի՝ այն է՝ ներքին զօրութեամբ բնական բնութեանն՝ ի գիւտ ճշմարտի, նոյն օրինակ մարդկային կամք նովին ներքին բնութեանն զօրութեամբ բերի յառաջումն բարութեան ընդհանրապէս։ Եւ չկարեմք ասել զնա, և փոխարկել իմիք առանց սեպանելոյ զառարկայն. և զանէ ընկենլոյ



ի նմա զճշմարտին բարութեան. այլ թէ ոչ հետևէր թէ չարն ... չար բնականապէս խնդրի ի կամաց, որ է ընդդէմ նոյն իսկ Արարչին նախախնամութեան։ Քանզի եթէ հարցանիցես զանզգամն անգամ՝ առ ինչ՝ հետևիս այդմիկ չարութեան, պատասխանեսցէ քեզ. այո՛ չար, բայց ինձ բարի երևի առ և այժմ։ Երկրորդ պատճառն բնականապէս տարերելոյ և փոխարկելոյ բարութեան՝ հաստատեալ կայ ի նոյն մարդկային բնութիւնն. քանզի կայ և մնայ ի մեր բնութեան անյագ ինն ինչ և փափաք ի կատարելագոյն նկրտելոյ, և ճոխանալոյ բարութեամբ։ Ուստի որպէս հարկաւորապէս և մեթաֆիզիքապէս բնութեանս ընդունակութիւն առ կատարելութիւն աստիճան քան զաստիճան հաստատեալ կայ, կացցէ և մնասցէ ուրեմն ընդ իւր պատճառին և անյագ ուրդ ինչ կատարելութեան։ Քանզի զայդ յատկութիւն մարդկային բնութեան, զոր ... առաւանեմք, և ոչ Աստուած իսկ իւրով ամենակար զօրութեամբն բառնալ կարէ. դարձեալ պակասելով մարդկային բնութեանն ի բաղում բարիս, անձկոյ և անձկոյ յառաջումն այդր բարութեան՝ և ի չհասանելն ոչ չիջանի այն, այլ յանձկութիւն և ի տանջանս մնայ, և որ յանձկութեան կայ և ի տանջանս չկարէ կամովին կալ և հաճութեամբ, այլ բնութեամբ և պարտաւորութեամբ. ուրեմն մարդկային բնութիւնն չկարէ չկամիլ զընդհանուր բարութիւնն, յաւ որում ոչ որ կամի ապերջանիկ կալ, մերթ կարէ երջանկութեամբ կալ։ Դարձեալ յԱստուածուստ անտի է հակամիտութիւնն այն բնական ի բարութիւնն, քանզի առեալ Աստուած զաշխարհ ի ժառանգութիւն իւր. թէ ոչ Արարչին արկեալ էր ի սիրտ ամենեցուն զբնական և զանդադար ի բարութիւն ինչ և զփափագ, ապաքէն և ոչ ումեք յարաժամոյ փոյթ լինէր հասանել վախճանին, և ոչ իսկ իմաստութեամբ յօրինեալ համարէր զմարդկային բնութիւն, տալով նմա գործիս անբաւականս զիմելոյ ի սեփական վախճանն։ Եւ վիճակն բնական կենդանեաց յետնագոյն լինէր քան զանասնոցն, քանզի այսս անբանութեամբն

և մի միայն զգայութեամբն հաճոյն հասանեն վախճանին իւրեանց, և մարդս գերագոյնն ամենայն կենդանեաց զրկէր մտօքն՝ և բանիւն ի բուն վախճանէն. ուրեմն ճշմարիտ է՝ թէ ի մարդկային բնութեան կայ բնական և աննահանջելի իմն առ բարութիւնն հակումն, իղձ և փափագ: Բայց ո՞րպիսի բարութիւն իցէ այդ, արարած բարութիւն թէ անստեղծ բարութիւն՝ տեսցուք ի

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ԹԷ ԲԱՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԱՐԱԾՔ ԿԱՐԵՆ ԼԻՆԵԼ ԸՍՏ ՄԱՍԻՆ ՄԻԱՅՆ ՎԱԽՃԱՆ, ԵՒ ՈՉ ԹԷ ՃՇՄԱՐԻՏ ԱՌԱՐԿԱՅ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ, ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ՎԱԽՃԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ՅԽԴ. Աւ ի քաջ ճանաչել թէ զի՛նչ բարութիւն իմն կարէ լինել առարկայ մարդկային երջանկութեան, կամ վերջին վախճան մարդկային գործողութեանց, գիտասցուք զթէութիւնս և զյատկութիւնս, որովք յարդարիլ պարտի բարութիւնդ այդ, և լինել իսկապէս առարկայ մարդկային երջանկութեան: Նախ՝ պարտ է զի բարութիւնդ այդ լիցի անփոփոխելի, երկրորդ՝ զի լիցի հասարակ այսինքն է ընդհանուր ամենայն մարդկային ազգին, և կատարելապէս մարդկային կամաց. երրորդ՝ զի լիցի հաստատուն, այն է անանց, և [illegible], և [illegible]: Նախ՝ պարտի անփոփոխ լինել. քանզի բարութիւնն՝ որ փոփոխական է չկարէ լինել առարկայ երջանկութեան, ասէինք՝ զի փոփոխի, և երջանկութիւնն փոփոխելի ո՛չ է երջանկութիւն, քանզի բարութիւնն անփոփոխելի լաւագոյն է քան զփոփոխելին: Երկրորդ թէութիւնն՝ զի հասարակ և ընդհանուր լիցի ամենայն ազգաց, և կարօտութեանց բնական հոգւոյ. քանզի եթէ ո՛չ յագուրդ մատուցանէր ամենայն մարդկային ազգաց, այլ միայն ոմանց ոմանք անյագ և ոմանք չառաւելոյք, ապաքէն



ըստ մասին հանգչէր կամք և բնութիւն մարդոյ, և ո՛չ բովանդակապէս. բայց չէ՛ երջանկութիւն՝ որ ըստ մասին է երջանիկ և ըստ այլ մասին ապերջանիկ: Քանզի կատարեալ պարտ է լինել և ամենայն բարեմասնութեամբ յարդարեալ առարկայն երջանկութեան: Երրորդ՝ հաստատուն և [illegible] և անանց լինել պարտ է առարկայն երջանկութեան. քանզի եթէ անցաւոր և ժամանակաւոր լինէր, միշտ տանջէին հոգիք մեր խիթալով, եթէ եկեսցէ ժամանակ զի բարութիւնն՝ յորում այժմ կամք և վայելեմք, յետոյ կորիցէ, և զրկեալ գտանիցիմք ի նմանէ, և ահա տարակոյսդ այդ տանջեսցէ զոգին, և լաւագոյն էր յաւէտ անհմալ երջանկութեանն քան առեալ զայն՝ և զրկիլ ի նմանէ: Արդ եդեալ զնշանսդ և զթէութիւնսդ առարկային կատարեալ երջանկութեան՝ գամք այժմ ի ցոյց առաջարկութեանն՝

*Թէ յարարած բարեաց ո՛չ մի իցէ և ո՛չ [illegible] իցէ բարին [illegible] առարկայ լինել մարդկային վերջին վախճան, կամ կատարեալ երջանկութեան:*

ՅԽԵ. Նախ՝ բարութիւնք հոգւոյ չկարեն առարկայ լինել, քանզի զօրինակ իմաստութիւնն, գիտութիւնն, են, և առաքինութեանցն ամենայն տեսակք չառնեն զմարդն երջանիկ, քանզի առաքինութիւնք են առիթք և միջոցք, որք ցուցանեն զվարձս, և ինքեանք ըստ վկայութեան խղճի մտացս ո՛չ երբէք երջանիկս առնեն զմարդն, և որքան առաքինութեամբք հոգւոյ և բարեմասնութեամբ զարդարեալ իցեն սուրբք և երանելիքն, միշտ և յաւէտ փափագին ելանել յաշխարհէս, և ժամանել ի կատարելութեանց աղբիւրն և բովանդակութիւն՝ այսինքն է յԱստուած, հզօր, և լրումն ամենայն բարեաց: Երկրորդ՝ միշտ պակասէր մարդն առաքինութեամբ իւիք. քանզի ամենեքին յանհնարիցն է մարդոյ հասանել ի լրումն ամենայն առաքինութեանց, նա՛ զի առաքինութիւնքդ այդորիկ յարատև ի վտանգի կան կորստեան, և բազում վտանգօք առացեալ լինին՝ և յական թօթափել և խորհրդով միով չարութեան կորնչին, և ո՛չ լինին ամենայն բարութիւնք նոքա: Յաւել՛ և զայս զի

առաքինութեանցդ բազմութիւնք չկարեն կալ ընդ այլ հոգւոյ բարութիւնսդ. զի որ իմաստութեանն պարապի և գիտութեան առ բազում գոգցես զրկիլ պարտաւորի յանձկալի կրթութենէ խոնարհութեան, զի գիտութիւնն հպարտացուցանէ: Տի՛նա և բարութիւնքդ խոկ հոգւոյ՝ զորօրինակ իմաստութիւն և գիտութիւնն չկարեն կալ ընդ բարութիւնսդ մարմնոյ, այն է կենաց զօրեղութեան, առողջութեան, գեղեցկութեան, են են, որք զմիմեանս եղծանեն, քանզի բնականապէս որ պարապի ուսմանց և գիտութեանց, թէ և հոգւով զարգանայ ի պէսպէս գիտութիւնս, բայց նուազի զօրութեամբ, և տկարութեամբ լնու մարմնոյ, ի պէսպէս խօթութիւնս անկանի: Երրորդ՝ բարութիւնք այդոցիկ մարմնոյ՝ չկարեն լինել առարկայ կամ վերջին վախճան մարդոյ, քանզի թէ-ութիւնքն վերոյիշեալք կատարեալ երջանկութեան պակասին ինոսա, ոչ անփոփոխելի են, ոչ ամենայնի լի և մշտնջենաւոր. զորօրինակ զօրութիւն, առողջութիւն, գեղեցկութիւն, որք յիւրաքանչիւր ենթակայս գտանելով հոգւոյն, ի պատրանս ծառայեն և ի կորուստ բազմաց, որ զաշխարհ ամենայն ապականէ: Չորրորդ՝ յաւե՛լ և զգայական բարութիւնն, զհաճոյս մարմնոյ, և զհեշտութիւնս, որք թէ և իբրև բարութիւնք զգայութեանց մարմնոյ նիւթականապէս բարիք. բայց առ ընդդէմ լինելոյն վերին գերագոյն մասին՝ այն է ուղիղ սկզբանց մտաց հոգւոյն՝ մինն միւսոյն հակառակ կայ. նա՛ զի ի մի և նոյն ենթակայ ատայայոյն այլայեալ բարութիւնք միմեանց հակառակք, յորոց ոմանք բարութիւնք հոգւոյ, և ոմանք հաճոյք մարմնոյ, եղծիչք միմեանց յարակայ պատերազմաւ և ողորմամբ: Վասն որոյ ոչ կարելով ուրումն յառաջնոյն առնել, դուէր խախանձելով յերկնից՝ թէ ո՞ ազատեսցէ զիս ի կապանաց աահ մարմնոյս: Որեմն բայց ի բարութեանց հոգւոյ, և մարմնին իւրն չկարէ առարկայ լինել կատարեալ երջանկութեան: Բայց և ոչ բաղդի բարութիւնքդ, մեծութիւնք, ճոխութիւնք, են, կարեն տալ մեզ զերջանկութիւն, զի վերին ճշմարիտ երջանկութեանն թէութիւնք, և ոչ միով



իւիք յարմարին նոքա. ո՞ իցէ արդեօք այնքան տխմար, որ յանդգնիցի հաստատել զմեծութիւն աշխարհի, զճոխութիւն, են, անփոփոխելի. ո՞ ոք յանդգնիցի կոչել զնոսա կատարեալս, ո՞ ոք մշտնջենաւորս. ո՛չ ապաքէն հոսեն անցանեն իբրև զջուր, և զի՞նչ այնքան դիւրաբեկ և կորստական քան զճոխութիւն և զմեծութիւնն առացեալ, մինչև ասել զնոյանէ ումեմն իմաստնագունին ի վերջին կէտ կենացն, ունայնութիւն ունայնութեան, այն է՝ ոչ ինչ յաւիտենական: Յաւե՛լ հուսկ ուրեմն, և ոչ արտաքին բարիք հոգւոյ, այն է՝ փառք, կամ անունն և պատիւ յայլոյն ումեք յաւելեալ, քանզի փառքն չէ՛ այլ ինչ, բայց միայն համբաւն, կամ ծանօթութիւն ուրուք գովասանութեան տարածեալ, և պատիւն անգամ է վկայութիւն այլոյն զբարութենէ ուրուք: Ուստի յայլոց գովով կոչի յաւէտ պատիւ պատուողին և ոչ պատուելոյն. կամ ըստ Թեոտրոսի՝ պատիւն է ի պատուողն և ոչ ի պատուելոյն, երկաքանչիւրոյն անգամ չյարմարին յատկութիւնք ճշմարիտ երջանկութեանն, և արտաքին գոլով բարիք՝ ոչ զօրեն հոգւոյ մարդոյն. զի ըստ բանի ուրումն, ամենայն մարդ խոտ է, և փառք մարդոյ ծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ, և ծաղիկն թօթափեցաւ: Եւ քանի՛ քանիք են ի սակաւ ժամանակի, որք յերէկն փառաւորեալք և պատուեալք՝ այսօր ի խոր թախծութեան յերեսաց անկեալք և անպատիւք: Ապաքէն՝ յօգերդութեանց և յեղերերգութեանց ազգաց և ազանց ուսանիմք զկերպն փառաց և զաստիճան բարձրութեան իւրաքանչիւրոյն. որոց այսօր անունն միայն կայ, և յիշատակ ի հնախօսութիւնս և եթ, և ոչ իրազէս. անցանեն ամենայն, մի՛ երկբայիք, վայելչութիւնք աշխարհի:

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Յոգ. Առարկայ մարդկային երջանկութեան՝ ասեն, չէ՛ պարտ զի կատարեալ իցէ ամենայնիւ, այն է անսահման. քանզի սահմանեալ բնութեան, բաւական է սահման-

եալ բարութիւնն ։ Բ. Առաքինութիւնք հոգւոյ անփոփոխ կան, մնան և մշտնջենաւոր. ուրեմն չեն պէտք որոնել զայն բարութիւն յաւարկայ երջանկութեան արտաքոյ արարած բարութեան ։

Առ Ա. ուրանամ զնախընթացդ. առ փաստն զանազանեմ. սահմանեալ բնութեանն բաւական է սահմանեալ բարութիւն արարած՝ ուրանամ. անստեղծ՝ զարձեալ զանազանեմ. սահմանեալ բարութիւն, այն է մանաւոր և բաւական ըղձից փափագմանց մերոյ՝ ընդունիմ. սահմանեալ ի նոյն էութենէ անստեղծ բարութեան՝ ուրանամ ։ Ի բացայայտութիւն որոց ասեմք, թէ զերկուս չփոթեն ստոյգն ընդ միմեանս, որ ընդդէմ մտացն սկըզբանց լինէր. քանզի այլ է՝ թէ մարդկային սահմանեալ բնութեանն կարողութիւն մանաւորապէս միայն կարէ ստանալ և վայելել յաւարկայն ճշմարիտ երջանկութեան (զոր Աստուած գոլ տիրապէս տեսցուք զկնի), և այլ ինչ է ասել՝ թէ մանաւոր որ և իցէ արարած բարութիւն կարէ գոլ աւարկայ երջանկութեան ։ Ապաքէն թէև ի թէութենէ մարդկային սահմանեալ բնութեան է անընդունակ լինել պարփակելոյ կամ տեսանելոյ զբովանդակ էութիւնն աստուածային, որ է աւարկայ երջանկութեան մարդոյ, այլ մանաւորապէս՝ կամ ըստ մասին կարողութեան բնութեան իւրոյ. բայց աստ ոչ հետևի՝ թէ ամենայն արարած բարութիւնք կարեն աւարկայ լինել մարդկային երջանկութեան. քանզի սոքա չեն կատարեալք՝ անփոփոխք, մշտնջենականք, ընդունակք լնլոյ զամենայն իղձ և զփափաք մարդկային բնութեան, որպէս տեսաք ի վերոյ, այլ լցուցիչն ամենայն փափագմանց է աղբիւրն ամենայն բարեաց ։ Ուստի այլ ինչ է՝ թէ մարդն ըստ մասին կարէ վայելել զԱստուած, և այլ թէ մանաւոր բարութիւնք արարածք կարեն լինել աւարկայ մարդկային երջանկութեան ։ Բայց և ի վերայ այսր ամենայնի ոչ ուրանամք՝ թէ այնու զի արարած բարութիւնք չկարեն լինել վերջին վախճան մարդկային գործողութեանց, չկարեն լինել և մանաւոր վախճան. քանզի վախճանքդ այ-



գործիկ՝ իսկապէս խօսելով՝ չեն վախճան, այլ գործիք, կամ յաւէտ [illegible] [illegible] գլխաւոր և վերջին վախճանին. այսպէս խնդրեմք զգեղօրէս վասն առողջութեան կենաց, և խնդրեմք զկեանս վասն գործելոյ զբարիս և զառաքինութիւնս, և զառաքինութիւնս՝ վասն ժամանելոյ կատարեալ երջանկութեան ։

Առ Բ. ասեմ. անփոփոխ կան ի վերացեալն, ըստ որում առաքինութիւն՝ ընդունիմ. ի թանձրացեալն՝ ուրանամ. առ որ ասեմ. այլ է ասել՝ թէ էութիւն և ճշմարտութիւն, և կամ բնութիւն առաքինութեանց անփոփոխ կան, և մշտնջենաւոր է [illegible], և այլ յենթակայն՝ կամ է [illegible] ։ Այո՛ մեք որոնեմք զառաքինութիւնս ի թանձրացեալն, այն է՝ յենթակայս իւրեանց. քանի՛ քանիք ի մարդկանէ առաքինիք, և ապա ամենայն յառութեամբ լիք ։ Նա՛ զի առաքինութիւնն չէ այլ ինչ, բայց միայն կարողութիւնն ուղղապէս և համեստութեամբ գործելոյ ըստ ուղիղ կարգի բնութեանն և մտացն. ուրեմն ունին առաքինութիւնք առ այլ ինչ, այն է կարգ բնութեան՝ զյարաբերութիւն, որովք ոք հասանէ վախճանին ։ Դարձեալ՝ առաքինութեանցն բնութիւնք ո՛չ յագուրդ մատուցանեն մարդկային ըղձիցն և փափաքմանց, այլ զուրկ մնան յամենայն վարձուց ինքնին, և առաքինութեամբք միմիայն կարեմք հասանել ի վախճանն մեր. բայց ո՛չ թէ նոքա վախճան են, ապա թէ ո՛չ ամենայն առաքինիք երջանիկք լինէին, և քանի՛օն առաքինեացն վշտիւք և անձկութեամբ և ազգի ազգի տառապանօք և ցաւօք լի են, և հեծեն, և անձկան աւուրք յառաջ ելանել յաստեացս, և հասանել նոցին առաքինութեանցն անթարշամ պսակաց ։ Եւ սորին վասն ասէր Կիկերոն՝ հոգին երջանիկ լինել միայն իսկապէս յետ քակտելոյ յօդուածոց մարմնոյս ի հոգւոյ անտի կարէ. և նոյնպէս Պիւթագորեանք, որք խանգարեալ զուղիղ սկզբունս բնական լուսոյն ի խաւարն հեթանոսութեան, համարեցան՝ թէ ի պատիժ հոգւոցն յանցուածոց կանուխ ժամանակաւ գործելեաց Ստեղծիչն արկեալ իցէ զնոսա մի մի յիւրաքանչիւր մարմինս իբրև ի

բանի. և բարոյապէս ոչխար զոչխարն կոչեն։ Զայս ես գիտել պարտ է՝ թէ առաքինութիւնքն, որպէս համեստութիւն, զգաստութիւն կամ արիութիւն, խոհեմութիւն, արդարութիւն՝ սերելի են ոչ միայն վասն զի գործիք են երջանկութեան հոգւոյ, այլ և զի ըստ որում բարութիւն իմն՝ ունին իւրովին իւրաքանչիւրն զյարմարութիւն ինչ ընդ բնութեան այդորիկ ընդհանուր բարութեան համաձայն գոլով ուղիղ կարգի և կանոնի բնութեան և բանի։ Արդ եթէ նոյն բարութիւնն, այնու բարի է, զի ծառայէ վերջին վախճանի իւրում, ո՞րքան առաւել նորին յարմարութիւնն բարութիւն լիցի ծառայելով իւրումն վախճանի։ Ուրեմն առաքինութիւնք են։

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

## ՅԱՂԱԳՍ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ

Ցոյց. Բազումք բազում տային զմարդկային երջանկութեանն առարկայ, և տեսութեան տիրապէս. այլք զհոգւոյ բարութիւնս, այլք զմարմնոյն միայն, այլք զբովանդակութիւն կամ զգումարն երկոցունց դասուցին զոլ առարկայ մարդկային երջանկութեան։ Նախ՝ սխալին առաջնոցն կարծիք. քանզի տեսաք ի վերոյ՝ թէ բարութիւնք հոգեղէնք՝ թէ առաքինութիւնն, և թէ՝ իմաստութիւն և գիտութիւնն, են, չկարեն լինել երջանկութեան առարկայ, քանզի ոչ կարեն յագուրդ մատուցանել մարդկային կարօտութեանց և փափաքանաց ամենայնիւ։ Յայսոցիկ առաջինն եղև Անթիսթենէս և Զենոն գլուխ Ստոյիկեանց։ Երկրորդացն կարծիք, ոչ միայն չեն մարդկային մտաց բերք, այլ և նախատինք նոցա՝ որք ըղմարմնոյ զգայութիւնս կամ զհաճոյս եդին՝ իբրև [illegible] [illegible], զորոց զանտեղութիւն և զրնաւին անյարմարութիւն տեսաք նմանապէս ի վերոյ։ Այսոցիկ առաջին առեն զոլ զԷպիկուրան և նմին հետևողք Էպիկուրեանք. բազումք ասեն թէ Էպիկուրեան հաճոյից անուամբ իմացեալ լիցի զառաքինութիւնս, և այլք ասեն ընդ Սրբոյն Թովմայի ասեն՝ թէ ի շնորհս զգայական հաճոյից մարմնոյ մեծարեալ լինի զառաքինութիւնս. զի բազում հաճոյք կախին ըստ իմիք յառաքինութենէ հոգւոյն, զորօրինակ յարդարութենէ և ի պատուիրանապահութենէ ծնանի հանդարտութիւն մարմնոյ և ազատութիւն հեշտութեանց, ապա թէ ոչ օրինազանցն պատմէր, և յայնժամ մարմնոյն հաճոյքն՝ զորօրինակ ի բանտի և ընդ պատուհասիւ, ոչ երբէք ըստ արժանւոյն գործադրէին։ Բայց են և ոմանք, որք ասացին թէ Էպիկուրոս իսկապէս մեծարեալ լինի զառաքինութիւնն, և հետևողք նորին խանգարեալ զիմաստ վարդապետին իւրեանց՝ զառաքինութիւնն փոխեցին ի պղծութիւն մարմնոյ և յորկրամոլութիւն։ Երրորդ՝ և ոչ իսկ բովանդակութիւն երկաքանչիւրոցն բարեաց՝ հոգւոյ և մարմնոյ՝ կացուցանեն զգերագոյն բարին, կամ զառարկայ մարդկային երջանկութեան, վասն մի և նոյն պատճառաց, որոյ վարդապետութեանն հետևեալ եղև Արիստոտէլ, բայց մերձաւորագոյնս մատեաւ առ ճշմարտութիւնս մեծն և ցաւալին Պղատոն՝ որ եդ զերջանկութիւնն [illegible] կամ [illegible]։ Բայց նախ՝ զի՞նչ լինի գերագոյնդ այդ բարի, ոչ յայտնեաց. երկրորդ՝ գիտաց անգամ թէ Աստուած լինի ըստ նորին մտաց, սակայն տեսութիւնն Աստուծոյ զուրկ յատացմանէ նորա և ի վայելելոյ գնա՝ լինել երջանկութիւն, բայց մերկ և աղքատին. ո՞ւր գիտաք՝ զի յայտնապէս ասէ Կիկերոն զնմանէ ի Գիրս Պաշտամանց, թէ իմաստասէրն իմանայր զիմաստութիւնն. քանզի ասէ Պղատոն զիմաստութենէ. «որ եթէ զանձն իւր ցուցանէր մարդկան, զամենեցուն զսէրս յինքն յափշտակեալ քարշէր»։ ուստի սխալեցաւ և նա. քանզի իսկապէս երջանկութիւնն է ստացումն գերագոյն բարութեան՝ որ լնու զամենայն կարօտութիւնս՝ զիղձ, և զփափագ մարդոյ, և կատարելագործէ զմարդն՝ ըստ իւրումն մարդկային կարողութեան, յորմէ ստացմանէ

ծայր հանգիստ և խաղաղութիւն յաւիտենական, և ցնծութիւն հոգւոյ, և ի կորուսանել որոյ՝ տրտմութիւն, վրդովումն և անհանգիստ։ Ուստի մի միայն առարկայ մարդկային երջանկութեան, որ է վերջին վախճան մարդկային փափաքանաց և կարօտութեանց՝ է Աստուած, ըստ որում ինքնին բարի, և վերջին վախճան մարդոյ։ Վասն որոյ այսպէս յարդարեալ զվիճակ և զիմաստ բնաբանիս, գամք ի ցոյց առաջարկութեանս՝

Թէ միայն Աստուած է առարկայ մարդկային երջանկութեան։

ՑՈՅՑ. Ապաքէն յայտ է՝ թէ առարկայ երջանկութեանն չկարեն լինել արարած բարութիւնք. հարկաւորապէս աստի հետեւի, թէ անստեղծ բարութիւնն եւեթ լինել կարէ առարկայ մարդկային երջանկութեան. քանզի չի՛ք այլ երրորդ իմն տեսակ բարութեան բաց յերկուցն։ Երկրորդ՝ ամենայն թէութիւնք հարկաւորք՝ վասն կացուցանելոյ զառարկայ ճշմարիտ երջանկութեան՝ յԱստուած միայն գտանին տիրապէս. քանզի Աստուած է անփոփոխելի, անեղ, անբաւ, բարութիւն կատարեալ. քանզի է ինքնին բարութիւն, աղբիւր ամենայն բարութեանց։ Երրորդ՝ մշտնջենաւոր, քանզի ո՛չ կորիցէ և ո՛չ ունիցի վախճան բարութիւն նորա. և զայս պահանջեն մարդկային բնութեանն կարօտութիւնք, իղձ և փափաք։ Միով բանիւ՝ երկու գլխաւոր կատարելութիւնք մարդոյ, այն է՝ միտք և կամք լիովին լրանան և կատարին այսու առարկայիւ. միտք ի յուզել և ի գտանել զգերագոյն ճշմարտութիւն, զաղբիւրն ամենայն ճշմարտութեանց՝ հանգչին իսպառ. քանզի ժամանեն յայն՝ յորմէ են, և ի նմանութիւն և ի համաձայնութիւն որոյ են ամենայն իմանալիքն և ճշմարիտ էակքն և ճշմարտութիւնք. վասն որոյ ո՛չ մնայ կարօտեալ կամ պակասեալ այլով իւիք, լցեալ լինին ամենայնիւ ամենայն կարողութիւնք ճանաչելոյ զայլեայլ ճշմարտութիւնս. քանզի գտանէ զաղբիւրն այլեայլ ճշմարտութեանց ընդ նմա միացելոց, դադարին փափագք գիտելոյ, կամ բանիւ զայս ճշմարտութիւն ի ծանօթագունիցն անտի արտայայտելոյ.



դէմ յանդիման տեսցէ հոգին բանական, այն է հայեցուածով՝ զամենայն ճշմարտութիւն ի մի միայնն Աստուած, և փոքր ի մասնէս խափանեսցի (*). ո՛չ եւս խառն կամ ստուերաւն ծանիցէ զճշմարտութիւն, և գիտութեամբ՝ որ բերի ի միջոցն, այլ ակն յանդիման իմաստութեամբ՝ որ բերի ի վախճանն։ Ըստ սմին օրինակի և կամք մարդոյ գտանելով զԱստուած, հանգիցէ յԱստուած՝ յաղբիւրն ամենայն բարութեանց, և գտանելով զԱստուած՝ դադարեսցին և յագեսցին փափաք և անձկանք. ըստ որում երգեաց ցնծութեամբ ի յառաջնոց ոմն հոգւով, «յագեցայց յերեւել փառաց քոց (**)». ուր յերկրի աստ սահմանեալ գոլով ամենայն արարած բարութեանց, և զուրկ ամենեւին յամենայն երջանկութեանն թէութենէ, չկարեն յագուրդ մատուցանել մարդկային կարօտութեանց։ Իսկ անսահման բարութիւնն լցուցէ և հանգուցէ բնաւին զամենայն իղձս փափագանաց հոգւոյն, և տացեալ զգերագոյն բարութիւն, և կամ հասեալ ի կատարն կատարելութեան՝ ըստ կարի ընդունակութեան սահմանեալ բնութեանն՝ երջանիկ կայ, և խայտայ անփոփոխելի, գերագոյն և մշտնջենաւոր երջանկութեամբն զոր ո՛չ ոք յերկրի արարած բարութեանց պարգեւել կարէ հոգեղէն անապական և անմահ բնութեանն, եթէ ո՛չ մի միայնն Աստուած։ ՅԱստուած վերանալ տոփայեն զմեզ բնական զգայութիւնն և հակամիտութիւնք այսր անմահ հոգւոյ. յԱստուած հասանել ամենայն կատարելութիւնք հոգւոյ, յԱստուած հանգչիլ ամենայն արարած բարութիւնք հոգւոյ և մարմնոյ, բարութիւնք՝ հաստատիմ հրեշտակք, աղբերականք մշտահոսք և անժխտելի ապացոյցք յաւիտենական աղբերն իւրեանց գոյութեան։ Խանգարեալ զայս առարկայ և փոփոխեալ՝ խանգարի նովաւ և ամենայն մարդկային կենցաղոյս կարգ և օրէնք. և եղեալ միանգամ

(*) Ա. Կորնթ. ԺԳ. 10։
(**) Սաղմ. ԺԶ. 15։

վախճանին ի փիլիսոփայութեան՝ գնին և ամենայն ինչ նովաւ․ զորմէ Կիկերոն (*)․ «Գերագոյն բարին առէ՝ եթէ ուրացի, ուրացին հարկիւ և հանգամանք կենաց, յորմէ այդ բան վրիպանք, զի յո՞ր նաւահանգիստ դիմել պարտ իցէ, գիտել ոչ զօրեն․ բայց ծանուցեալ վախճանին իրաց միանգամ՝, և ի միտ առեալ զինչ լինելն վախճանին բարեաց և չարեաց կենացն, անդէն և անդ գտաւ չափ և հաստատութիւն ամենայն պաշտամանց»։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՅԱԹ․ Առարկեն Սոփեստեանք․ այն ինչ է առարկայ երջանկութեան, որ սիրի վասն իւրոյ բնութեան, և է վախճան գործողութեան մարդկան․ իսկ արդ առաքինութիւնք սիրին՝ վասն զի սիրելի են բնութեամբ, և զի սիրին՝ վախճան լինին սիրելոյ գործողութեան մարդկան․ ուրեմն։ Բ․ Առարկեն Եպիկուրեանք ընդ Զգայականացն Հօպպէզի, Հէլվէտիոսի, Բօպինէթի, են․ հաճոյք մարմնոյ՝ հեշտութիւնն, են․ փափաքին վասն իւրեանց հաճելի բնութեանն, և չառանց նովիմբ կատարելութիւն մարդոյ․ ուրեմն։ Գ․ Յաւելու Բուֆֆէնտորֆ․ իրաւունք բնութեան խնդրեն զբարութիւնն՝ իբրև վախճան իւրեանց ներկայ բնութեան․ իսկ արդ առարկայդ այդ՝ գերագոյն, բարի, բաց յանհամեմատութենէն ընդ ենթակային, նաև ի վեր է քան զբնութեան իրաւունս․ ուրեմն։

Առ Ա․ ասեմ՝ զանազանելով զմեծագոյնդ․ եթէ սիրի բացարձակապէս վասն իւրոյ բնութեան՝ ընդունիմ, և է վախճան բացարձակապէս վերջին՝ ընդունիմ․ իսկ եթէ սիրի վասն իւրոյ բնութեան առնչապէս կամ յարաբերութեամբ՝ և ի սէր այլոյ՝ ուրանամ։ Եւ նմանապէս է վախճան, բայց ոչ վերջին, այլ երկրորդական կամ պատահական յարաբերութեամբ վերջին վախճանին՝ ուրանամ․ առ փոքրն նոյնպէս զանազանեմ․ առաքինութիւնք

(*) Յաղագս Վախճանաց․ Գիրք Ե։



սիրին բացարձակապէս, քանզի իբրև մասունք են և հաղորդութիւնք և յարմարութիւնք աստուածային էութեան, անբաժանելի են յաստուածայնոց անտի էութենէ և յարմարութենէ՝ ընդունիմ․ սիրին բացարձակապէս, իբրև անկախ ի գերագոյն բարութենէ աստուածային էութեանն՝ ուրանամ․ և ուրացեալ զհետևութիւնն՝ ասեմ․ այն ինչ սիրի վասն իւրոյ բնութեան, որ կայ զօրութեամբ իւրոյ բնութեանն ինքնին յինքենէ հարկաւոր գոլով։ Ամենայն ճշմարտութիւն և բարութիւն յԱստուծոյ անտի են իբրև նմանութիւնք աստուածային էութեանն, և նորայն կատարեալ յարմարութիւնք․ իսկ առաքինութիւնքն են զօրութիւնք հոգւոյ կամ կարգաւորութիւն ըստ կարգի բնութեան ուղիղ գործելոյ, ըստ որում ենթադրեն զայլ բարութիւն, այն է զկարգ բնութեանն, չկարեն ինքնին բացարձակապէս սիրելի լինել, այլ մի միայն սիրելի են՝ քանզի են յարմարութիւնք ընդ կարգի բնութեանն․ և զի բնութիւնն և կարգ բնութեանն ճշմարտագոյն գտանի յաստուածային էութեան քան ի նոյն բնութեանն, հետևի՝ թէ ոչ սիրին առաքինութիւնք բացարձակապէս, այլ միայն յարաբերութեամբ առ գերագոյն էութիւնն, որ է աստուածային էութիւն․ ոչ զի ինքնին են առաքինութիւնք սիրելիք, նմին իրի սիրին, այլ նմին իրի սիրին՝ զի են գործողութիւնք յարմարք աստուածային էութեանն և կարգի բնութեան․ և քանզի մինչև ցյաւիտեան սիրելի է էութիւնն աստուածային, նմին իրի սիրելի են առաքինութիւնք ընդ կարգի բնութեան՝ իբր նորին էութեան պատկերք։ Եւ քանզի պատկերին է յարաբերել զէութիւնն՝ որոյ է, նոյնպէս առաքինութիւնք սիրին նախ՝ զի յարմարութիւնք են ընդ կարգ բնութեան, և հետևաբար աստուածային էութեան։ Բ․ Յարաբերեն զգործողութիւնս իւրեանց առ ճշմարիտ էութիւնն, որոյ պատկեր են․ և առաքինութեանց սիրոյք և գործոյք հարկաւ ժամանեցեն գերագոյն բարութեան աստուածային էութեանն․ ուրեմն առիթն՝ որով արարածք առ երկին յԱստուած, և ժամանել տայ զմարդիկ վերջին վախճանին,

սիրելի է յարաբերութեամբ և ոչ բացարձակապէս ։ Մեր գիտելք զի ի մեր ասխոյն ճշմարտութեան՝ առարկութիւնք յառաջ կեան երևանեալ առնեն զմարդ , զոր բացարձակապէս ժխտեմք . քանզի նա՛ մանաւանդ առարկիք և արդարք միշտ յանէս կրեն յաշխարհի աստ , և թշուառութեամբ կեան ըստ մեծի մասին , և եթէ իցէ յերկրի աստ անկատար իմն երջանկութիւն , այդ ոչ կայանայ յայլ իմն , եթէ ոչ ի յայն հաստատուն յարատեւ կեանս առաքինութեանցն ստանալոյ զվարձ հատուցման իւրեանց յԱստուծոյ անտի . նոյնպէս և չարեացն հատուցումն արդար , այս է մի միայն երկրի՝ և ժամանակաւորն երջանկութեան . զի այն չէ այլ ինչ՝ եթէ ոչ հաւաստ հաստատունք ապագայ և անանցանելի իրացն ճշմարտութեան ընծայեալք ։

Առ Բ . առեմ՝ զանազանելով . նմանապէս հաճոյք մարմնոյ՝ հեշտութիւնք , ցանկութիւնք , են , են , փափագելի են յարաբերութեամբ կամ զօրութեամբ գերագոյն բարւոյ կամ երջանկութեան՝ ընդունիմ . փափագելի են ինքնալին ի սէր հեշտութեան , ըստ որում հեշտութեան՝ ուրանամ . և առ փասան՝ առեմ . չառանայ նորիմք հոգին , նա՛ յաւէտ մարմինն առ ժամանակ մի՝ ընդունիմ . մշտնջենապէս՝ ուրանամ . ի բացայայտութիւն որոյ՝ առեմ . ամենայն որ ցանկայ երջանիկ լինել՝ այն է ի կատարեն հասնել բարութեանց , և ամենայն կարողութիւնք մարդոյ առբերին յառաջկայս իւրեանց , որք իւրաքանչիւրն միջնորդ և առիթ են գերագոյն կատարելութեանն ժամանելոյ . բայց քանզի յաշխարհի աստ բարութիւնք խառն են ընդ չարութիւնս , չիցեն բանականք զիւն ընդ միւսն , ընտրեն զչարն փոխանակ բարւոյ , և ունին զբարին փոխանակ չարին , զմիջոցն փոխանակ վախճանին , և ըստ Առաքելոյն Օգոստինեայ՝ վայելեմք ի կիր առնելին , և ի կիր առնումք զվայելելին . և այդ քանզի ոչ հարկաւորութեամբ բերին արարածք բանականք ի մասնաւոր բարիս , այլ ազատութեամբ . բայց ոչ որ ընտրէ զչարն՝ [illegible] ։ և ըստ որում [illegible] , այլ զչարն ընտրէ [illegible]



[illegible] ։ Թէև խիղճ մասին հաստատիմ՝ այդ եղեալ նմա՝ թէ զոր բարին գտանէ , ոչ է բարի , այլ չար , և հակառակ մասանց ուղիղ սկզբանց . ուստի կանոն ուղղութեան և համեստութեան մարմնոյն հաճոյիցն են ուղիղ սկզբունք մտաց , խիղճ մասին , և օրէնք և կարգ բնութեան ։ Եթէ հաճոյք մարմնոյ լինին և կարգադրեսցին ըստ սոցին՝ բարի են . եթէ կամոյն ոչ անսասցեն նոցին , և բանդագուշեալ զգայականօքն հետևեսցի մարմնոյ հաճոյիցն՝ գործէ զչարն իբրև անձին իբրու՛ ի բարի և ի կատարելութիւն . և յայնժամ ծնանին մեղք . բայց միշտ ճշմարիտ է առաջարկութիւնն , թէ բաց յԱստուծոյ՝ արարած բարութիւնք չկարեն զօղ առարկայ մարդկային երջանկութեան . քանզի ցո՛ր վայր կատարելութեան հասանիցեն , ոչ երբէք ստանալ կարեն զթէութիւնս յատուկս և կացուցիչս առարկայի երջանկութեան . զի հաճոյք մարմնոյ և այլ որ և իցէ արարած բարութիւնք որչափ առաւելուն ի մարդն , այնչափ յաւելուն ափանք և տանջանք և անհանգստութիւն առաւելագոյնս ժամանելոյ . որ ընդհակառակն հասեալ ուրուք ճշմարիտ երջանկութեան՝ հանգչի ի նմա , ցնծայ ի նմա , և ոչ ատեցի ի նմանէ ։ Մեր գիտելք՝ զի այնքան դիւրակորուստ են և անցաւորք , մինչ ոչ միայն և ոչ հետոց նոցա ֆիզիքապէս բարութեան , բաց ի հայեցող բարութենէն . ո՞ ուրեմն զհաճոյս մարմնոյ համարեսցի արատոս երջանկութեան և վախճան ամենայն կատարելութեանց , միայն թէ զմտացն ունիցի զբանաւորութիւն ։

Առ Գ . առեմ՝ զանազանելով . չունի համեմատութիւն զանահման բարութիւնն սպառելու՛ վերջաւոր սահմանեալ բարութիւնն , հաստատապէս կամ բովանդակապէս՝ ընդունիմ . չունի համեմատութիւն մասնաւորապէս՝ ուրանամ ։ Առ Բ . մասն առաջարկութեան՝ ուրանամ՝ թէ բնական բնութեան իրաւունք ոչ խնդրեն առաւել քան զնմին բնութեան ներելոյ բարութիւնն . և յայս մասն առեմ . կատարելութիւնք հոգւոյ խնդրեն զվիճակ իմն գերագոյն և վերնագոյն քան զբնութիւնն . քանզի որպէս ցուցաք ի հոգեբանութեան անդ , անմահ կենաց ցանկան

բանական հոգւոյ. քանզի յատկութիւնք և կատարելութիւնք հոգւոյ հարկաւորապէս զայդ պահանջեն. Նոյնպէս եթէ անմահ է հոգին, ուրեմն յետ քակտելոյ ներկայ շինուածոյս բնութեան՝ կեցցէ. և եթէ կատարելութիւնք հոգւոյս այսորիկ չգտանեն հանգիստ անձանց իւրեանց, յառաջ կեանս և յառաջ բարութիւնս, այլ զայդ պահանջեն զկնի ներկայ բնութեանս, և եթէ չընդունիմք զապագայ կեանս, և զմիանգամ՝ իւրաքանչիւր հոգեղէն յատկութեանց և կատարելութեանց դժամանել իւրում վախճանի, չպարտիմք ընդունել և ոչ զարդարութիւնն Աստուծոյ, և ոչ զգթութիւն և զնախախնամութիւն և զբարութիւննորա, որ եդ ի բանական բնութեան զայդ յատկութիւնս՝ իբրև առիթս գերագոյն ճշմարտութեան և գերագոյն բարութեան. Իսկ նկատմամբ այնմ՝ զի չիք համեմատութիւն ընդ չափաւորելոյն զանչափն պարունակելոյ՝ ասեմ. չէ պարտ զի սահմանեալն պարունակեսցէ և ստացի զանսահման բարութիւնն, և այդ՝ զի մեթաֆիզիքական չարութիւն է ի մարդն, այլ չար է՝ զի սահմանեալն ժամանեսցէ անսահման բարութեան, և անդ զկայանս ամենայն իղձ և փափագ անմահական հոգւոյն. Այլ է պարունակել զգերագոյն բարին, և այլ է ժամանել ի գերագոյն բարին, և յայսմիկ է համեմատութիւն մասնաւոր, բայց ոչ յայնմիկ. քանզի թէպէտև սահմանեալ է մարդկային բնութիւնն, ի ժամանելն յանսահման բարութեան՝ կարէ ըստ կարի իւրում ընդունակութեան, ընդունել և հաղորդակցել անսահման բարութեանն. ոչ զբովանդակ անսահման առարկայն կարէ յինքն պարունակել բովանդակապէս, զոր անմտութիւն է ասել, այլ ըստ մասին կամ՝ մասնաւորապէս. զորօրինակ սափոր ջրոյն զայդքան ընդունել կարէ ի մշտահոս աղբերէն, որքան պարունակել կարէ, և ոչ առաւել. ըստ այսմ և հոգիք, ժառանգ երանութեանն. այսմիկ մասնաւոր վայելմանս, առմք զանունդ երջանկութեան, որ ըստ զպէտս կարեաց բանական բնութեանն, և կատարելագործէ այդքան զմարդն, որքան բաւէ կարօտութեանց հոգւոյ փափաքման,



յորմէ հանգիստ և խաղաղութիւն, և ոչ յուսալ և անկատար երջանկութիւն ընդ հայելի օրինակաւ, այլ երջանկութիւն հայեցողապէս և դէմ յանդիման. տեսցուք զնա որպէս էնն՝ ըստ ճշմարիտ իմաստի բանին, բայց և գործովք բարութեան. Զորմէ ի

---

## ԳԼՈՒԽ Բ.

### ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ԵԾ. Ժամ է ուրեմն՝ զի խօսեցեալ զվերջին վախճանէն՝ խօսեսցուք զմարդկային ներգործութեանց կամ գործողութեանց, որք իբրև ճանապարհք են և առիթք՝ որովք միայն և առանց որոց ոչ կարեմք ժամանել բարութեան, և հետևաբար վերջին մերում վախճանին. Ուստի նախ տեսցուք՝ թէ զի՞նչ են մարդկային գործողութիւնք, և թէ քանիսպատիկք են. Բ. Զբարոյականութենէ, այն է զներքին և զարտաքին բարութենէ կամ՝ չարութենէ նոցա. Գ. Զվերագրելոյ նոցա՝ այն է զարգեանց և զպատուհասից, կամ՝ զարժանաւորութենէ և զանարժանութենէ նոցա. զորս առանձինն յօդուածովք ճառեսցուք.

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻ՞ՆՉ Է ԵՒ ՔԱՆԻ՞ՊԱՏԻԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆ

ԵԾԱ. Մարդկային կոչի ներգործութիւն կամ՝ գործողութիւնն, որ ելնէ յոգւոյ կամաց մարդոյ ծանօթութեամբ վախճանին. և կամ՝ ի գործողութիւն յոգւոյ կամաց, ծանօթութեամբ բարութեան և բարոյական չարութեանն առարկային. Ամին իւր զանազանին մարդկային գոր-

[illegible] է [illegible] [illegible]։ Յայտ է՝ զի յայտ է բնութիւն ազատ կամաց, գիտութեամբ մտաց, և յայսորիկ պակասին՝ այլ միայն բնականապէս. զորօրինակ՝ ննջելն, երազելն, մարմնոյ այլ և այլ գործողութիւնք, որք չունին պէտս ազատութեան կամաց և լուսաւորութեան մտաց, այսպէս ամենայն գործողութիւնք մտահեղ անձանց և մանկանց են։ Մեք զառաջինսն խօսիմք, յորոց կախի և վայելէ բարոյականութիւն, և ոչ զայլոյն, որք զուրկ և թափուր են ի բարոյական յատկութեանց. ուրեմն առ ի լինել գործողութեանց [illegible]՝ խնդրին երկուքին սոքա. այսինքն հարկաւորապէս է [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible], և ի կողմանէ [illegible] [illegible] կամ [illegible] [illegible]. որոյ երկոցունցն մտաց ծանօթութեան և կամացն հաւանութեան տամք զանուն [illegible] [illegible] [illegible]։ Յաւել և զերրորդն ի նոսա ազատութիւն մարդկային կամացն. մտացն [illegible] և կամացն [illegible] դնելով յոր և իցէ մարդկային գործողութեան, առնեն զի [illegible] [illegible] կոչիցին՝ նոքիմբք եղեալ գործողութիւնքն. և երկուքին սոքա միացեալ ընդ կարողութիւնն առնելոյ կամ չառնելոյ զգործողութիւն ինն առնեն զի [illegible] [illegible] կոչիցին. երկաքանչիւրոյն անհման տարբերք են իւիք. զի [illegible] կոչի գործողութիւնն որ կատարի ի կամացն ներքին սկզբանն կատարեալ ծանօթութեամբ մտաց. և ազատութիւնն կամ ազատ գործողութիւնն է՝ որ կատարի ի կամաց ներքին սկզբանն, բայց կարողութեամբ կամ ընդունակութեամբ զհակառակն գործելոյ, կամ զերկոսին իսկ չգործելոյ։ Երկոցունց իսկ զանազանք են տեսակք, թէ՛ կամաւոր և թէ՛ ազատ գործողութեանց. զորոց ըստ կարգի։

ՑԱ. Գիտել պարտ է՝ թէ չէ պարտ շփոթել զմարդկային [illegible] [illegible] կամ [illegible] ընդ [illegible] [illegible]. քանզի սոքա թէպէտև կամեցեալ են, բայց ոչ կամաւորք են, այսինքն զօրութեամբ ներքին սկզբանն. զորօրինակ անձրև, և զինի անձրևոյ սրբ-



ռականն չերմութիւն լինելն զարտօրէք կամեցեալք են, և խնդրին ի միջակաց կամ յերկրագործաց, բայց ոչ պատճառեալ ի նոյն միջակաց անտի։ Երկրորդ՝ և ոչ իսկ շփոթել պարտ է զմարդկային կամաւոր գործողութիւնս ընդ բնական կամ յօժարական գործողութիւնս՝ որք բնականապէս գոցցեն իբրև յանբանից գործողութիւն լինին. զորօրինակ մանկանց և յիմարաց պատահին, զորս հաւասարս կոչել կարեմք, ոչ մարդկային, այլ մարդոյ գործոց՝ զորմէ փոքր մի յառաջն։ Երրորդ՝ չէ պարտ շփոթել զկամաւոր գործողութիւնս հարկադրեալս, որք յառաջ գան ի կամաց կամ ի բնութենէ յաւէտ. զորօրինակ երանեալք կամին և սիրեն զԱստուած կամօք իւրեանց զօրութեամբ բնութեանն, և նոյն Աստուած սիրէ զանձն պատուիկ կամօք՝ որ յայտնիկ գործողութիւնս մի և նոյն է ընդ բնութեան, ընդ կամաւոր գործողութիւնս, որք գնեն ի գործ, կամ յառաջ գան ի կամաց իբրև ի ներգործիչ կարողութենէ հոգւոյն, և ոչ է նոյն բնութիւնն։ Արդ զայսոսիկ ծանուցեալ՝ տեսցուք նախ՝ թէ քանի՛ են տեսակք մարդկային գործողութեանց կամաւոր կոչեցելոց։

ՑԲ. Բաժանին նախ՝ կամաւոր գործողութիւնք, [illegible] [illegible], և [illegible] կամ [illegible] է [illegible], նա է, յորժամ ուղղապէս և յինքեան կամիմք զառարկայ ինն կամ զգործողութիւն. զորօրինակ կամիմք երթալ յեկեղեցին առ ի անդ աղօթս մատուցանել, և յիրաւի երթամք. իսկ կամաւորն ի պատճառի է՝ յորժամ ոչ կամիմք զգործողութիւն կամ զներգործութիւն ինն ուղղապէս յինքեան, այլ կամիմք զպատճառ նորա, յորմէ հետևի ներգործութիւնն առհասարակ. զորօրինակ արբեցողն երթայ ի գինետունն՝ առ ի ըմպել զգինին ի հաճոյս իւր, բայց յըմպելոյ գինւոյն քան զչափն՝ հետևի հարկաւ արբեցութիւնն և մեղք և հայհոյութիւնք, են։ Այսպէս տասցես զորմէ և իցէ պատճառէ, որ ծնանի զներգործութիւն իւր կամ բարի կամ չար. այսպէս գեղօրէք խնդրին ուղղապէս, և անտի ծագին այլ և այլ առողջութիւնք, և հետևութիւնք։ Բաժանի ի [illegible] [illegible]

…ն և ի [illegible] [illegible]. Նա՝ յորժամ կամք դրականապէս կամի զինչ իբրև զուղղապէս կամաւորն, զորօրինակ կամք մեր զօրութեամբ ներքին սկզբանն, և իրական ազդեցութեամբ կամին զօգտութիւն առնել. իսկ սա՝ յորժամ իբրաց կայ ի գործողութենէ իմեքէ և արգելու զանձն ի գործողութենէ նպաստից առ այդ՝ զոր պարտի առնել, զորօրինակ ի սիրելոյ զնմանն իւր։ Բաժանի ի [illegible] [illegible] և [illegible], ըստ որում ծանօթութիւն մնացն կամ կատարեալ իմն եղանակաւ յառաջ բերէ կամաց զաւարկայն, և կամ անկատար և պակաս ծանօթութեամբ, և ըստ մասին. զորօրինակ գիտելով քաջ թէ պարտ է սիրել զԱստուած, և այսր աղագաւ սիրել զնա. Ներգործութիւն սիրոյդ կատարելապէս կամաւոր կոչի, որ անկատար է ի պակասիլ իւիք մնացն ծանօթութեան, և կամ կամացն հաւանութեան. զորօրինակ հարկանել ընտկարն մարմնով, և անտի պատճառել ընդերկար հիւանդութիւն, զոր թէ լիովին գիտէր գործողն, ոչ արդեօք մխէր զձեռս ի նա։ Բաժանի ի [illegible] [illegible], ի [illegible] [illegible], ի [illegible] [illegible], և ի [illegible] [illegible]։ Առաջինն է՝ յորժամ գործողութիւնն կախի յազդեցութենէ կամացն, որ ներկայ գտանի առ և այժմ գործողութեանն։ Երկրորդ՝ [illegible] [illegible] է՝ յորժամ ոչ ներկայ գտանի գործողն, բայց միանգամայն ներգործութեամբ հաստատեալն անէ ի նոյն միտս՝ առանց յետս կոչելոյ այնուհետև կամ զդիտաւորութիւն իւր. զորօրինակ թէ ոք դնէ ի մտի ապաւինել զոք, եթէ ոչ գտեալ զմարդն զոր խնդրէ՝ յարատևէ ի նոյն միտս լինել, թէև մոռացի զայդ դիտաւորութիւն առժամանակ մի, կոչի գործողութիւնդ այդ ոչ ներգործութեամբ, այլ զօրութեամբ, այն է զօրութեամբ առաջին եղեալ ներգործական կամացն, և մնանակից կայ բարութեան և չարութեան ներգործական զօրութեամբն։ Երրորդ՝ [illegible] կամ [illegible] [illegible] է, յորժամ գործողութիւնն այնքան կրկնապատկեալ է, զի մեծաւ իմն դիւրութեամբ դոցցես բնականապէս լինի. զորօրինակ բազումս պատահի զի առնեմք



[illegible] [illegible] անխափանապէս, թէպէտ և միտք մեր ցրուեալ քաղաքաց ի քաղաքս շրջիցին։ Բայց գիտելի է զայսմանէ՝ թէ որ ունակութեամբ լինի, ոչ բնականապէս լինի. զի ունելն ուրուք զինչ՝ է ստանալ զինչ, զոր յառաջն ոչ ունէր. մերձ բնականն նա է, որ ծնանի ընդ բնութեան, վասն որոյ ոչ իւիք և ոչ ուրեք և ոչ երբէք արդար կացուցանել կարեն զանձինս անզգամք և զգայութեանցն սիրողք (որք երանի՛ թէ սակաւք լինէին, և լաւագոյն եթէ բնաւին չէին.) ասելով չկարեմ ընդդէմ կալ զօրութեան այնր մոլութեան, որ յունակութիւն անցեալ է. քանզի ունակութիւնն ոչ է բնութիւն, սա անպատ, և նա անատակ։ Հուսկ ուրեմն՝ [illegible] [illegible], զորօրինակ տեսանեմք զոմն երթալ յեկեղեցին, մեկնեմք՝ թէ բարի փափաքանաւն երթայ. բայց կարէ անդստ յայդ տեղի երթալ առ ի զուեղանս կոգոյատել, և տեսանեմք զոմն նստեալ առ գինեմոլս, մեկնեմք զգործողութիւնն նորա նման նոցայցն. ըստ այսմ՝ քառեակ բաժանմանց է և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. միմն իւրի կոչի [illegible] դիտաւորութիւն, [illegible] դիտաւորութիւն, [illegible] դիտաւորութիւն և [illegible] դիտաւորութիւն։

30Դ. Գամք զկնի բաժանմանց մարդկային կամաւոր գործողութեանց տեսանել՝ թէ քանի՞ են տեսակք ազատ գործողութեանց, և զայդ համառօտապէս. քանզի առդէն ի Համարձակարանութեան անդ խօսեալ եմք զազատութենէ մարդկան։ Արդ ազատ գործողութիւնն այն է՝ «որ յառաջ գայ ի կամաց ներքին սկզբանն, կարողութեամբ ընտրելոյ զայդ կամ զայլ հակառակ և հակառակն նմին, և կամ ոչ զոք յերկոցունց»։ Բաժանի [illegible] [illegible], այն է ազատութիւն անտարբերութեան կամ ընտրութեան՝ որ և կոչի ազատութիւն յամենայն ներքին արգելմանց՝ կամ ի ներքին և ի նախընթաց հարկաւորութենէ. այն է բուն և իսկապէս ազատութիւն։ Եւ սա գիտել պարտ է, բանական բնութիւնն ըստ որում ազատ, և նկատմամբ ներքին հոգւոյ գործողութեանց յայնկարծի

չկարէ բռնադատիլ. քանզի մարդ բռնադատիլ կարէ մի միայն ըստ մարմնոյ ազատութեանն, և ոչ ըստ հոգւոյն։ Երկրորդ բաժանի յունարէն [illegible] ի [illegible], այն է յոր և իցէ արտաքին արգելմանց. այսպէս քրիստոնեայն բռնութեամբ կալեալ ի հեթանոսաց՝ խունկ մատուցանել կռոցն, ոչ է ազատ ի բռնադատութենէն։ Երրորդ՝ բաժանի յունարէն [illegible] կամ [illegible], ըստ որում կարեմք թողուլ զինչ և ընտրել հակառակ նմին զայլ ինչ և կամ զհակառակսն. զորօրինակ ուսուցանել և չուսուցանել. չառնել զճշմարտութիւն, այլ զհակառակն ճըշմարտութեան՝ զստութիւնն։ Չորրորդ՝ բաժանի յունարէն [illegible], այն է կարել թողուլ զայս տեսակ իրին կամ գործոյն և առնել զայլ տեսակ նորա, զորօրինակ գրել կամ ընթեռնուլ, են։

ՅԾԵ. Ահաւասիկ էութիւնք և բաժանմունք երկոցունց իսկ կամաւորութեան և ազատութեանն, որք են և կոչին սկզբունք մարդկային գործողութեանց. բայց և զայս ծանուցանել պարտ է, թէպէտև տարբեր լիցին բնութեամբ՝ ըստ որում յայտ է ի սահմանաց նոցին, կամաւոր ներգործութիւնք և ազատ գործողութիւնք, բայց առնելու լինելոյ տարբերութեանցն ի միմեանց՝ և առ գիտակս բաշխս գոլոյ բնութեան գործոյ միոյն ի միւսն՝ զգցես անիմանալի ինչ եղանակաւ են յաշխարհի աստ որ ինչ ի մարդկային վարս և բարս անգամ տեսակք մարդկային գործողութեանց, որք հասարակ են երկոցունց սկզբանցդ անգամ, և են արդեւք երկոցունց իսկ հակառակք։ Այսպէս են գործողութիւնք [illegible] և գործողութիւնք [illegible]. Նոքա՝ որք անմիջապէս ի կամաց անտի լինին, և այս միջնորդութեամբ իւիք. զորօրինակ շրջելն ինքնին կոչի գործողութիւն կամաւոր, և ազատ հրամայեալ՝ քանզի կամացն հրամանաւ շարժին բովանդակ մարմնոյ անդամք։ Են և մարդկային գործողութիւնք [illegible] և [illegible], ըստ որում ներքին կարողութեամբ հոգւոյն սկսանին և ներքինք և ի նմին կատարին, այսպէս խորհելն զԱստուծոյ. և կամ արտայայտեմք զներքին գործողութիւնս



մեր արտաքս, զորօրինակ խօսելով ընդ այլս, գործելով արտաքուստ են։ Են և գործողութիւնք [illegible] զօրութեամբ միմիայն բնութեանն, և [illegible]՝ այլով բարձրագոյն ինչ զօրութեամբ, զորօրինակ Աստուծային բնութեան։ Բայց

ՅԾԶ. Տեսցուք այժմ զայնոսիկ՝ որք հակառակք կան սկզբանց մարդկային գործողութեանց։ Ասացաք թէ երեք են, որք պարտին գտանիլ հարկաւորապէս ի մարդկային գործողութիւնս։ Նախ միտք, այն է միայն ծանօթութիւն. երկրորդ՝ կամքն, կամացն հաւանութիւն. երրորդ՝ ազատութիւնն կամաց, այն է՝ կարողութիւնն առնելոյ կամ չառնելոյ զինչ։ Սոցին հակառակ կան նախ՝ [illegible] ընդդէմ ծանօթութեան միտաց. երկրորդ՝ [illegible], [illegible], [illegible] են ընդդէմ կամաց և ազատութեան։ [illegible] է պակասութիւն գիտութեան առարկային. բաժանի ագիտութիւնն յունարէն [illegible] և ի [illegible]. Նա է՝ յորժամ ի կիր առնումք քաջապէս զնպաստս գիտելոյ զինչ, և ոչ կարեմք և կամք ի նոյն ագիտութեան, զայնմանէ հանգիստ և անկասկած, այսպէս որսորդին տեսեալ յանկրնակ անտառի ընդ ծառովն զկենդանի ինչ, և հարեալ հրացանիւն սպանանէ զմարդն, ոչ մարդ՝ այլ կենդանի անասուն դատելով զնա, այնպիսին ասի գոլ անյաղթելի ագիտութեամբ, բայց առ ի ելանել յանյաղթելի ագիտութենէ՝ չէ բաւական զի ծագիցի ի միտս այնպիսւոյն կասկած ինչ անգամ զհակառակ ճշմարտութենէ, այլ պարտ է՝ զի և կասկածդ այդ ծանր լիցի և չփոխեսցէ զմիտս և ձգեսցէ ի նմա զխիղճ պարտաւորութեան թողլոյ զայդ վիճակ, և յայլ ճշմարտագոյնն և բարեգոյնն նկրտելոյ. զի ռամկաց բազումք լսեն զընդդէմ հաւատոյ նոցա զքարոզութիւն բանին, և առ բազումս կան և յարատեեն ի նոյն յանդորրութեան միտաց իւրեանց, անընդունակ գոլով ի ներքագոյնն փաստիցն իմաստ թափանցել կամ խելամուտ լինել. զայս ընդ Սըրբոյն Ալփոնսոսի ասեմք տեսականապէս և ի վերացեալն. բայց արդեամբ և ի թանձրացեալն կախի յիւրաքանչիւրոցն յընդունակութեան և յուշիմութեան միտացն կարգէ։

Կոչի [illegible] [illegible] [illegible], յորժամ ո՛չ երբեք կամ բնականապէս ո՛չ իւիք եղանակաւ յաղթել կամ դիմել կարեմք զաւարկայն. կոչի [illegible] [illegible] [illegible], յորժամ ի կիր առնումք զբարոյապէս պարտապանջան ինչս, և ի վերայ այսր ամենայնի կամք ի նոյն վիճակ համոզման մնայ. բարոյապէս պարտապանջան հոգ և խնամքն են նոքին, զորս այլ ոք խոհեմ վան ծանր իմն գործողութեան ի կիր առնու: Դարձեալ՝ ի կարգի անյաղթելի ազատութեան ունել պարտիմք նոյն իսկ զվիճակ մոլացման, և կամ կատարեալ անմտադրութեան, որք անպայման կացուցանեն և անբաւիր զմարդն ի գործողութեան իւրում. բայց [illegible] կոչի ազատութիւնն, յորժամ քաջ քննեալ և հետազօտեալ զիւրն գտանեմք զճշմարտութիւնն, կամ զբարութիւնն իւրաց, և միայն մեր ճանաչէ զանուղղութիւն առաջին վիճակի իւրոյ, և լքանէ զայն, և ցնծայ նորագ առացելովն:

ՅՄԼ. Դարձեալ՝ ազատութիւնն բաժանի ի [illegible], ի [illegible], և ի [illegible] ազատութիւն: Նախընթաց ազատութիւնն՝ որ կարէ կամ անյաղթելի ազատութիւն լինել կամ մոլացութիւն կամ անմտադրութիւն առնէ՝ զի գործողութիւնն կամաւոր այլուր լիցի գործողութիւն ակամայ, կամ ո՛չ կամաւոր, և հետեւաբար գործողն անբաւիր. բայց ո՛չ այնպէս և միւս երկոքինն, քանզի համընթաց ազատութիւնն՝ որ և անյաղթելի ազատութիւն կոչի՝ [illegible] է, յորժամ ոք ո՛չ կայ անպարտելի կամ անբաւիր զգործողութենէն՝ նովին ազատութեամբ. քանզի արդէն ունի ի միտ առնել զիմն կամ զգործողութիւն, թէպէտև համարիցի ոք առա և այժմ զայգ, այն է չառնել զ՚ի միտ եդեալ գործդ՝ այլ զայլն, և արդեամբ զնոյն ցանկացեալ գործն կատարիցէ. զօրօրինակ սպանանել զոսոխն ի դիչերի կարծելով սպանանել զգող, բայց ո՛չ դրականապէս կամ պարզապէս զկամաւորն կացուցանէ, այլ բացասականապէս բաս որում ի գործելն ո՛չ գիտէ զաւարկայն՝ թէև առնէր իսկ՝ եթէ գիտէր յառաջն: Իսկ յետադայ ազատութիւնն չկարէ երբէք զներգործութիւնդ ակամայ կամ



անկամաւոր առնել. քանզի բաւ իմիք եղանակի ի կամացն անտի թողլատուութենէ պատճառի, և բաժանի [illegible] ազատութիւնն, ի [illegible], կամ [illegible] և ի [illegible] ազատութիւնն: Առաջինն՝ որպէս յայտ է՝ ախորժանօք կամաց լինի մարդոյ, որ և ուղղապէս կամի անդրաանալ, որպէս զի ազատութեամբ և անդորրութեամբ սրտի գործեսցէ: Իսկ պղերգութեան ազատութիւնն է՝ յորժամ ոք անփոյթ լինի գիտելոյ զօրպիսութիւն ներգործութեան, և այնպէս յանհոգս գործէ զոր ցանկանն, նմին իրի կոչի եւս կամաւոր [illegible], քանզի կամի զպատճառն, այն է զազատութիւնն: Եւ թանձրամտութեան ազատութիւնն այն է, յորժամ ոք զդոյզն ինչ խնամ եւեթ տանի որպիսութեան գործոյն, որ առաւելագունին կարօտի փութոյ՝ քան զոր արարն. բայց ո՞ ոք ոչ տեսանէ, թէ երկոքինն իսկ ո՛չ անբաւիր առնեն զառնողն ներգործութեան. քանզի յայտ է թէ՝ որ կամի զպատճառն՝ կամիցի հարկաւ և զներգործութիւն պատճառին. և գործողութիւնն ի նոցանէ յառաջ եկեալ՝ կամաւոր է և ո՛չ ակամայ, վասն որոյ և մարդկային գործողութիւն կամ ներգործութիւն:

ՅՄԽ. Երկրորդ՝ ընդդէմ կայ սկզբանց մարդկային գործողութեանց և յաւի [illegible], որ է շարժմունք զգայական փափաքման և կիրք, որով կամքն կրէ և ձգի յզգայական բարութիւնն, և յերկուս բաժանի՝ ի [illegible] ցանկութիւնն և ի [illegible] ցանկութիւնն: Առաջինն է, յորժամ բնականապէս յառաջ քան զմտացն ծանօթութիւն ծագի ի մարմինն մարդոյ, և զուրկ կայ յո՛րպիսի և իցէ համաձայնութենէ կամաց, կոչի [illegible] կամ [illegible] և [illegible] [illegible], որ և յաւէտ յօժարական շարժմունք գտանի՝ քան թէ կամաւոր շարժմունք. քանզի ընդմէջ կամաւոր և յօժարական գործողութեանց մի միայն այս է տարբերութիւն, զի կամաւորն է շարժումն կամաց առ բարին՝ ծանօթութեամբ վախճանին. մինչ յօժարականն է այն՝ շարժումն նոյնպէս կամաց առ բարին, բայց առանց ծանօթութեան վախճանին, և մի միայն բնականա-

պէս և զգայապէս, որ հասարակ է անգամ անասնոյն. իսկ եթէ անկատար իմն եղանակաւ հաւանեցին կամք այդօ-ցիկ շարժմանց մարմնոյ, կոչի յայնժամ [illegible]. այսր երկոցուն ցանկութեանն շարժմունք ոչ իւիք, ոչ երբէք կացուցանեն զներգործութիւնն կամաւոր։ Իսկ յետագայ ցանկութիւնն հետևի գիտութեան մտացն և որոշման կամաց, որպէս յզգայականն՝ որք չունելով զբոց ցանկութեան ի մարմնի՝ սկսանին խորհիլ զանհամեստ առարկայից, որոշեն կամօք կալ ի նոյն խորհուրդս, և անդէն և անդ տան պատճառս զգայական մասին, վասն որոյ և գործողութիւնն այնպիսի կամաւոր. ուստի ասեմք՝ զառաջնոցն ցանկութեանց թէ չեն կամաւոր՝ մերթ պատճառն չէ ի կամաց և ի մտաց անտի, այլ միայն յօժարական է կամ բնական. Իսկ յետագայ ցանկութիւնք կամաւորք են, որպէս յայտ է՝ և նմին իրի մարդկայինք, միայն թէ չիցեն ցանկութեանցդ և տափանաց յարձակմունք, այնքան սաստիկք մինչև աղօտացուցանել և բառնալ անգամ զգատուամ մտաց, և զծանօթութիւն չարութեան կամ բարութեան առարկային, և յայնժամ նուազի և զադարի ի մարդկային ներգործութիւն լինելոյ, այլ յաւէտ անասնային կոչի. քանզի մարդկային գործողութեանցն թէութիւնք են՝ [illegible], և այդ ազատութեամբ բերելով առ առարկայն, ոչ թէ բարձմամբ զատողութեան և հաւանութեան մտաց և կամաց։ Բայց և ի սոյն դիպուածս անգամ երբեմն կամաւոր գտանին ի պատճառն և ի յակզբանն, և վերջնագրին յայնժամ գործքն գործողին բովանդակապէս, թէ՛ բարի իցեն և թէ՛ չար. քանզի որ դնէ զպատճառն՝ դնէ և կամի զհետևութիւն նորա։ Իսկ եթէ պակասիցեն իւիք, կամ ծանօթութիւն մտաց և կամ հաւանութիւն կամաց, կոչին յայնժամ ներգործութիւնքն [illegible] և [illegible]։

ԼԹ. Երրորդ՝ ընդդէմ կայ սկզբանց մարդկային գործողութեանցն և երկիւղն, որ է [illegible], [illegible]. բաժանի [illegible] և [illegible]. ծանր է երկիւղն, յորժամ խիթամք հանդիպել մեծագոյն իմն չարութեան, զօրօրինակ մահու, վիրաւորման մարմնոյ ծանրապէս, աքսորանաց, ընդերկար բանտարգելութեան, կորստեան մեծի հարստութեան, են. Իսկ թեթև երկիւղն է՝ յորժամ երկնչիմք ի հանդիպելոյ փոքու իմիք չարութեան կամ կորստեան փոքու իրիք բարութեան, զօրօրինակ ըստ մասին՝ ընչից ումանց, նախատանաց ումանց և կորստեան սակաւիկ իմն ի պատուոյ, և այլոց սոցին նման իրաց։ Բաժանի երկրորդ՝ [illegible] և [illegible], ըստ որում յառաջ գայ ի ներքին սկզբնէ՝ զօրօրինակ ի հոգւոյ, ի սկարութենէ մարմնոյ և ի մտաց, և ըստ որում յարտաքին պատճառէ ումեքէ կամ ազատ իցէ կամ հարկաւոր, զօրօրինակ ի մարդկանէ, ի հրոյ, են։ Արդ ո՛ր և իցէ սաստիկ երկիւղի չկարէ բառնալ զկամաւորութիւն գործողութեանն. այսպէս երկիւղիւ կտտանաց և մահու՝ չէ՛ արժան ուրանալ զԱստուած ճշմարիտ, և երկրպագանել կռոց. բայց թէև ոչ բառնայ զկամաւորութիւն ներգործութեանն, սկարացուցանէ ըստ իմիք միայն զնա, և նմին իրի նուազեցուցանէ զբարութիւն կամ զչարութիւն գործոյն. բառնի երկիւղիւն բովանդակապէս կամաւորութիւն գործոյն, յորժամ այնքան մեծապէս երկնչի ոք, մինչև կորուսանել զդատողութիւն մտաց. այս՛ յայնժամ բառնի կամաւորն։ Նաև ևս գիտելի է՝ թէ ըստ կարգի անձանց և անձանց է և երկիւղն. քանզի կարէ ծանրագոյն լինել երկիւղն առ մանկտի և առ կանայս, որ թեթևագոյն է առ քաջ արս. ուստի սոցա կամաւոր է յերկիւղդ այդ գործողութիւնն, և նոցին ըստ իմիք կամաւոր և գուցէ բովանդակապէս ակամայ։

Խ. Հուսկ ուրեմն՝ ընդդէմ սկզբանց մարդկային գործոյ է և [illegible], որ է [illegible] [illegible] [illegible]։ Ի յետին բանից սահմանիս յայտ է՝ թէ ոչ բռնութեամբ յափշտակի աղջիկն կամակից և իւրովին բռնադատողին կամ յափշտակողին հետևելով. բռնութիւնն կամ է բացարձակապէս և կամ ըստ իմիք. յա-

ռաջինն անբաւիր կայ բանադատական, միայն թէ ի ներքս ի հոգին հաստատ և ընդդէմ կայցէ կամաց բանադատու-ցին. բայց գործողութիւնն բառ խմիք կամաւոր դատի բառ ստիճանի բանադատութեանն : Բայց և զայս գիտել պարտ է՝ թէ երկու են ընդհանուր տեսակք մարդկային ներգործութեանց՝ Ներքին կամ Ներքնական ներգործութիւն, և Արտաքին կամ Արտաքնական գործողութիւն. այն՝ ի ներքս ի հոգւոյն սկզբնաւորեալ՝ ի հոգին կատարի, այս՝ միջնորդութեամբ կարողութեանց կամ Նպաստից մարմնոյ կատարի. զորօրինակ խորհիլ զԱստուծոյ, և շրջել. առաջինն է ներքին և միշտ ազատ, և ոչ երբէք նուաճել կարէ բռնութենէ, քանզի բռնութիւնն մի միայն յարտաքուստ գոլով՝ զարտաքինան կարէ արգելուլ ի գործողութենէ, և ոչ երբէք զներքին հոգեղէն ներգործութիւնս. ուստի եղուգեալ ներգործութիւնք ոչ երբէք հարկադրիլ կարեն յայլմէ, այլ միշտ ազատ են. այսպէս արդարն յանիրաւի բանտարկեալ՝ հոգւով ի խորհուրդս իւր ազատ է, թէպէտ և մարմնով հարկադրեալ :

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

## ՑԱՂԱԳՍ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ՅԿԱ. Բարոյականութիւն մարդկային գործողութեանց է բարութիւն կամ չարութիւննոցա, զոր իմաստութեամբ կամ բանիւ մտացս ճանաչեմք. քանզի կամ բարի են գործք մարդկան և կամ չար, համեստ կամ անհամեստ. որպիսութիւնս այս բարութեան կամ չարութեան յառաջ գայ ի յարմարութենէ և յանյարմարութենէ գործողութեանց ընդ բնական օրինացն մտաց և կարգի բնութեան. եթէ գործողութիւնքս այսպիսի անյարմար իցեն ընդ օրինացն և մտացն ուղիղ սկզբանց և կարգի բնութեան՝ չար



կոչին և են. իսկ եթէ ամենայնիւ յարմար և նման այնոցիկ՝ կոչին և են բարիք. ուրեմն օրէնք և կարգ բնութեանն և վկայութիւն մտացն են կանոնք, յորոց ճանաչին և յայտնին բարութիւնք կամ չարութիւնք մարդկային գործոց, այն է նորիմբք զբարոյականութիւնն զգենուն և առնեն. զկանոնացս ի յետագայ գլուխ խօսեսցուք : Արդ

ՅԿԲ. Առ ի ստանալ մարդկային գործոց զբարութիւն իւրեանց, այս՝ նախ պարտին գալ ի նմանութիւն և յարմարութիւն բնութեան օրինացն և կարգի, բայց պարտին ամենայն թէութեամբ յարմար գալ. սորին վասն երեք համարին առհասարակ թէութիւնք կամ պարագայք բարութեան մարդկային գործոց. նախ՝ պարտին առս բարի գալ ըստ առարկային, երկրորդ՝ ըստ վախճանին, երրորդ՝ ըստ պարագայիցն :

Նախ՝ ըստ առարկային բարի լինի գործողութիւնն, եթէ առարկայն՝ զորով յածի գործողութիւնն, ի յարմարութեան կայ ուղիղ սկզբանց մտաց, օրինաց և կարգի բնութեանն. զորօրինակ սիրել զԱստուած, առնել զարդար դատաստան, խորշել ի չարէն, սիրել զնմանն իւր, են, որք ամենեքին յարմարք և ըստ օրինակի բնութեանն են. ոչ թէ ատել զԱստուած, սպանանել զընկերն նման իւրեան, գողանալ, չնալ, են, որք ամենեքին ընդդէմ են օրինաց, իրաւանց և հոգւոյ բնութեան. ամենիւին և չար են : Բայց չարութիւնս այս, նոյնպէս և բարութիւնն՝ կամ Դրական է՝ կամ Բացասական և կամ Ենթադրական, ըստ որում առարկայն կարէ հակառակ կալ օրինաց և հոգւոյ և խղճի մտացն դրականապէս, բացասականապէս և ենթադրականապէս. և գործողութիւնն լինի չար, չարագոյն, և ամենաչար : Դարձեալ՝ առարկայն կարէ չար լինել կամ ըստ ինքեան՝ այն է ի բնութենէն ի ներքուստ, և կամ արտաքուստ. զորօրինակ ատել զԱստուած, հայհոյել, չնալ, գողանալ, են, չար են ի բնէ, զորս և ոչ իսկ Աստուած կարէ փոխել իւրովն ամենակարող կամօքն և զօրութեամբ ի բարութիւն, կամ առնել զի չնութիւնն՝ ըստ որում ծնունդ, ա-

ռաքինութիւն լիցի. զի և են գործողութիւնք, որք հարկաւոր գոլով՝ ունին զմեզ ի կարգի բնութեանն, պարտաւորեն մեզ և հանապազ զմարդն առնել զայնս և կամ գործել յայնցանէ. բայց ո՛չ այնպէս այլ գործողութիւնք՝ որք առ ժամանակ մի պարտաւորեն զմարդն միայն, այսպէս սիրել զԱստուած միշտ պարտիմք, ատել զԱստուած ո՛չ երբեք. այսպէս ասասցես զայլոցն. և որպէս գործողութիւնք չարք, նոյնպէս բարութիւնքդ կարեն ներքին լինել, այնպէս զի և Աստուած անմարթ լիցի փոխել զնոսա ի հակառակն բնութեան իւրեանց. բայց են ևս բազում գործողութիւնք արտաքուստ բարիք, և ո՛չ միշտ՝ այլ առ ժամանակ մի պարտաւորեն զենթակայն, մինչև պատուէրն ժամանեսցէ վախճանին, և ապա ո՛չինչ դանալ պարտին, բաս որում վասն հասարակութեան և մեծամեծացն ի հպատակութիւն և կամ վասն պահպանութեան հասարակ կարգի և բարութեան ուրուք հասարակաց. զորօրինակ չղջել ինքնին չունի զինչ՝ ընդհանրապէս խօսելով՝ բարութեան կամ չարութեան, բայց չղջել վասն հնազանդութեան յեզր ծովու՝ առաքինութիւն է և բարութիւն. ահին իրի և ի սոյն միտս է բանն Դաւականայ՝ թէ «գործողութիւնք տեսակաւորին յառարկայից անտի»։

Երկրորդ. թէութիւն բարի լինելոյ գործողութեանն՝ է վախճանն գործողութեան, բայց ո՛չ գործոյն վախճան՝ որ նոյն է ընդ գործոյն և ի ներքս անդ մնայ բնականապէս, այլ վախճանն գործողին, որ կախի արտաքուստ ի գիտաւորութենէ ազատ կամացն ուղղելոյ զնիւթական գործողութիւնն յայս կամ յայդ վախճան բարոյական։ Արդ եթէ վախճանս այս կայցէ ի համաձայնութեան ընդ օրէնաց և ընդ կարգի բնութեան և մտացն խղճի և գործողութիւնն բարոյապէս բարի է, ապա թէ ո՛չ չար. այսպէս տալ ողորմութիւն ի կարօտելոյն նպաստ և յօժանդակութիւն՝ բարի է. բայց տալ ողորմութիւն անանկայն ի ցոյց մարդկան՝ չար. և որ զկարգ բնութեանն՝ զընդհանուր կանոնն բարոյականութեան տապալէ, այսպէս գործէ վեր ի վայր.



Երրորդ. թէութիւն բարութեան մարդկային գործողութեանն՝ են պարագայք գործողութեան, Ի՞ՆՉ, ՈՒ՞Ր, ՈՐՈ՞Վ, ԱՌ Ի՞ՆՉ, Ո՞ՐՊԷՍ և ՅՈ՞ՐԺԱՄ. զի սոքա ամենեքին ունին զյարաբերութիւն առ օրէնս և առ կարգ բնութեան և խղճի մտաց. եթէ մինն ի նոցանէ ընդդէմ լիցի պարագայից և կամ սոքա՝ նոցին, ո՛չ երբեք գործողութիւնն բարի գտանիցի. քանզի առաջինն՝ Ի՞ՆՉ՝ ցուցանէ զորքանութիւն և զորպիսութիւն առարկային, զփոքրկութիւն և զմեծութիւն, ևն. գուցէ վասն մեծութեան առարկային գործողութիւնդ չար լիցի, ապա թէ ո՛չ չլինիցի. և կամ եթէ են՝ այնքան լիցի, որքան տանին ամբողջութիւն օրինացն և բնութիւն կարգի և մտացն սկզբանց։ ՈՒ՞Ր՝ այն է գործողութիւնդ ի տեղւոջն լիցի, յորում արժան իցէ գործել. զորօրինակ տարեառութիւնն ի տեղւոջն՝ և ո՛չ ի կրօնի սեփական տեղին։ ՈՐՈ՞Վ՝ քանզի են բազում գործիք, որք ինքնին անարժան են. զորօրինակ զգանալ առ ի տալ ողորմութիւն, նուաճել զհպատակս բռնութեամբ և անիրաւութեան միջոցօք. ԱՌ Ի՞ՆՉ՝ այն է վասն բարի՞ վախճանի՞ թէ չար. Ո՞ՐՊԷՍ՝ այն է չարամտութեա՞մբ թէ բարեմտութեամբ. ՅՈ՞ՐԺԱՄ՝ այն է յո՞րպիսի, ի թո՞յլ տալ ժամու՝ թէ ո՛չ, և թէ ցո՞րքան ժամանակ, ևն։ Սոքա են և համարին պարագայք գործողութեան, որք տեսակաւորեն կամ փոփոխեն ամենևին զբնութիւն գործողութեանն կամ զտեսակ բարոյական գործողութեան. զորօրինակ չղջել անտարբեր իմն է, բայց յարգելեալ պահու չղջել՝ ընդդէմ է մտաց. առնել ողորմութիւն առաքինութիւն է, բայց առնել զայդ ի վախճան յոռի, ահա՛ առաքինին աւերի, և մոլութիւնն անտի ծագի. այսպէս ասասցես զամենեցուն։ Արդ բնութիւն բարոյական գործողութեանն հարկաւորապէս պահանջէ՝ զի անուանեալ երեքին թէութիւնքն՝ ԱՌԱՐԿԱՅՆ, ՎԱԽՃԱՆՆ և ՊԱՐԱԳԱՅՔ մարդկային գործողութեան ի յարմարութեան կայցեն կանոնի բարոյականութեան կամ անփոփոխելի և յաւիտենական օրինացն և կարգի բնութեան և ուղիղ սկզբանցն մտաց, և ո՛չ միով իւիք չեղիցին ի

համաձայնութենէ անտի նոցին, որպէս զի ամբողջ լիցի բարութիւնն. ապա թէ ո՛չ՝ միայն թէ միով ինչ պակասիցի գործողութիւնն՝ չկարէ բարի լինել գործն, այլ չարն հետևի. յորմէ է ձեզ իմաստասիրել՝ ո՛րքան եզանց պէտս ունին և ենթակայ վտանգաց բարութեանն գործք գտանին, և ընդհակառակն ո՛րքան դիւրութեամբ կատարին չարութիւնքն, և ըստ այսմ հնչի առածն՝ բարին յամբողջ պատճառէ, և չարն յո՛ր և իցէ պակասութենէ.

ՅԿԳ. Ասյոցիկ այսպէս ծանուցելոց՝ յառաջ երթեն մեզ խնդիրք ո՛չ արհամարհելիք. նախ Դասականացն՝ թէ արդեօք ամենայն մարդկային գործողութիւնք ունիցին զբարոյականութիւն իւրեանց, եթէ են և գործողութիւնք ոմանք անտարբերք՝ այն է ո՛չ բարի և ո՛չ չար. Երկրորդ՝ վայրապարայն Հոբբէսիոս ուրացաւ զամենայն զներքին բարոյականութիւն մարդկային գործողութեանց, և ասաց՝ այդմ լինել ի գրական մարդկան և մեծամեծացն ի կամաց կամ կարծեաց. բայց մարդս բնութեամբ անտառային է, և բարոյից անընդունակ. Ըստ վրիպելոյ վերնոյն՝ վրիպեցաւ և Սէն-Լամպէրդն, որ ասաց՝ չլինել ներքին բարոյականութեան գործողութեանց, այլ թէ այդ ամենայն յառաջ գայ ի բազմախաւն կարծեաց ժողովրդոցն և ազգաց. Հաւկ ուրեմն՝ Բուֆֆէնտորֆ ասաց. թէպէտև մարդկային գործողութիւնք ինքնին անտարբերք են առ բարութիւնն և չարութիւնն, և զուրկ յերկոցունց, բայց օրէնք գրական կամ աստուածային կամքն կամեցան՝ զի գործողութիւնքդ բարի իցեն և չար. Սոցին ընդդէմ յառաջակայ յօդուածդ ուրոյն ուրոյն առաջարկութեամբ ցուցցուք զճշմարտութիւն բանին և զմոլորութիւն վարդապետութեան սոցայն ճշմարտութեան.

---



# ՅՕԴՈՒԱԾ Դ.

## ՑԱՂԱԳՍ ՍԿԶԲԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

Թէ իցե՞ն արդեօք մինչ ի մարդկային գործողութիւնս անտարբերք.

ՅԿԴ. Ասացաք՝ թէ մարդկային գործողութիւնք կամ բարի են և կամ չար՝ ըստ որում ըստ բնութեանն օրինաց և կարգի իցեն. ասացաք ևս՝ թէ են մարդկային գործողութիւնք՝ որք հարկաւ պարտաւորեն զմարդն առնել զնոսա՝ ըստ որում հարկաւորք ի պահել զմարդն ի կարգի բնութեան. և մինչ և յաւիտեան ժամու և վայրկենի է պարտաւորութիւնդ այդ, զորօրինակ վասն ամենայն վայրկենի կենաց պարտիմք սիրել զԱստուած՝ զԱրարիչն մեր, և կամ գոնէ ունել զխոստովանութիւն և զպարտաւորութիւն սիրելոյ զնա. նոյնպէս են գործողութիւնք ոմանք, որք հարկաւ զրկեն և արտաքսեն զմարդն ի կարգէդ յայդմանէ, յորոց ևս մինչ և համապազ խորշիլ պարտիմք, և ո՛չ իսկ յակնթարթի միոջ արժան է ատել զԱստուած, են. Բայց են ևս գործողութիւնք, այնպէս զի թէ՛ լիցին և թէ՛ չլիցին, ո՛չ օգտեն և ո՛չ վնասեն մարդոյ, և ո՛չ իսկ արտաքս ձգեն զնա քան զկարգ բնութեան. Արդ զայսմանէ խնդրի, թէ իցե՞ն այնպէս՝ զի ո՛չ բարի իցեն՝ և ո՛չ չար, այլ անտարբերք, վասն որոյ և մարդս ազատ ի գործելն զնոսա.

Ոմանք նախ՝ ի տեսակէն խորհելով և կամ ըստ տեսակի գործողութեանց՝ ընդունիմք գոլ գործողութեանց ոմանց անտարբեր. բայց ո՛չ ի անհատէն, և կամ ըստ ոճոյ իմաստասիրաց՝ յանհատ խորհելով զգործողութեանց. Ի բացայայտութիւն բանիցս ասեմ. գործք անտարբերք գտանիլ կարեն ի տեսակի և ի տեսակէն՝ յորժամ խոր-

հիմք զգործոյն առարկայէս միայն, ի բաց առեալ զվախճան գործոյն և զայլ պարագայս. զորօրինակ ի բաց առեալ զվախճանն և զպարագայն շրջելոյ, արդէն առարկայէս շրջելն չունի իւիք ոչ չարութեան և ոչ բարութեան. և առեալ լինի գործողութիւնն ի [illegible], յորժամ առնեմք զգործն յայս կամ յայդ պարագայս, վասն այսր կամ այդր վախճանի. քանզի պարագայն և կամ վախճանն է՝ որ առնէ զգործողութիւնն բարոյական. այսպէս գիտելով չափ մեր զբուն իմաստ առաջարկութեանս առեմք. Թէպէտև իցեն գործողութիւնք անտարբերք բարոյից ի [illegible] կամ ըստ ախտակի, բայց ոչ երբէք ի [illegible] և յանձնառու. քանզի մարդն ըստ որում իմաստուն և գործող վասն վախճանին անհնար է՝ զի գործեսցէ առանց ներգործական զօրութեան, արդ թէ ոչ՝ հետևէր անտեղութիւնն թէ՝ կարէ լինել ներգործութիւն առանց պատճառի կամ բանաւոր պատճառի, մերթ զօրութեամբ և ի շնորհս վախճանին գործեմք զոր գործեմք: Դարձեալ՝ հետևէր թէ գործողութիւնն կատարեալ զուրկ ի սեփական վախճանէն ոչ է մարդկային, այլ անբանից. քանզի անբանք միայն առանց բանի և հարկաւորապէս զգայութեամբ բնութեանն գործեն. բայց բանք մեր ոչ են զգործողութեանց մարդոյ, այլ մարդկային գործողութեանց՝ այն է գործել գիտութեամբ մտացն և կամաց. և քանզի կամաւոր գործողութեանց բնութիւնն ի հարկէ և էականապէս պահանջէ՝ զի գործն յառաջ գայցէ ի ներքին սկզբնէ և ծանօթութենէ վախճանին, ուստի եթէ խնդիրն է զմարդկային ներգործութենէ՝ հետևի թէ չկարէ առանց վախճանի լինել. ուստի չիք մարդկային ներգործութիւն անտարբեր ի [illegible]՝ այն է ի մարդկային գործողութիւնն, զոր աստ և այժմ գործեմք: Ըստ այսմ ամենայն գործողութիւնք մեր գրելոյ կամ չգրելոյ, ուտելոյ, ննջելոյ և այլ ո՛ր և իցէ գործողութիւն թէև չիցին՝ ըստ որում մարդկային գործողութիւն՝ չկարէ անտարբեր լինել յանձնառն և ի [illegible], այլ գտնէ վասն բարի կամ չար վախճանի լինի. այնպէս զի՝ եթէ վախճանն բարի



լիցի, այլովքն համդերձ բարի լիցին և գործողութիւնքս. քանզի ո՛րպիսի և իցէ գործողութիւնք միշտ գործադրին ի մէնջ բարութեան կամ կատարելութեանն վախճանաւ, թէև անտարբերք լիցին առարկաբար՝ բարի լինին հարկաւ զօրութեամբ վախճանին: Ահն իբր առաց ճշմարտապէս և յառաջնոց ումն՝ ամենայն մարդկային գործողութեանց դառնալ ի փառս Տեառն. «Թէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, զամենայն ի փառս Աստուծոյ արասջիք:»

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

### Բարոյականութիւն մարդկային գործողութեանց ոչ կախի ի կարծեաց ժողովրդեան, և ոչ ի մարդկային օրինաց:

ՑԿԵ. Նախ՝ կարծիք ժողովրդեան զանազանին յիրս անտարբերս ի բարոյականութեան, և ոչ ի բարոյականն. քանզի բարոյականութիւնն է յարմարութիւն իրին ըստ կարգի բնութեան և սկզբանց խղճի մտացն և բնութեան օրինաց. իսկ արդ կարգ բնութեան անփոփոխ է, սկզբունք ճշմարիտք մտացն անփոփոխ են, և օրէնք բնութեանն անփոփոխ են. ուստի բարոյականութիւնն ոչ կախի ի բարոյական կարծեացն մարդկան, ըստ որում սկզբունք և հիմունք բարոյականութեան անփոփոխ են: Զկարգ մարդկային բնութեանն ոչ միայն մարդիկ, այլ և ոչ իսկ Աստուած կարէ փոփոխել. ուստի և ոչ զներգործութիւնս կամ լաւ ևս ասացից՝ զյարմարութիւնս կամ զանյարմարութիւնս այնոցիկ սկզբանց, կամ գործոցն նոցին սկզբանց և կարգի բնութեան: Արդ եթէ ըստ այսմ կարգի չկարէ փոխել և ոչ Աստուած զայդ, ո՞ւր մնայցեն կամք և կարծիք դիւրաշարժք մարդկան ազանց: Սոյնպէս ասասցես և զյարմարութենէ օրինաց բնութեան և սկզբանց մտաց, որք մետաֆիզիքական գոլով ի ճշմարտութեանն իւրեանց, եթէ ոչ կախին և ո՛չ իսկ յաստուածային ամենակարող զօրութենէն և ո՛չ ի կամաց նորա, ո՞ւր մնայցեն կամք տկարք արարածոցն: Դարձեալ՝ ըստ բանի Տուղղիոսի՝ «զոր անթիւ անհամար ազգք և ազինք՝

մի, հաստատ և հաւասարապէս ունին ի զանազան դարս, ի զանազան ազգս, ի զանազան տեղիս, ի զանազան բարուց և սովորութեանց ժողովուրդս, օրէնք բնութեան համարիմ զայդ. մինչ օրէնք բնութեան փոփոխի՞ն, մի՞թէ օրէնք բնութեան եղծանի՞ն ,,։ Արդ յամենայն ժամ ուսաք ի Հնախօսութեանց գոլ բարի սիրել զԱստուած և զընկեր իւր, խորշիլ ի գողութենէ, ի մարդասպանութենէ, են. ո՞չ ապաքէն եթէ բարոյականութիւնն կախէր ի կարծեաց տիրապէս, երբեմն զոր յառաջն առաքինութիւն ունէին նախնիքն մեր՝ զնոյն այսօր կարէաք մոլութիւն ունել. և կամ՞ զոր այժմ մեք բարի դատիմք, նախահարքն մեր չար։ Զի՞ է, զի միշտ մի և նոյն նիւթ, մի և նոյն գործք, մի և նոյն սկզբունք, որ յառաջն ընմարդկան եդին ի կարգ վայելուչ զկենցաղավարութիւն, նաքին են՝ որք և ցայսօր տիրեն մեզ, ստիպեն հետևիլ բարեացն գործոց հարցն մերոց։ Հետևէին անտեղութիւնք անդամ, զի դնէր ներգործութիւն առանց պատճառի, և հաստատութիւն, միօրինութիւն, նմանութիւն, բարոյականութիւն գործոց չլինէր, չգտանէր ինչ և ոչ բնաւ ինչ. և եթէ կարծիք են՝ ասիցեն ոմանք, նոյն կարծիքն արդէն լինելեան ունին և ենթադրեն զգաղափար իմն կամ զհիմն կարծեաց. քանզի կարծիքն է ընդունումն կամ հաւանումն մտաց միում իմիք, վասն հաւանական փաստից ումանց, բայց և նոքիմբք ոչ հանդչին միտք իսպառ, այլ մնան ի տարակուսի։ Ուրեմն զայդ՝ զոր ինքեանց իբրև հիմն ենթադրեն՝ ճշմարտութեան կարծիքդ, կոչել պարտ է սկիզբն բարոյականութեան, և ո՞չ զնոյն կարծիսն. քանզի լինէր՝ որպէս ասացաք, ներգործութիւն առանց բանաւոր պատճառի։ Երկրորդ անտեղութիւնն է, զի դատողութիւնքդ զանհամեստութենէ և զանկարգութենէ բազում գործողութեանց մարդկան յայտնի են և բացայայտք. զորօրինակ սիրել զԱստուած արժան է, եթէ դատողութիւնքդ այդուքիկ ի կարծեաց մարդկան յառաջ գային և յաղանց, ապաքէն բացայայտ ճշմարտութիւնք ի կարծեաց յառաջ գալ պարտէին. ուրեմն ներգործութիւնն գերագոյն լինէր



քան զպատճառն։ Ուր թողցուք, զի ո՞չ այնքան դիւրինք են մարդիկ զկարծիս մարդկան՝ եթէ ո՞չ համաձայնք գտցին բնութեանն կարգի և օրինաց՝ իբրև ճշմարտութիւնս ունել. նա՝ յաւէտ բարոյականութիւնն մարդկային գործողութեանց պատճառ է՝ զի զկարծիս չընդունիցիմք իբրև ճշմարտութիւն։ Զոր ասեմք զկարծեաց ազգացն,

ՑԿԶ. Զնոյն ասել կարեմք զգրական մարդկային օրինաց։ Օրէնքն իբրև կանոն ուղիղ կենաց և ուղիղ գործոցն՝ չկարեն ստիպել զմարդն, եթէ ո՞չ յեցեալ ի զօրութիւն բարոյականութեան առարկայիցն՝ զոր հրամայեն ի գործադրութիւն. օրէնք ունին վասն վախճանին իւրեանց զհասարակացն բարութիւն, ուրեմն չկարեն ծնանել զայն, որ զօրութեամբ յառաջագոյնն է. զի ազանցն օգուտ նախընթաց կամ բարութիւնն ստիպեն զմեծամեծս ի դնել և ի գրել զնոսա, այն է զօրէնս. ո՞չ թէ օրէնքն առնեն զինչ բարի կամ օգտակար, նա՝ մանաւանդ օրէնքն յայնժամ օրէնք են և պարտաւորեն զմարդն, յորժամ ունին զառարկայս իւրեանց բարիս, և ո՞չ թէ չարս. ուստի օրէնքն և օրինացն պահպանութիւն ի բարոյականութենէ անտի մարդկային գործողութեանց յառաջ գան. յաւե՛լ և զայս թէ օրէնքն կախեալ ի մարդկային ազատ կամաց (արդ խօսիմք զմարդկային դրական օրինաց, ո՞չ թէ ըզբնական աստուածային օրինացն)՝ փոփոխական են՝ մինչ բարոյականութիւնն անմիջապէս յառաջ գալով ի բնութեանն հաստատ և անփոփոխ կարգէ և ի բնական օրինաց՝ անփոփոխ է և հաստատուն. զի՞արդ որ նուաստագոյնն է՝ ծնանել կարէ զգերագոյնն քան զինքն, և կամ հնարաւո՞ր իմն է տալ ուրուք զոր ոչն ունի՝ այլում. որ ընդդէմ է ուղիղ սկզբանց մտացն. քանզի սկզբունք են գոյցես ընդ առածս անցեալ առ ամենայն իմաստասէրս, թէ ի մարդկային գործողութեանցն զբազումս այնու առնել պատուիրեմք՝ քանզի բարի են, և բազումք այնու բարի են՝ զի պատուիրին կամ վասն պատուիրանի. և ընդհակառակն բազմացն այնու գարշիլ պատուիրեմք՝ զի չար են, և բազումք չար են այնու՝ զի պատուիրին կամ վասն պատուէրին։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Գ.

Բարոյականութիւն մարդկային գործողութեանց ոչ կախի յաստուածային սոսկ կամաց։

ՅԿԷ. Ազատ կամացն առարկայ հարկաւ փոփոխական լինել պարտի ինքնին՝ որպէս զի տիրապէս ազատութիւնն ներգործական պատճառին անարգել ի գործ դիցի. արդ ասացաք արդէն բազմիցս՝ թէ էութիւնք իրաց ըստ որում բարութիւնք և ճշմարտութիւնք փոխել չկարեն ո՛չ միայն յարարած կամաց, այլ և ո՛չ յաստուածային կամաց։ Եւ պատճառն երկրորդ է՝ քանզի մարդկային գործողութիւնք բարոյականք ի բնութեանն հաստատուն օրինաց և ի կարգէն յառաջ գան և չափին. արդ եթէ կամքն աստուածային չկարէ փոփոխել զօրէնս բնութեան և զկարգ, հետևի հարկաւ՝ թէ և ո՛չ զբնութիւն մարդկային գործոյն փոխել կարէ, միայն թէ սոքա ի յարմարութեան և ի համաձայնութեան կայցեն ընդ բնութեան օրէնս և ընդ կարգ։ Երրորդ պատճառ չկարելոյ մարդկային բարոյական գործողութեանց փոխել յաստուածային կամացն է, քանզի բարոյականութիւնն կամ բարութիւնն և չարութիւնն մարդկային գործողութեանցն են յարմարութիւնք և անյարմարութիւնք աստուածային գերագոյն բնութեանն կամ անսահման էութեան աղբերն ամենայն բարութեանց և նախատիպին ամենայն էից։ Արդ քանզի կամքն աստուածային չկարեն փոխել զաստուածային բնութիւնն կամ զէութիւն, որ է հիմն բարոյականութեան՝ այն է բարութեան, հետևի թէ և ո՛չ իսկ կարեն նոյն կամքդ փոփոխել զյարմարութիւնս և զանյարմարութիւնս, կամ զնմանութիւնս և զաննմանութիւնս նմին իրում աստուածային բնութեան կամ էութեան. այնպէս զի՝ որ յարմարն է, առնել՝ զի չիցէ յարմար իրում էութեան, և որ ճշմարիտն է, առնել՝ զի չիցէ ճշմարտութիւն։ Որ զայդպիսիս առնել յանդգնին, գիտիցե՞ն արդեօք յո՛ր վայր չարութեան և անմտութեան արկանեն զանձինս իւրեանց. զի



յասացելոյս ակներև հետևի՝ թէ Աստուած անիրաւ և անկար է փոխել զբարոյականութիւն մարդկային գործոց, և նոյն բանն հակառակորդիս Բուֆֆէնտորֆի՝ այսմիկ հաւասար է. Աստուած կարէ ուրանալ զանձն, զբնութիւն և զճշմարտութիւնն, և փոփոխել զէութիւն իւր։ Զիա՞րդ հնար է զսէրն Արարչին պահանջեալ յարարածոցն, յատելութիւն Աստուծոյ փոխադրել. զանհաւատարմութիւնն, զանմեղին սպանումն, զյափշտակութիւն, զգողութիւնն, ևն, ևն, որք չար են յինքեանս ի ներքուստ, առնել՝ զի բարի լիցին. բայց այդպիսեացն վարդապետութիւն այդքան միայն կարէ լինել զԱստուծոյ, զորոյ ո՛չ երբէք մեծարեցին զանունն երկրպագելի։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Դ.

Բարոյականութիւն մարդկային գործողութեանց կախի անմիջապէս ձեւոց համեմատական կամ ի բնական կարգէ ի հարց մերոց ընթացից, և միջոցի և նպատակաց յաստուածային կամաց և կարգին։

ՅԿԸ. Ապաքէն ասացաք՝ թէ բարութիւն և չարութիւն գործողութեանց մերոց ճանաչի և չափի ի յարմարութենէ և յանյարմարութենէ օրինացն և կարգի բնութեան. քանզի զի՞նչ է բարութիւնն, եթէ ո՛չ որ յարմարի և ծառայէ բնութեանն և վախճանի իւրում. արդ՝ զօրէնս բնութեան և զկարգ մեք ո՛չ ճանաչեմք՝ եթէ ո՛չ բանիւ մտաց մերոց։ Գիտելով չափ՝ թէ ո՛չ երբէք գործողութիւնք մեր նիւթապէս հակառակք՝ եղեալ ընդդէմ օրինացն և կարգի բնութեան՝ առանց մտացն ծանօթութեան՝ մեզ ի յանցանս դարձցին կամ վերագրեսցին. զի եթէ մտացն օժանդակութեամբ պակասեսցիմք ի գործողութեան իմիք, այդ ո՛չ մարդկային, այլ մարդոյ յաւէտ գաւակցի գործողութիւն. ուրեմն բարութիւն գործոց մարդկան խնդրի հարկաւ՝ զի առարկաբար պարագայիւքն և վախճանաւն ի յարմարութեան և ի համաձայնութեան գտցի ընդ կարգ և օրէնս բնութեան. և քանզի յարմարութիւնդ այդ անմիջապէս մի միայն բանիւ մտաց մերոց ըմ-

բղխի և ճանաչի, ուրեմն բարոյականութիւն գործողու-
թեանց մարդկան կախի անմիջապէս և մերձաւորապէս ի
գրական կարգէ բնութեան և օրինաց՝ ուղղապէս և անըն-
տերիւր ի միայց մերոց ծանուցելոց. բայց զիակն պա-
հանջելով, գտանեմք զի առարկայն, օրէնք և կարգն
բնութեան յաստուածային իմաստութենէ անտի ի գործ
եդեալ են։ Եւ քանզի միտքն և իմաստութիւնն աստուա-
ծային միայն ի դնել զկարգ իրացն ոչ ստեղծանէ զէու-
թիւնս իրացն, այլ նշմարելով զամենեսին զնոսա յաս-
տուածայինն անդ առարկայ յաւիտենական, և յաղբիւրն
ամենայն բարութեանց (Ճ. ՃԱ. ՃԲ.)՝ ըստ իւրաքանչիւ-
րոցն՝ և ի նմանութիւն նոցին նշմարելոցն յարմարան անդ
բարութեան, ներկայ կացուցանէ զնոսա իւրումն աս-
տուածային կամաց, և կամքն զչգոյն կամ զարտաքուստ
կարելի էակօք ի գոյ ածէ յեղելութիւնն արգեամբ՝ որ-
պէս տեսաք յլուսաբանութեան անդ. Նմին իրի կարեմք
ասել՝ թէ բարոյականութիւն մարդկային գործողութեանց
են անմիջապէս օրէնք և կարգ բնութեանն ի միայց ծա-
նուցեալ, և միջապէս յաստուածային իմաստութենէ և ի
բարութենէ կամ բնութենէ՝ իբրև յաղբերէն ամենայն
ճշմարտութեանց և բարութեանց։ Եթէ գործողութիւնք
մեր այդպէս դիցին ի գործ, որք լիովին ծառայեն կարգի
բնութեանն և յարմար ծանիցին ի միայց անտի մերոց՝
բարի են. իսկ եթէ չիցեն ի յարմարութեան ընդ կարգի
բնութեան, և ոչ ծառայեն վախճանի բնութեանն՝ չար
են։ Ուրեմն բարոյականութիւնն մարդկային գործոց ոչ
ծագեցաւ ի խառնիճաղանճ ազգաց աշխարհիս, և ոչ ի
բռնութենէ կամ ի գրական օրինաց և վճռոցն մեծամեծաց
և իշխանաց, և ոչ իսկ յաստուածային կարողութենէ և
կամ ի կամաց, այլ միայն ի միայս ծանուցեալ կարգէ և
յօրինաց բնութեանն, որք յառաջ գան յաստուածայնոյ
անտի էութենէ և ի միայց՝ իբրև յաղբերէն ամենայն բա-
րութեան և ամենայն ճշմարտութեան։



## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՅԿԹ. Ասէ Բուֆֆէնտօրֆ (*). բարոյականութիւնն
մարդկային գործողութեանց՝ է յարմարութիւն կամ ան-
յարմարութիւն նոցա ըստ կանոնի կամ օրինաց, և օրէնքն
են հրաման մեծաւորին. զիա՞րդ կարէ բարոյականութիւնն
լինել յառաջագոյն քան զօրէնս։ Բ. Որք ըստ ի կամացն
Աստուծոյ դնեն զայլ կանոն բարոյականութեան մարդկա-
յին գործողութեանց, դնեն զսկիզբն ինչ Աստուծոյ հա-
ւասար և համյաւիտեան, յորմէ հարկաւորապէս կախի-
ցի Աստուած՝ յորոշելն զկերպ և զձև իւրաքանչիւր իրացն։
Գ. Անկանին ի թիւր շրջանն. քանզի հարցեալ ցնոսա՝ ո՞ր
իրք են որք կարգադրին բնական օրինօք՝ պատասխա-
նեն, նոքին՝ որք բնութեամբ իւրեանց յինքեանս բարի
են կամ չար, և եթէ թախանձիցես՝ ո՞յք են նոքին որք
բնութեամբ իւրեանց յինքեանս բարի են կամ չար, առ-
ցես պատասխանի՝ նոքին՝ որք բնութեան օրինօքն կար-
գադրին։ Դ. Եդեալ իսկ և ոչ ընկալեալ զվարդապե-
տութիւնդ՝ տակաւին ի տարակուսի կայ՝ թէ ո՞յք իցեն
գործողութիւնքդ այդոքիկ ինքնին չար, և թէ որո՞վ
նշանաւ որոշիլ կարեն յայլոցն։ Ե. Ամենայն ո՛ր և իցէ
գործողութիւնն ինքնին անտարբեր կայ ի բարոյականու-
թիւնն. զի բա՛րձ զօրէնս, և ահա բառնի ընդ նմին
ամենայն բարոյականն գործողութեանց։

Առ Ա. ասեմ՝ զանազանելով զմեծագոյնդ. է յար-
մարութիւն յաւիտենական օրինաց և բնութեան՝ ընդու-
նիմ. է յարմարութիւն գրական օրինաց ընդ աստուածային
կամացն անգամ՝ ընդունիմ. է յարմարութիւն միայն
գրական աստուածային կամացն ընդ օրինաց եւեթ՝ ուրա-
նամ. և ընկալեալ զփոքրն, ուրանամ զհետևութիւնդ, և
ի բացայայտութիւն ասացելոցս՝ ասեմ։ Բուֆֆէնտօրֆ չփո-
թէ զերկու իմն ի միասին. այլ է ասել՝ բարոյականու-

(*) Յաղագս բնական և ազգացն իրաւանց. Գիրք. Ա. Գլ. Բ.։

թիւնն է յարմարութիւն կարգի բնութեան և օրինաց բնութեան, և ո՛չ ամենևին գրական կամացն օրինաց։ Տեսցուք զկնի՝ թէ օրէնք բնութեանն և կարգ անփոփոխ են, և ո՛չ են. քանզի ո՛չ եթէ կամքն աստուածային այդպէս զնոսա լինել կամեցաւ անփոփոխս, այլ զի այդպէս են հարկաւորապէս՝ նմին իրի կամեցաւ. բայց ընդհակառակն՝ գրական և աստուածային ազատութեանն օրէնք են, քանզի կամեցան կամքն աստուածային այդպէս լինել. ո՛չ թէ քանզի այդպէս էին՝ նմին իրի կամեցաւ ըզնոսա. բայց զօրէնս և զկարգ բնութեանն անգամ կամեցաւ կամքն Աստուծոյ, և այդպէս կամեցաւ և սիրեաց, որպէս իմաստութիւն միայն իւրոյ ծանոյց զայդասիկ և առաջնորդեաց նմա. և քանզի կամացն է հետևիլ միայն առաջնորդութեան, և միւս անգամ միայն կարեն ճանաչել զբնութիւն և զկատարելութիւն իւրաց, և ո՛չ թէ առնել կամ սահմանել զիրս, հետևի՝ թէ կամքն և միւս չկարեն ընդ իւրև ունել զօրէնս և զկարգ բնութեան, այլ յաւէտ հետևին նոցա։ Գործունեայ և արդիւնաւոր աստուածային միայն հարկաւ պահանջի և առարկայ իմն արդիւնաւոր. առարկայս այս է աստուածային էութիւնն, որ է աղբիւր ամենայն բարութեանց, կարգի և օրինաց բնութեան, և արմատ ամենայն կատարելութեանց։ Ուստի կարգ և օրէնք բնութեանն կան յաստուածային էութիւնն, և քանզի աստուածային միտք զոր ինչ նշմարէ յիւր աստուածային էութեանն, ներկայացուցանէ իւրում աստուածային կամաց, հետևի՝ թէ կարգ և օրէնք բնութեանն յառաջագոյն են, առաջաւորութեամբ ո՛չ ժամանակի, այլ կարգի և բնութեան, քան զաստուածային կամս. ուրեմն օրէնք և կարգ բնութեան չեն ի կամացն անտի եղեալք կամ կարգադրեալք, այլ ի մտացն, որ ըմբռնէ զոր ինչ յառարկայն յաւիտենական գտանէ։ Այս՛ տեսականապէս իսկ նկատմամբ մարդկային գործողութեանցն ի թանձրացեալն խօսելով, այս՛ իւրաքանչիւր գործողութիւնքս յետոյ են՝ ո՛չ միայն կարգի բնութեանն և օրինաց, այլև կամացն Աստուծոյ, թէ գործողութիւնք



մեր յարմար գոյին յաւիտենական օրինացն և յաւիտենական կարգի բնութեանն որ յաստուածային էութեանն զբարոյական բարութիւնն ունիցին. եթէ չյարմարեսցին յաւիտենական օրինաց և կարգի բնութեանն, բարոյապէս չար լիցին։ Բայց ո՞չ գիտէ թէ բարոյականութիւնն գործողութեանց մերոց, և բարոյականութիւնն, այսպէս ասցեց ֆիզիքական, զկնի աստուածային կամաց է. բայց ո՛չ օրէնք և կարգ բնութեանն, որ յառաջագոյն է քան զամենայն կամս և զմիտս ո՛չ միայն մարդկան, այլ և Աստուծոյ կամս և զմիտս, և գտանի յէութեան իւրում. երևի թէ Բուֆֆէնտորֆ զյաւիտենական և զմեթաֆիզիքական օրէնս և զկարգ բնութեանն չփոթեալ իցէ ընդ գրական և ընդ ֆիզիքական օրէնս և կարգ բնութեան։

Առ Բ. ասեմ՝ զանազանելով զնախընթացն. սկիզբն համայաւիտեան Աստուծոյ, ո՛չ որոշ յաստուածային էութենէն, այլ կախեալ ի նմանէ՝ ընդունիմ. ո՛չ որոշ և անկախ յաստուածային էութենէ՝ ուրանամ. զոր մերին բացատրութիւնքն առ բաւականին ի լոյս բերին։

Առ Գ. ասեմ՝ ուրանալով. քանզի թէ և որք բարիքն են՝ խնդրին յօրինացն անտի, բայց ո՛չ՝ զի խնդրին յօրինաց անտի բարիք. այսպէս զհամեստութիւնն պահանջեն և պատուիրեն օրէնք, բայց չհետևի անտի թէ օրէնք զայդ առնեն. կամ թէ համեստութիւնն ոչ է համեստութիւն՝ զի խնդրի յօրինացն, այլ զի համեստ է՝ նմին իրի խնդրի։ Այս՛ լինէր յիրաւի մոլար շրջան, եթէ ասէաք զօրօրինակ այն է համեստութիւն, զոր պահանջեն օրէնք. և այն է օրէնք՝ զոր պահանջէ համեստութիւն. բայց չասեմք այդպէս. այլ այն է բարութիւն, որ համաձայն և յարմար է օրինաց և կարգի բնութեանն. քանզի այլ է յարմար գոլ իրիք կարգի բնութեան և օրինաց, և այլ առնուլ զյարմարութիւնն յօրինաց անտի գրականաց. այս՛ որ ի յարմարութեան կայ ընդ յաւիտենական օրէնս և ընդ կարգ բնութեանն՝ բարի է, բայց ո՛չ նոյն բարութիւնն օրէնք են. զի գործն բարոյականութեան ո՛չ չփոթի ընդ կանոնն բարոյականութեան. իսկ ի միտս ասխայցն բառդ «էէ» չեն յաւիտենական իրացն բնութիւն և կարգ բնութեան՝ յայտնեալք

տուածային իմաստութեամբ, այլ գրական օրէնք աստուա-
ծային կամաց, որ ազատութեամբ կարէ փոխել զոր հաստա-
տեալն, և հաստատել զոր եղծեալն։ Յայսմիկ վրիպին, քանզի
օրէնք գրական հետևին քաղաքականութեան գործողութեանց,
և ենթադրեն արդէն զքաղաքական կարգն, ո՛չ թէ ստեղծա-
նեն զնա, բառ որում ցուցաք ի վերոյ, նա՛ մանաւանդ օրէնք
գրականք ո՛չ յառաջոյն իմն բնութեանն, այլ պահպանեն
զնա, և կամին՝ զի բնութեանն կարգ պահեսցի։ Ուստի
եթէ Բուֆֆէնտորֆ առնուլ՝ օրէնք բնութեան, իմանայ
զգրական օրէնս ազատ կամացն Աստուծոյ, առեմք․ քա-
ղաքականութիւնն ոչ կախի ի նոցանէ, այլ սոքա ենթա-
դրեն զայնս․ իսկ եթէ իմասցի զներքին օրէնս կամ ըզ-
կարգ բնութեան, որ իմաստութեամբն Աստուծոյ յէու-
թեանն անդ նշմարեալ ի յայտ գան բնական լուսովն յա-
ռաջած բնութենէ անտի՝ միաբան գտանիմք ընդ նմա։

Ա․ռ․ Դ․ ուրանամ զամենայն․ քանզի բնական լու-
սով մտացս, որ է հաղորդութիւն աստուածային մտացն և
իմաստութեան, կարեմք ճանաչել՝ թէ ո՞յք ոմանք են գոր-
ծողութեանց, որ յարմարին օրինաց և կարգի բնութեա-
նըս, և ո՞յք հակառակք սմին, և մերուստ վերջին վախճանի։

Ա․ռ․ Ե․ առեմ՝ զանազանելով դարձեալ․ եթէ օրինօքն
իմասցի՝ բառ մտաց Բուֆֆէնտորֆայ, ազատ աստուա-
ծային կամացն սահման և կարգ գրական և վճիռ, ուրա-
նամ՝ թէ յառաջ քան զԱստուծոյ կամացն վճիռ և զսահման՝
չիցէ քաղաքականութիւն գործոց․ իսկ թէ օրինօքն իմա-
ցի աստուածային էութիւնն և իմաստութիւն որ զէութիւ-
նըս իրացն և զամենայն կարելեացն յիրեան պարփակէ,
և բանիւն իւրով սահմանէ՝ ընդունիմ․ քանզի յառաջ քան
զաստուածային էութիւն և զիմաստութիւն չիք և չկարէ
լինել իրական իմն էակ և ո՛չ իմանալի էակ։ Այլ որ ինչ էն՝
յէութենէ անտի Աստուծոյ է, իբրև յարմարոյ և յաղբերէն
ամենայն էակացն և կատարելութեանց իւրեանց բնութեանն․
և որ ինչ իմանալի էակ է, և այդ յԱստուծոյ անտի իմա-
ստութենէ է, որ (ձԱ․ ձՐ․ ձԳ․) անխափան զէութիւնն աս-
տուածային նշմարէ՝ իբրև ինքեան առարկայ յաւիտենական։



# ՅՕԴՈՒԱԾ Դ․

## ՑԱՂԱԳՍ ՎԵՐԱԳՐԵԼՈՅ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾՈՂԻՆ, ՈՒՐ ԵՒ ՑԱՂԱԳՍ ԱՐԴԵԱՆՑ ԵՒ ԱՊԱՐԴԵԱՆՑ ՆՈՑԻՆ

Յհ․ Մարդս, [illegible], ազատ է և ազատու-
թեամբ առաքելի ի բարութիւնս յատուկ կեանս։ Ազատու-
թիւնս այս է ազատութիւնն այն իսկապէս, որ կոչի [illegible]
[illegible], և սմին իբր ազատութիւնն անտարբերու-
թեան մարդկան վայելէ․ քանզի առարկայք կամաց նորա
թէպէտև բարի են, և [illegible] խնդրին և փափա-
գին ի կամաց, բայց և ի վերայ այսր ամենայնի ո՛չ այն-
պէս բարի երևին և են առարկայքս այսորիկ կամացն,
մինչև լինել նոցա գերագոյն բարի, և թուիլ և գոլ լցու-
ցիչք ամենայն փափագանացն, այլ [illegible], և ո՛չ
[illegible] և [illegible] զօգեալք ընդ գերագոյն բարին՝
այն է վախճանն վերջին և յաւիտենական երջանկութիւն։
Վասն որոյ պակաս գոլով և թերի առարկայքդ, ո՛չ իսկ
կամք մարդկային հարկաւորապէս ի նոսա առաքելի, այլ
կարէ բերիլ և կամ չբերիլ առ նոսա, այն է անտարբե-
րութեամբ կայ առ նոսա․ և սմին իբր է՝ զի գործողու-
թիւնք վերագրին միայն գործողին իւրեանց, և ո՛չ այ-
լում ումեք, և նա միայն տէր կոչի գործողութեանցդ, և
սոքա գործ նորա․ ուստի վերագրել զմարդկային գոր-
ծողութիւնս չէ այլ ինչ, եթէ ո՛չ սեփականել և տալ ա-
զատ ումեք զիւր մարդկային գործն, այն է զգրութիւն
կամ զզանցառութիւն գործոց իւրոց։ Բանաւոր ուրեմն
պատճառ վերագրման մարդկային գործողութեանցն է
ազատութիւնն․ և այդ յայտ անտի է, զի ամենայն ոք,
որ կամիցի զանձն արդարացուցանել ի պարտաւելի իմն
գործողութենէ, առաջի ամենեցուն աղաղակ բառնայ թէ
ես ո՛չ արարի զայդպիսի գործ, կամ թէ հարկադրեալ
արարի զայդ։ Ուրեմն կամացն և ազատութեանն պակա-

ութիւն միայն անպատիր առնէ զմարդն, և ոչ այլ ինչ, և ընդհակառակն մի միայն պատճառն սեփականելոյ զգործողութիւն ինչ ումեք է նոյն ազատութիւն նորա։ Բայց

ՑՀԱ. Չիք պէտք չփոթել զսեփականել գործոյն ընդ բարոյականութիւն գործոց, թէպէտև յամենայն գործս գործողութիւնս յարակից լիցին միմեանց. զի հնար է երբեմն լինել գործողութեան ուրուք ազատութեամբ, և սեփականել գործողին նիւթականապէս. այն է գործն միայն՝ առանց տալոյ նոյն գործողին և զբարոյականութիւնն. քանզի երբեմն առ պակասութեան ծանօթութեան միայն՝ ազատութեամբ գործել կարեմք զարժանի ինչ գործողութեան՝ մերթ անարժան է. զորօրինակ սպանանել զատաւորին զանմեղն յանցաւոր կարծեցեալ յամենեցուն։ Բայց այդ ոչ յընդհանուրն, այլ յանհատն. և ի մասնաւորի բարոյականութիւնն յարակից է ազատութեան և վերագրեալ գործողութեան։ Եւ վասն մարդկային գործողութեանցն ազատութեամբ գործադրելոյ ի մարդկանէ և նոցին վերագրելոյ, յայտնապէս և իրաւամբ լինի. զի ամենայն գործողութիւնք մարդկայինք համարին ոմանց ի գովութիւն, և ոմանց ի պարսաւ, ոմանց ի վարձս և յարգիւնս, և ոմանց ի պատիժ և ի պատուհաս։

ՑՀԲ. Արդիւնքն են՝ և սահմանին ընդհանրապէս «բարոյական գործողութիւնք արժանաւորք վարձուց»։ Բաժանի յարդիւնս [illegible], և յարդիւնս [illegible]։ Սահմանին արդիւնք [illegible] «գործողութիւն՝ որում ըստ արժանւոյն և յարդարութենէ պարտին վարձք», և կոչի իսկ արդիւնք [illegible]. և արդիւնք [illegible] կամ [illegible] է «գործողութիւնն, որում ոչ յարդարութենէ, այլ ի վայելչութենէ և բարեգթութենէ վարձատրողին պիտին և շնորհին վարձք». և վարձքն առանց արդեանց տուեալ ումեք՝ կոչին [illegible], որ ի մեծէն ի փոքրագոյն լինել պարտի. իսկ թէ յայսմանէ ի մեծագոյն, կամ հաւասարն առ հաւասարն տայ վախճան առցուցման սիրոյն՝ կոչին [illegible], առհաւատչեայ սիրոյն, յարգ կամ նուէր. իսկ թէ նկատիցէ այդպիսին պարգևին միջ-



նորդութեամբ տանել զնէր և զնպատ նորա, կոչին [illegible], են։ Մեք խօսեցուք զարդեանց։ Գեղեցիկս և իմաստութեամբ բացայայտէ մեզ Թափարէլլի Յիսուսեան զբնութիւն արդեանց (*). այլ ես ներգործութիւն վերագրութեան է արդիւնքն. քանզի եթէ վերագրեալ գործն, բայց և կամաւոր բերի յօգուտ այլոյ ուրուք, բուն իմաստ հաւասարութեանն յինքեան բերէ հետևաբար զիմաստ վարձատրութեան իբրև, որ պարտիցի հաւասար առնել զերկսին կողմանս այնորիկ՝ որ գործեաց, և այնորիկ՝ որ եգիտ զօգուտն։ Եւ ո՛ւստի հարկաւորութիւնդ այդ հաւասարութեան. ի ծանօթութենէ կարգի և համեմատութեան՝ որ ի վերայ կայ բարոյականին, ոչ նուազ քան զբնական աշխարհն։ Ճարտարապետ ոք գծագրէ զճակատ շինուածոյն. եթէ ի միոյ կողմանէ դրանն դնէ զերկուս պատուհանս, և ի միւս կողմանէ զմին միայն, տեսութիւն ամենայն ուրուք դատեսցէ (եղիցին որոյ և իցեն յանցանք) թէ նախատիպ պատկերդ անկատար է. և պատճառն է պակասութիւն համեմատութեան և միութեան. այս սկիզբնդ միութեան է առաջին ինչ ճշմարտութիւն, զոր պարտիմք ընդունել ի ձայնէ բնութեան, և չունի պէտս առաւելագունի ինչ ցուցման։ Յարմարելով զայդ ստեղծուած, և չափաւորեալ բնութեան իմիք, նա ցուցանէ մեզ, թէ պարտ է՝ զի լիցի հաւասարութիւնն ընդ մէջ իրին զոր բնութիւնն տայ, և իրին՝ զոր ընդունի. յորմէ յառաջ բերել կամի իմաստութեամբ, թէ վարձք և արդիւնքն են ի հաւասարութենէ, ի կարգէ և ի միութենէ անտի ստեղծուած բնութեանս որ հետևաբար հեզանի ի բնութեան օրէնս։

ՑՀԳ. Թէութիւնք արդեանց և վարձուցն ստացման տիրապէս, են Ա. զի մարդս յաստ կեանս իցէ. Բ. զի ազատ իցէ գործողն. Գ. զի գործն և գործիքն բարի լիցին և վարձուցն համեմատ. քանզի մի միայն յաստ կեանս մարդ արդեանց ընդունակ է, բայց եթէ կարող և

---

(*) Ճառական Աստուածաբանութիւն. Ցուցակս բնակ. իրաւ. Գիրք Ա. Ճառ Ա.

ազատ իցէ զգործ իւր արդիւնաւոր թողլոյ կամ գործելոյ. և հուսկ ուրեմն եթէ գործն թէ՛ ըստ առարկային, թէ՛ ըստ միջնորդաց և թէ՛ ըստ վախճանին բարի իցէ, և գործիչն համեմատ վախճանին՝ և ո՛չ է ընդդէմ արգելանցն բնութեան եթէ իցեն ընդհանուր պարտաւորութիւնք իսկ առնելոյ կամ դնելոյ զգործողութիւն ինչ. զի թէպէտև պարտիմք ընդհանրապէս ի սէր սիրոյ հայրենեացն բարիս գործել յօգուտ հասարակաց, հայրենեացն կամ ընկերութեան՝ յորում կամք, բայց քանզի պարտաւորութիւնդ այդ ո՛չ ստիպել հարկադրէ զիս յայդ, այլ ազատութեամբ գործել կամ չգործել կարեմ զայդ կամ զայս արդիւնաւոր գործողութիւն, կամ չահաւէտ հայրենեացս և ընկերութեանս. նմին իրի միշտ արդիւնաւոր գոլով գործողութիւնս՝ վարձուց արժանի է, և այդ վարձուցն ըստ արժան հատուցման։

ՅՀԴ. Արդ եթէ ամենայն գործողութիւնք մեր կարեն ի բարութիւն դառնալ իւրաքանչիւրոցն և հասարակացն, և եթէ սոյին երկաքանչիւրոցն՝ որպէս կարեն ի բարութիւն դառնալ, նոյնպէս իսկ ի չարութիւն, բնականապէս հետևի թէ մարդկային գործողութիւնք մեր կարեն արդիւնս ունել, և արդեանց զվարձս ըստ չափուն ընդունել՝ թէ՛ ի մասնաւորաց և թէ՛ ի բովանդակ հասարակութենէ։ Սմին իրի ըստ Սրբոյն Թովմայի (*) «արդիւնք կամ ապարդիւնք ասին ի կարգին հատուցման որ լինին ըստ արդարութեան. իսկ հատուցումն ըստ արդարութեան ումեք լինի այնորիկ աղագաւ՝ քանզի գործէ յօգուտ կամ ի վնաս միւսոյն. սակայն պարտ է խորհել՝ թէ իւրաքանչիւր ոք՝ որ կեայ յընկերութեան իմիք՝ է ըստ իմիք մասն և անդամ ամենայն ընկերութեանն. որ ոք ուրեմն առնէ զինչ յօգուտ կամ ի վնաս միւսոյն յընկերութեանն կեցողին, այդ տարածի ի բովանդակ ընկերութիւնն. զորօրինակ որ վիրաւորէ զձեռս՝ վիրաւորէ հետևաբար և զմարդն. մինչ ուրեմն գործէ ոք յօգուտ կամ ի վնաս այլոյ առանձին

(*) Բովանդ. Աստուածաբ. Ա—Բ. Խնդ. ԻԱ. Յօդ. Դ.։



ուրուք անհատի՝ երկակի անդ անկանի պատճառ արդեանց կամ ապարդեանց այնր, եղանակաւ միով՝ ըստ որում պիտի նմին հատուցումն յանհատ անձնէ՝ որում օգտէ կամ վնասէ, այլով եղանակաւ՝ ըստ որում պիտի նմին հատուցումն յամենայն միաբանութենէ։ Իսկ մինչ ուղղապէս կարգէ ոք զգործողութիւնն յօգուտ կամ ի վնաս բովանդակ միաբանութեանն, պիտի նմա հատուցումն՝ նախ առաջին և գլխաւորապէս ի բովանդակ միաբանութենէ, և երկրորդաբար յամենայն միաբանութիւնն մասանց։ Եւ մինչ գործէ ոք՝ զոր յառանձինն դառնայ յօգուտ կամ ի վնաս, նմին անգամ պիտի հատուցումն, ըստ որում այդ անգամ դառնայ ի հասարակութեան յօգուտ, քանզի և նա իսկ է մասն միաբանութեան»։

ՅՀԵ. Բայց եթէ նկատմամբ հասարակութեանն և անհատից նորա ամենայն մարդկային գործողութիւնք մեր, ըստ որում դառնան յօգուտ և ի վնաս նոցին, յարդարութենէ անտի արժանանան արդեանց կամ վարձուցն հատուցման, արդեօք կարե՞ն արդիւնս ունել և վարձուցն հատուցման ակն ունել յԱստուծոյ անտի, որ ետ մեզ զամենայն, և որում պարտիմք մատուցանել զամենայն։ Ասեմք. թէպէտև յԱստուծոյ ընկալաք զամենայն, և նմին պարտիմք զամենայն, բայց քանզի վայելեմք յազատութիւնն իւրաքանչիւրն, և ո՛չ յաղի հարկաւորութեամբն առնեմք, զոր առնեմքս, մինչ զգործողութիւնս մեր ուղղեմք՝ նախ ի փառս Արարչին մերոյ, և երկրորդ յօգուտ հասարակութեանն և յանհատից նորա. արդարև նկատմամբ Աստուծոյ անգամ գործք մեր արդիւնաւորք և վարձուցն հատուցման արժանի են. բայց ո՛չ ըստ նոյն չափոյն և եղանակին՝ զոր պահեմք առ արարածս։ Դարձեալ գրէ անդ նոյն Ս. Թովմաս. «Գործք առն ուրուք արդիւնաւորք են կամ ապարդիւնք, ըստ որում վերաբերի այլում ումեք՝ կամ նկատմամբ սեփական անձին, և կամ նկատմամբ հասարակութեանն. երկոքին իսկ եղանակաւ գործողութիւնք մեր՝ թէ՛ բարի, թէ՛ չար, արդիւնաւորք են կամ ապարդիւնք առ Աստուած՝ նկատ-

մամբ սեփական անձին, ըստ որում է վերջին վախճան մարդոյ. և պէտք են՝ զի գործողութիւնք բովանդակ վերաբերիցին ի վերջին վախճանն։ Ուստի որ առնէ զգործ իմն անպատշաճ Աստուծոյ, ոչ պահէ զպատիւ Աստուծոյ, որ պիտի վերջին վախճանի. իսկ ի կողմանէ բովանդակ հասարակութեանն տիեզերաց, քանզի յոր և իցէ հասարակութիւնն՝ նա որ անդէ հասարակութեան, գլխաւորաբար փոյթ ունի զհասարակաց բարութենէ, ուստի նմին վերաբերի հատուցանել ըստ այսց, որք բարեկամ չար լինին ի հասարակութեան. արդ Աստուած է վարիչ և տեսուչն ամենայն տիեզերաց, և մանաւորապէս բանական արարածոցն, յորմէ յայտ է՝ թէ մարդկային գործողութիւնք արդիւնաւորք են կամ ապարդիւնք՝ բաղդատութեամբ առ ինքն. ապա թէ ոչ՝ հետեւէր թէ՝ ոչ ունի Աստուած խնամս զմարդկային գործողութեանց։ Յայսոցիկ յառաջ բերեմք, թէ թէպէտև մարդկային գործողութիւնք՝ նկատմամբ Աստուծոյ անգամ արդիւնաւորք կամ ապարդիւնք լիցին, բայց ոչ ըստ նոյն չափոյ և եղանակին արդարութեան, զոր ունիմք նկատմամբ արարածոցն. քանզի մարդկային գործողութիւնք մեր՝ բարիք կամ չարք ի բարութիւն և յօգուտ հասարակութեանն, ունին զարդիւնս, և նմին իրի վարձուցն ըստ արժանւոյն ընդունակք են առ մարդիկ որոց չունին պարտաւորութիւն և կարգ և հաւասարութիւն, և միութիւնն բնութեան պահանջէ արդարութեամբ և իրաւամբ զվարձս, բայց պարտիմք աստուածային բնութեանն նուիրել զոր ինչ միանգամ ընկալաք ձրիապէս ի նմանէ. սակայն թէպէտև պարտիմք, բայց ոչ հարկադրիմք Աստուծոյ զամենայն գործս նուիրել, այլ վասն անձնիշխան գոլոյ բանական բնութեանս ի գործողութիւնս իւր, կախին սոքա ի նմանէ և ունին զմարդն գործոյ իւրեանց, և հեղինակ և պատճառ իւրեանց. ըստ այսմ անձնիշխանութեան, մարդն ունի իրաւունս պահանջելոյ արդարութեամբ յԱստուծոյ զվարձս արդիւնաւոր գործոյ իւրոյ. արդարութիւնս այս ընդ մէջ Աստուծոյ և մարդկան ոչ է ըստ ճշգրիտ և բաց-



արձակ իմաստին՝ այլ ըստ իմն համեմատութեան և պատշաճի. և քանզի իմաստութեամբն Արարչին կարգեցաւ՝ զի գործքն բարութեան վասն պատշաճողութեանն վերջին վախճանին արդիւնաւորք լիցին և վարձուցն արժանի յԱստուծոյ անտի, նմին իրի ստանալ զայդ վախճան իբրև վարձք և հատուցումն արդեանցն նոցին գործողութեանց ի յուղիղ կարգէ անտի բնութեան է խոստացեալ յաստուածային իմաստութենէ անտի, և եդեալ՝ զոր չկարեն փոխել կամք նորին, և զայդ պահանջեն աստուածային սրբութիւն, զայդ՝ գթութիւնն, և զայդ՝ նախախնամութիւն նորա։ Ուստի մարդկային գործողութիւնք զարդիւնս ունին ըստ արդարութեան կամ ըստ արժանւոյն, և ոչ պարզապէս ըստ վայելչութեան կամ բարեհաճութեան։ Ըստ այսմ յուսացեալ էր աստուածարեալ նա. «Այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տէր, յաւուրն յայնմիկ արդարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն, որ սիրեցին զյայտնութիւն նորա (*)»։

## ԳԼՈՒԽ Գ.

### ՅԱՂԱԳՍ ՕՐԻՆԱՑ, ԿԱՄ ԿԱՆՈՆԻ ԵՒ ՍԿԶԲԱՆՑ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ

ՅԻԶ. Կանոն ուղիղ գործելեացն օրէնք են, ասաց Սուրբն Թովմաս. և օրինօքն պարտաւորիմք ի գործելն մեր զբարիս։ Արդ կանոնս այս բարոյական գործողութեանց կարէ երկակի լինել, կամ իբրև կանոն մերձաւոր, և կամ իբրև կանոն հեռաւոր։ Բարոյականութեան կանոնս այս հեռաւոր, և պարտաւորութիւն գործոց մերոց [illegible] միայն կարեն կանոն լինել կամ օրէնք, և ոչ [illegible] կամ մերձաւոր և գործնական կանոն։ Ուստի նախ պար-

(*) Բ. Տիմ. Դլ. Դ. 8.

տիմք խօսիլ զմերձաւոր կանոնէս գործողութեանց մերոց, որ ոչ է այլ ինչ, բայց եթէ խիղճն մտաց մերոց. Բ. զհեռաւոր կանոնէ որ են օրէնքն, այսինքն զծանօթութենէ օրինացն և զգոյութենէ նոցա ի մեզ. Գ. զհաստատութենէ օրինաց. Դ. զյատկութեանց և զազգերէն օրինաց. Ե. զընդհանուր զայն սկզբնէ նոցա, առ որ բերցին ամենայն սկզբունք օրինաց և իրաւանց, որոց և լիցի իբրև ձև ընդհանուր կամ կերպ. բայց այնու՝ զի զխիղճն մտաց մերոց կոչեմք [illegible], չեն ինձ կամք կոչել զնա [illegible]. քանզի սորին վասն միայն մերձաւոր կանոն կոչի, զի մերձեցուցանէ զօրէնս ամենայն առանձին գործոց մերոց, և յարելով զօրէնս, ընդ սոցին օրինացն յարմարէ արդեամբ զիւրաքանչիւր գործողութիւնս՝ իբրև միջնորդ և առիթ եղեալ միաւորմանս այսմիկ։ Բայց ընդ մէջ խղճի մտացն և օրինաց մեծ է զանազանութիւն ճշդիւ խօսելով. քանզի օրէնք ընդհանուր կանոն են ամենայն գործելի իրացն՝ մերթ խիղճ մտացն է [illegible] [illegible] [illegible] զմասնաւոր ինչ զայս կամ զայդ գործողութենէ։ Օրէնք են կանոն գործողութեանցն. իսկ խիղճ մտացն միջնորդ մատուցման օրինացն նոցին գործողութեանցն. ո՞ ուրասցի՝ թէ ո՛չ են օրէնք թագաւորին, և ո՛չ պաշտօնեայն գործակատար նոցին օրինացն ի դատաստան թագաւորութեանն. դարձեալ լայնագոյն է իմաստ խղճմտանացն քան զօրինացն. քանզի նա ոչ միայն մերձեցուցանէ զօրէնս բնութեան ևեթ իւրաքանչիւր գործողութեանց, այլ և զդրական և զազատ օրէնս անդամ՝ թէ՛ աստուածայինք իցեն, և թէ՛ մարդկայինք, մերթ բնական օրէնք կոչին նոքին միայն՝ որք ի մեզ են, և ի բնութենէ անտի միայն բղխին և ճանաչին։ Յաւե՛լ և զայս՝ թէ խիղճ մտացն երբեմն ունի զսխալ սկզբունս՝ իբրև ճշմարիտ կարծեցեալս ի նմանէ, և կոչի [illegible] [illegible] [illegible]. մերթ օրէնքն բնութեան յաստուծոյ անտի դրոշմ՝ չկարեն սխալական ինչ կամ սուտ լինել, այլ միշտ ճշմարիտ և ջինջ ի սխալանաց կամ ի ստութենէ։ Հաւկ ուրեմն՝ օրէնքն են կանոն գործելեացն, այն է զներկայից և զապագայից, մերթ խիղճ մտացն վերաբերի յանցեալսն



անդամ, նմին իրի խղճի մտացն վերագրին ոչ միայն կապել, այլ դատախազ կալ, վկայել և պաշտպանել։ Այսպէս մեծիմաստ Սուարէզ (*). «Թէպէտև, ասէ, ճշդիւ և ստուգաբանութեամբ բառիցն զայդ ընդունիմ, սակայն ի նախկին ոճն բանից օրէնքն վասն խղճի մտացն առեալ են առ բազումս. զորօրինակ առ Դամասկացին Յովհաննէս, առ Բարսեղ, և Առաքելոյն (**) «Այլ յորժամ հեթանոսք, որ զօրէնս ոչ ունին՝ բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա՝ որ զօրէնսն ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք. որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց իւրեանց». այն է՝ օրէնքն և խիղճ մտացն զանազանին ի միմեանց ճշդիւ խօսելով, բայց յաւէտ միմեանց կից գոլով երբեմն առեալ լինին փոխանակ միմեանց։

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳՍ ԽՂՃԻ ՄՏԱՑ

ՅՀԵ. Սահմանի խիղճ մտաց առ ամենայն իմաստասէրս «գոլ գործնական դատողութիւնն կամ ազդեցուցիչ մտաց, որով դատեմք զինչ աստ և այժմ առնելի՝ զի բարի է, և կամ խորշելի՝ զի չար է». ապաքէն յայտ է՝ թէ աստ խօսիմք զխղճէ մտաց՝ ոչ իբրև զներքին և գործնական կարողութենէ մտացս ճանաչելոյ զճշմարտութիւն՝ զորմէ ի Տրամաբանութեանն, այլ զխղճէ մտացս՝ իբրև զմերձաւոր կանոնէ գործողութեանց. սմին իրի կոչի [illegible], քանզի խիղճ մտացն (conscientia) [illegible] բատ որում կարողութիւն՝ մտացն վերաբերի, և ոչ կամացն. պարզապէս դատէ՝ թէ գործողութիւնս այս կամ

(*) Յաղագս օրինաց. Գիրք. Բ. Գլ. Ե.։

(**) Հռովմ. Գլ. Բ. 14. 15։

այդ հակառակ է ուղիղ սկզբանց օրինացն, և հետևաբար չար և խորշելի. և կամ դառնէ՝ թէ եղեալ կամ լինելոց գործդ յարմարի սկզբան՝ այսինքն օրինացն, նմին իրի առնելի է. բայց դառնել զանյարմարութիւն և զյարմարութիւն առարկային ընդ սկզբունս օրինացն, ոչ է արդեամբ առնել զգործս, այլ ճանաչել միայն. նմին իրի և կոչի գիտակցութիւն, այսինքն գիտել զանյարմարութիւն կամ զյարմարութիւն առնելի իրին՝ և կից յարել զնոսա ընդ գիտութեան օրինացն. բայց գործելն արդեամբ վերագրի իշխանութեան կամացն՝ որ երբեմն ընդդէմ խղճի մտաց իսկ գործէ։ Դարձեալ՝ դատողութիւն կոչի, քանզի պարունակէ յինքեան միշտ զեղանակ հաւաքաբանութեան. քանզի դնէ զսկզբունս օրինացն՝ իբրև ընդհանուր սկըզբունք. զորօրինակ զոր քեզ ո՛չ կամիս, այլում մի՛ արասցես. և իջեալ ի մասնաւորն՝ ասէ. իսկ արդ զպարանումն ինձ ո՛չ ախորժեմ, ուրեմն և ո՛չ այլում զայդ առնել կամ ախորժել կարեմ։ Ահա սմին այսմիկ եզրակացութեան տամք զանունդ [illegible] [illegible], և գործնական դատողութիւն կամ ազդեցութիւն կոչի, քանզի դատողութիւնդ այդ լինի միշտ ի գործելն՝ և արդեամբ. սմին գործնական դատողութեան մտացս քանիցս և երբ հակառակ կայցեն կամք մարդկան՝ միշտ գործեն զչարն, և քանիցս ըստ ուղիղ դատողութեան խղճի մտացն արասցեն՝ գործեն զբարին։ Եւ եթէ անբիծեալ ուրուք գործեսցէ ընդդէմ օրինացն, բայց վրիպանօք խղճի մտացն դատեսցէ զայդ գոլ ըստ օրինացն, և յայնժամ գործեսցէ զբարին, զօրօրինակ ի պատերազմի՝ եթէ դատիցես սպանանել զթշնամին, սպանցես զպատերազմակից ընկերդ՝ ո՛չ գործես զչարն, ցաւելով զգործդ յետ ծանօթութեան իրին. ուրեմն հաստատ և գործնական կանոն բարուց խիղճ մտաց է։ Սմին իրի ասէր ի յառաջնոց ումն. «որ ինչ է ընդդէմ հաւատոյ՝ մեղք են (*)», այն է ընդդէմ խղճի մտաց, որ հաւատով հնչի։

(*) Հռովմ. ԺԴ. 23։



ԾՀԲ. Բաժանի խիղճ մտացն ի [illegible] և ի [illegible], ըստ որում դատողութիւնն գործնական մտացն կարէ լինել թէ՝ զանցեալ գործողութեանցն և թէ՝ զապագայից։ Եթէ զապագայ գործողութեանց դատեսցէ գոլ հակառակ բնական օրինացն և սկզբանց նոցա, և կանուխ ազդեսցէ զյարմարութիւն կամ զանյարմարութիւն գործոյն օրինաց՝ գործնական դատողութիւնս այս կոչի [illegible] [illegible]։ Իսկ թէ գործողութիւնն անցեալ կատարեալ իցէ ի կայր կամացն, և յետոյ հետևիցի դատողութիւնն մտաց զյարմարութենէ կամ զընդդիմութենէ նոցա նոցին օրինացն, կոչի [illegible] [illegible], որպէս յստուգաբանութենէդ յայտ է։ Եթէ անցեալ գործողութիւնքն եղեալ իցեն ըստ բնական օրինաց՝ ծագի ի մեզ վկայութիւն բարի խղճմտանաց. իսկ եթէ ընդդէմ օրինաց եղեալ իցեն, յայնժամ ծագի ի մեզ խայթ խղճի մտացս՝ որով տանջեն զմեզ չարաչար։ Դարձեալ բաժանի խիղճ մտացն յ[illegible] և ի [illegible], յ[illegible] և [illegible], ի [illegible] և ի [illegible], զորոց ըստ կարգի։ Նախ՝ [illegible] է դատողութիւն խղճի մտաց, յորժամ զճշմարիտ սկզբունս օրինացն յարէ տիրապէս այսմ կամ այնմ գործողութեան, արժանաւոր կամ անարժան դատելով զնոսա. [illegible] կոչի կամ [illegible], որ զսուտն իբրև ճշմարիտ ունելով գործել դատէ, այսինքն արժանաւոր կամ անարժան զառարկայս՝ մերթ չէ այնպէս [illegible] և [illegible]։ Եթէ սխալանքդ այդ պատահիցեն յօրէնս, կոչին տեսական կամ իրաւանց [illegible]. իսկ թէ պատահին առարկային կամ գործողութեան, որում յարին օրինացն սկզբունք, կոչին [illegible] գործոյ կամ ըստ արդեանց։ Ստոյգ խիղճ մտացն է, յորժամ ոք ստուգապէս դատի՝ թէ ըստ ինքեան և ըստ սկզբանց օրինաց գործն բարի է կամ չար, և չխափելոյ և զհակառակէն ո՛չ ինչ ունի կասկած։ Իսկ [illegible]ն է՝ յորժամ վասն երկուց իսկ կողմանց՝ թէ՝ բարութեան թէ՝ չարութեան են պատճառք. և յերկբայս կայ նմին իրի գործողն։ [illegible] է՝ յորժամ վասն չնչին և անտի ըմբռնմանց երկնչի ոք դառնել՝ թէ գործողութիւնդ այդ բարի

է, նա՛ յաւէտ չար, ո՛չ յարմար օրինաց և հակառակ. և երկնչի՝ ուր չիք տեղի երկնչելոյ։ Հուսկ ուրեմն՝ [illegible] է՝ յորժամ ոք ի հաւանական պատճառս տիրապէս յեցեալ, բայց խորհրդածութեամբ բանին գործնականապէս ստուգելով զանձն զհամեստութենէ առարկային. զորօրինակ այսպէս խորհրդածութեամբ բանին մտացս կարեմք համոզել զմեզ. հաւանական կամ կարծիքական պատճառքն սատ և այժմ ընդդէմ գան ինձ՝ իբրև օրէնք արգելիչ գործողութեանս, բայց և օրէնքդ այդորիկ պարտին ստոյգ և հաւաստի լինել, որով կարիցեն զիս ստուգիւ պարտաւորել. իսկ արդ հաւանականն միշտ է հաւանական, և ո՛չ երբէք ստուգութիւն. ուրեմն ոչ կարէ արգելուլ զիս. քանզի ասած է՝ «օրէնք անստոյգ ո՛չ պարտաւորեն զմարդն». այսոցիկ խորհրդածութեանց տամք զանունդ [illegible]։

3ՀԹ. Դատողութեանցս այսոցիկ ոմանց հետևիլ պարտ է և ոմանց ո՛չ. զորօրինակ ուղիղ և ստոյգ և հաւանական խղճի մտացն, բայց ո՛չ երբէք մոլարին, եթէ ազատութիւնն կամ սխալն յաղթելի է, ո՛չ թէ անյաղթելի՝ յորում որ ինչ լիցի իբրև չար՝ չհամարի ի չարութիւն, եթէ ո՛չ նիւթականապէս։ Առաջի հետևիլ պարտ է խղճի մտացն. քանզի խիղճ մտացն է բնական լոյս և հաղորդակցութիւն և մասնակցութիւն աստուածային մտացն. և իբրև կանոն մերձաւոր և գործնական ամենայն բարոյական գործողութեանց մերոց՝ յԱստուածուստ անտի շնորհեալ բանական բնութեանն, և ամէն իրի ամենայն գործողութեանցս բարութիւն կամ չարութիւն ծագի ի յարմար և հակառակ կալոյ գործողութեանց այսոցիկ գործնական ազդեցութեան և սկզբանց խղճի մտացն մերոց։ Այսպէս իմաստութեամբ գրէ Սուրբն Թովմաս (*) «Թէ միտք մարդկային են կանոն մարդկային կամաց, յորմէ չափեսցի բարութիւն նորա, ունի (զայդ) ի յաւիտենական օրինաց, որ է միտքն աստուածային. ուստի ի Սաղմոսին

(*) Բովանդ. Աստուածաբա. Ա—Բ. Խնդ. ԺԹ. Յօդ. Դ.։



(Դ. 6.7.) ասի. «Բազումք ասեն՝ թէ ո՛ ցուցէ մեզ զբարութիւն Տեառն, նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց.» որպէս թէ ասէր, լոյսն մտաց՝ որ առ ի մեզ է, այդքան միայն կարէ մեզ զբարիս ցուցանել, և զկամս մեր կարգել, բառ որում է լոյս երեսաց քոց, այդ է ծագեալ յերեսաց քոց. յորմէ յայտ է՝ թէ ես առաւել բարութիւնն կամաց կախի ի յաւիտեան օրինացն, քան թէ ի մարդկային մտաց։» Յայսոցիկ ամենեցունց յայտ է թէ խիղճ մտաց մերոց է չափ և կանոն բարութեան և չարութեանն, գործողութեանցն. է՝ զի ցուցանէ մեզ զլոյսն երկնային, և զնշանն երկնային յամենայն գործս մեր. զորօրինակ ոսկերիչն փորձէ զոսկին ի բովս, և ո՛չ այլով իւիք. թէ բովք չէին, և ո՛չ ոսկերչին հնար էր ճանաչել զոսկւոյն ճշմարտութիւն։ Ուրեմն փութասցուք ի ծանօթութիւնն ժամանել այսր լուսոյն և աստուածային նշանին, որ բնական զօրութեամբ մտացս ճանաչի, և ցուցանել՝ թէ է արդեամբ լոյսն յաւիտենական օրէնք բնութեան։ Վասն որոյ

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

## ՅԱՂԱԳՍ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ ԵՒ Ի ՄԵՋ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ

32. Բազում են ռամկօրէն իմաստք և նշանակութիւն օրինացն. զի երբեմն առեալ լինի օրէնքն փոխանակ [illegible], և երբեմն [illegible], որով կայ ֆիզիքական բնութիւնս. այսպէս իւրաքանչիւր գոյացութիւն և տեսակք ստեղծուածոց կոչին՝ կալ օրինօքն իւրեանց. անկենդան մարմինք, տունկք և անբան կենդանիք կոչին՝ կալ սեփական օրինօքն։ Երբեմն առեալ լինի փոխանակ արհեստից և կանոնաց նոցին. այսպէս օրէնք պատերազմի, օրէնք ճարտասանութեան, փառաբանութեան, բանաստեղծութեան, ճարտարապետութեան, են։ Բայց

բուն օրէնք կանոն գոլով բարւոյ՝ ունի առարկայ ինքեան զբարոյական մարդկային գործողութիւնս բնականս, այսինքն ազատս ըստ հանրապէս սահմանի թէ «կանոն ուղիղ գործելեաց» ըստ Սրբոյն Թովմայի. բայց ըստ իմաստասիրացն «օրէնք են կարգ կամ կարգադրութիւն մտաց ի բարին հասարակաց՝ եդեալ յայնմանէ, որ ունի զօրինաւոր իշխանս հասարակութեան՝ բաւականապէս հրատարակեալ»։ Ասի նախ կարգադրութիւն մտաց, քանզի օրէնք ծագին ի մտաց և հրամային ի կամաց՝ պահել զուղիղ կարգ բնութեանն. դարձեալ՝ կարգադրութիւն մտաց, զի օրէնսդիրն վարիլ պարտի ըստ ուղիղ սկզբանց մտացն, և այնպէս կամքն լուսաւորեալ ի մտաց անտի՝ հրամայէ և կարգէ զգործս ըստ ուղիղ կարգի բնութեանն. ի բարին հասարակաց, քանզի օրէնք այնու օրէնք են՝ զի զբարութիւն հրամայեն, և ոչ թէ զչարութիւն. ապա թէ ոչ՝ պակասէր էական էութիւնն, առանց որոյ չեն օրէնք. դարձեալ՝ օրէնք են ի բարութիւն ոչ մասնաւորաց, այլ հասարակաց. և յայս տարբերի պատուէրն յօրինաց, զի սա հայի և հրամայէ զբովանդակ հասարակութեանն կամ ազգի մարդկան զբարութիւն, և պատուէրն [illegible], և նա միայն զմասնաւոր իմն հասարակութիւն. եդեալ յայնմանէ, որ ունի զօրինաւոր իշխան հասարակութեան, քանզի օրէնս դնել և տալ բովանդակ հասարակութեան այնմիկ ենթ պարտ և վայել է՝ որ տիրէ բովանդակ հասարակութեան, ոչ թէ այնմ, որ չունի զիշխանութիւն տիրելոյ բովանդակ հասարակութեան, և կամ յանիրաւի և բռնութեամբ յափշտակեալ իցէ զայլոց իրաւունս. վասն որոյ դնեմք զօրինաւոր իշխան. ի վախճանի կնքեմք՝ բաւականապէս հրատարակեալ, քանզի պարտաւորութիւնն օրինաց սկսի ի հրապարակս, երբ ճանաչին օրէնք բաւականաչափ. քանզի ըստ Կիկերոնի՝ «չեն օրէնք մերթ ի տախտակս արձանագրին, այլ մերթ հրապարակաւ հրատարակին», և թէ «ոչ յարկեղս օրէնք՝ այլ ի հրապարակս»։

ՅՁԱ. Բաժանին օրէնք յաստուածայինս և ի մարդկայինս, ըստ որում յԱստուծոյ կամ ի մարդկանէ դնին. աստուածայինք բաժանին ի յաւիտենականն, ի բնականն և ի դրականն. և մարդկայինն՝ յեկեղեցականն և ի քաղաքականն, զորոց մի առ մի. Նախ՝ յաւիտենական օրէնք են «վճիռ և ազդեցութիւն աստուածային մտացն և կամաց, որք ի յաւիտենից կամին զբարին, և գարշին ի չարէն, ըստ ուղիղ կարգի բնութեան». կամ ըստ Սրբոյն Օգոստինոսի՝ և յետ նորա ամենայն Աստուածաբանից և իմաստասիրաց՝ յաւիտենական օրէնք են (*) «միտք կամ կամքն աստուածային, որ հրամայէ պահել բնական կարգի և զխանգարելն արգելուլ կամի»։ Բնական օրէնքն է սոյն այս օրէնքն յաւիտենական՝ հաղորդեալ բանական բնութեանս, և միջնորդութեամբ բնական լուսոյ և տեսութեան մտացս ծանուցեալ. սմին իրի և կոչիլ կարէ աստուածային բնական օրէնք. բնական՝ քանզի է ազդեցութիւն մարդկային մտաց, որ դատէ զգործողութիւնս մարդկայինս թէ բարի կամ չար, յարմար կամ հակառակ ուղիղ կարգի բնութեանն, և հետևաբար հրամայեալս կամ արգելեալս յաստուածոյ օրինաց անտի։ Օրէնքս այսոքիկ այս՝ հրամայեն յաստուածային մտաց և ի կամաց, բայց ոչ դնին ազատութեամբ այնպէս՝ թէ կամքն աստուածային կարէ փոխել զյաւիտենական օրէնս. զի կարգ բնութեանն ոչ յաստուածայնոյ անտի մտաց և կամաց կախի, այլ յէութենէ անտի Աստուծոյ, իբրև աղբիւր և նախատիպ ամենայն բարութեանց. ուստի դրական օրէնքն են վճիռք ազատ կամաց, որք ծանօթանան մեզ [illegible] ոչ բնական լուսով, այլ արտաքին իմն միջնորդիւ, նշանաւ, գրով կամ բանիւ, և փոփոխութեան ենթակայ կարեն լինել բաց յայնցանէ՝ որք թէպէտ բնական օրինօքն ճանաչին, բայց և դրականապէս իսկ ի կամաց հրամային. սմին իրի ասացի [illegible]. քանզի երբեմն կամքն աստուածային և մարդկային զբնական օրէնս դրականապէս հրամայեն, նա՛ մանաւանդ կամքն աստուածային՝ որ հարկաւորապէս և ի

(*) Գիրք ԻԲ. ընդդէմ Փաւստոսի. Գլ. ԻԷ.։

յաւիտենից չկարէ չսիրել և չկամել զորս ի բնութենէ բարի են. այսպէս ի Մովսիսին տուեալ պատուիրանս «մի սպանաներ, մի սուտ վկայեր են» զորս բնական օրինօքն իսկ ճանաչեմք. իսկ մարդկային օրէնքն՝ որք միշտ դրականք են, կարեն փոփոխիլ։ Եկեղեցականք նոքին են, որք դնին յայնցանէ՝ որք ունին զիշխանս եկեղեցւոյ կամ զհոգւոյն, և քաղաքականքն նոքին են, որք դնին յիշխանացն կամ ի թագաւորացն՝ հասարակութեան յօգուտ ժամանակաւոր, և յընդհանուր բարութիւն հասարակաց։ Մեք աստ և այժմ կարգեմք զբանս մեր զյաւիտենական օրինաց, և ապա զբնական օրինաց գոյութենէ. վասն որոյ

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

### Թէ է յաւիտենական օրէնք։

ՅԶԲ. Նախ՝ ծանուցանեմք թէ յաւիտենական օրէնք են «վճիռ և ազդեցութիւն աստուածային միայն և կամաց, որ հրամայէ պահել զկարգ բնութեանն արարածոց». և քանզի նախախնամութեամբն Աստուծոյ իսկ պահին անսասան կարգք բնութեանն և ամենայն ազատ գործողութեանց ներգործութիւնք, ոչ կարեն խանգարել զնա. վասն որոյ չէ պարտ շփոթել զնա ընդ Աստուծոյ նախախնամութեանն. քանզի յայտ զանազանի յաւիտենական օրէնք ի նախախնամութենէ, զի յաւիտենական օրէնք ունին զառարկայ իւրեանց մի միայն զբարոյական բարի գործս, և բարի գործողութիւնքն են ներգործութիւնք նորա. զի ըստ ինքեան զայդ հրամայեն և զհակառակն արգելուլ կամին. մինչ բազում ներգործութիւնք թէ բնականապէս բարիք, և թէ բարոյապէս բարիք վերաբերին նախախնամութեանն։ Դարձեալ՝ ըստ Սրբոյն Թովմայի (*) որ զանազանէ զնախախնամութիւնն ի յաւիտենական օրինաց, ասելով՝ յաւիտենական օրէնք բաղդատին ընդ նախախնամութեանն, որպէս ընդհանուր սկզբունք

(*) Վինար. Ն. զեղմարտութենէ. Յօդ. Ա.։



ընդ մասնաւոր սկզբունս, նա՝ մանաւանդ յաւիտենական օրէնք իբրև կանոն է ընդհանուր, և նախախնամութիւնն իբրև նորայն առանձինն ներգործութիւնք կամ հետևութիւնք. բայց ըստ Դատականաց երբեմն մինն առեալ լինի փոխանակ միւսոյն։ Դարձեալ՝ գիտել պարտ է թէ մի է յաւիտենական օրէնք, և ամենապարզ ըստ աստուածային միայն և կամաց առեալ. բայց առարկաբար առեալ՝ բազում. զորօրինակ բնական օրէնք մի է, և բազումք են սկզբունք նորա։ Դարձեալ՝ յաւիտենական օրէնք ոչ կարեն պարունակել զաստուածային բնութեանն զներքին գործողութիւնս. քանզի չունին պէտս կանոնի գործողութիւնք, որք հարկաւորապէս ի ներքուստ կարգադրեալ են և ինքնին կան, այլ բերի առ աստուածային արտաքին և ազատ գործողութիւնս՝ այն է յարարածս. ուրեմն յաւիտենական օրէնք կանոն են ոչ միայն մարդկային բարոյական գործոց՝ նպատակի յայտնութեան նոցա բնական օրինօք, այլ և կանոն են ըստ իմիք աստուածայնոցն արտաքին և ազատ գործողութեանց. ասեմ ըստ ինքն՝ քանզի օրէնք իբրև ի մեծագունէն առ հպատակս դրին, և Աստուած չունի քան զինքն զմեծագոյն ոք։ Հետևի ուրեմն՝ քանզի առարկայ յաւիտենական օրինաց և նիւթ են աստուածային ազատ գործողութիւնք արտաքինք. քանզի հրամայէ Աստուած պահել զբնական կարգ և զեղծումն նորա արգելու. և քանզի կարգս այս բնական ոչ է եթէ ոչ յարարածս, որպէս սոքա գործողութիւնքդ ազատք են, այսպէս և օրինացդ յարաբերութիւն ազատ է. քանզի օրէնք տրամաբանօրէն խորհեալ հետևեին և են վասն նիւթոյն կամ առարկայիցն, և ոչ նիւթն վասն օրինաց։ Այո՛ ի յաւիտենից էին աստուածային միայն և կամացն վճիռք սահմանման արարածոց, ամէն իրի էր ի յաւիտենից և օրէնք յաւիտենական, որ վասն արարածոցն բարոյական գործողութեանց. եթէ զբազումս ցանկաս, տես զմեծն Սուարէզ (*)։ Յաւե՛լ և զայս՝ թէ օրէնք դնին

(*) Գիրք ԺԱ. Յաղագս յաւիտենա. և բնակ. օրինաց. Գլ. Բ. և Գ.։

յաստուածային մտաց կամ ի կամաց վասն պահելոյ զկարգ բնութեանն. ուրեմն կարգ բնութեանն յառաջագոյն է քան ըմբռնման մտաց մերոց, և ենթադրի քան զմիտս և զկամս Աստուծոյ, և ի շնորհս այսր ուղիղ կարգի բնութեան ելանեն վճիռք կամ յաւիտենական օրէնք ի պահպանութիւն նորա։ Ուրեմն չէ պարտ շփոթել զայդ գերքին կարելի էակացն վէճ (զորոց ի յՆակարանութեան անդ) ընդ յաւիտենական օրինացն սկիզբն և աղբիւր. քանզի օրէնք հրաման գոլով կամ վճիռ մտացն և կամաց Աստուծոյ, ի հարկէ հետևի ուղիղ կարգի բնութեանն, յորոյ շնորհս գնի, որ և կախի և գտանի ոչ ի միտս կամ ի կամս Աստուծոյ, այլ յէութիւնն Աստուծոյ՝ իբր յաղբիւրն ամենայն իրաց։ Երկրորդ՝ չեն մեզ կամք աստանօր յուզել զվէճն՝ արդեօք օրէնք յաւիտենական յաստուածային մտա՞ց անտի գնին՝ թէ յաստուածային կամաց. և կամ լաւ ևս ասել՝ թէ արդեօք օրէնք յաւիտենական իցեն գործողութիւն աստուածային մտա՞ցն թէ կամաց. զայքան միայն ասեմք՝ թէ մեք ցուցանեն իմաստութեամբ կամացն աստուածայնոց, և կամքն ըստ որում գործնական կարողութիւն ի գործ դնէ զի մտաց նմին առաջարկեալն կամ զգատողութիւնս. և զայդ ասեմք ըստ ակար ըմբռնման մտաց մերոց. բայց քանզի յաստուածային կատարելութիւնս և ստորոգելիս չիք իրապէս իմն զանազանութիւն, այլ միայն զօրութեամբ և տրամաբանեալ բանիւ՝ ամենայն ինչ յԱստուած մի է. միտքն աստուածային են նորին կամք, և կամքն աստուածային են նորին միտք, ամենայն ինչ նորա՝ է էութիւն միայն նորա, ըստ Սրբոյն Թովմայի. սորին վասն իմաստութեամբ ոչ կամեցաւ որոշել զխնդիրն նոյն Սուրբն Օգոստինոս ծագեալ զյաւիտենական օրինաց, և ասաց զօրէնս գոլ միտ կամ կամս աստուածային՝ բնական կարգին պահպանութեան հրամայող, և խանգարման արգելուլ։ Այսպիսի այսպէս ծանուցելոյ՝ գամք ի ցուցումն տրամաբանեալ առաջարկութեանս։

32Գ. Նախ՝ Աստուած ի յաւիտենականութեան կայամին իւրի ամենայն գործողութիւնք կամաց և մտաց նորա



ի յաւիտենից են. իսկ արդ յաւիտենական օրէնք են վճիռ և ազդեցութիւն աստուածային մտացն և կամաց, ուրեմն յաւիտենական օրէնք են։ Երկրորդ՝ միտք մեր միջնորդութեամբ բնական օրինաց ճանաչեն և յայտնեն զսկզբունս յաւիտենական օրինաց. արդ զսկզբունս զայսոսիկ ոչ յինքեանէ, այլ ի գերագոյն իմն սկզբնէ՝ այն է յաստուածային մտաց և ի կամաց առեալ՝ արտայայտէ, ոչ ինքնին յինքեանէ առեղծանէ, և հնարէ զնոսա։ Այսպէս Կիկերոն (*) ընդդէմ Անտոնիոսի. «Զայս տեսանեմ գոլ իմաստնագոյն արանցն իմաստ, չլինել օրինացն ոչ հնարք մարդկային մտացն և ոչ գիւտք իմն մտաց ժողովրդոց, այլ յաւիտենական իմն որ զհամայն տիեզերս կառավարէր՝ հրամայելոյ և խափանելոյ իմաստութեամբ։ Այսպէս գլխաւոր և վերջին օրէնք զմիտս ասէին զամենայն բանիւ՝ կամ ստիպողին կամ արգելողին Աստուծոյ, յորմէ օրէնքդ այդոքիկ, զոր պարգևեցին աստուածք մարդկային սեռի՝ տիրապէս գովեցան. զի էր բանն ի բնութենէ իրացն ծագեալ, որ ստիպէր զուղիղն գործել և ի յանցանաց յետս կոչէր, որ և ոչ յայնժամ էսկիզբն առ օրէնք լինել, յորժամ գրեցաւ, այլ յորժամ ծագեցաւ և ծագեցաւ ի միասին ընդ ծագիլ աստուածային մտաց. վասն որոյ ճշմարիտ օրէնք և գլխաւորագոյն կարող հրամայելոյ և խափանելոյ միտք են ուղիղ մեծին Տեառն»։ Յայսմանէ քաջ ճանաչի՝ թէ օրէնք յաւիտենական են միտք կամ իմաստութիւնն Աստուծոյ հրամայող զբարիս և խափանող զչարիս. յորմէ և բնական օրինացն սկզբունք գործնականք, զոր պարգևեցին մեզ աստուածք, այն է ճշմարիտ Աստուծոյ իմաստութիւնն, գթութիւնն, սրբութիւնն և նախախնամութիւնն։ Դարձեալ՝ զօրօրինակ ճարտարապետն չկարէ ըստ կամաց և արհեստին իւրոյ կազմել զտունն, եթէ ոչ նախ ունիցի ի մտի զպատկեր տանն. նոյնպէս Աստուած չկարէր շնորհել բանական բնութեան մերում զուղիղ սկզբունս բնական օրինաց, եթէ նախ նա

(*) Բ. Փիլիպպեան. Թիւ Բ.։

Ինքն չունէր զայդ ի յաւիտենից ի միտս. զի չկարէ ոք տալ զոր ո՛չն ունի. ուրեմն եթէ են ի մեզ գործնական սկզբունք բնական օրինաց, զորօրինակ պատուեա՛ զծնողս քո, սիրեա՛ զբարերարդ, զԱստուած պաշտեա՛ են, այդօրիկ են իբրև լոյս ի յաւիտենական լուսոյն, ճառագայթք անկեալ զմեօք ի յաւիտենական արեգակնէ այսր յաստուածային էութենէն. զի ասացին ոմանք՝ թէ ո՛ ցուցէ մեզ զբարութիւն տեառն՝ և առին պատասխանի՝ նշանեցաւ, են: Հուսկ ուրեմն՝ միտք մարդկային և կամք են իբրև հաղորդակցութիւն և մասնակցութիւն և պատկեր աստուածային մտաց և կամաց. եթէ մասնակցութիւն՝ ուրեմն յարաբերէ զբովանդակութիւն. զի մասն է յառաջ բերէ հարկաւ զծանօթութիւն բոլորին, ըստ մտաց մերոց ըմբռնման. Նոյնպէս ասացեալ զհաղորդակցութենէ և զպատկերէդ, որք հարկաւ ցուցանեն զաղբիւրն ամենայն բարութեանց և զնախատիպն: Յաւե՛լ և զաստուածայինն զօրութիւն, զգթութիւն, զիմաստութիւն և զնախախնամութիւն, որք ի հարկէ ստեղծեալ զմարդն վասն գերագոյն վախճանի իւրոյ՝ չկարեն ի յաւիտենից չդնել չափ և կանոն մարդկային գործողութեանցն, որում մարդիկ միօք և կամօք իւրեանց յարմարելով զգործս դէմ եդեալ նպատակին անտերբիւր ժամանէին:

## ԼՈՒԾՄԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՅԶԴ. Նախ՝ օրէնք հարկաւ պահանջեն զհպատակս, որոց դնիցին կամ հրամայիցին. իսկ արդ ո՛չ ոք յարարածոց ի յաւիտենից եղև. ուրեմն և ո՛չ են օրէնք յաւիտենական: Բ. Ըստ այսմ ի յաւիտենից ո՛չ էր իշխանութիւն, ո՛չ իրաւաբանութիւն և ո՛չ կառավարութիւն, քանզի չէին՝ որոց տիրէր կամ իշխէր կամ վարէր զնոսա Աստուած. իսկ արդ օրէնք են գործք կառավարութեան և իշխանութեան. ուրեմն են: Գ. Օրինաց էական թէութիւն է՝ և [illegible] հրատարակութիւնն. իսկ արդ ենթակայք չէին ի յաւիտենից զի հրատարակէին. ուրեմն



են: Դ. Բայց ի գերագոյն էակէն չիք իմն յաւիտենական և հարկաւոր և անփոփոխ. իսկ արդ ի հակառակ կարծիս եղծանէր հարկաւորութիւն միայն եւեթ գերագոյն էակին. ուրեմն չիք յաւիտենական օրէնք:

Առ Ա. ասեմ՝ զանազանելով. օրէնք հարկաւ պահանջեն զհպատակս՝ ընդունիմ. պահանջեն՝ զի ի յաւիտենից ներկայ լիցի հպատակն՝ ուրանամ: Նոյնպէս զանազանեմ. չեղև ի միտս Աստուծոյ ներկայ՝ ուրանամ, առդեամբ՝ ընդունիմ. և ուրացեալ զերկրակցութիւնդ՝ ասեմ. յերկուս վիճակս կարեմք խորհիլ զօրինաց, կամ ըստ որում իմաստութեամբ և աստուածային կամօք գրեցանն օրէնք, և կամ ըստ գրելոյն հպատակացն հրատարակեցան: Նկատմամբ առաջին վիճակի՝ չիք տարակոյս թէ օրէնք կարեն լինել ի յաւիտենից յԱստուած. նկատմամբ երկրորդ վիճակի եւս կարեմք ասել՝ թէ ներկայ էին աստուածային մտաց ամենայն պատահական արարածք. քանզի Աստուած ի յաւիտենականութեան կայ, և որ կայ ի յաւիտենականութեան՝ չունի պէտս ժամանակի յաջորդութեան, այլ ամենայն ինչ անցեալ և ապառնի ժամանակաւն իւրով ներկայ է նմին: Նա եւս օրէնք յաւիտենական է առաջին վիճակաւն. քանզի են գործողութիւնք աստուածային մտաց և կամաց միայունք, թէպէտև ծայր յարաբերութեան ժամանակաւոր լիցի: Դարձեալ՝ բաց ի յաւիտենականութենէ էութեանն Աստուծոյ, ամենայն աստուածային գործողութիւնք նորա մի և պարզ են, և չիք բազմութիւն գործոց կամ բաղդատութիւն գործոց նորա: Ուրեմն ամենայն գործողութիւն Աստուծոյ կամացն յաւիտենականք են, ուրեմն և վճիռն աստուածային կամաց կամելոյ կամ խափանելոյ զբարոյական գործողութիւնս ի յաւիտենից է. նա՛ զի վճիռն է վասն պահպանութեան կարգի բնութեանն, և ո՛չ հակառակն:

Առ Բ. ասեմ՝ զանազանելով. գործողութիւն իշխելոյ կամ վարելոյ զհպատակս՝ է անցաւոր և պատահական, և ո՛չ միայուն. բաւ է զի օրէնքն գործողութիւնք գտցին կառավարութեան կամ իշխանութեան, եթէ իցեն և զա-

նիցին յԱստուած մնայունք և վճիռք յաւիտենական իմաստութեան կամ կամաց նորա. զի զորօրինակ իշխանին օրէնք չդադարին յօրէնք լինելոյն՝ քանզի հաստատք հանգիստ կան, և ոչ անցանեն զօրինօքն, նոյնպէս յաւիտենական օրէնք նոյն են, եթէ իցեն կամ չիցեն հաստատք ներկայք։ Այսպէս և նախախնամութիւնն Աստուծոյ յաւիտենական է, բայց ոչ ի յաւիտենից վարէ զաշխարհ, և զի գործն վարելոյ ունի զյարաբերութիւն առ արարածս արդեամբ կեցողս՝ և անցաւոր է, վասն որոյ կարեմք դու-[illegible] կոչել զյաւիտենական օրէնս, թէպէտ չիցէ արդեամբ։

Առ Գ. ասեմ՝ զանազանելով. պարտի հրատարակութիւնն ի կողմանէ օրէնդրին՝ ընդունիմ. ի կողմանէ հպատակաց՝ ուրանամ. քանզի օրինաց հրատարակութեանն բաւ է՝ զի ի կողմանէ օրէնդրին եղեալ իցէ, և պարտաւորեսցէ զհպատակս ի ժամու և ոչ ի յաւիտենից։ Դարձեալ՝ ըստ քաջին Աւգոստինի՝ օրէնք լատիներէն առեալ՝ կամ յառաջ կարէ գալ ի lego, legis [illegible] բայէս, և կամ ի lego, legas [illegible]. ըստ առաջնոյն ճշմարիտ է՝ թէ օրէնք վճիռ և դատակնիք գոլով՝ ընթերցեալ եղև միշտ և հանապազ, թէպէտև ոչ կարաց կարդել ի յաւիտենից զմարդիկ. և դուցէ համաձայնէր և բարբառոյս իմաստ, իբր թէ օրէն՝ այսինքն յօրէն յօրմէ եղև. բայց այդ չէ իմաստասիրական, նա՝ յաւէտ ճարտասանական իմաստ օրինաց։ Սրբոյն Թովմայի չափ է պատասխանին՝ թէ օրինացն բաւ է՝ զի ի միտս օրէնդրին հրատարակեալ իցէ. և քանզի վճիռն աստուածային իմաստութեան և կամաց անսխալ և անփոփոխ է, նմին իրի ի ժամուն հարկաւ պարտաւորեսցէ զմարդիկ, և առ հասարակ Աստուած ոչ պարտաւորէ զմարդն յաւիտենական օրինօք, այլ յաւէտ այլով օրինօք՝ որ նորայն հաղորդակցութիւն իցէ. այսպէս մեզ ծանօթանան աստուածային յաւիտենական օրէնք ի ձեռն բնական օրինաց, և բնական օրէնք խղճիւ մտացս մեզ դատախազեն ի բարոյական գործողութիւնս մեր։

Առ Դ. ասեմ. օրէնք յաւիտենական զանազան իմն



լինէր յաստուածային մտաց և կամաց՝ ընդունիմ. այլապէս՝ ժխտեմ. քանզի Աստուած յաւիտենական գոլով՝ ամենայն գործողութիւնք նորա յաւիտենական պարտ է զի լիցին, ոչ միայն ներքին գործողութիւնք իւր, այլ և այնոքիկ՝ որ արտաքինքն իսկ են կամ ասեմ՝ զյարաբերութիւնս առ արարածս. քանզի թէպէտև արարածքն ժամանակաւոր իցեն, բայց ենթակայապէս օրէնքն նոցա յաստուածուստ յաւիտենական են. և սորին վասն ամենայն աստուածարանք և իմաստասէրք զպարտաւորելոյ յաւիտենական օրինաց խօսելով՝ ասեն. ի յաւիտենից դնին օրէնք, քանզի ունի Աստուած ի յաւիտենից զկարողութիւն տիրելոյ, բայց ոչ ի յաւիտենից պարտաւորէ, այլ ի ժամանակի. զի գործն պարտաւորելոյ հարկաւ խնդրէ զհպատակս՝ որք արդեամբ իցեն. բայց ամէն իրի չէ պարտ զի սոքա ի յաւիտենից եղեալ կամ ստեղծեալ իցեն։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

### Թէ են բնական օրէնք ի մեզ։

32Ն. Սոյնպէս և աստ յառաջ քան զմտանել ի ցուցումն առաջարկութեանս, ծանուցանել պարտ է նախ՝ թէ բնական օրէնք չեն այլ ինչ տարբեր յաստուածային յաւիտենական օրինաց, այլ առարկաբար, ըստ որում օրէնք են, մի և նոյն են, և ենթակայապէս միայն զանազանին. այսինքն յաւիտենական օրէնք՝ ըստ որում ի յաստուածային մտաց և ի կամաց անտի են, կոչին օրէնք յաւիտենական. և սոյն այս օրէնք ամենապարզ, և թուական միութեամբ, մի և անմիան հաղորդեալ կամ հաւաքայթեալ ի մարդկային միտս, և կամօք մարդկան արտայայտեալ, և բնականապէս կոչին բնական օրէնք. ուստի կոչիլ կարէ և ևս անուներիւր [illegible] և բնական օրէնք։ Բայց թէպէտև ամենապարզ է յաստուածային միտս՝ նկատմամբ էութեանն, սակայն պարունակէ յինքեան զբազում սկզբունս և զօրէնս զանազանս ի միմեանց. զի ամենայն օրէնք ունին ինքեանց՝ իբրև զհիմն՝ զյաւիտենական օրէնս, և նոյն օրէնք յաւի-

տենական յէութենէ Աստուծոյ մտօքն և կամօք բղխին։ Մի է յարմարն և [illegible] զօրութեամբ, այսինքն է՝ [illegible] [illegible], որովք վարին արարածք ամենայն։ Դարձեալ՝ օրէնք բնութեանն անդամ դ է՝ գոլով մի և նոյն յաւիտենական օրէնք. բայց սա [illegible] և դ, թուական միութեամբ, և նա դ և [illegible]՝ բայց [illegible] [illegible] [illegible]. որոց ամենեցուն վախճան մի է, այն է հասարակաց ընդհանուր բարին և վերջին վախճան՝ յաւիտենական երջանկութիւն բանական բնութեանն։ Աստացաք դ և [illegible], բայց [illegible] [illegible]. քանզի ամենայն և զանազան սկզբունք կամ պատուիրանք օրինացդ համբնթաց գոլով ի մի և ի նոյն վախճանն օրինաց՝ միայն զնոյն և զմի իրաւունս և օրէնս կացուցանեն։ Դարձեալ՝ յաւիտենական օրէնք ոչ անմիջապէս ճանաչին և պարտաւորեն զմեզ, այլ միջապէս ի ձեռն բնական օրինաց։ Զայսոսիկ ծանուցեալ՝ և զայլս խօսել թողեալ յորժամ զյատկութեանց օրինացն, գամք ի հաստատութիւնն։

ՅԻԶ. Օրէնք բնական՝ ըստ Սրբոյն Թովմայի՝ է մասնակցութիւն յաւիտենական օրինաց բանական բնութեանն՝ յաստուածուստ շնորհեալ առ ի զվայելչական և զարժանին բանական բնութեանն գործել. և հաստատի նախ՝ ի խղճի միայն վկայութենէ. ամենայն ոք ի ներքին զօրութենէ բանական բնութեանն դիւրաւ ճանաչէ զբազում և զպէսպէս սկզբունս յինքեան, յորոց բազումք ցուցանեն մեզ զբազում գործս բարիս և յարմարս բնութեան մերում և վախճանի նորա՝ հասարակաց բարութիւնն և բազում դատողութիւնք, որք դիւրաւ այդ առնեն մեզ զայլս բազումս, որք չար գոլով բնութեամբ՝ հակառակ և վնասակար են հասարակաց բարութեանն և վախճանին բանական բնութեանն, և ևս բազում դատողութիւնք բնականք ի մեզ, որք ցուցանեն մեզ զբազումս հարկաւորս բանական բնութեան, ընդհանուր բարւոյն և վախճանին ամենեցուն. զորօրինակ արա՛ զբարին և խորշեա՛ ի չարէն, զԱստուած պաշտել հարկ է, պարտ է պատուել զծնողս, զոր քեզ լինել չախորժես՝ այլում մի՛ արասցես, զմիտս մի՛ հնա-



զանգնե՛ր զդայութեանց, պահեա՛ զարդարութիւն, քաղցր է համեստութեամբ կալ, են, են. ասքին սկզբունքս այնպիսիք են, մինչև ի ներքին իմն զօրութենէ բանական բնութեանն ստիպիմք առնել՝ զորս վախճանիս և հասարակ բնութեանս բարութեան համեմատք են, և խորշել՝ յորոց նոյին վնասակարքն իցեն, և տանջիմք անազօրոյն՝ յորժամ ընդդէմ այսց բնութեանն ձայնից նշկահեմք, երկնչիմք, դողդողամք և ապերջանիկ զանձինս դատիմք՝ աներևոյթ ձեռին վիճակեալ ներքին պատուհասից։ Իսկ թէ անսամք նոյին՝ խայտամք ակամայ անդամ, և զուարթութիւն ունի զերեսս մեր, և անդորրութիւնն զհոգիս։ Այսպիսիկ են սկզբունք բնական օրինաց, պարգևեալ ի վերուստ բնութեան մերում, յորոց խօսս տալ ոչ զօրեմք, և ի խօսս տալս տանջիմք։ Ամեն իրի գեղեցիկս ասէ Կիկերոն (*). «Ոչ են ուրեմն օրէնքդ այդ գրեալ՝ այլ ծնեալ, զոր ոչ ուսաք, ընկալաք, ընթերցաք, այլ ի նոյն բնութենէ առաք, քաղեցաք, ըղձեալ կթեցաք, առ որ ոչ ուսեալք, այլ եղեալք, ոչ եդեալք, այլ տոգորեալ (եմք)»։ Երկրորդ՝ որպէս զյաւիտենական օրինաց առացաք, նոյնպէս զբնական օրինացն. զի եթէ իմացական միայն կարողութիւնն և կամացն են ի բնութեան, հարկաւորեցին յայդ գործողութիւնս՝ որք բնական իցեն ինքեանց. արդ թէ՛ միայն և թէ՛ կամացս բնական պաշտօնն է ուղիղ դատել, զբարին առնել և ի չարէն յետս կալ. իսկ արդ այն՝ որ զուղիղն հրամայէ առնել և զբարին և զչարն խափանէ՝ օրէնք են. ուրեմն եթէ բանական բնութեանս կարողութիւնք միայն և կամաց են, հարկաւ լիցի և նոյին բնական գործողութիւնն. զի բնութեամբ բերիմք յուղիղն և ի բարին, և ի չարէն յետս կասիմք։

Յաւե՛լ և զայդ յաստուածային իմաստութենէ անտի առեալ պատճառ և ի գթութենէն և ի նախախնամութենէն. զի իմաստնոյն է կարգել զգործս այնպէս ճարտարութեամբ յարմարս և ընդունակս վախճանին, մինչև

(*) Խօսք վասն Միլոնի. Գլ. Ե.։

ոչ բնաւ երբեք պակասիլ կամ տկարանալ։ Իսկ արդ եթէ բանական բնութեանս չէին օրէնք և կանոն, և ոչ երբեք բնաւին հասանել կարէր ի բուն իսկ բնութեան սեփական բարութեան և գերագոյն վախճանին, քանզի պակասէր նմին հարկաւոր միջոցն վախճանին. զորօրինակ որ կորուսանէ զկանոն արհեստին, ոչ երբեք մարթի ժամանել գիտութեան և վախճանի, և կամ կորուսեալ զճանապարհն Երուսաղէմի, զիա՞րդ գտցէ զԵրուսաղէմ։ Այսպէս և ոչ նախախնամութիւն և սրբութիւն Արարչին կարէին թողուլ զի արարածն զրկեսցի ի վախճանէն՝ զրկեալ գոլով յուղիղ նպատակից վախճանին. սոյին վասն ասաց Օգոստինոս (*). «Օրէնք քո գրեցան ի սիրտս մարդկան». և այլուր «ոչ ոք է, որում ոչ խօսիցի Աստուած ի խղճի միտս. քանզի ո՞ արձանագրէ ի սիրտս մարդկան զբնութեան օրէնս՝ եթէ ոչ Աստուած»։ Այսպէս և հեթանոսք ի բանն Տուլլիոսի, որք գլխաւոր օրէնք զմիտս ասէին Աստուծոյ՝ յորմէ օրէնքդ այդորիկ, զոր պարգևեցին աստուածք մարդկային սեռի. զի էր բանն ի բնութենէ իրացն ծագեալ, որ սաստէր զուղիղն գործել և ի յանցանաց յետս կոչէր։ Ցուցեալ և զայս «Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց». լոյսդ ոչ այլոյ ուրուք, այլ լոյսն մի միայն երեսաց քոց, որովք երեւեցոյց մեզ զբարութիւն իւր, երգէր ոմն։ Հուսկ ուրեմն իմաստութեամբ Սուարէզ (**) զերկու տեսակս հարկաւորութեան գնէ օրինաց, [illegible], որ էութեանն Աստուծոյ վայել է, և [illegible] կամ [illegible]։ Առաջին հարկաւորութիւնն՝ ասէ՝ ոչ յարմարի օրինացն, ըստ որում՝ օրէնք ամենայն կամ բոտեղծուած իմն է, կամ ենթադրէ զստեղծուած իմն, յոր վասն գնին օրէնք. արդ Աստուած չէ ընդունակ օրինացն. ուրեմն որպէս ստեղծուածն ոչ է բացարձակապէս հարկաւոր, և ոչ օրէնքդ. բայց յերկրորդ տարբերութիւնն յարէ. «Եդեալ միանգամ ստեղծումն բանական արարա-

(*) Գիրք խոստովանութեան. Գլ. Գ.։
(**) Սուարէզ. Յաղագս օրինաց. Գլ. Գ.։



ծոյ՝ օրէնք հարկաւորք եղեն հարկաւորութեամբ վախճանին». և քանզի ասէ [illegible] է՝ հարկաւ [illegible] և [illegible] ունիցի, ընդ որոյ նախախնամութեամբ և հպատակութեամբ կացցէ՝ և հրամանաւ կացցէ. ուրեմն օրինաց հարկաւորապէս պէտս ունի. և կնքէ այսպէս. «որ պակասի օրինօք, մեղանչել ոչ կարէ. իսկ արդ բանական բնութիւնն ունի զկարողութիւն մեղանչելոյ. ուրեմն և հարկաւորապէս օրինացն հպատակ լիցի»։ Յորոց ամենեցուն զհետ բերեմք, թէ ոչ միայն խղճի մտացս անմոռանելի իմն փաստիւք տեսանեմք զգոյութիւն բնական աստուածային օրինացն ի մեզ, ոչ միայն հարկաւորութեամբ կարողութեանց բանական բնութեանս իմաստասիրացն փաստիւք, այլ և աստուածային կատարելութեանցն անվայել է ասել. չիք ի մեզ օրէնք բնութեան. և որ զայդպիսին յանդգնին, հրէշք են բնութեան յաւէտ՝ քան թէ մարդիկ բանական բնութեամբ։ Ի կնիք բանիցս՝ ասեմք. բազումք պատուելին՝ քանզի ինքնըստ բարի են, և բազումք անարգելին՝ քանզի ինքնըստ չար և անարգելի են. արդ բարութիւնն այսոցիկ ոչ է ի յաւիտենական օրինաց, և ոչ չարութիւնն ի յաւիտենական օրինաց. ուրեմն բարի են, զի ինքնըստ բարի են այսինքն յարմարին բանական բնութեանն. ուրեմն բանական բնութիւնն ունի զօրէնս բնութեան։ Այսպէս բազումք չար են, ոչ զի յաւիտենական օրինաց հակառակ են, այլ զի ներքին բնութեանն ոչ յարմարին. ուրեմն բնութեանն ինքնին է կանոն բարութեան և չարութեան իրաց, ուրեմն ունի զբնական օրէնս։ Այսուիկ չասեմք թէ բարութիւնն բնութեան անկախ է յաստուածային էութենէն, այլ յաւէտ ի կամաց նորա. և թէպէտև կախիցի յԱստուծոյ անտի, ունի նոյն իսկ զբնական ներգործութիւն իւր, և զկանոն բարութեան և չարութեան գործոց. զորօրինակ [illegible] կոչի և [illegible], թէպէտև կախիցի յԱստուծոյ՝ առաջին պատճառէն։

## ԼՈՒՄԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՅՁԷ. Եթէ գիտուք զբնական օրէնս, բարձցուք զմարդկային ազատութիւն. քանզի օրինացն է հարկադրել զմարդն ի բարին. իսկ արդ սովին բառնի ազատութիւնն, ուրեմն չիք բնական օրէնք։ Բ. Եթէ էին բնական օրէնք, ապաքէն ո՛չ երբէք բնութիւնն զրկէր յօրինացդ. իսկ արդ մանկունք և մարդիկ ի քուն զուրկ են ի գործնական դատողութեանցդ մտաց, և իբրև անբանք են. առաջինքն մինչև ի տիս բանաւորութեան, և յետինքդ քանիցս և ցորքան ի քուն մնան. ուրեմն ։ Գ. Բնական օրէնք պահանջին իբրև կանոն բարուց՝ այն է բարութեան և չարութեան գործոց. իսկ արդ, փոխանակ նորա են ի մարդն միտք, կամք, գործնական դատողութիւնք, որք ինքնին բաւականապէս ցուցանեն զբարութիւն գործոյն, որք յարմարին բնութեանս և վախճանի մարդոյ. և ընդհակառակն ցուցանեն զչարութիւն գործոյն, որք հակառակք են բնութեանս և վախճանիս. ուրեմն չունին տեղի բնական օրէնք։

Առ Ա. ուրանամ զմեծագոյնն, և զանազանեմ ըզփաստն. օրինացն է հարկադրել ֆիզիքապէս զկամս մարդոյ՝ ընդունիմ, բարոյապէս անխախտ պահելով զազատութիւնն՝ ուրանամ. և ժխտեալ զփոքրագոյնն և զհետևութիւնն՝ ասեմ։ Մարդն բանական գոլով՝ մտացն գործնական դատողութեանց անսայ և հպատակի. քանզի համոզի թէ յիրաւի պարտ է պաշտել զԱստուած, անել զբարին և խոյս տալ ի չարէն՝ են. այն այս պարտաւորութիւն, և համոզելն մտաց զկամս՝ է բարոյական իմն հարկադրութիւն, ո՛չ ֆիզիքապէս հարկաւորութիւն, որ բառնայ ֆիզիքապէս անգամ զկամացն զընտրողական կարողութիւն, զորօրինակ բանտարկել զյանցաւորսն. բայց ո՛չ այդպէս բնական օրէնք կամ գործնական դատողութիւնք, որք թողուն յայլմէ կողմանէ զկամս ազատութեան իւրոյ. քանզի և հեթանոսք անզգամք միշտ ուղիղ գտանին՝ թէ պարտ



է անել զբարին և խորշել ի չարէն. և ի վերայ այսր ամենայնի գործեն բազումք զչարիս՝ հակառակ ազդելով ընդ ուղիղ սկզբունս և գործնական դատողութիւնս մտացն. որպէս ասէր ոմն՝ տեսանել յինքեան զօրէնս մարմնոյ գոլ հակառակ օրինացն մտաց։

Առ Բ. ասեմ՝ զանազանելով զփոքրագոյնն. եթէ զրկէր բնութիւնն ի բնական օրինաց մինչ՝ այն է թէ՛ զօրութեամբ և թէ՛ արդեամբ՝ ընդունիմ. զօրութեամբ անգամ՝ ուրանամ. և ժխտեալ զհետևութիւնդ՝ ասեմ. չեն պէտք զի օրինացն ո՛չ միայն էութիւն, այլ և ներգործութիւն գտցի ի մարդն. սոյնպէս մանկունք՝ ըստ որում մարդ բանական, ունին զօրութեամբ և ունակութեամբ զբնական օրէնս, թէպէտև չիցեն կարողք ի ծննդենէ անտի ի կիր արկանել զներգործութիւնս օրինաց. և զորօրինակ մանկունք ի ծնէ չկարելովն ի կիր արկանել զբանաւորութիւն և զգործողութիւնս մտաց և զկամաց իւրեանց՝ չկոչին ա͞ծք, այլ մ͞րդք, և նոքին իսկ՝ որք ի քուն են, մերթ ննջենն, չասեմք՝ թէ ա͞ծք ննջեն, այլ թէ մ͞րդկ ննջէ, նոյնպէս բանական բնութիւն մարդոյ միշտ ունի զբնական օրէնս ի վերուստ անտի նմին շնորհեալս։ Ուստի յաւէտ ուղղել պարտին զոճ բանից իւրեանց ոմանքն բնական օրինաց, ասելով թէ բանական բնութիւնն ո՛չ ի բնական օրինաց երբեմն՝ այլ ի ներգործութենէ նոցա զրկիլ կարէ. զորօրինակ ի մանկունս, ի քունն ի մեղս ընդդէմ բնական օրինաց են։

Առ Գ. ընդունիմ զմեծագոյնդ, և զանազանեմ ըզփոքրագոյնդ. փոխանակ նորա են միտք, կամք, գործնական դատողութիւնք մտաց՝ են, ծագեալք և հաղորդեալք մարդկային բնութեանս յաստուածուստ անտի՝ ընդունիմ. անկախ և որիչ յաստուածային կատարելութենէ՝ ուրանամ. և ուրացեալ զհետևութիւնդ՝ ի բացայայտութիւն նոցա ասեմ. արդէն միտք մեր՝ կամք և ամենայն կատարելութիւնք են հաղորդակցութիւն աստուածային կատարելութեանն, և պատկեր և նմանութիւն աստուածային կատարելութեանն. եթէ բարձցի նախատիպն, բարձցի

հարկաւ և պատկերն. զորօրինակ բարձեալ մարդոյ՝ բառնին նոքա և հովանի մարդոյ և պատկեր։ Այդ և առընչական իմն է սահմանեալ բարութիւնն ընդ անսահման բարութեանն. զի եթէ բնութիւնս արարած է, և արարածք որ ինչ ի բնութեան, ո՛չ ապաքէն անմտութիւն է ասել՝ թէ արարածն չունի պէտս Արարչին իւրում, և սահմանեալ բարութիւնն չունի պէտս անսահման բարութեան. ապաքէն զառաջին օրէնս՝ զմիտս ասացին Աստուծոյ, յորմէ և օրէնքդ բնականք, զորս աստուածք մեզ շնորհեցին։ Այնքան յեանեալ գտանիցին արք լուսաւորեալ դարուս մինչև ո՛չ միայն չունել զլոյս անգամ հեթանոսաց, այլ և ո՛չ անսալ ուղիղ վարդապետութեանց նոցա։ Զայս հեթանոսք ուսուցին, գոնէ լիցին իբրև զհեթանոսս. աւա՜ղ թշուառութեան դարուս։ Վասն որոյ ինքնօրէն լինելն կամ ինքնօրէնութիւնն չկարէ երբէք ունել տեղի. նախ՝ զի օրէնք պահանջին ի մեծագունէն առ փոքրագոյն՝ կամ առ հպատակն լինել. զիա՞րդ մարդս ինքնին կարէ մեծ լինել յինքեան և փոքր, զիա՞րդ հրամայել ինքեան և պարտաւորել զանձն, և անպարտ կալ և պարտ կալ. սոքին ամենեքին ըմբռնմունք են միայն հակասականք, և բնութեանն օրինաց հակառակք. և յորժամ ասեմք՝ թէ են ի մեզ բնական օրէնք, չասեմք թէ տեսութիւնք և գաղափարք միայն մերոյ են օրէնք, այլ յաւիտենական օրէնք հաղորդեալ յաստուածուստ բանական բնութեան մերում անմիջապէս, այն է ճառագայթ յաւիտենական լուսոյն՝ իջեալ և ընդհարեալ յայս բանական բնութեանս, այն է ի միտս և ի կամս մեր՝ բարձեալ զյաւիտենական օրինացն զազդեցութիւն ի մեզ, և զլոյս երեսաց տեառն՝ կամք ի խաւարի. և ամենայն անօրինացն բանային լայն և դիւրին պողոտայք։ Ամէն իբր

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Գ.

*Բնական օրէնք պարտաւորեն զմարդն խղճիւ մտաց։*

ՅԶԸ. Աստուած է պատճառ բնական օրինաց, և բնական օրէնք առարկաբար առեալ մի և նոյն է ընդ յա-



ւիտենական օրէնս. արդ՝ եթէ Աստուած ունի զզօրութիւն պարտաւորելոյ զմարդն հպատակելոյ ինքեան, հետևի բնականապէս՝ թէ և բնական աստուածային օրէնք պարտաւորել կարեն զմարդն։ Բայց օրէնք չեն օրէնք, եթէ ո՛չ հրատարակին՝ տեսաք ի սահմանին, և որպէս տեսցուք. և հրատարակին ազդեցութեամբ և բնական զգայութեամբ բանական բնութեանս, և գործնական դատողութեամբ մտացս՝ այն է խղճիւ մտաց. ուրեմն բնական օրէնք հրատարակեալ միջնորդութեամբ խղճի մտաց՝ պարտաւորեն զմարդն ծանրապէս ընդ մեղօք՝ խղճիւ մտացն. քանզի յաւիտենական օրինաց ընդդէմ կալ՝ է հակառակիլ մերձաւոր կանոնի մարդկային մտաց՝ ըստ Սրբոյն Թովմայի. ուրեմն գործողութիւնք համաձայնք աստուածային օրինացն նոքին են, որք համաձայնին բնութեան օրինաց. և որք ո՛չն համաձայնին և հակառակ են աստուածային օրինացն՝ նոքին են, որք հակառակք կան բնութեան օրինացն և գործնական դատողութեանց մտացն. բայց որք հակառակ բնութեանն օրինաց են, ոչ ժամանեն բնութեանն բարութեան և վախճանի, այլ զրկին անտի, և զրկիլն ի բնական կարգէն և ի հասարակ բնութեանն բարութենէ և վախճանէն՝ մեղք են. ուրեմն որք ընդդէմ բնութեանն գործեն, մեծապէս անձանց իւրեանց վնասեն՝ այն է մեղօք մեղանչեն. ուրեմն բնական օրէնք պարտաւորեն զմարդն խղճիւ մտաց։ Այսպէս որք միանգամ արտաքոյ (Մովսիսական ո՛չ թէ բնական) օրինացն մեղան, արտաքոյ օրինացն կորնչին, այն է բնական օրինօք. և են նոքա՝ որք զօրէնս ո՛չ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք. որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի միտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց։ Դարձեալ՝ որք առանց գրական օրինացն կարողք են զօրինացն գործել, բնութեամբ իւրեանց՝ այն է բնական օրինօք յարմարս բնութեանն բարւոյն և վախճանին գործել, նոյնպէս նոյն բնութեամբ կարեն անգամ զրկիլ ի բնութեանն բարութենէ և վախճանէն։ Ուրեմն բնական օրէնք պարտաւորեն զմարդն խղճիւ մտաց, ըստ որում ծնունդ և բան ի-

մատուն մնայ, որ զանխղելոյ ունի զզօրութիւն ։ Ապաքէն առացաք զայսմանէ՝ և յորժամ զխղճէ մնայն, և լաւագոյնս ճանաչի առաջարկութիւնս, մերթ գիտեմք՝ թէ ի հաստատութիւն բնական օրինաց՝ կարգեալ է յաստուծոյ վարձ և հատուցումն պարգևին և պատժոյ. որ յայտնի առաջիկայիւք ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ՅԱՂԱԳՍ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ

ՅԶԹ. Հաստատութիւն օրինաց կոչեմք զպարգևն և զպատիժ վասն բարի և չար գործոց համաձայն կամ ընդդէմ օրինաց գործելոյն յօրէնսդրէն կարգեալ. ուստի ասեմք. բնական օրէնք հարկաւորապէս պահանջեն զհաստատութիւն, և բարձմամբ հաստատութեանն՝ այն է վարձուցն և պատժոց, բառնի գոգցես և ամենայն պարտաւորութիւն օրինաց. և օրէնք, որք ոչն պարտաւորեն՝ ոչինչ են. ուստի ի պահպանութիւն և ի պարտաւորութիւն օրինացն՝ եթէ ոչ օրինացն անդամ էութեան՝ հարկաւոր է հաստատութիւնն, և զայդ պահանջեն արդարութիւն, սրբութիւն, իմաստութիւն և նախախնամութիւնն Աստուծոյ. Թէպէտև բացարձակապէս խօսելով՝ արարածք չունին երբէք իրաւունս, ըստ ճիշդ իմաստին արդարութեան, պահանջելոյ յԱստուծոյ զվարձս ինչմանէ. քանզի ի չգոյէ ի գոյ գալն իսկ մեծ բարութիւն է նոցա, զի լաւագոյն է լինել քան զչլինելն, բայց և վասն խոստմանն Աստուծոյ կարեմք պահանջել զվարձս ըստ արժանւոյն ։ Նախ՝ պարգև կամ վարձատրութիւնն հարկ է յարդարութենէ անտի. քանզի որպէս տեսաք՝ յորժամ զարդեանց և զապարգեանց մարդկային գործողութեանցն, մարդկային գործողութիւնք եթէ բարի իցեն, կամ օրինացն և կարգի բնութեան համեմատք և համաձայնք իցեն, վարձուցն ար-



ժանի լինին. իսկ եթէ հակառակք իցեն բնական օրինաց և կարգի բնութեանն, ի հարկէ պատժոց արժանի գտանին յայնմանէ, որ ունի զիշխանս, զհոգ զհասարակութեանէ. քանզի արդարութիւնն պահանջէ՝ զի որ զբարին գործէ, վարձատրեսցի. զի զայդ պատուիրէ Աստուած՝ գործել զբարին, և արգելու զչարն ։ Եթէ բարի գործոյն ըստ օրինաց իւրոց չտայր վարձս, ընդդէմ նոյն արդարութեանն գործէր. զի արդարութիւնն առէ տալ վարձս արժանաւորացն և պատիժս անարժանից ։ Ապաքէն անդ առացաք՝ զիարդ կարէ ոք արդիւնս տանել ի մեծաւորէն հասարակութեան՝ ոչ միայն յԱստուծոյ, այլ և ի բոլանդակ հասարակութենէ հաւաքապէս և յանհատից իւրաքանչիւրոց. զի բարին զիւրս յարաբերութիւնս ունի ի գործս իւր. առ գլուխն հասարակութեան՝ առ հասարակութիւնն՝ և առ ինքն՝ իբրև անդամ հասարակութեան ։ Եւ ընդհակառակն արդարութիւնն կամի զի պատիժս կրեսցէ չարն՝ ըստ որում ընդդէմ երրակի յարաբերութեանցդ գործէ և վնասէ հասարակութեանն, զանցանէ զօրինօք իշխանին հասարակութեան և անձին իւրում վնասէ՝ վնասելով անդամոյն հասարակութեան. ուստի ի սէր բարւոյ և կարգի պատիժս կրեսցէ չարն, հրամանաւ մեծաւորին բոլանդակ հասարակութեան ։ Այսպէս Սուրբն Թովմաս (*). «Աստուածային կատարեալ բարութեանն պատկանի, զի չիւր չթողցէ երբէք զինչ անկարգ... բայց և ի կարգի արդարութեանն որ բերի ի հաւասարութիւնն՝ պարունակին նոքա, որք զպարտաւպատշաճ չափիւն անցանեն ։ Անցանէ արդ ոք զպարտաւպատշաճ չափիւն իւրով զկարգաւ՝ մերթ զանձնական կամս իւր գեր քան զաստուածային կամս դնէ, տալով նմա չատանալ ընդդէմ կարգի ։ Արդ այս անհաւասարութիւն բառնի, մինչ ընդդէմ կամաց իւրոց կրել զինչ ստիպիցի ըստ կարգադրութեան»։ Ուրեմն պատիժն է չինութիւն խանգարեալ կարգի, և ի բնութենէ իւրացն պահանջեալ. և արդար դատաւորին է՝ խորհրդով բանի վարել զհպատակս, և որքան առաւելոյցու խոհեմութեամբ բանին և սիրով բարեկարգութեան՝ այնքան ուժգինս

պարտի ընդդէմ կալ խանգարմանց կարգի բնութեան, Խանգարին կարգք բնութեան և հիմն ի վեր տապալին, մինչ խանգարին օրէնք բնութեան՝ ընդդէմ ելեալ գոլով նոցա չարեաց գործողութեանց ։ Դարձեալ՝ պատճառ և վարձուցն արդար հատուցմունք պահանջին վասն պահպանութեան բնական օրինաց և պարտաւորութեան ի սրբութենէ անտի աստուածային բնութեանն . զի՞արդ կարէ գերագոյն սրբութիւնն ո՛չ սիրել զառաքինութիւն, ո՛չ վարձատրել զարդիւնաւոր գործս բարեաց, և զի՞արդ կարէ՝ Աստուած գոլով՝ անտարբեր լինել ի չարեաց անիրաւութիւնս . ո՞չ ապաքէն հարկաւորութեամբ բնութեանն պարտի ատեցել զչարն, և եթէ նովին աչօք հայի յամբարիշտս, որովք տեսանէ զբարիսն՝ ո՞չ ապաքէն դադարէր Աստուած գոլ գերագոյն էակ, աղբիւրն բարութեանց ։ Յաւե՛լ և զիմաստութիւն և զնախախնամութիւն նորա . ո՞չ ապաքէն իմաստուն ճարտարապետին է, զի որք եղծանեն զշինուածն և անպիտան են, ի բաց մերժեսցին ի շինուածոյ անտի . ո՞չ ապաքէն անմտութիւն համարէր աստուածային իմաստութեանն չարեաց և բարեաց բաշխել զնոյն պարգևս . անմտութիւն է հրամայել պահել զօրէնս առանց կարգելոյ նախ զբաւական առիթս պահպանութեան օրինացն . և յի՞նչ արդեօք երևէր նախախնամութիւնն Աստուծոյ և յաղթող հանդիսանայր, եթէ ո՛չ ի յարդար հատուցումն իւրաքանչիւրոցն ըստ գործս իւր, տալով բարեացն գործոց պսակել անթառամ և անթարշամ փառօք, և չարեացն զրկել ի վարձուց և յերանութենէ . և յիրաւի ո՛չ միայն բնական օրէնք պարտաւորեն զհպատակս զօրութեամբ և երկիւղիւ այսր աստուածային օրինացն հաստատութեան, այլ և այլք որ և իցեն օրէնք՝ թէ՛ դրականք եկեղեցականք և թէ՛ քաղաքականք, որք հաստատին և պարտաւորին այսու յուսով վարձուցն և երկիւղիւ պատուհասիցն ։ Եթէ բառնայցին վարձք յաւիտենականք և պատիժք, ո՞ր արդեօք պահէր զօրէնս . կարծեմ յոյժ սակաւ լինէր հաշիւն այնոցիկ, որք սիրէին զԱստուած սիրովն բարեկամութեան, այն է՝ վասն-



զի իւրքեին ինքեան սիրելի և բարի է ։ բայց [illegible]՝ որով սիրեմք զԱստուած՝ է [illegible], այն է՝ զի ցանկամք տեսանել զնա և երջանիկ լինել նովաւ . ուստի երկնչիմք զի մի՛ կորուսցուք զնա, նմին իրի սիրեմք զնա [illegible] ո՛չ [illegible] . բայց սէրն բարեկամութեան գերագոյն է քան զայդ ցանկութիւնն, այսպէս տասցես և զբարոյական սիրելութենէ և զբարութենէ առաքինութեանց ։ Սիրին՝ զի օգտին մեզ ի յանտի կեանս, ո՛չ թէ զի ըստ որում սիրելիք են՝ տիրապէս սիրին ։ Առտի ևս յայտ է՝ թէ կատարեալ վարձատրութիւնն արդիւնաւոր և ապարդիւն գործոց լինելոց է ո՛չ յաստի կեանս՝ այլ յանտի կեանս, և գլխաւորապէս ի ստացումն կամ ի կորուստ գերագոյն բարւոյ կամ վախճանի բանական բնութեանն, ուր առաջնորդեն մի միայն կանոնն և օրէնք բնութեան . զորոց երգէր ի յառաջնոց ոմն . « օրէնք Տեառն ճշմարիտք են, և լոյս սան չաւղոց իմոց » ։

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՑԴ. Առանց պէտս ունելոյ աստուածային հաստատութեանն օրինաց ի խնդիր լինելոյ՝ բաւական է ցուցանել զկար պարտաւորութեան բնական օրինացն ի ներքին բարեմասնութեանց կամ ներգործութեանցն բարութեան և առաքինութեանց . զորօրինակ բարի համբաւն, անդորրութիւնն խղճի մտաց՝ յորմէ և ներքին խաղաղութիւն հոգւոյ են . ուստի չիք հաստատութիւն օրինաց ։ Բ. Բարութիւնքդ այդորիկ՝ հանգիստ, անդորրութիւնն, խաղաղութիւնն սրտի՝ որք յառաքինութենէ, և տանջանքդ, և վրդովմունք սրտի և խայթ խղճի մտացն բաւական վարձք են առաքինութեանց, և պատիժ մեղացն . ուստի չեն պէտք հաստատութեան օրինաց անտի կենացն և վարձուց և պատժոյն նորա ։ Գ. Չիք համեմատութիւն ընդմէջ յանցանացն ընդդէմ օրինացն և յաւիտենական վարձուց կամ պատժոյ ։

Առ Ա. զանազանեմ . ներքին բարեմասնութիւնքդ

այդօրինակ առաքինութեանց կատարեալ հաստատեն զօրէնս՝ ուրանամ. ըստ իմիք, և այդ ո՛չ անկախ ի հաստատութենէ Աստուծոյ վասն օրինացն՝ ընդունիմ. և ուրացեալ զհետևութիւնդ՝ ասեմ. բարի համբաւդ, որոյ անձկութիւն կամ վրդովումն՝ որ յանօրէնութենէ և յանդորրութենէն, և որոյ խաղաղութիւնն յօրինապահութենէ և յառաքինութեանց, այո՛ են տեսակ ինչ հաստատութեան օրինաց, այլ կարի անկատար. քանզի բարութիւնքդ այդօրինակ՝ իբրև հարկաւոր հետևութիւնք առաքինութեանցն չեն այնպէս, մինչև երջանիկ կացուցանել զմարդն և անկարօտ այլում իմիք տեսակի բարութեանց, և փոփոխութեան ենթակայ են. և բարի համբաւդ խայտառ կորնչի, եթէ զրպարտութիւնք անօրինացն ընդդէմ յարուցեալ արատեսցեն զայն, և ահա ո՛չ նշան և ո՛չ հետք անուան և համբաւոյն. ուստի ո՛չ կարէ ճշմարիտ հաստատութիւն դնել օրինացն, նոյնպէս և անդորրութիւն ներքին և խաղաղութիւն խղճի մնայ առ բազումս նուաճի ի խստութենէ տանջանացն և ի ցաւոց, և կորնչին խայտառ. և առաքինութիւնք քամահրելիք յաչս անօրինացն, և նուազին առ բազումս մեծարանք պարտաւորեալք նոցա. նոյնպէս և մոլութիւնք և խայթն խղճի մնացն՝ որ ի մեղաց անտի՝ դադարին յետ բազում կիրառութեանց նոցա, և նմին իբր չեն ճշմարիտ ինչ վարձ կամ պատիժ բարոյական գործողութեանցն. բայց և այդ է պատկեր ինչ և հաղորդակցութիւն ճշմարիտ հաստատութեան վարձուցն և պատուհասից, և բազումք տանջեն և լկեն ներքուստ զանձինս, քանզի քաջ գիտեն՝ թէ պատիժն անստանելի կայ մնայ նոցա յանտի կեանս, և բազումք առաքինութեանցն աշակերտք՝ ցնծան ի նեղութեանն իւրեանց, քանզի ունին զյոյս կենդանի՝ թէ զերծցին յաւուր միում ի մահկանացու կենցաղոյս, և ժամանեսցեն տիրապէս երջանկութեան վարձուցն յաւիտենից։

Առ Բ. զնոյն պատասխանի բաւական դատիմք։

Առ Գ. ասեմ՝ զանազանելով. չիք համեմատութիւն ենթակայապէս առեալ՝ ընդունիմ. չիք համեմատութիւն



առարկաբար առեալ՝ ուրանամ. և ուրացեալ զհետևութիւնդ՝ ասեմ։ Այո՛ մարդս [illegible] միայն կարէ [illegible] կամ [illegible] գործել [illegible], ըստ որում պատճառն սահմանեալ է, բայց ըստ մեծութիւն բարութեան կամ չարութեան դատի և չափի ո՛չ ի յենթակայէն կամ ի գործողէն, այլ յառարկայէն՝ յորմէ չափի և տեսակաւորի գործն. քանզի որ ընդդէմ կայ օրինացն՝ ընդդէմ կայ և պատճառին օրինաց, որ է Աստուած. արդ որ ընդդէմ կայ Աստուծոյ, չկարէ համաձայն գոլ Աստուծոյ, և անհամաձայն գոլն Աստուծոյ արարածոյ ուրուք նմին, և ո՛չ միաբանիլ ընդ Աստուծոյ՝ է զրկիլ յԱստուծոյ, և զրկումն յԱստուծոյ է պատիժ անհամաձայնութեան արարածոց աստուածային օրինացն. ուրեմն բուն պատիժն յաւիտենական յանյարմարութենէ անտի է նոցին օրինացն։ Դարձեալ՝ որ կայ ըստ օրինաց, ի կարգի բնութեանն կայ. և որ կայ ի կարգի բնութեանն՝ ժամանէ վախճանին բնական բնութեանն՝ որ է Աստուած. արդ որ ընդդէմ կայ օրինացն՝ արտաքսէ զանձն ի կարգէ բնութեանն, առ որ ինքնին չկարէ վերադառնալ՝ մինչև յօժանդակութիւն չժամանեսցէ նմին այլոցն ողորմութիւն. ուստի որ արտաքսէ զանձն արտաքոյ քան զկարգ բնութեանն՝ յանկարգութեան կայցէ յաւիտեան. քանզի ո՛չ որ կարէ մուծանել զնա վերստին ի նոյն վիճակ կարգաւորութեան, ո՛չ մարդն օրինաւոր և ի կարգի՝ քանզի չկարէ ելանել ի կարգէն, և զոր յանկարգութեանն իցէ ի կարգ մուծանել. ո՛չ Աստուած՝ քանզի ընդդէմ եկաց Աստուծոյ ելանելով ի կարգէն. ուրեմն յաւիտեան մնացէ ի խորն, յոր ձգեաց զանձն. ուրեմն պատիժն յաւիտենական ի նոյն առարկայէն ծագի, այն է ի կարգէ բնութեանն և յաստուածային էութենէն, որ անսահման գոլով վչտանայ անսահմանաբար։

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ՑԱՂԱԳՍ ՅԱՏԿՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՂԲԵՐՆ ՕՐԻՆԱՑ

ՑՂԱ. Նախ՝ հիմն կամ աղբիւրն բնական օրինաց մերձաւորապէս է թէ՛ միտք մարդկային և կամք, և թէ՛ միտք աստուածային և կամք. իսկ առաջին աղբիւր կամ հեռաւոր հիմն է մարդկային բնութիւն և աստուածային էութիւն. քանզի որպէս բազում ասացաք ի յէակաբանութեան անդ՝ ամենեցուն թէ՛ գոյից և թէ՛ անգոյից՝ այն է եղելութեանցն և ամենայն կարելի էակացն հիմն և աղբիւր է աստուածային էութիւնն՝ աղբիւր ամենայն բարութեանց և գերագոյն էակ և ծնունդ ամենայն նմանութեանց և յարաբերութեանց. և քանզի մարդկային բնութիւնն և միտք և կամք են իրական յարաբերութիւնք, կախին յԱստուծոյ անտի. և քանզի օրէնք բնութեան, զորմէ այժմ են բանք մեր, մարդկային բնութեան և ո՛չ թէ այլոց բնութեան են, նմին իրի և օրէնքդ կախին յաստուածայնոյ էութենէ անտի։ Այսպէս ամենայն իմաստասէրք և ամենայն դասական աստուածաբանք. վասն որոյ և Սուարէզ ասաց զյաւիտենական օրինաց. «եթէ խնդրեսցես զպատճառն՝ է նոյն ինքն աստուածային բնութիւն». և քանզի միտք աստուածային ո՛չ ստեղծանեն զիմն, այլ միայն ճանաչեն զնա. և քանզի կամքն անգամ զայդ միայն առնեն՝ զոր ցուցանեն նմին միտքն աստուածային, նմին իրի կարեմք ասել՝ թէ միտք ի յաւիտենական և ի գերագոյն առարկայն իւր տեսանէ և նշմարէ զհիմն յաւիտենական օրինաց, այն է աստուածային անսահման էութեանն. ուրեմն հիմն և աղբիւր ամենայն իրաց և հեռաւորար յաւիտենական օրինաց՝ է աստուածային էութիւնն։ Իսկ արդ և բնական օրէնք ո՛չ են այլ ինչ՝ եթէ ո՛չ յաւիտենական օրէնք հաղորդեալք բանական բնութեանս. ուրեմն և՛ հիմն և՛ աղբիւր բնական օրինացն է աստուածային էութիւնն. և քանզի ո՛չ միայն էակացն



իրական են էութիւնք, այլ և ըստ որում ճանաչելին և ճանաչելի էութիւնք, նմին իրի և բնական օրինացն էութիւնք, որ ըստ որում ճանաչելին՝ կախին յաստուածային մտաց և կամաց. զի իբրև վճիռք են անփոփոխք այսր աստուածային մտաց և կամաց։

ՑՂԲ. Ցուցեալ՝ թէ օրէնք բնութեան ունին զհիմն իւրեանց յԱստուծոյ՝ ասեմք թէ ընդհանուր են, անփոփոխ են, յաւիտենական են, և հիմն են, և կամ աղբիւր ամենայն դրական օրինաց։ Նախ՝ ընդհանուրք են. քանզի հարկաւորապէս բանական բնութեանս կից են, և քանզի բանական բնութիւնս յամենայն մարդիկ գտանիլ պարտի, քանզի մարդն է բանական կենդանի, նմին իրի յամենայն մարդիկ գտանի. և ևս ընդհանուր կոչի՝ քանզի է կանոն ընդհանուր բարուց ամենայն մարդկան, և ընդ իւրով հպատակութեամբն ունի և դրսէ զամենայն մարդ, և ո՛չ ոք, թէև յանտառս և ի սփիւռս հեթանոսութեան գտանիցի և կեցցէ, ո՛չ երբէք կարէ ուրանալ՝ թէ զառաջինն բանականութեան մտաց մերոց ծանուցեալ իցէ՝ թէ պաշտել պարտ է զԱստուած, և թէ առնել պարտ է զբարին և խորշիլ ի չարէն են, և թէ առաքինութիւնն սիրելի է։ Դարձեալ՝ օրէնք անփոփոխ են. քանզի յամենայն դարս, յամենայն ազգս և յամենայն տեղիս ո՛չ երբէք գտանիցին՝ թէ անվայել է պաշտել զԱստուած, սուտ է՝ թէ պարտ է սիրել զառաքինութիւնն, եթէ ծնողք չեն արժանի որդւոցն սիրոյ և յարգանաց, և հրէշ համարէր որ ընդդէմ ելանէր միում յսկզբանցս. և նոյն օրէնսդիրն Աթենայ Սողոն, վասն ամենայն եղեռնագործութեանց կարգեաց զպարտուպատշաճ պատիժս, և իբրև անհնարին ինչ և ընդդէմ բնութեանն և օրինաց դատելով զսպանումն ծնողաց՝ չեդ այնմ ո՛չ զօրէնս և զկանոն, և ո՛չ զպատիժ պատուհասին։ Յաւիտենական են օրէնք։ Ա. Ենթակայապէս, քանզի յԱստուծոյ անտի յառաջ գան և գրին, և Աստուած յաւիտենական կայ. Բ. յաւիտենական են, քանզի բերին առարկային, որ ինքնին և ի ներքուստ բարի գոլով են. և քանզի բարութիւնն նորին յաւիտենական է, և պակա-

ութիւն բարութեան միջոյ ի յաւիտենից չար, և որքան և ցորչափ բարութիւն իցէ՝ նոյնչափ իցեն և օրէնք՝ իբրև կանոն՝ և բարձրագոյն վճիռ առնելոյ զբարին և խորշելոյ ի չարէն. իսկ արդ բարութիւն իբրև առարկայ և վախճան օրինաց՝ յաւիտենական է, քանզի ամենայն բարութիւն և կատարելութիւն՝ որպէս տեսանեմք ի Համարնաբանութեանն՝ յէութեանն Աստուծոյ հիմնեալ հաստատի, իբրև ի գերագոյն բարին, և յաղբիւրն ամենայն բարեաց. ուստի օրէնքն անգամ յաւիտենական են: Հարկաւոր են. բայց գիտել պարտ է՝ թէ երկու տեսակք հարկաւորութեան են, [illegible] կամ [illegible] [illegible] կամ [illegible], և կամ [illegible] [illegible] և [illegible]: Առաջին կերպիւ հարկաւորութեան մի միայն Աստուածային էութիւնն կայ, որ է և կայ հարկաւորապէս, այսինքն է ներքին զօրութեամբ բնութեան իւրոյ՝ ինքնին լինելեան է: Բայց թէական է՝ յորժամ եդեալ զմի ինչ հարկաւորապէս՝ դիցես և զմիւսն, այսպէս բնական և յաւիտենական օրէնք աստուածայինք՝ դնին միմիայն ազատ գործողութեանց մարդկան, և ի բարութիւնն հասարակաց, որ լիցի վախճան բնական օրինաց. քանզի մարդն ստեղծեալ է վասն վախճանին պահանջելոյ ի բնական յանկութեանց իւրոց, զիա՞րդ կարէ ազատ գոլով մարդն, առանց կանոնի բնութեան ի կիր արկանել զայդպիսի նպաստ և զմիջոցս որով անսխալիւր ժամանեսցէ այսմ վախճանի: Ուստի պարտի նմա կանոն իմն, որում յարմարեալ զգործս իւր ժամանեսցէ վախճանին: Ահա աստի յայտ եթէ որպիսի հարկաւորութեամբ են բնական օրէնք, այսինքն է ոչ [illegible] և [illegible], որպէս էութիւնն Աստուածային, այլ յաւէտ [illegible] [illegible]: Եւ զայդ պահանջեն իմաստութիւն. սրբութիւն և նախախնամութիւն Արարչին բնական բնութեան: Հուսկ ուստի՝ օրէնքդ բնութեան՝ են հիմն, և պատճառ ամենայն մարդկային իրաւանց և դրական օրինաց. և թէ զօրեն հպատակել իշխանք և գլխաւորքն հասարակութեան զհպատակս իւրեանց, այդ ի զօրութենէ բնական օրինաց են և ի գործնական սկըզ-



բանից նորա. «Իսկ թագաւորք թագաւորեն, և հզօրք գրեն զարդարութիւն (*)»: Այսպէս իմաստութեամբ գրեաց Կիկերոն. «Օրէնք են յիրաւի ուղիղ բանն, համաձայն բնութեան հեղեալ յամենեսին, հաստատ, մշտնջենաւոր, որ կոչեն զմարդ պաշտամանցն հրամայելով, և արգելեալ ի նենգութենէ յետս դարձուցանեն, յորոց ոչ բառնալ ինչ արժան է, և ոչ ջնջելն վայել: Եւ ոչ իսկ ոչ ծերակուտին հրամանաւ և ոչ իսկ ժողովրդեանն՝ յօրինացս յայսցանէ արձակել զօրեմք. և ոչ անգամ պարտ է այլոյ ուրուք ի խնդիր լինել, իբրև զի բացայայտիցէ կամ մեկնիցէ զնա. և ոչ իսկ օրէնք այլ լիցին ի Հռովմ, և այլք յԱթէնս, այլք այժմ և այլք զկնի: Տնա՝ զամենայն ազգս և զամենայն ժամանակս մի՝ և այդ մշտնջենաւոր և անփոփոխ օրէնք ունիցին, և միոյն իբրև հասարակ կացցէ դաստիարակ և ամենեցուն տիրող Աստուած: Նա հեղինակ այսոցիկ օրինաց, փաստաբան, օրէնսդիր, որում որ ոք ոչ հնազանդիցի, նա յանձնէ իւրմէ զարշիցի, և զմարդկային բնութիւնն անարգեալ՝ այսուիկ զանհնարին տանջանս կրեսցէ, թէպէտ և յայլոցն զորոց խորհին, խոյս տայցէ»:

## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՑՂԳ. Բնական օրէնք իբրև մասնակցութիւն կամ հաղորդակցութիւն յաւիտենական օրինաց՝ յաւէժ գան յաստուածային կամաց, որք պատուիրեն առնել զբարիս և խորշիլ ի չարէն. իսկ արդ աստուածային կամքն ազատ է, և կարէ փոխել զսկզբունս օրինացն կամ կարգել զհակառակս այսոցիկ սկզբանց. ուստի բնական օրէնք չեն անփոփոխք: Բ. Զօրօրինակ օրէնսդիրք կարեն փոխել զօրէնս իւրեանց, այսպէս և Աստուած: Գ. Ոչ երբէք բնական օրէնք կարեն հիմն և հեռաւոր պատճառ լինել դրական օրինաց. քանզի առարկայ և բնութիւն սոցա այլ

(*) Առակ. Ը. 15:

են յառարկայէն և ի բնութենէ բնական օրինաց. ուրեմն են ։

Առ Ա. ընդունիմ զմեծագոյնդ, և առ առաջին մասն փոքուդ զանազանեմ. կամքն աստուածային ազատ է՝ նկատմամբ ներքին խուսն աստուածային բնութեան սեփական գործողութեանց՝ ուրանամ. Նկատմամբ արտաքին գործոց կամ արարածոցն՝ դարձեալ զանազանեմ. Նկատմամբ այնց՝ որք կից են էութեանց իւրացն, և անտի երանեն՝ ուրանամ. Նկատմամբ գոյութեան արարածոցն և ֆիզիքական օրինացն կամ նիւթականացն՝ ընդունիմ. և առ Բ. մասդ փոքուդ ըստ այսմ զանազանելով՝ ընդունիմ կամ ուրանամ. և ուրացեալ զհետևութիւնդ՝ ի բացայայտութիւն որոց ասեմ. Նախ՝ յայտ է թէ էութիւնք իրացն և օրէնք՝ որովք կան իրքն, ո՛չ ի մտաց կամ ի կամաց անտի Աստուծոյ կախին, այդ ի համարնաբանութենէ անտի յայտ է, հաստատեալ ասա ենթադրի ։ Ստեղծանել արարածոցն ապաքէն ո՛չ հակառակ իւրեանց ներքին բնութեանցն ստեղծանին, այլ ըստ նախատիպին իւրեանց, և ի համաձայնութիւն անփոփոխելի կարելի էակացն. արդ կամքն աստուածային չկարեն փոխել զներքին բնութիւն իրաց, որք ոչ կախին ի նմանէ, այլ յաստուածային էութենէ. մի միայն միտք աստուածային զոր ինչ նշմարեալ տեսանեն ի յաւիտենական առարկայն իւրեանց, և հետևաբար ի ներքին բնութիւնս կամ էութիւնս իրացն՝ զայդ կամին, հրատարակեն և պատուիրեն ։ Այսորիկ այսպէս գոլով՝ ասեմք. միտք կամ կամք աստուածային ազատ են ի ստեղծանել կամ չստեղծանել զարարածս, զոսին և ո՛չ զնոսին, զա՛յս և ո՛չ զայդ ստեղծանել կամ ի գոյութիւն ածել, բայց ո՛չ այսպէս փոխել զներքին բնութիւնս իրացն, և հետևաբար և ո՛չ զայնոսիկ որք ներքին են և սեփական բնութեան իրացն. իսկ արդ օրէնք են ի բնութենէն իրաց, և ո՛չ ի գոյութենէն իրաց. ուրեմն զսա կարէ փոխել միայն կամ զնիւթական և զֆիզիքական կայն իրաց արդեամբ՝ զոր կարես կոչել ֆիզիքական կամ նիւթական և պատահական օրէնս բնութեան կամ գոյացութեան, ո՛չ թէ ըզներքին զբարոյական օրէնս իրացն, զորս անհնարակարող



կամքն և զօրութիւնն աստուածային չկարեն երբէք փոփոխել. քանզի ներքին բնութիւնք իրացն են համաձայնք իւրումն աստուածային բնութեան, ըստ որում կախին անտի, և զի չկարէ աստուածային կամքն փոփոխել զիւրոյ բնութեան օրէնս, նոյնպէս և ո՛չ զայնս՝ որք ի բնութենէ անտի նորա ։ Երկրորդ՝ արդէն ցուցեալ եմք ի մարդկային գործողութիւնս, թէ բազումք հրամայեն և պատուիրեն՝ քանզի ի ներքուստ ի բնութենէ կամ վասն բնութեանն բարի են. և բազումք բարի են՝ քանզի հրամայեն և պատուիրին կամ բարի լինին վասն պատուիրանին. ուրեմն օրէնք բնութեանն անփոփոխք են, և բաց յայնմանէ՝ զի չկարէ կամքն աստուածային փոխել զբնութեան օրէնս խառն պատուիրին՝ առեալ ի սրբութենէ, ի գթութենէ, յիմաստութենէ և ի նախախնամութենէ իւրմէ՝ զի անթերի պահիցին. և այնպէս իմաստութեամբ կարգեալ է զարարած՝ մինչև ո՛չ միայն մարդիկ անզգամք անօրէնութեամբ իւրեանց անզօր են ընդդէմ բնութեան օրինացն, այլ և օրէնքդ բնութեան յաղթողք հանդիսանան յընդհանուր մարդկային ազատ գործողութիւնս, և անպարտք և անվնասք յամենայն դարս, յամենայն տեղիս, յամենայն ազգս և յամենայն սիրտս թէպէտև վայրենաբարոյս ։

Առ Բ. Ասեմ. եթէ օրինացն առարկայք անտարբերք իցեն առ բարոյականութիւնն և ազատք՝ իբրև զառարկայս թագաւորացն կամ զօրաց, զինամ ունին հաստատութեանն բարութեան. քանզի ընդ ժամանակի, տեղւոյն, անձանց, և պարագայից փոփոխման, փոփոխիլ կարեն և դրական օրէնք՝ ընդունիմ. եթէ առարկայքդ արդէն պատուիրեալ իցեն ի բնական օրինաց կամ արգիլեալ անտի՝ ուրանամ. զի յերկրորդ թէութեանդ կրկնակի է և ծանրագոյն պարտաւորութիւն պահելոյ զնոսա, քանզի թէ՛ բնական աստուածային օրինօք և թէ՛ դրական օրինօքն, պարտի մարդ ո՛չ զանցանել զնոքօք ։ Այսպէս են բաց ի միոյն՝ տասնաբանեայ պատուիրանքդ արձանագրեալք ի Սինայ լեառն, որով և պատասխանի ։

Առ Գ. Ուրանամ զամենայն. և առ փաստն՝ զանազանեմ. մինչ զանազանք են առարկայք բնական օրինաց՝ յառարկայից անտի գրական օրինացն՝ ուրանամ, երբեմն, և այդ ըստ տեսակի միջնորդացն՝ ընդունիմ. ըստ վախճանին՝ ուրանամ։ Եւ ուրացեալ զհետեւութիւնն՝ ասեմ։ Ամենայն գրական օրէնք պարտաւորեն զհպատակս տիրապէս, քանզի կարգեալ են ի բարութիւն հասարակութեան, ոչ միայն այնր ժամանակաւոր, այլեւ գերագոյն մասին բնութեան՝ այն է հոգւոյն. իսկ արդ և բնական օրինացն վախճան է բարոյական բարութիւնն բնութեան, որ հասարակ է ամենեցուն, և կայ յամենեսին. ուրեմն թէ գրական և թէ բնական օրէնք ի վախճանի միաբանին։ Եւ ամենայն գոզցես գրական օրինացն հաստատութիւն՝ այն է վարձք և պատուհաս յաւտի իսկ կեանս խառն գործադրին, այնու զի բնական օրէնք պահին կամ ընդ ոտիւք հարկանին, և այդ ո՛չ միայն յազգս ի կատարն զխաւթեանց և քաղաքական կրթութեանց հասեալս, այլեւ յայնս՝ յանտառս և ի լերինս Ամերիկայ յԱւստրալիա և յԱսիա և այլուր ի քաղաքական կրթութենէ զրկեալս։ Յաղագայց որոյ պատմեաց մեզ բազմարդիւն Առաքեալն Յ. Վ. Պաթմանեանց՝ զիւր պատահեալս նմին և առաջի աչաց իւրոց ի դարձի անդ իւրում ընդ հիւսիսային կողմն անջրդի անապատս երջանիկ Արաբիոյ ի Բաբիլոնէ ի Դամասկոս, որ և այսպէս գրէ 1850 յամի. ի Նամակին «... ընդ երեկոյս յետ եւօրեայ և ընդ երկար ճանապարհորդութեան, յանպատ անապատին՝ ժամանեցաք ընդ Արաբ առաջնորդիս վրանաբնակ ուխտ ժողովրդեան խմբք ջուրց պատեալ ատի և անտի յուղտուց և ի ձիոց և յոչխարաց։ Ժողովեցան առ մեզ արտաքոյ վրանացն՝ գոզցես ամենեքին բնակիչքդ արք և կանայք, և բոլորածեւ նստան։ Ամբաստանեցաւ անդ կին մի յանարժան յանցանս՝ որ արկանէր զյանցանս ի վերայ այլոյ ուրուք ի կանանց. և ժողովս յետ բազում ի խնդիր լինելոյ ճշմարտութեան իրին, ոչ խոստովանէր կինն զյանցանս։ Յայնժամ յարուցեալ զլխաւորին իւրեանց՝ ասաց, որոյ յերկոյունցդ չիցէ գործեալ զեղեռն՝



յոտից ցմեր թզաչափ ամբարձեալ զհանդերձս անցցէ ընդ մէջ ժողովոյս և ցուցցէ զոտն։ Յայնժամ կինն գործող յանցանաց եւ և յոտից ցմեր ամբարձեալ զհանդերձս էանց անպատկառ։ Հրամայեցին անցանել և միւս կնոջն, և նա չէառ յանձն, և արտասուեալ ասէ, լաւագոյն է ինձ և գերագոյն ընդունել զյանցանդ, քան զայդ առնել։ Յայնժամ ծերունի զլխաւորն բնակչացդ, գոչեաց առ կինն ժպիրհ. դո՛ւ ես գործողն յանցանացդ, զի որ անցանէ զօրինօքն բնութեան և զբնական ամօթոյն, նա է ամենայն յանցանացն տէր։ Եւ մատնեցին զկինն տանջանաց, քարկոծ արարին զնա, և սատակեցաւ։ Զարմանք կալան զիս, յորէ վերջնչեալ Վարդապետն, զպահպանութենէ բնական օրինացն՝ զոր կանանն ունէին ինքեանց ի կեանս. և զհասարակ գիշերուն առաք դարձեալ զճանապարհն մեր հէճին ուղտիւք յանապատին անդ ընդ անծանօթ և անհետ ճանապարհ»։ Կնքեմք ուրեմն՝ օրէնք են գրական առ Արաբացիսդ անապատին. որ անցանէ զբնական օրինօք, անցանէ զգրականաւն անգամ. ուրեմն միմիայն պատճառ դատապարտելոյ զկինն՝ եղեւ տմնակոխ առնելն զբնական ամօթխածութիւն, որ ծագի ի համեստութենէ բնութեանն։ Այսպէս և մեք ասեմք և հաստատեմք՝ թէ բնական օրէնք հիմն են և պատճառ քաղաքային և գրական և այլ որոց և իցէ օրինաց. քանզի վախճանն ամենայն օրինաց է բարութիւնն հպատակաց. իսկ արդ առնել զբարին և խորշիլ ի չարէն է բնական սկզբունք բնական օրինաց. ուրեմն հիմն և պատճառ է ամենեցուն։ Դարձեալ ամենայն օրինացն վախճան է բարեկարգութիւնն. իսկ արդ պահեա՛ զկարգն բնութեան է սկզբունք բնական օրինաց, և զբուխն ամենայն սկզբանց և գործնական դատողութեանց. Ուրեմն են։

## ՅՕԴՈՒԱԾ Ե.

### ՅԱՂԱԳՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲԱՆ ԿԱՄ ՊԱՏՈՒԻՐԱՆԻ ՕՐԻՆԱՑՆ, ԱՌ ՈՐ ԲԵՐԻՆ ԻԲՐԵՒ ՅԱՂԲԻՒՐ ԵՒ Ի ԿԱՆՈՆ ԱՅԼ ԱՄԵՆԱՅՆ ՍԿԶԲՈՒՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ՕՐԻՆԱՑ ԵՒ ԻՐԱՒԱՆՑ

ՅՂԴ. Նախ քան մտանել ի խոյզ ընդհանուր պատուիրանի՝ որ պարտի գտանել յամենայն ուղիղ դատողութիւնս միայ յամենայն պատուիրանս գործնականս օրինաց և իրաւանց բնութեան և ազգաց. որոց իբրեւ գըլխաւոր և իշխան իցէ և իբրեւ զամենեսին յինքեան պարունակիցէ։ Ասասցուք զինչ զդասուց և զարժանաւորութեանց նոցին սկզբանցդ, և թէ ո՞րպէս ունին յայլոց ելանեն և բղխին։ Եւ

Նախ՝ բաժանին սկզբունքդ ի [illegible] և յ[illegible]։ Առաջինքն են նոքա, [illegible] և յ[illegible], և յ[illegible] [illegible], և ոչ [illegible] ի [illegible]. այսպէս ոչ երբէք արժան է [illegible] կամ [illegible]։ Բայց ոչ այդպէս և [illegible] կամ [illegible]՝ որ պարտաւորէ զմարդն [illegible] և [illegible], և ոչ [illegible]. զորօրինակ առնել զբարին, չէ պարտ զի յամենայն ժամու ջանայցէ ոք առնել զբարի գործողութիւնս կամ յաղօթս կալ, այլ ըստ տեղւոյն և ժամանակի իւիք եւեթ։ Յայտ է և ես թէ որ ստորասէ առնել զինչ բարի, այնու ստորասութեամբն բացասէ զայն ամենայն՝ որ ընդդէմ է այնմ բարւոյ. ուստի [illegible]։ Բայց ծանի՛ք՝ թէ բնական օրինացն ընդհանրապէս չիք երբէք բացառութիւն. քանզի ի բաց առնուլ զառարկայ ինչ բնական օրինաց՝ լինէր փոխել զօրէնս յայդմ մասին. քանզի պակասէր ընդհանուր գո՛յ մերթ երբեմն զայս, և երբեմն զայդ բառնամք անուի, և ըստ որում իմաստութեամբ ասէ Սուարէզ թէ « [illegible]՝ այն է [illegible] կամ [illegible], [illegible]



է՞, [illegible], ոչ զնի յընդհանուրն՝ ըստ որում կարէ պակասել, այլ ըստ որում ամբացեալ այնոքիւք պարագայիւք, որով ոչ երբէք կարիլ կարէ. ապա թէ ո՛չ չլինէր ճշմարիտ դատողութիւն, և հետեւաբար ոչ հարկաւոր, ոչ ուղիղ և ոչ պարունակող զբնական պատուիրան։

ՅՂԵ. Դարձեալ ծանի՛ք, վասն ստորասական պատուիրանին՝ թէ երկակի միայն չկարէ պարտաւորել. կամ յորժամ զառարկայն բնական օրինաց ի պարագայս ամենս ի բաց առնուն դրական օրէնք, և յայնժամ ոչ է բացառութիւն իսկապէս. և զի առարկայդ այդ ոչ ենթադրի ընդ բնական օրինօք, այլ դրականօքն, և կամ ըստ որում երբեմն պարտաւորէ, և երբեմն ոչ ստորասական օրէնք, և ահա այսուիկ քաջ ծանաչի՝ թէ այդպիսի օրէնք բնականապէս ոչ է եղեալ վասն այնր առթի, և պարագայից յայնմ ժամու պատահելոցն, զորօրինակ ի պատուիրանի եղբայրսիրական ազգարարութեան, ոչ պարտաւորէ միշտ, և մանաւանդ յորժամ չիցէ յոյս օգտի յաղթարարութենէդ, ոչ թէ այդ չպարտաւորելն բացառութեամբ բնական օրինաց է, այլ քանզի սոքա բնականապէս ոչ պարտաւորեն զմարդն միշտ։ Ուստի չիք բացառութիւն ստորասական օրինացդ յերկուսին իսկ թէութիւնս։ Բայց

ՅՂԶ. Ոչ այդքան գիւրաւ ըմբռնին և բացասական օրէնք, որք պարտաւորեն [illegible] և [illegible] զարշելով ի չարեացն, որք քանզի բնութեամբ չար են՝ ամին իրի ոչ ընդունին զբացառութիւնն պարագայից և ժամանակին. քանզի յանհնարիցն է բարի լինել այնմ որ բնութեամբ չար է, մնալով ի նոյն պարագայս և ի նոյն առարկայն. և եթէ անօրինութեամբ անգամ ոչ՝ հետեւի թէ և ոչ իսկ բացառութեամբդ. քանզի զօրագոյն է անօրէնութիւնն քան զբացառութիւնն պարագայից։ Բայց եթէ ոչ երբէք անօրինի՝ յայդմ կարեմք ասել, թէ երբեմն փոփոխութիւն ինչ պատահի առարկային ներքին պարագայիւքն և ժամանակին, պատճառաւ այսր փոփոխութեան պարագայիցն՝

գործողութիւնն դադարի չար լինել. զորօրինակ պատուիրանն չգողանալոյ զայլոց ինչս, ի յետին հարկաւորութեան առնուլն զինչս այլոց, ոչ կոչի գողութիւն, այլ բարի գործողութիւն. քանզի գործողութիւնն է առնուլ զինչս [illegible], որ [illegible] կայ այնմ. իսկ արդ ի յետին հարկի, եթէ ոք դժկամակիցի ընդ բառնիլ իւրոյ իրին՝ ոչ բանաւորապէս առ դժկամակիլ, այլ [illegible] կամ [illegible]. քանզի ի յետին հարկաւորութեան ամենայն ինչ հասարակաց համարի տիրապէս ըստ բնական օրինաց։ Ուստի ինչքդ այդորիկ չեն մի միայն նորին՝ այլ ամենեցուն ի հասարակի։ Ուստի կնքեմք ընդ վերլուծել աստուածաբանին զբանս մեր ասելով. քանիցս մեզ թուիցին չպարտաւորել բնական պատուիրանաց ոմանց երբեմն ի պարագայս ոմանս և յաւիժս, ասել պարտ է թէ առարկայն կամ նիւթն նորին պարագայիւքն փոփոխեալ է ի չարութենէ՝ որ վասն արգելոյր ի բնական օրինաց, ոչ թէ բնական օրէնք դադարին ի պարտաւորելոյ՝ անփոփոխ մնալով չար առարկային իւրեանց։ Եւ յայսմիկ տարբերին բնական օրէնք ի դրականացն, զի սոքա կարեն անօրէնութեամբ դադարել կամ բոլորովին եղծանիլ յօրէնսդրէն իւրեանց՝ անփոփոխ մնալով առարկային. բայց ի բնական օրէնս ո՛չ երբէք նորին օրէնքն դադարին, մանաւանդ ի բացասականսն, այլ առարկայն փոփոխի բնութեամբն՝ փոփոխեալ նորին պարագայիցն իւրոց։ Ուստի չէ պարտ չարաչար մեկնել զառածդ «ամենայն օրէնք ընդհանուր ունին զիւրեանց բացառութիւն մասնաւորս». զոր իմանալիք զդրական օրինացն ուղղապէս, և անուղղապէս միայն զբնական օրինաց ըստ վերլուծեալ բացատրութեանն։ Այսպէս իմանալիք զհրամանն յԱստուածուստ Իսրայէլի՝ բառնալ զինչս Եգիպտացւոց, և զբանն՝ պարտ է հատուցանել և պահել զաւանդս բնական օրինօք, [illegible], [illegible], են։ Բայց զայս գիտել եւ պարտ է, թէ որպէս ասացաք, բնական օրինաց հիմն գոլով դրականացն, երբեմն դրական օրէնք հրամայեն զոր հրամայեն բնական օրէնք անգամ, երբեմն այս և այդ կարէ լինել. քանզի



դրական օրէնք են ի կամաց օրէնսդրին, կարեն պարտաւորել կամ չպարտաւորել. քանզի առ բազում դրական օրէնք հրամայեն զգործողութիւնն եւեթ արտաքին և նիւթական, և ոչ հային ի բարոյականութիւնն գործոյն ի մասնաւորի. ուստի և ոչ սովիմք կարեմք ասել թէ ունի տեղի երբեմն բացառութիւնն ի բնական օրէնս։ (*)

ՑՂԷ. Բնական օրինացն սկզբանց կամ պատուիրանաց երեք են դասք։ Առաջինքն նոքա են, որք պարզագոյն գոլով և բնականք՝ յամենեցուն ճանաչին. զորօրինակ [illegible], [illegible], [illegible]։ Երկրորդականքն են նոքա, որք անմիջապէս բղխին ի ծանօթագունիցն կամ յառաջնոցն. և եթէ նոյն ընդ նոյն որպէս զառաջինսն չճանաչիցին յամենեցունց, սակայն իմն արհեստիւ և դատողութեամբ մտացն ճանաչին նոյնպէս, զոնէ ի մեծագոյն մասնէ մարդկան. զորօրինակ ի գործնական դատողութենէդ՝ [illegible], հետևի անմիջապէս՝ թէ [illegible], ուրեմն իւրաքանչիւրոյն զիւրն հատուցանել պարտիմք. ի պատուիրէդ բնութեան՝ [illegible], հետևի անմիջապէս՝ թէ [illegible], են, են։ Երրորդ սկզբունք կամ պատուիրանք բնական օրինացն չեն այնքան բացայայտ և պարզք, նմին իրի ոչ ճանաչին յամենեցունց առհասարակ, այլ ուշիմ մտացն և որոց միանգամ ուսմանց և գիտութեանց պաշտօն մատուցեալ իցէ. քանզի հաւաքաբանութեամբ և միջնորդութեամբ բանի միայն կարեմք ի միտ առնուլ և դատել զբարութիւն նոցա կամ զչարութիւնն, զորս կոչէ սուրբն Թովմաս [illegible]. զորօրինակ յօրինացդ պահեա՛ զկարգ բնութեան կամ իւրաքանչիւր ումեք պարտ է զիւրն մատուցանել՝ յառաջ բերել զբարութիւնն սահմանելոյ զմարդն յարդար պատերազմի հաւաքաբանութեամբ, ամենուրեք պարտ է զինուք պահպանել զհայրենիս մինչև չափ ի թշնամեացն

(*) Սուարէզ Յաղագս Օրին. Գիրք Բ. Գլ. ԺԳ։

յարձակմանէ. իսկ արդ Պարսիկք յանիրաւի յարձակեալ տիրեցին Հայաստանեայցս. ուրեմն պարտ և արժան է ամենայն Հայոց պահպանել զինուք ընդդէմ Պարսից զհայրենիս: Այսպէս ի մի՛ սպանցես պատուիրանաց բնական օրինացն, յառաջբերելն զբարութիւն սպանանելոյ զանձն վասն գերագոյն օգտի ընկերին, զի լաւագոյն է զրկել զանձն ի բարութենէ ժամանակաւոր կենացս, քան թոյլ տալ յաւիտենական կորստեան ընկերին: Եւ խաւարն կամ պայծառութիւնն սկզբանց և սկզբանց բանին, պատուիրանացն և պատուիրանաց, ծագի յայնմանէ զի բարութիւնն կամ չարութիւնն գործողութեանց կախին առ բազումս ի պէսպէս պարագայից և ի թէութեանց, զոր հարկաւորապէս ճանաչել պարտ է: Եւ առ դիւրագոյն լինելոյ ոմանց՝ պարզապէս տեսանին և այլոյն պարագայք և թէութիւնք բազումք գոլով՝ և մեզ անծանօթ, խաւար թուին մեզ. բայց ոչ խպառ զրկիմք ի սոցանէ անգամ, մերթ ի սէր ճշմարտութեանն և բարութեան փութամք քաջ հաւաքաբանութեամբ զմեզ յանստոյգ վիճակէս յս-տոյգն ածել, և ապա իբր հետեւելոյն մտա դնել:

ՅՂԸ. Գիտել պարտ է թէ յընդդիմութեան երկուց օրինացն սկզբանց, եթէ երկոցունցն իսկ առարկայք բարի են, որ ունի և հրամայէ զգերագոյն բարութիւնն, նախադասելի է այնմ, որ հրամայէ զփոքր բարութիւնն: Իսկ եթէ բարութիւնքդ հրամայեալք յօրինացն հաւասար իցեն միմեանց, ազատութեան գործողին մնայ նախադասել զմին կամ զմիւսն: Բայց երբեմն պատահին երկու սկզբունք օրինաց՝ արգելիչք զերկու առարկայս կամ գործողութիւնս իբրեւ չարս, եթէ չկարեմք զառաջս ունել երկոցունցն իսկ չարեաց, այլ ի հարկէ կամ զմին և կամ զմիւսն գործել պարտաւորեսջիք, յայնժամ յերկուց չարեացն փոքրագոյնն ընտրելի է. զորօրինակ կամ զանձն սպանանել կամ կորուսանել զբնական համեստութիւն կամ զկուսութիւն: Իսկ եթէ երկոքին իսկ ի նոյն աստիճանի կայցեն չարութեան, ազատութիւնն մնայ. բայց զայս ասելով՝ չկամիմք հաստատել՝ թէ մի և նոյն բնական օրինացն են սկզբունք,



կամ զատողութիւնք միմեանց հակառակք կամ հակասականք. քանզի նոյն հեղինակդ բնական օրինացդ Աստուած է, և Աստուած չկարէ ինքեան հակառակ կալ. և զի ամենայն բնական օրինացդ սկզբունք և ազդեցութիւն ճշմարտութիւնք են, և քանզի ճշմարտութիւն՝ ճշմարտութեան չկարէ հակառակ կալ, վասն որոյ ասեմք՝ հակառակութիւնդ այդ կամ հակասութիւն ո՛չ ի կողմանէ բնական օրինաց և սկզբանցն է, այլ ի բազմապիսի պարագայից, յորս մարդն գոգցես ամփոփեալ գտանի, որք և փոփոխեն զառարկայն կամ զբնութիւն գործողութեանն. զորօրինակ պատուիրանիդ Մի՛ սպանաներ գոգցես հակառակի պատուիրանդ արժան է ի պաշտպանութեան անձին ի մահ մատնել զանիրաւ յարձակեալն ի վերայ: Բայց հակառակութիւնդ այդ բառի իցէ և ոչ բանին. այս՛ հակառակ լինէր՝ եթէ չէին թէութիւնք և պարագայք, որք զառարկային փոխեն զչարութիւն. քանզի պատուիրեաց Մի՛ սպանաներ և ենթադրի հարկաւորապէս զօրութեամբ Մի՛ սպանաներ յանիրաւի, որ յայտնի ի միւսն արժան է ի պաշտպանութիւն անձին սպանանել զանիրաւ յարձակեալն: Հակառակք էին միմեանց, եթէ չէին պարագայք և թէութիւնք գործողութեանցն, յորոց կախին բարութիւն և չարութիւն նոցա: Ուստի յամենայն պատուիրանս բնական օրինաց ենթադրին զօրութեամբ թէութիւնքս՝ եթէ կարող իցես, զի ո՛չ ոք պարտաւորի առ անհնարինսն, և ո՛չ Աստուած կարէ պարտաւորել զմարդն: Երկրորդ՝ եթէ չիցէ փոխեալ բնութիւն, 'պարագայք, թէութիւնք և վախճան առարկային կամ գործողութեանն՝ որպէս ծանուցաք իսկ ի վերոյ:

ՅՂԹ. Զայսուիկ ամենայն՝ անօրինելի գոլով՝ ըզբնական օրինացն և գործնական սկզբանցն ծանուցեալ, աստանօր խնդրել պարտ է ո՞ր արդեօք սկզբունք իցէ այդ բնական օրինաց կամ ո՞ր պատուիրան՝ որ ամենեցուն սկիզբն և հիմն լիցի և ընդհանուր աղբիւր կամ սկիզբն, առ որ բերցին այլ ամենայն սկզբունք Բնական օրէնք, բնական իրաւանց և մարդկային ամենայն պարտուց և պաշտամանց. առ ի քաջ ճանաչել զընդհանուր սկիզբնդ, պարտ

է գիտել և զյատկութիւնս նորա. քանզի ունի զներքին յատկութիւնս սեփականս և բացայայտիչս, այն է [illegible]. Նախ՝ պարտի ամենապարզ լինել, քանզի որքան սկզբունք իմն կամ գաղափար ընդհանուր է, այնքան պարզ լինել, այդպէս յայտ է ի Տիալեկթիքայէն Տրամաբանութեան։ Պարտի ընդհանուր լինել, քանզի զայլ ամենայն պատուիրանս օրինաց և իրաւանց յինքեան պարունակել պարտ է։ Միշտ պարտաւորիչ, արդէն պարտաւորութեանն յատկութիւն վայել է ամենայն օրինաց, հաստատողացն կամ արգելականացն, և դնի միշտ առ ի պարփակել ընդ իւր և նաև զբացականն, որք միշտ և հանապազ պարտաւորեն զհըպատակս։ Հուսկ ուրեմն անփոխադրելի ընդ այլս, քանզի պարտի ամենեցուն իբրև սկիզբն, հիմն և աղբիւր լինել. ուստի մի միայն ինքն լիցի և հաստատ ինքեան յունիցի զայլ սկզբունս օրինացն և իրաւանց, ընդ որում փոխադրիցի։

Ն. Արդ գլխաւոր սկիզբնդ կամ պատուիրանդ ո՛չ է այլ իմն, եթէ ոչ այդ ուղիղ կարգդ, որ յառարկայս կամ ի բնական բնութիւնն իրաց կայ, զոր այսպէս արտայանեալ աւանդեմք առ ամենայն գոգցես արդեան Փիլիսոփայս, [illegible]. զորօրինակ առաջաց զմեթաֆիզիքական սկզբանց միայն, որք ի հարկէ բերեն և հանդչին ի մի միայն ընդհանուր սկիզբնդ հակասութեան, այսինքն է չկարէ իմն լինել և չլինել ի միասին. նոյն օրինակ ի գործնական սկզբունսդ օրինաց և իրաւանց պարտ է, զի գտցի սկիզբն իմն կամ ընդհանուր իմն պատուիրան։ Արդ այսմիկ սկզբան յարմարին ամենայն վերոյիշեալ թէութիւնք. Նախ՝ պարզութիւն, քանզի այնքան պարզ է ի բառս և յիմաստին, մինչև չլինել ուրուք որ ուրացի զճշմարտութիւնն և կամ ոչ ի միտ առցէ զիմաստն. և ընդհանուր է, քանզի ամենապարզ եղանակաւ պարունակէ զամենայն մարդկային գործողութիւնս՝ այն է զառարկայն գործողութեանց, զենթակայն գործողութեան, և զնպատակ գործողութեան, և գործողութիւնքս այսորիկ



ըստ որում բնական և ազատ բնութեան գործողութիւնք՝ պարտին չլինել ընդդէմ բնութեանն, այլ համաձայն և ամենևին յարմար կարգի բնութեանն՝ յԱստուծոյ անտի իմաստութեամբ եդելոյ։ Քանզի յամենայն գործողութիւնս բանաւոր պատճառն՝ առ ի՞նչ պարտ է պահել զկարգ բնութեանն չէ՛ այլ ինչ, եթէ ոչ կարգ բնութեանն նոյն ընդ բնութիւնն իրաց. ամենայն գործողութիւնք մարդկայինք, ըստ որում բնականք, պարտին ի բնութենէ անտի յառաջ գալ կամ ի կիր առնուլ ըստ բնութեանն պահանջելոյ, զի ոչ ոք կարէ ուղղապէս ընդդէմ անձին գործել. այսպէս եթէ ամենայն գործողութիւնք բնականք են, պարտին ի համաձայնութիւն կամ ի յարմարութիւն նորին բնութեան լինել, կամ ըստ որում կարգ բնութեանս պահանջէ. և չիք գործողութիւն իմն, որ չիցէ պարունակեալ ի կարգի բնութեանն։ Դարձեալ սկիզբնս պահեա՛ զկարգ բնութեանն՝ է պարտաւորիչ, քանզի ոչ ուրեք և ոչ երբէք կարէ ոք ընդդէմ կարգի բնութեանն գործել, այլ ամենայն ոք յամենայն գործողութիւնս իւր թէպէտև բարոյապէս չարս միշտ ենթադրէ բարի գոլ կամ զբարութիւն պատճառել բնութեանն. զի չարն ըստ որում չար՝ ոչ երբէք փափաքի յումեքէ։ Բայց ոչ միայն բնական օրինաց և բարոյական գործոց,

ՆԱ. Այլև ամենայն մարդկային պարտուցն և պաշտամանց սկիզբն և գլխաւորն է բարոյական սկիզբնդ [illegible]. քանզի մարդս ըստ որում յոչնչէ ի գոյ ածեալ յԱրարչէն իւրմէ ճրիաբար, պարտի բազումս այսմիկ գերագոյն բարերարին իւրում թէ՛ իբրև Արարչին, և թէ՛ իբրև վերջին վախճանին իւրում, ըստ որում արարած և մասն մարդկային ընկերութեան պարտի բազումս ընկերաց և նմանեաց իւրոց, և ըստ որում բանական բնութիւնս ստեղծեալ վասն վախճանի ուրուք, բազումս պարտի պարտուց և պաշտամանց անձին իւրում, զի երջանիկ լիցի, և վախճանին՝ որոյ վասն ստեղծաւ՝ անխափան ժամանեսցէ. բանաւոր պատճառն այսորիկ ամենայն պարտուց և պաշտամանց մարդոյ և ընդհանուր սկիզբն է՝

ԳՈՀԵՍ՝ ՀԱՅՐ ԲՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾ ԵՂԵԱԼ՝ քանզի բնութիւնն կամի և պատուէ, զի իւրաքանչիւր ոք զուն գործեսցէ և զանձն երջանիկ կացուսցէ։ Երկրորդ այս կարգ բնութեանն կամի՝ զի Արարչին կատարեալ հպատակութիւն և ծառայութիւն և պաշտօն մատուսցի. և նոյն կարգ բնութեանն պահանջէ՝ զի ընկերութեանն պարտաւորեալ պաշտամունք մատուսցին, որով իւրաքանչիւր մասն և անդամք հասարակութեան զպարտս և զպաշտամունս կատարելով՝ բովանդակ հասարակութիւնն իւրում ժամանեսցէ ընդհանուր բարութեան և նպատակին, նախ յառաջ կեանս ըզխաղաղութիւն և զժամանակաւոր երջանկութիւն, և յանտի կեանս զյաւիտենական երջանկութիւն առասցի։ Այսորիկ վախճանիս են իբր գործիք յիշեալ երրակի պարտիք և պաշտամունքդ, որք յարդարեն մեզ ճանապարհ ի ճշմարիտ նպատակս։ Եւ այնպէս կարգեալ են բնութեամբ, զի պակասեալ միոյն պակասի և եղծանի ընդհանուր կարգ բնութեանն. և երեքինն միայն գեղեցիկ կարգադրեալք միաբանք և անբաժանելիք, տան մեզ վերաւանալ յերկնայինն անդ երջանկութիւն։ Սմին իբր իմաստութեամբ ասաց Կիկերոն (*) «Եդեալ միանգամ վախճանին ի Փիլիսոփայութեան, դնին և ամենայն ինչ նմա. գերագոյն բարին եթէ ուրասցի, ուրասցին հարկիւ և համագամանք կենաց, յորմէ այդքան վրիպանք մարդկան. զի յո՞ր նաւահանգիստ դիմել պարտ իցէ, գիտել ոչ զօրեն։ Բայց իրացն միանգամ ծանուցեալ վախճանին և ի միտ առեալ զի՞նչ լինելն վախճանին չարեաց և բարեաց կենաց՝ անդէն գտաւ ճանապարհ և ամենայն պաշտամանցն հաւաստութիւն»։

Նբ. Բաղումք յիմաստասիրացն, բայց ոչ իմաստութեամբ՝ զբաղում և զպէսպէս սկզբունս վասն ընդհանուր այսր սկզբան եդին՝ զոմանս միայն ի ծանօթութիւն յառաջ բերեմք։ Նախ

Հօպպէզիոս եդ՝ «պարտ է խնդրել զխաղաղութիւն,

(*) Յաղագս վախճանաց. Գիրք Ե։



եթէ մարթ իցէ ի ձեռս բերել, եթէ ոչ պատրաստել պարտ է զնպաստս պատերազմի»։ Զայս իբրեւ առաջին եդ ըսկիզբն բնական օրինաց և իրաւանց, բայց անտեղութեամբ. քանզի պակասին նմա գոզցես ամենայն թէութիւնք վերոյիշեալք ընդհանուր սկզբանն. նախ՝ ո՛չ է պարզ, քանզի թէական է և բաղադրեալ. երկրորդ՝ ո՛չ է ընդհանուր, զի ամենայն սկզբունք բնական իրաւանց և մարդկային պաշտամանց ո՛չ պարունակին ի նմա. զորօրինակ պարտ է կարօտելոյն ողորմութեամբ ի նպաստ հասանել. մի՞թէ ողորմութիւնն պատուիրի ի բնութենէ. քանզի ողորմութեամբքդ կամ չողորմութեամբքդ վրդովիցի՞ կամ հաստատիցի՞ ընդհանուր խաղաղութիւնն հասարակութեան. մի՛ ուստ վկայեր, մի՞թէ ստութեամբ այր կամ այնր ընկալցի՞ Հօպպէզ զիւրն խաղաղութիւն, կամ ճշմարտախօսութեամբն ազգաց դատապարտիցի՞ պատերազմի ի նոցանէ։ Հուսկ ուրեմն ո՛չ պարունակէ յինքեան զպարտս և զպաշտամունս մեր ԱՌ ՄԵԶ, և ԱՌ ԱՍՏՈՒԱԾ, և չունի ինչ պարտաւորելոյ զհպատակս առ այդ. զի բնութիւնն ոչ ստիպէ զմարդն առ պատերազմ, որոյ վախճանն բարի իցէ թէ չար, անյայտ է. ուրեմն չկարէ առաջին լինել։

Թոմասիոս եդ. «Պարտ է գործել զայն, որ պատճառեն մարդոյ զերկարութիւն կենաց և զերջանկութիւն, և հերքել զներհակն այնց»։ Նախ՝ չունի զպարզութիւնն, քանզի ո՛չ տիրապէս բացայայտ է ո՞րպիսի երկարութիւն կենաց և երջանկութիւն իցէ այդ, անտի կենա՞ցն թէ աստի կենա՞ցն. թէ անտի կենացն՝ ապաքէն զպաշտամունս և զերրակի պարտս մատուցանել պարտիմք, զի երկար կեցցուք և երջանիկ լիցուք. ո՛չ զի արդէն Արարչին իրաւունք են ի վերայ մեր կատարեալ իշխանութեան, այլ մի միայն վասն երկարութեան և երջանկութեան կենացս երկրորդ մի միայն վասն այսր երկարութեան և երջանկութեան կենաց պարտիմ գործել. ո՛չ թէ վասն աստուածային իրաւանց ի վերայ մեր, և վասն ներքին համեստութեան իրացն գործել զերջանկութիւն. բայց յայտ է՝ զի վասն երկարութեան և երջանկութեան աստի կենացն ասաց զայդ,

և յայսմ ցուցանի անտեղութիւն գրութեանն . քանզի է վասն աստի անցաւոր կենացս և հրամայէ կեալ և գործել, որ անբանից միայն սեփական է ։

Քումպէրլանթ եգ . « Չբարեհաճութիւն կամ զբարեբարութիւն առ ամենեսին . բայց յի՞նչ վախճան , ի բարի՞ն թէ ի չարն , անտարբեր գոլով՝ պակասէ , և անբացայայտ կախեալ յայլ սկզբնէ . քանզի եթէ ի բարի նպատակն զայդ պահանջէն կարգ բնութեանն՝ որ ընկերական է , և վասն կարգի բնութեանն ամենայն ոք պարտաւորի ի բարերարութիւն առ ամենեսին ։

Բուֆֆէնտորֆ և Կրոցիոս . « Պարտ է պաշտօն մատուցանել ընկերութեանն » . արդ՝ և այս չունի զպարտուպատշաճ թէութիւնս , քանզի չէ ընդհանուր և արտաքսէ զպարտս և զպաշտամունս պարտաւորեալս առ Աստուած և առ անձինս մեր . բայց յաւելուն զսէր առ երեքին առարկայս , Աստուած , մարդ և անձն մեր . բայց սէրն ո՛չ ցուցանէ միշտ զբարութիւն գործողութեան , զի սիրել կարեմք զայլս վասն թէ՛ բարի և թէ՛ չար վախճանին , և ես առարկայ սիրոյն կարէ կա՛մ բարի լինել տիրապէս և կա՛մ երևութապար . նմին իրի ո՛չ պատուիրեն զայդ միշտ բնական օրէնք , նա՛ զի սիրել զԱստուած պարտիմք վասն կարգի բնութեան , զի կախիմք յԱստուծոյ անտի , ո՛չ թէ կախիմք յԱստուծոյ՝ զի սիրեմք զԱստուած . և ես զգայական բարին անգամ սիրի ի մէնջ և փափաքին , որ եթէ չիցէ ըստ ուղիղ սկզբանց միայ , չէ արժանի սիրոյ մերում , զի այդ հասարակ է անասնոցն անգամ . իսկ եթէ բանական սէր իցէ անճշգրիտ և ի վերացեալն միայ՝ թէ ո՞րպիսի սիրով բերել պարտիմք թէ՛ առ մարդիկ , թէ՛ առ մեզ , և թէ՛ առ Աստուած , ըստ այնմ , ըստ որում կարգ բնութեանն պահանջէ՞ն՝ թէ այլով իմն եղանակաւ , և ահա թէ առաջինն կախի սկիզբնդ ի մերոյ սկզբնէս , պահեա՛ զկարգ բնութեանն . իսկ եթէ ընդդէմ բնութեան իցէ՝ արդէն մեզ անտի եղանեն ։

Ճէնովացին եգ . « Բուն իրաւունք պահանջեն՝ զի իւրաքանչիւր ումեք զիւրն մատուցես , եթէ եղանակաւ ի-



ւիք յանցուցեալ իցես , արտաւորեալ իցես , նուազեալ իցես , կատարես . ապա թէ ո՛չ՝ պատուհասն ի պատրաստի կայ » . զի բաց յայնմանէ՝ զի չէ պարզ և հայի մի միայն ի գործս հատուցման , այս՛ յո՛ր և իցէ կարգի իրաւանց , բայց և այդ բղխի , քանզի կարգ բնութեանն զայդ պահանջեն . ուրեմն չկարէ առաջին և ընդ այլ սկզբունս անփոխադրելի լինել ։

Այսոցիկ ամենեցուն պատասխանին մեր այս միայն բաւական է , զի ոմն զայս հրամայէ և ոմն զայդ , բայց եթէ լուծումն նոցա հարկ լիցի ամենեքին հանդչին և պարունակին ի մերս պարզագոյն և ընդհանուր սկիզբն , պահեա՛ զկարգ բնութեանն , Չէ՛ արժան մեզ երբէք ընդդէմ կալ տէրունական պատասխանւոյն՝ որ հարցեալ ի փարիսեցւոյն և փորձեալ՝ ո՞ր պատուիրան յօրէնս մեծ և առաջին լինել , պատասխանեաց . սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ , են . այս է մեծ և առաջին պատուիրան , են , են . քանզի նախ խնդիր փարիսեցւոյն էր զՄովսիսական գրական օրինաց . ուստի ճըշմարիտ է և այդ պատասխանին . և եթէ առեալ լիցի ի պատուիրանս բնական օրինաց և իրաւանց , իմաստ պատասխանւոյ Տեառն է ըստ յարգանաց և արժանապատուութեան պատուիրանաց առաջինն է սիրել զԱստուած . բայց այլ է պատուիրանի ուրուք մեծ և առաջին լինել ի յարգ և ի պատիւ , և այլ է մեծ և առաջին լինել ընդ պարզութեանն և ընդհանուր լինելութեանն . զի սիրեմք զԱստուած քանզի այսպէս կամին օրէնք և կարգ բնութեանն , ո՛չ թէ զի սիրեմք զԱստուած , նմին իրի և պահի կարգ բնութեանն ։

ՎԵՐՋ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԻՏՈՒԹԵԱՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

## ՄԱՍՆ Բ.

### ՑԱՂԱԳՍ ԻՐԱՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ

---

ՆԳ. Ի բարոյական գիտութեանն ցուցաք ընդհանրապէս՝ թէ ո՛րպէս մարդկային գործողութիւնն և ե՛րբ կարէ բարի լինել կամ չար. այսինքն է՝ ցուցանելով և տալով կանոն բարոյից զբանական բնութիւնն, զկարգ բնութեանն և զօրէնս, որոց համաձայն գոլով իւրաքանչիւր գործողութիւնն՝ բարի կոչեսցի, և որոց անհամաձայնն՝ չար։ Արդ, յիրաւատութեանն յընդհանրոյն իմեալ, զուգցես ի մասնաւորն և ի թանձրացեալն, տեսցուք զնոյն գործողութիւնս և զտեսակս նոցին։ Ուրեմն օրէնքդ՝ որք ընդհանուր գործողութեանցս կանոն բարութեան և չարութեան, նոյն լիցին և ի մասնաւորի նոցին գործողութեանց բնութեանս. զի օրէնք հրամայեն առնել զայս յաւէտ գործողութիւն իբր բարի այլում կամ խորշիլ յայնմանէ. քանզի վնասակար է այլում, և վնասելն այլում է՝ բառնալ զինչ յայնմանէ, զոր ունէրն։ Արդ՝ եթէ օրէնք և կարգ բնութեանն հրամայեն առնել զբարին և խորշիլ ի չարէն կամ ի վնասելոյ այլոց, հետեւի ուրեմն՝ թէ օրէնք և կարգ բնութեանն հրամայեն թողուլ կամ տալ իւրաքանչիւրոյն զիւրն. իսկ արդ՝ պատուիրանն արդարութեան կամ իրաւունք բնութեանն զայդ հրամայեն, տալ պարտ է իւրաքանչիւրոյն զիւրն. ուրեմն արդարութեանն կամ բնական իրաւանցն էութիւն կամ հիմն հաստատեալ գտանին ի բնական օրէնս. ուրեմն բնական իրաւանց և բնական արդարութեան պատճառն բանաւոր՝ գտանի ի բնական օրէնս։ Սմին իրի Հնեթանոսք զանունդ իրաւունք (յաւիններէն

jus, a jure) ի Դիւանէն յառաջ գալ ասացին. զի բնական օրէնք կամ յաւիտենականն գոլ աստուածային միտք եղին։

ՆԴ. Արդ՝ իրաւունք ըստ բուն իմաստին է կարողութիւն առնելոյ զիւր այլում և խնդրելոյ զիւր յայլմէ. ըստ որում կարողութիւն առնելոյ զիւր բարութեան այլում տեղեկալ ի բնութենէ, կոչին տիրապէս պարտք կամ պաշտամունք մեր այլում։ Ըստ որում իրաւունք զկարողութիւն առեն խնդրելոյ զիւր յայլմէ ըստ նոյն բնութեան կանոնի, կոչին բարոյական կարողութիւն կամ բարոյական հարկաւորութիւն։ Ուրեմն իրաւունք հաւաստապէս զերկոսին իսկ պարունակեն յինքեան՝ թէ զպարտս և զպաշտամունս բնականապէս պահանջելոյ յայլմէ, և թէ զկարողութիւնն բարոյական և բնական խնդրելոյ զիւր բարութեան յայլմէ։ Բայց թէպէտև զերկոսին իմաստ հաստատապէս ունիցի բառդ իրաւունք, սակայն ընդհանրապէս և առ հասարակ իրաւամբ բնութեան իմանամք զկարողութիւնն խնդրելոյ կամ գտանելոյ զիւր բարութիւն յայլմէ։ Սակայն երկոցունց իսկ էութիւն և գաղափար գոգցես անմեկնելի են ի միմեանց. քանզի եթէ են յիս պարտք և պաշտամունք առնելոյ զիւր բարութիւն այլում ումեք, հարկաւ այդ ոք ունիցի զբարոյական կարողութիւն կամ զիրաւունս պահանջելոյ զայդ պարտս և զպաշտամունս յինէն բնականապէս։ Եւ եթէ ունիմ զիրաւունս պահանջելոյ զիւր յայլմէ, հարկաւ ծնանին ի նմա պարտք և պաշտամունք զայդ իւր ինձ առնելոյ. բայց զանազանին իւիք, զի ի դադարել ուրուք պարտուց, այնու ոչ դադարին և իրաւունք զպարտս պահանջելոյ, մերթ ընդհակառակն ի դադարել իրաւանց՝ այնուիկ դադարին և պարտք և պաշտամունք։ Ցայսմանէ յայտ է՝ թէ օրէնք հրամայելով զգործողութիւն իւր, զերիս ենթադրէ. նախ՝ զի գործողութիւնդ իցէ բնական կամ ըստ կարգի բնութեանն. երկրորդ՝ նոյն օրէնք ի հրամայել զգործողութիւն իւր, դնեն ի վերայ գործողին զպարտաւորութիւն կամ զբարոյական հարկադրութիւն ի գործել զայդ. բայց միւս գիծ՝ զի ընդ



պարտաւորութիւնս ընդ այսմիկ շնորհի զօրութեամբ և կարողութիւն առնելոյ կամ կատարելոյ զայդ գործ և արգելոյ զըրպակի և իցէ ներհակ առիթս կատարման նորա. երրորդ՝ նոյն օրէնք երթադրին կամ տան իրաւունս զայդ պահանջելոյ առն, որոյ ի պաշտօն դնի գործդ։ Հուսկ ուրեմն ըստ պահանջման օրինաց կամ կարգի բնութեանն պահեալ անթերի երկաքանչիւրոցն, այն է՝ իրաւանց և պարտուց կամ պաշտամանց, ամենայն ինչ ըստ կարգի բնութեանն ընթացեալ, ծնանին զկարգաւորութիւն բնութեանն, յորմէ անդորրութիւն և խաղաղութիւն ցանկալի ամենայն արարածոց. և ի զանցառութենէ երկոցունց, ամենայն վրդովմունք և անկարգութիւն։ Պահպանութիւնն իրաւանց՝ ուրեմն՝ ծնանի զկատարեալ ներդաշնակութիւն և զհաւասարութիւն իրաւանց և պաշտամանց. բայց զի՞նչ իցէ առաքինութիւնն այն՝ որ հրամայէ կամեցն իւրաքանչիւրոց տալ զիւրն և զիրաւունս է. բնական արդարութիւնն, որ ունի զիրաւունս իբրև առարկայ ինքեան, և սահմանի գոլ զօրութիւն իմն բարոյական, որ տայ զիջանել կամաց մարդկան՝ իւրաքանչիւրոցն տալ զիւրն։

ՆԵ. Մարդս զերրակի յարաբերութիւնս ունել կարէ ի գործողութիւնս իւր կամ առ ինքն կամ առ ընկերութիւնն մարդկան և կամ յընկերութեանն գտեալ՝ առ այլ ընկերութիւնս։ Եթէ խորհիցի իբրև բանական կենդանի, յարաբերութիւնս այս ծագի ի նոյն իւրոյ ներքին բնութենէ. յայնժամ գործողութիւնք նորա ունին զյարաբերութիւն յինքն ի ներքս կամ յինքն յանհատն, և յայնժամ ունի ոք զանհատ և զառանձինն իրաւունս. կամ խորհիլ կարեմք զմարդոյ իբրև բնականապէս յընկերութեան եդեալ և ընկերութեանն բաղադրիչ, ունի զգործողութիւնս վերաբերեալս առ ընկերութիւնն և կարգեալս ի մի ընդհանուր վախճան, յոր վերաբերին բովանդակ ընկերութեան գործողութիւնք. և յայնժամ ծնանին անտի ընկերական իրաւունք և կամ ընկերութիւնք բաղումք՝ առ այլ ընկերութիւնս ունին զյարաբերութիւնս և գործողութիւնս կամ ազգ առ այլ ազգս. Նմին իրի ծնանին

անտի և ազգային իրաւունք ։ Բայց գիտել պարտ է՝ թէ մարդս ունի զիրաւունս առանձինն. առ ի ունել զայդ առանձինն իրաւունս չէ պարտ, զի եղանիցի և զրկիցի ընկերական կենաց և միայն առցի յանապատս կամ ի յայրս և ի քարանձաւս լերանց բնակիցի, այլ կալով նորա ի նոյն ընկերութեանն են բազում յարաբերութիւնք, և ի յարաբերութեանց անտի գործողութիւնք առ այլ ոք, որք ոչ վերաբերին այլոցն՝ իբրև ընկերական կազմուածոյն և ընկերական վախճանին, այլ մի միայն յարաբերին այլոց՝ իբրև բարոյական և առանձինն անձանց ի յատկութիւնս բընութեան միայն նմանելոց նմին. քանզի բազում պաշտամունք են, որք վերաբերին առ այլս ոչ իբրև պաշտամունք ընկերութեանն պարտաւորեալք, այլ իբրև առանձինն անձանց ծագեալք ի նմանութենէ բնութեանն միայն, և յառանձինն իրաւանց ։ Ուստի յերիս գլուխս տրոհեմք զներկայ գիտութիւն իրաւասութեան. նախ՝ յառաջինն խօսեցուք զառանձինն իրաւանց մարդոյ և պաշտամանց. յերկրորդին՝ զընկերական պաշտամանց և իրաւանց, և յերրորդին՝ զազգացն իրաւանց և պաշտամանց ։ Վասն որոյ

---

## ԳԼՈՒԽ Ա.

### ՅԱՂԱԳՍ ԱՌԱՆՁԻՆՆ ԻՐԱՒԱՆՑ ԵՒ ՊԱՇՏԱՄԱՆՑ ՄԱՐԴՈՅ

ՆԶ. Յառաջ քան միջամուխ լինել ի ցուցումն առանձինն իրաւանց և պարտուց, պարտ է գիտել՝ թէ քանի՞ իցեն տեսակք և յատկութիւնք նոցա. նմին իրի նախ ասեմք, իրաւունք այլք են անձնականք և այլք իրականք կամ ընչականք, այլք բնածինք և բնականք, և այլք ըստացականք ։ Անձնական իրաւունք են՝ որք վերաբերին անձին մարդոյ. զորօրինակ կարողութիւն պահելոյ զկեանս մարդոյ, զազատութիւն մարդոյ. և զայդ ամենայն գործողութիւնս, որք անմիջապէս յանձնէ կամ յանձնաւորու-



թենէ մարդոյ կախին և լինին ։ Իսկ Իրական իրաւունք են կարողութիւնն պահանջելոյ զիւր զայնոսիկ՝ զորս ստանալովն անձին սեփականեալ է ոք. այսպէս զրկեալ կոչի ոք յիրական իրաւանց իւրոց, յորժամ բառնի կամ արգիլեալ լինի կարողութիւնն զայնոսիկ պահանջելոյ ։ Բնական կամ Բնածին իրաւունք են, ըստ որում ի բնէ անտի ունի ոք զկարողութիւն պահանջելոյ կամ կատարելոյ զայս ինչ կամ զայն ինչ. այսպէս է սէրն ծնողաց և խնամք պահանջեալք յորդւոց անտի իրաւամբ, են. և զիրս և զինչս նոցա յետ մահուն ։ Ստացական են՝ յորժամ ժամանակաւ իւիք ըստանայ ոք զիրաւունս ի վերայ բազում իրաց, ստացուածոց և ի մասնաւորի այսր կամ այնր իրի. նմին իրի և Երկրորդական և [illegible] իրաւունք իսկ կոչին ։ Յատկութիւնք կամ ստորոգելիք իրաւանց են Հարկադրական և Ամփոփական իրաւանց ։ Հարկադրութիւնն կամ բռնութիւնն իրաւանց է՝ յորժամ յափշտակեալ ուրուք զիրաւունսդ, ի պահպանութիւն իրաւանցն բռնութեամբ և զօրութեամբ ընդդէմ դնեմք անիրաւ յափշտակողացն, և այդ ի կարգէ բնութեան օրինացն արդարութեամբ և իրաւամբ արժան է ։ Ամփոփմունք իրաւանց, որք որոշին յեզերաց անտի առարկային և ի պաշտամանէ. զորօրինակ ո՛յքան և ցո՛յս վայր ունիմ իրաւունս տիրելոյ իրաց կամ ստացուածոց և ո՛չ յաւելն, և ո՛յքան ժամանակս կամ վաստակս պահանջել կարեմք ի մեմնէ և ոչ աւելի ։

ՆԷ. Պարտք կամ պաշտամունք են պարտաւորութիւն մարդոյ, զոր կարգ բնութեանն յաստուածային իմաստութենէ անտի եդեալ պահանջէ հպատակել նմին կամաց մարդոյ. թէ՛ իրաւունք և թէ՛ պաշտամունք յօրինաց անտի են ։ Եւ եթէ ճշգիւ հայեցեալ, ո՞րն միայն նախընթանայցէ՝ զանազանել պարտ է նկատմամբ Աստուծոյ, և նկատմամբ Արարածոց ։ Նկատմամբ Արարչին, չունելով իրաւանց նորա սահման՝ ինքն անսահման յամենայնի գոլով և իրաւունս ունելով բացարձակապէս պահանջելոյ զամենայն պաշտամունս բնական, առեմք առ Աստուած իրաւունք առաջին են. նա զի չիք Աստուածոյ

պարտաւորութիւն իմն կամ պաշտօն. քանզի չունի մեծագոյն զօր քան զինքն։ Իսկ նկատմամբ մարդոյ, պաշտամունք առաջին են քան զիրաւունս. քանզի յառաջ քան զպահանջել զինչ, պէտք են՝ զի պահպանի իւր զոր չէին այլոյ. ուրեմն պարտ է պահել զիրաւունս այլոց կամ մեծարել և առնել զայն՝ որ պարտն է այլոց և ընդ իրաւամբք այլոց, և ապա պահանջել կամ ստանալ իւրեան զիրաւունս։ Վասն որոյ

Ասեմք՝ պաշտամանց զանազանութիւն ի յարաբերութեանց իւրեանց ըստ կարգի բնութեան եղելոց կախի և առաջի, և գերագոյն պարտք և պաշտամունք նոքա են, որք ի յարաբերութիւնս զգերագոյնն ունի զանգի. արդ՝ կարգ բնութեան եդեալ զյարաբերութիւնս՝ պահանջէ, զի արարած ոք երրակի բերցի և պարտաւորեսցի առ այլ ոք, այսինքն — Աստուծոյ պարտաւորի, — Անձին պարտաւորի, և — Ընկերի պարտաւորի։ Յառաջ քան պահանջել զիրաւունս, նախ մեծարել պարտի և գիտել, զի՞նչ են իրաւունք Արարչին ի վերայ նորա, և զի՞նչ առ Արարիչն իւր պարտք և պաշտամունք իւր. զի՞նչ իրաւունք իւրեն անձին իւրոյ, և ո՞յք պարտք և պաշտամունք նորա առ անձն իւր։ Հուսկ ուրեմն զի՞նչ իրաւունք մարդկան բնութեամբ նմին նմանեացն, և զի՞նչ պարտք և պաշտամունք նորա առ մարդիկ։ Սոքա երեքին են միայն, Աստուած է, Անձն է, և Ընկեր նման է. և բոլանդակ բնական գործողութիւնք մարդոյ ի հարկէ երբեմն առ մին և երբեմն առ միւսն ի սոցանէ ուղղին՝ իբրև ի վախճանն գործողութեանց և ոչ արտաքոյ սոցա. քանզի որպէս յիշեցաք ի վեր անդր, (նա) միմիայն Աստուած՝ ամենայն բարութեանց աղբիւրն, կարէ վախճան լինել բարոյական գործոց մերոց, և մի միայն ճշմարիտ վախճան Աստուած եւեթ կարէ լինել գործողութեանցս։ Այսպէս ուղիղ կարգն բնութեան ցուցանէ մեզ, եթէ ըստ բնական օրինաց կամիմք դասակարգել զգործս մեր։ Երկրորդ գործողութեանց մերոց նպատակ՝ անձն մեր է. քանզի մերձագոյնս մատչի աստուածային պատկերին, և ի շնորհս այս բանական հոգւոյն եղեալ



են ամենայն անբան արարածք և մի միայն յօգուտ անձանց մերոց. զորս իբրև գործիս տիրապէս ըստ կարգի բնութեանն ի կիր արկեալ՝ քաջ և անսայթաք գերագոյն վախճանիս ժամանեմք։ Ուրեմն գերագոյն գոլով անձն մեր, յերջանկութիւն նորա՝ բազումն պարտիմք պաշտամանց։ Երրորդ՝ ո՛չ միայն մեք՝ այլև սեռիւ և բնութեամբ նմանողքն մեզ, մեծարեալ են ի նոյն գերագոյն վիճակ երջանկութեանն, և ի շնորհս նոցին եւս այդքան կենդանեացն և բնութեան նպաստք յԱստուածուստ պարգևեալ են։ Ուրեմն պարտիմք բազումն պաշտամանց որպէս մերումն անձին, նոյնպէս և նոցին. քանզի ի նոյն վիճակ գերագոյն նախասահմանեալ են։ Որ ինչ ուրեմն նուաստագոյն է քան զմեզ, անբան կենդանեացն և ազգի ազգի նիւթականացն բարութիւն՝ ի շնորհս մեր եղեալ, չկարեն երբէք գոլ վախճան բարոյական գործողութեանց մերոց. քանզի վեր ի վայր շրջէր կարգն բնութեան և ուղիղ ընկերքունք մտաց, զի որ ունին զբնութիւն գործեաց, չկարեն երբէք վախճան լինել և ո՛չ որ վախճանն է՝ կարէ գործիք և միջնորդ լինել։ Ուստի ո՛չ էր արժանի Փիլիսոփայի ումեք՝ որպէս Ահրենսի՝ ասել թէ և անբան կենդանիք կարեն վախճան լինել գործոց և պաշտամանց մերոց։

ՆԸ. Որպէս զիրաւանց բաժանմանէն ասացաք, նոյնպէս և զպարտուց և զպաշտամանց ասեմք, թէ են՝ որք բնական են կամ բնածին, և են՝ որք ստացական են. նոքա՝ որ ծագին յէականացն անտի յարաբերութեանց մարդկային բնութեանն, և ստացականքն յետոյ ստացեալք. զորօրինակ պա՛րտք և պաշտամունք սիրելոյ և ծառայելոյ Արարչին, են. և պարտիք և պաշտօնք մարդկային վասն բարերարաց մերոց, են։ Բայց են և պարագայք ոմանք, որք անպարտ կացուցանեն զհպատակս օրինացն չկատարել զպարտիս և զպաշտամունս ինչ. նախ՝ հարկաւորութիւնն, երկրորդ՝ ո՛չ միայն ֆիզիքական այլև բարոյական անկարութիւնն. երրորդ՝ դադարումն իրաւանց։

ՆԹ. Հարկաւորութիւն կամ է բացարձակ և կամ պայմանական, այդ մինչ ո՛չ իւիք եղանակաւ կարեմք ընդ-

դէմ կալ և հարկադրիմք յաւէտ ոչ կատարել զպաշտամունս մեր ։ Իսկ Բնակ. հարկաւորութիւնն է՝ յորժամ կամօք մերովք միաբանեմք զմեզ յայդ վիճակ հարկաւորութեան՝ յորմէ և խոյս տալ անգամ կարեմք , բարձեալ զայդ թէութիւն կամ պարագայ . զորօրինակ արկանել զգիրս աղօթից ի ծոցս՝ զի մի՛ կատարեսցէ զպաշտամունս , ապաքէն յայտ է թէ չէ անպարտ այնպիսին ի կատարմանէ օրինացն կամ պարտուցն իւրեանց ։ Որ անպարտ կացուցանէ զմարդն ի պաշտամանց՝ է հարկաւորութիւն բացարձակ և պարզ որ ունի զպէսպէս աստիճանս . ըստ որում անյաղթելի ի մարդկանէ և ամենածանր՝ կոչի ֆիզ. հարկաւորութիւն . զորօրինակ յորժամ հարկն այնպէս ի վերայ կայ , զի եթէ պաշտամանցդ պարապել կամիցիս՝ կամ զմահ ճաշակիցես և կամ արկանիցես զանձնդ ընդ չարեաւ իւիք , որ հաւասարիցի մահուան ։ Կոչի բար. հարկաւորութիւն՝ յորժամ ի պահպանութենէ պաշտամանցդ ի վերայ կայցէ քեզ տանել չարի կամ կորստեան իմիք գերագունի . զորօրինակ անուան , համբաւոյն , մեծագոյն մասին ընչիցն , առողջութեանն , և այլ սոցին նմանեաց ։ Հասարակ հարկաւորութիւնն է՝ յորժամ ոք ի պաշտամանցն պահպանութենէ հանդիպիլ կարէ հասարակ կամ թեթև և ոչ ծանր իմն չարութեան կամ կորստեան ընչից և անուան կամ նախատանաց ։ Երկոքինն առաջինք անպարտ կացուցանեն զմարդն ի կապից պաշտամանց և պարտուց . բայց ոչ այսպէս և երրորդն . քանզի վասն թոյլն և թեթև կորստեան ընչիցն և նախատանաց չէ պարտ ոտնակոխ առնել զիրաւունս սուրբս բնական օրինացն յամենայն դիտողութիւնս հարկաւորութեան՝ առաջի դնելով յանիրաւի զասածն , հարկն լուծանէ զօրէնս ։ Այո՛ լուծանէ՝ բայց ոչ ամենայն հարկաւորութիւնն . զայս կալջիք ի մտի , զի կարիցէք դիւրաւ լուծանել զընդդէմ եկեալ խնդիրս բազումս ոչ պարսաւելիս . զի որպէս ասացաք ի կատարեալ պահպանութենէ պաշտամանցն և իրաւանց բնութեան ծագի անձկալին խաղաղութիւն ընդ ամենայն տիեզերս ։ Գիտել պարտ է՝ թէ որպէս յառաջն ծանուցաք , անհնարիցն լի-



նել անօրինութեան և բացառութեան ի դրական օրէնս , նոյնպէս աստ ասեմք՝ այդ անհնարիցն լինել ի պաշտամունս և ի պարտս՝ որք յօրինաց անտի արգելուն . յոր և իցէ հարկաւորութեան ոչ ոք ի բացասական պարտուցն անպարտ և զերծ լինել կարէ . զորօրինակ մի՛ ուրասցիս զԱստուած . թէև կեանք մարդոյ բարձցի , չէ արժան՝ զի յետս կայցէ ի պարտուցն՝ զԱստուած ճանաչելոյ կամ դաւանելոյ , զի արգելուն ի դրական օրինացն . բայց ոչ այդպէս և ի պաշտամունս դրականս , որք պարտաւորեն զմարդն ըստ վախճանին , պարագայից , առարկայից և ժամանակին՝ առնել զբարի գործողութիւնս , եթէ ոչ այժմ , յետոյ ի բարեպատեհ ժամանակի՝ ոչ յայմիկ տեղւոջ , այլ յայնմիկ , են ։

ՆԺ. Զայսուիկ ծանուցեալ ընդհանրապէս զիրաւանց և զպաշտամանց մարդկան , գամք այժմ ի մասնաւորի որոշել զորոց միանգամհանդերձեալ եմք խօսել ի ներկայ գլուխդ ։ Երիս յօդուածս տրոհեմք զայն ։ Յառաջինն՝ զպարտուց և զպաշտամանց մերոց առ Աստուած . քանզի օրէնք բնութեանն հրամայեն մեզ պաշտել զԱստուած , և թէ պահեա՛ զկարգ բնութեանն ։ Արդ՝ բնութիւնն մեր զամենայն ինչ յԱրարչէ անտի ընկալեալ՝ ստիպէ զմեզ զպարտս և պաշտամունս մատուցանել Արարչին բնութեանս և պաշտեմք զԱստուած կրօնիւ , որ ոչ է այլ ինչ , եթէ ոչ՝ բարոյական զօրութիւն կատարելոյ տիրապէս զամենայն պարտս և զպաշտամունս մեր առ Աստուած . ուստի անկրօն ասի այն ոք , որ չունի բարոյապէս զզօրութիւն կամ զառաքինութիւն կատարելոյ զպարտս և զպաշտամունս իւր առ Աստուած , որք անլոյծ կապեն զարարածս ընդ Արարչին իւրեանց ։ Յերկրորդն զպաշտամանց , որք պարտաւորեն զմեզ առ մեզ ։ Եւ յերրորդն՝ զպաշտամանցդ , որովք վարիմք և կապիմք ընդ այլ մարդիկ , իբրև բնութեամբ և կատարելութեամբ վախճանաւն մեզ նմանօղս ։ Վասն որոյ

# ՑՕԴՈՒԱԾ Ա.

## ՅԱՂԱԳՍ ԿՐՕՆԻ

ՆԺԱ. Ընդհանրապէս իմաստ կրօնի երրակի լինել կարէ. կրօնք կոչի երբեմն բնական և բարոյական զօրութիւնն, որով պաշտեմք զԱստուած իբրև զՏէրն գերագոյն ամենայն իրաց և արարածոց, որ և կոչի [illegible] ընդհանրապէս. ուստի ըստ այսմ՝ որ ունի զառաքինութիւնն պաշտելոյ զԱստուած, կոչի աստուածապաշտ. և որ աստուածապաշտ է և կրօնաւոր է. Երկրորդ՝ կրօնից իմաստ է եղանակն պաշտամանց ամենեցուն հասարակ, որով պաշտեմք զԱստուած. Այսպէս Քրիստոնէական կրօն և Հրէից երբեմն. Երրորդ՝ կրօնից իմաստ շնորհի և [illegible], որում ոք կամ բազումք կամաւորապէս հպատակեն զանձինս ի սէր և ի ծառայութիւն Աստուծոյ. Այսպէս զանազան եկեղեցականաց կարգք և ընկերութիւնք կրօնից. Մեք աստ խօսիմք զայնմ կրօնից, որ [illegible] մեզ յայտ լինի. երկակի իմաստիւ [illegible] կոչին, նախ՝ ըստ որում բնական իմն յակումն և զօրութիւն, որ ածէ զմարդ յօժար կամօք ի պաշտել զԱստուած. երկրորդ՝ բնականապէս կրօնք կոչի ըստ առարկայից և միջոցին. քանզի է համաքումն ինչ հաւատալի սկզբանց և պաշտամանց բնական լուսով ենթ մեզ յայտնելոց. Կրօնք բնական. ուրեմն սահմանի տիրապէս զոլ «համաքումն հաւատալեացն մասանց և պաշտամանց, զոր միտք մարդոյ ըմբռնեն ըստ իմիք ուղղապէս ի բնութիւնս իրացն»։

ՆԺԲ. Բանաւոր պատճառ առն, որով ստիպիմք Արարչին բնութեանս մատուցանել զայս պաշտամունս՝ զկարգ և զպատիւ կրօնի, է՝ զի հարկաւորապէս և էականապէս կախիմք բովանդակ մարդկային բնութեամբս յԱստուծոյ անտի. և զայդ պահանջեն բանական բնութիւնն և կարգ և յարաբերութիւն բնութեան, որք ստիպեն զմեզ մատուցանել նմա զպաշտամունս կրօնի իբրև Տեառն, որ ունի զգերագոյն և զբացարձակ իրաւունս ի վերայ ամենայն արարածոց, իբրև վերջին վախճանի ամենայն իրացն. կախիմք յԱստուծոյ բովանդակ բնութեամբ և բովանդակ կարողութեամբ. յայտ է թէ բովանդակ բնութիւնս բաղադրեալ է ի հոգւոյ և ի մարմնոյ կամ ունիմք զկարողութիւն մտաց, որ բերի ի ճշմարտութիւնն. և կամ զայգես կամաց, որ բերի ի բարութիւնն զանազան գործողութեամբ, խորհրդածութեամբ. Նախ՝ թէ մարդս մտօք իւրովք բերցի յԱստուած և իբրև ճշմարտութիւն ծանիցէ բնական լուսով զամենայն կատարելութիւնս և զստորոգելիս աստուածային բնութեան, կոչի [illegible]. իսկ եթէ ցուցցէ Արարչին իւրում զպատիւ և զհպատակութիւն, կոչի [illegible]. և յիրաւի միտք կարեն ճանաչել զԱստուած պարզապէս, ըստ կատարելութեանց և ստորոգելեաց, թէ ո՛չ [illegible] և [illegible], զոնէ [illegible] և [illegible], որքան բնական լուսոյն սկզբունք ցուցանեն նմա. և յետ ճանաչելոյ զԱստուած և զկախումն և զյարաբերութիւն բնութեան մերոյ յԱստուծոյ, շարժին ի բնական պարտուց հպատակել զանձն գերագոյն Արարչին իւրոյ իրաւանց, և ցուցանել նմա զպատիւ. և առ ի ճանաչել զԱստուած ըստ կարի բնութեանս մեծապէս պարտք են մեզ, և մեծի ուշադրութեան պէտս ունիմք, զի արժան և ընդունակ միջնորդիւք ի ձեռս բերցուք Արարչին բնութեան զբաւ ծանօթութիւն. Արդ՝ ի ծանօթութենէ աստի ստորոգելեացն Աստուծոյ և կախման մերոյ ի նմանէ, ծագին ի մեզ բնականապէս զգացմունք երկիւղին, խոնարհութեան, պատւոյ, հպատակութեան, երախտագիտութեան, գոհութեան, ապաստանելոյ, յուսոյ, սիրոյ, աղօթից, ևն. Եթէ ներգործութիւնքդ այդոքիկ պաշտօնին սկսեալ ի հոգւոյն, ի նմին և կատարեսցին, կոչին ամենեքին ի միասին [illegible]. բայց քանզի ի բովանդակ բնութեանն վերայ ունի Աստուած զիրաւունս, և բնութեանս երկրորդ՝ մասն է և նիւթական մարմինս մեր, նմին իրի առ ի լրումն պաշտօն ծառայութեան մատուցա-

նել Աստուծոյ պարտ է, զի հոգին մեր զներքին պաշտօնն իւր [illegible] իսկ յայտնեսցէ միջնորդութեամբ անդամոց մարմնոյն։ Սմին իրի յերիս առաջարկութիւնս տրոհեմք զայս յօդուած. Նախ՝ թէ է կրօնք, բանն և բնութեան կարգն պահանջեն զներքին պաշտօն նկատմամբ հոգւոյն. յերկրորդ առաջարկութիւնն՝ թէ նորիմբք պահանջի արտաքին պաշտօն և պէտք են ի պատիւ Աստուծոյ նկատմամբ մարմնոյն. յերրորդն՝ թէ բնական միտք մարդոյ ոչ կարէ [illegible] հաստատել զպարտապատշաճ պաշտօն։ Վասն որոյ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

Կրօնք, բնական լոյս և նուրբ բնութեան դասանցն, չէ [illegible] [illegible] [illegible] Աստուծոյ՝ նկատմամբ հոգւոյն յարաբերութեանց ընդ Աստուծոյ։

Նմ.Գ. Նախ առեմք՝ երկու են գլխաւոր կարողութիւնք բանական բնութեանս, միտք և կամք։ Երկոքին իսկ յաստուածուստ բանական բնութեանս տուրք գոլով՝ նախ և առաջ տուողին իւրեանց պաշտօն մատուցանել պարտին. քանզի բնութիւնն առիպէ զմիտս զծանօթութիւնս ամենայն ճշմարտութեանց ստանալ թէ ոչ զամենեցուն՝ գոնէ զնոցին, որք հարկաւորքն են թէութեան և վիճակի բանական բնութեանս. սոյնպէս և զգերագոյն գիտութեանցն ունել զծանօթութիւն։ Իսկ արդ՝ ճշմարտութիւնք որք գերագոյն առարկային վերաբերին, և ազնուագոյնքն և հարկաւորքն կատարելութեան նորին իսկ բնութեան մերոյ են և պէտք են. ուրեմն միտք մեր պարտին հանապազ ի խնդիր լինել այդ. ամենայն ճշմարտութեանց, որք վերաբերին գերագոյն առարկային, որ է Աստուած. ուրեմն կայ ի բնութեան ներքին պաշտօն աստուածային իրաւանց։ Երկրորդ՝ տուեալ են միտք՝ զի ըղձական առարկայն իւր որոնեալ գտցէ, և նովիմբ կատարելագործեսցի. իսկ արդ՝ չիք այդպիսի առարկայ, որ գերազանց քան զամենայն առարկայս իցէ և զգերազանց



ճշմարտութիւնս յինքն պարփակիցէ. ուրեմն առաջին պաշտօն մնաց է՝ միշտ խնդրել զաղբիւրն ամենայն և գերազանց ճշմարտութեանն, որ ոչ է այլ ինչ եթէ ոչ ինքն Աստուած, էականապէս ճշմարտութիւնն։ Ուրեմն պարտիմք զամենայն ստորոգելիս իւր ուղղապէս ճանաչել՝ զհարկաւորութիւն էութեան նորա, զինքնիշխանութիւն, զկատարելութիւն, զանսահմանութիւն, զգիտութիւն, զզօրութիւն, զնախախնամութիւն նորա. ուրեմն սովին պարտիմք ոչ միայն ճանաչել զկատարելութիւնս նորա աստուածայինս՝ այլև զայնս ամենայն, որք ընդդէմ են ճշմարտութեան աստուածային էութեան, հերքեալ անարգել և ջուն գործել չառնել միտս վարկպարագի մոլար և ազգի ազգի վարդապետութեանց՝ որք դէմ ընդդէմ են աստուածային էութեանն և ուղիղ սկզբանցն մտաց, են։ Պարտիմք գտեալ զճշմարտութիւն բնութեան այսր գերագոյն էութեանն մտադրութեամբ նշմարել զնա, գովել և փառաբանել զնորա իմաստութեանն անփոփոխելի ճարտարութիւն ի բնութեան ամենայն արարածոց։ Պարտիմք ևս առաւել միտ դնել այդոցիկ առարկայից, որք լաւագոյն և մերձաւորագոյնս ծանօթս մեզ տան բնութեան նորա՝ անսալ պատգամացն, զորս եթէ երբէք ուրեք շնորհել զթացեալ իցէ ոմանց արարածոցն։ Դիցուք ես՝ թէ ոչ երբէք կարիցէ ոք ճանաչել զԱստուած, հարկաւ եթէ այս ունիցի՝ գիցէ զարարած բնութիւնն, զազգի ազգի պարգևս շնորհեալս այսմիկ արարած բնութեան, հարկաւ յարարածոց անտի միտք պարտին ճանաչել զզօրութիւն, զիմաստութիւն, զաստուածութիւն և մշտնջենաւորութիւն նորա. ըստ Պօղոսին և ըստ սրբոյն Թովմայի, էութիւնք իրաց և ճշմարտութիւնք են իբրև ուրուք ի գլխաւոր աղբերէն և ճառագայթք յարեգակնէ, հարկաւ ուրեմն միտք ի յարաբերութենէ՝ որ ընդ մէջ բնութեան իւրոյ և ամենայն արարածոցն ընդ աստուածային կատարելութիւնս ծանիցէ, և ծանիցէ զառարկայն իւր գերագոյն և ոչ ըստերիւրեսցի զայնուիկ. երկրորդ՝ կամք բանիւն բերի ի բարութիւնս, հարկաւ ծանուցեալ զամենագերագոյն ա-

ուրկայ՝ առ Նա ձգեսցէ զամենայն սէր և զփափաք իւր, ի Նմանէ պահանջեսցէ զամենայն բարութիւնս հարկաւորս կատարելութեան անձին իւրոյ. զի ամենայն տուրք և պարգևք ի վերուստ անտի ի գերագոյն աղբերէ՝ ճշմարտութեան և բարութեան են։ Նա յաւէտ՝ զի ամենակարող է, Նմին իբր սուրբ երկիւղիւ ծառայել պարտիմք Նմա հոգւով և մտօք. և քանզի Տէր է բացարձակ ամենայն արարածոց՝ վասն իրաւանց և արդարութեանն, պարտիմք պաշտօն մատուցանել Նմա և ահիւ և դողութեամբ յերեսս անկեալ երկրպագանել Նմա, քանզի է ամբաւ բարութիւն և ամբաւ գթութիւն. պարտիմք զամենայն զյոյս մեր և զվստահութիւն ի Նա ինքն դնել. յամենայն զօրութենէ մտաց և սրտի սիրել զՆա, ոչ միայն զի գերագոյն բարի գոլով՝ պատճառ և վախճան լիցի երջանկութեանս, որ կոչի [illegible], այլև պարտիմք սիրել զՆա՝ վասն զի ինքնին կամ վասն բնութեան իւրոյ սիրելի է, որ կոչի [illegible]։ Բայց մինչ Նորին նախախնամութեանն յանձն պարտ է լինել, և չունիմք երբէք իրաւունս պահանջելոյ ըստ արդարութեան զինչ ի Նմանէ, բաց ի պարտուցս ծառայելոյ Նմա և ճանաչելոյ զՆա բացարձակ տէր և իշխան ամենեցուն։ Հուսկ ուրեմն կրօնք են իբրև կապակցութիւն կամ ընկերութիւն ընդ մէջ Աստուծոյ և մարդոյ, եթէ բնականապէս մարդս է ընկերական, պարտի ունել զկրօնին առաքինութիւն։ Եւ ես զի կապանք՝ որք զմարդն կապեն պինդ ընդ ընկերութեանն, են կարօտութիւն կենաց, երկիւղն, երախտագիտութիւնն, բարեհաճութիւնն, կամ բարեկամութիւնն. իսկ արդ՝ այդոքիկ ամենայն յԱստուծոյ կախին և բղխին, և առանց Աստուծոյ չիք կեանք, երջանկութիւն յանդորրութիւն կենաց. ուրեմն կամացս կարօղութիւն ըստ որում առիթ և պարգև յԱստուածուստ բնական բնութեանս չնորհեալ յատացումն գերագոյն բարւոյ և վերջին վախճանիս, բարոյապէս հարկադրի պաշտել զԱստուած։ Աստանօր չէ հարկ զխօսս զանազան կրօնական պաշտօնից յառաջ բերել, որք չեն այլ ինչ եթէ ոչ Ներքին պաշտօնին արտայայտութիւն. քանզի յայտ է ի



հնախօսութեանց զանազան ազգաց, զի իւրաքանչիւր ոք ազգաց ունէր զիւր առանձինն եղանակ արարողութեանց պաշտելոյ զԱստուած, յամենայն ազգս մեհեանք և տաճարք աստուածոց, յամենայն քաղաքս կրօնական սովորութիւնք աւուրք տօնախմբութեան հանդիսից աստուածոցն, և ի քաջ գործադրութիւն պաշտօնին ամենայն տեղիս, քուրմք և հեթանոսութեան քահանայք՝ որպէս յայտ է ի պատմագրացն։ Նմին իրի

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

[illegible] ընդ Աստուծոյ։

ՆժԴ. Նկատմամբ մարմնոյ՝ որպէս հոգւոյս, պարտ է զի պաշտօն մատուսցի Աստուծոյ. քանզի էական երկրորդ մասն բնութեան մարդկան է մարմինն. եթէ հոգւով միայն պաշտէաք զԱստուած և ոչ մարմնով, պաշտօնն մեր անկատար լինէր, զի երկոքին մասամբ իսկ և բովանդակ բնութեամբ պարտիմք ճանաչել զԱստուած և պաշտել զՆա. եթէ գերագոյն մասն մարդոյ՝ որ է հոգին, Ներքին պաշտօն մատուցանէ Արարչին իւրում՝ ոչ ապաքէն և մեծագոյն պարտք կան ի վերայ մարմնոյ՝ որ Ներքնագոյն է քան զհոգին։ Եւ որպէս Աստուած տէր է հոգւոյս և մարմնոյս նոյնպէս՝ այո՛ մարմինս և արտաքին զգայութիւնքս չեն բաւական մերձենալ ի ծանօթութիւն աստուածութեանն, ո՞չ ապաքէն հոգին պարտի արտաքս յայտնել զՆերքին կրօնական աստուածպաշտութիւնն արտաքին միջոցիւք և առթիւ. որով մեծապէս շարժին ըզգայութիւնք մեր, որով և կենդանի ինչ եղանակաւ կատարեմք զպարտս և զպաշտօն մեր առ Աստուած։ Դարձեալ ի ցոյց այսր ճշմարտութեան ասացաք փոքր մի յառաջ թէ յամենայն ազգս և յամենայն տեղիս ոչ միայն Ներքին պաշտօնիւ ծառայեցին աստուածութեանն, այլև արձանս

կանգնեցին աստուածոց հեթանոսք, տաճարս, ծէսս, քահանայս, տօնախմբութիւնս, զոհս, սրբութիւնս, աղօթս. և ամենայն գոգցես երաժշտութիւնն ազգի ազգի նուագարանօք և բազում այն է՝ զի ներքին հոգւոյ գործողութիւնք արտաքս զեղուն. և ցնծալով հոգւոյն երեսք ծիծաղին և բերկրին, և տրտմեալ հոգւոյն անկանին և տխրին և նուաղին ամենայն անդամք մեր. եթէ այդպէս է, պարտին ուրեմն առ Աստուած ազգի ազգի գոհութիւնք և երախտեացն զգայութիւնք ներքին արտաքս զեղուլ և փառաւորութեամբ ձայնից և գոհութեանց ի վեր ամբառնալ ի ցոյց հրապարակութեան ամենակարող զօրութեան Արարչին։ Հոգիս մեր ո՛չ շատանայ ներքին պաշտօնիւն, այլ բոլորովին անկեալ ի խոնարհ զերկիրն պագանէ զպատուանդան ոտից նորա։ Ուստի անհնարին է ասաց Ռօօգ (*) յամենայն սրտէ սիրել զԱստուած, և ըզներքին զգայութիւնս սիրոյ չյայտնել արտաքս։ Այսպէս ի խօսս, ի բանս, ի գործս մեր, բնութեամբ ամենայն մարդս աշխատի և վաստակի, այն է՝ բովանդակ մարդոյս բնութիւն, որ է ի հոգւոյ և ի մարմնոյ. նա մանաւանդ՝ որ աստուածային սիրով վառեալ գտանիցի, յանհնարին է՝ զի այլոցն ո՛չ յայտնիցէ զայդ զգածմունս ներքինս սրտին. օրինակ բարի գոլով նոցա, և զամենեսին յաստուածպաշտութիւն հրաւիրելով, և ամէն իբր արտաքին պաշտօնն Աստուծոյ մատուցանի յանուն հասարակութեան հրապարակաւ լինի. քանզի յամենեսին մի է բնական բնութիւնն և սկզբունք զԱստուծոյ և զստորոգելեաց նորա՝ եւ մի և համաձայն գոլով յարտաքին գործողութիւնս աստուածպաշտութեան, հասարակաց միաբանութեամբ և ամենեցուն ծառայութեամբ կատարի. վասն որոյ և հրապարակաւ տաճարք կանգնին, ծէսք կատարին, տօնախմբութեանցն հանդէսք լինին. սոքա ամենեցուն ցուցանեն ո՛չ միայն զպարտաւորութիւն արտաքին աստուածպաշտութեան, այլև զճշմարտութիւն իւրն արդեամբ յամենայն

(*) Յաւելուած Յաղագս բնական կրօնից ։



տեսլիս կատարել, և զսուտ վարդապետութեան ոմանց Փիլիսոփայից աստուածային կրօնի հակառակորդացն՝ թէ չի՛ք պաշտօն կրօնի կամ արտաքին աստուածպաշտութեան։ Ուրեմն բնական լոյսն և կարգ բնութեանն պարտաւորեն զմարդն ո՛չ միայն ներքին պաշտօնիւ և աստուածպաշտութեամբ մեծարել և փառաւորել զԱստուած ճանաչելով ուղղապէս զբնութիւն նորա և զկատարելութիւնս, այլև արտաքին թէ՛ բնական և թէ՛ կամաւոր եղանակաւ հաստատեալ պաշտօնի երկրպագանելով նմա, նշմարելով, անձկալով նմա և բովանդակ բնութեամբն զանձն գերագոյն տէրութեանն հպատակելով. բայց ընդդէմ երկոցունց խել ելանեն ասխքն Թոլմանիոս, Տունծ, և Բէմմերիքիոն ասելով։

### ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ԱՌԱՋԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆԺԵ. Նախ՝ Աստուած անհասանելի է բնութեամբ և անիմանալի մարդկային մտացս. ուրեմն ներքին պաշտօն մարդոյ աստուածային անհասանելի բնութեան անարժան է. երկրորդ՝ հարկաւորութիւն կրօնի կամ պաշտօնի բերէր զհարկաւորութիւն տկարութեան և կրից յԱստուած, քանզի ի պաշտելս լինէր բարկացեալ, և պաշտելս ամոքացեալ, տխրելոյ և նուաճելոյ և փառս ընդունելոյ ի մարդկանէ և այլոցն ո՛չ աստուածային կրից՝ այլ մարդկայնոցն ենթակայ. երրորդ՝ որպէս այպանելի է թագաւորին՝ որ յամենայն հպատակաց իւրոց և փոքունց պահանջէր զպատիւ և զհպատակութիւն, նոյնպէս և Աստուած։

Առ Ա. Ասեմ՝ զանազանելով անհասանելի և անիմանալի բովանդակապէս՝ ուրանամ. ըստ մասին կամ ըստ չափ զօրութեան մտացս չկարեմք զամենայն աստուածային էութիւնն ընդ մտացն արկանել իշխանութեամբ՝ ընդունիմ. և ուրացեալ զհետեւութիւնդ, ասեմ. թէպէտև ո՛չ ըմբռնեմք բովանդակապէս զաստուածային բնութիւնն, և զստորոգելեացն ամենայն յատկութիւնս, բայց այսու ո՛չ հետեւի՝ թէ չունիմք երբէք զճառագայթս բաւականս ցու-

ցանել մեզ զգոյութիւն ճշմարիտ լուսոյն ։ Ամպաքէն մարդկան միտք յարարածոց անտի ի միտ առնու զաստուածութիւն, զզօրութիւն և զմշտնջենաւորութիւն գերագոյն էակին. ի միտ առնուն միտք մեր՝ թէ ամենայն արարածք ունին զէական և զհարկաւոր կապ գոյութեանն ընդ Արարչին իւրեանց ։ Գիտեմք՝ թէ մի միայն նա է գերագոյն և առաջին պատճառն և վերջին վախճանն բանական բընութեանս. ուրեմն կարեմք այսքան միայն ծանօթութեամբս հոգւով և մտօք հնազանդ կալ նմին, և սրտիւ վարիլ սիրով և փափաքիլ տեսանել զնա և երջանիկ լինել ։

Առ Բ. Ուրանամ զամենայն. կարգ բնութեանն և աստուածային իրաւունք են՝ որք պարտաւորեն զմեզ պաշտօն մատուցանել Արարչին մերում, բարերարին մերում զպատիւ և զհպատակութիւն և զսէր. ոչ զի սիրեմք ըզնա, սիրէ զմեզ, այլ սիրէ զմեզ՝ զի ըստ կարգի բնութեանս մերոյ գործեմք և բնութեանս օրինաց. ապա թէ ոչ՝ աստուածային բնութիւն նորա անփոփոխ գոլով՝ արատաւորէր, և բանք մեր սիրել Աստուծոյ զմեզ, ատել, նեղել, ցաւել՝ են յիրաւի. բայց այդ ըստ մերումս ակար մտացս խօսից է և նշանակեն՝ թէ մերձենամք վախճանիս մերում, և հեռանամք անտի. յարմարիմք կարգի բնութեանն և բնական օրինաց ։

Առ Գ. Ասեմ չէ ուղիղ նմանութիւնդ կամ բաղդատութիւնդ. քանզի թագաւորն ոչ է ստեղծեալ զամենայն արարածս, նոյն իսկ զամենամանունս. իրաւունք թագաւորի չեն իբրև զիրաւունս Աստուծոյ զարարածոցն. նոքա ըստ ամենայն մասին բնութեանն ստեղծեալ են յԱստուծոյ, վասն որոյ ընդ իրաւամբ և իշխանութեամբ Աստուծոյ են և կան, և ոչ երբէք զերծանին. բայց թագաւորին իրաւունք են մի միայն պահանջել ի հպատակաց ըզպահպանութիւն դրական օրինաց իւրոց, և զհպատակութիւն բնակչաց տէրութեան իւրոյ. բայց չկարէ պահանջել զի զամենայն գործողութիւնս իւրեանց հպատակքն ի սէր, ի պատիւ, և ի փառս նորա արասցին. քանզի ոչ տարածին իրաւունք նորա ցայդր ։



## ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆԺԶ. Աստուած հոգի է. ուրեմն զհոգևորն միայն պաշտօն կամիցի և ո՛չ զարտաքինն ։ Երկրորդ՝ ներքին պաշտօնիւ մարդ հպատակ է զանձն և զմարմին իւր աստուածային իրաւանց. ուրեմն չեն պէտք արտաքին պաշտամունք կրօնի ։ Երրորդ՝ մարմին նիւթ գոլով՝ արգեանց չկարէ ենթակայ լինել. ուրեմն չեն պէտք և ո՛չ նորայն հպատակութիւն, զի Աստուած հայի ի սիրտ մարդոյ. ուրեմն ։ Չորրորդ՝ չունի պէտս արտաքին պաշտօնիս, զի ո՛չ օգտի, և ո՛չ փառաց յաւելումք ինչ նմա ։ Հինգերորդ՝ եթէ ի մէջ մարդկան են գոհութիւնք, գովութիւնք, երախտագիտութիւնք, ազօքիկ են՝ քանզի ո՛չ տեսանեն բարերարքն զներքին սիրտ մարդոյ. վասն որոյ պէտս ունին այնց ամենեցուն, բայց ո՛չ այդպէս Աստուած՝ որ ի ներքս ի մեզ ընթեռնու զխորհուրդս և զերիկամունս քննէ ։

Առ Ա. Ընդունիմ զնախընթացդ, հերքեմ զհետեւութիւնդ. քանզի թէպէտև Աստուած հոգի իցէ՝ մի և նոյն հոգին տիրէ թէ՛ խորհրդոց և հոգևոր գործոցն, և թէ՛ հպատակէ ինքեան զմարմինն իւր ։ Արդ՝ Աստուած թէ՛ զհոգին թէ՛ զմարմին յոչնչէ ի գոյ ած. ուրեմն իրաւունս ունի ի վերայ երկոցունցն ։ Այնպէս զի՛ որ ուրանայցէ զայդ՝ [illegible] համարի. որպէս որ ուրանայ զստորգելիս Աստուծոյ, և զներքին պաշտօն կրօնի՝ հայհոյէ ։

Առ Բ. Ուրանամ զառաջարկութիւնդ. քանզի մի միայն սրտիւ և սիրով մարդ չկարէ զանձն և զմարմին հպատակել Աստուծոյ՝ առանց արտաքին իսկ մարմնոյ ծառայութեան նշանս և զգացմունս ցուցանելոյ. ապաքէն ծառայ արժանի գտանէր՝ որ ի հատուցումն և ի շնորհակալութիւն կենաց իւրոց բարերարին, բարի կամէր սրտիւ միայն. այդմ ո՛չ տանին բանական բնութեան զգայութիւնք բարոյականք. թող զի անբան կենդանիքն գիտեն ըստ իմիք պաշտօն մատուցանել բարերարին իւրեանց՝

պաշտպանութեամբ և ծառայութեամբ, յոր լաւագոյն գատին քան զբնութեան ջատագովս։

Առ. Գ. Ընդունիմ զնախընթացդ, և հերքեմ զեզրակացութիւնդ. քանզի մարմինն է առիթ բազում գործողութեանց մարդոյ, բայց գոյացական միութեամբ յօդեալ ընդ հոգին և երկոցունցն գործողութիւնք միում մարդկային անձնաւորութեան համարին։ Արդեամբ որ միացեալ է աղախինն է վերին ազնուագոյն մասին մարդոյ, ի ծառայել տիկնոջն, արժան է զի և աղախինն ընդ նմին ծառայեսցէ։ Եւ եթէ զայդ շնորհէաք, ապաքէն կան բազում գործողութիւնք զգայականք և յզգայութենէ անտի յառաջ եկեալք, զայնուիկ ամենայն եւս պարտ լինէր յայնժամ անարգել դատել և զուրկ ի մեղաց՝ որ չէ այդպէս. զի հոգին ի մարմինն մեղանչէ, նմին իրի ասի թէ հայր Աստուած ի սիրտս, և դատեալ զխրան բարի, զգործ մարմնոյն անդամ բարի, եթէ զայն չար՝ ապա և զայս դատի չար։

Առ. Դ. Ընդունիմք ո՛չ ունել պէտս՝ ո՛չ օգտի՝ և ո՛չ փառաց ի պաշտամանէս, և եթէ հրամայել պաշտել ըզնա, ո՛չ զի անտի շահեսցի ինչ կամ փառաւորեսցի այնու, այլ զի իմաստութեամբ եդեալ կարգ բնութեան զայդ պահանջէն, և նախախնամութիւն նորա կամի. զի ուղիղ կարգ բնութեան պահեսցի անխախտ և անվրէպ։ Եւ ընդդէմ ասոյս չլինել կարեմք զառաջարկութիւնն, իսկ արդ յարարածոյն նախախնամելոյ չիք ինչ բարութեան կամ փառաց Աստուածային կատարելութեան, ուստի չեն պէտք նախախնամութիւն և պահպանութիւն Աստուծոյ զիրացն զոր կարծեմ չընդունելին ասելքն։ Յաւել եւ զայս, վախճանն հասարակութեան է առաջին բարեկարգութիւն. զի՞րդ կարեն հասարակութիւնք զանց առնել զայնմանէ, որ է պատճառն բարեկարգութեան, բարձ զկրօնս՝ բարձցես հարկաւ և զբարեկարգութիւն։

Առ. Ե. Զնոյն պատասխանեմք, պաշտեմք զԱստուած ո՛չ թէ գիտասցէ զզգացմունս սրտից մերոց, այլ զի այդպէս պահանջէն օրէնք բնութեան, և կարգ իրացն։



## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Դ.

Բանական միտ մարդոյ ո՛չ կարէ ինքնին ըստ արժանւոյն հաստատել զպաշտօն վայելուչ Աստուծոյ առանց յայտնութեան Աստուածային օժանդակութեան։

Նախ. Գիտելի է զի ջատագովք բանականութեան յոյժ շնորհեն մարդկային մտաց, առեալ բաց ի յարաբերութենէ բնութեանս ընդ Աստուծոյ գոյութեան և իմաստութեանն, միտք մարդկան ինքնին առանց ժամանակի՝ կարեն զբնական կրօնն ի կիր առնուլ, և ըստ այնմ բարոյապէս ունել զբարեկարգութիւն յընկերութեանն, թէ՛ վարուց, և թէ՛ բարուց։ Են եւ ոմանք որք ասեն, թէ աստուածային յայտնութեանն օժանդակութեամբ և եթ կարեմք ըստ արժանւոյն գիտել զպաշտօնն մեր, անհաս գոլով ամենայնիւ բանական բնութեան առ այդ և ո՛չ մասամբ իւիք։ Բայց եթէ ճշմարտութեան հայեցիմք՝ մի միայն բանական միտք զարժան պաշտօնն չկարէ ունել, և Աստուծոյ նուիրել, այլ ըստ մասին միտք՝ և ըստ մասին աստուածային օժանդակութիւնն՝ յայտնութեամբն և այցելութեամբն ակար բնութեանս ժամանեալք, կազմեալ յօրինեն զճշմարիտ պաշտօնն և զկրօնն աստուածային բնութեանն արժանաւոր։ Գիտելի է երկրորդ՝ թէ պաշտօնն բնական, այն է մի միայն բնական լուսով մտացն եդեալ, զայնուիկ միայն ճշմարտութիւնս դատել կարէ՝ որք ճանաչելիքն են բնական լուսովն մտաց. իսկ պաշտօնն վերին այցելութեամբ մարդկային բնութեանս շնորհեալ և յօրինեալ պարունակել կարէ ո՛չ միայն զբնական ճշմարտութիւնս, այլ և զնոսին՝ որք ի վեր են քան զմիտս, և աստուածային յայտնութեամբ լինի և կոչի կրօնք կամ պաշտօն գերբնական։ Վասնորոյ ասեմք հաստատելով թէ բնական միտք ո՛չ կարեն ինքնին զպաշտօն ըստ արժանւոյն կացուցանել, այլ այնպէս լինի աստուածային յայտնութեամբըն. և ցուցանի։

ԽԺԸ. Նախ՝ միտք մարդկային ամփոփեալ են, և ճշմարտութեանցս ամենեցուն չկարեն անգէտս լինել, և քանզի արտաքին պաշտօնն է յայտնութիւն ներքին գութական հոգւոյն, և քանզի ներքին պաշտօնին առարկայք են ճշմարտութիւնք և դաւանութիւն նոցա. ուստի ընդհանրապէս հետևի՝ թէ ամփոփեալ գոլով միտք մարդկան և կարօտ ճշմարտութեանցն՝ չկարեն ուստի բաւ արժանւոյն պաշտօն կացուցանել ինքեան։ Երկրորդ՝ են և բազում ճշմարտութիւնք, որք թէպէտ և ընդ սահմանաւ մարդկային մտաց իցեն, բայց և այնպէս անծանօթ են՝ և մնան մեզ. քանզի դժուարինք են և մի միայն ուշիմ մտացն միայն քաջ յուզման և քննութեան։ Բայց պաշտօն հասարակութեան ի գիտաց գոլով և ոչ փիլիսոփայից՝ միայն, միշտ զուրկ կայ հասարակութիւնն ի գիտութենէ ճշմարտութեանց, և զրկեալ ի ճշմարտութեանց չկարեն զարժանաւոր պաշտօն մատուցանել։ Դարձեալ գիտեմք՝ թէ կարող է ամենայն ոք ի միտ առնուլ զայն ճշմարտութիւնս. բայց բազում և անթիւք են արգելք, որք զրկեն զմարդն յայդոցիկ. Նախ՝ զի ընդ երկար աշխատանաց և ժամանակի պէտս ունին, անխոնջ և քաջ ուսման, մտացն ուշիմութեան։ Եւ մտացն տկարութիւն միայն քան զմիւսն. Նա մանաւանդ բազումք խոյս անընդունակք են այդպիսի մտաւորական աշխատանաց և կատարելութեանցն, և ոմանք յայդ վիճակ են՝ վասն զի հոգք աշխարհի պատեալ պաշարեալ ունին զնոսա. և բազումք ևս կամաւ ըղձիւ կուրացուցեալ են, և անընդունակ եղեալ. քանզի հանապազ ընկղմեալ են ի ցանկութիւնս, ի հեշտութիւնս, և ի գործս մարմնեղէնս. և ևս բազումք փափաքին այդց ճշմարտութեանց ժամանել, բայց առ պակասութեան բարեացն, կամ բաղդի աղքատութեանց, կամ անձին առողջութեան՝ կամ վասն ժամանակի աղխոութեանն՝ են։ Սոքա ամենեքեան պատճառք են զրկոցք բնութեանն ի ճշմարտութեանց, անհնարի և պաշտօն արատաւոր։ Դարձեալ և փիլիսոփայից ուսումն և գիտութիւնք ընդ երկար ժամանակս ի ձեռս բերեալք, ոչ կարէին տեղեկել զընդ-



հանուր հասարակութեան ի հնազանդութիւն բերել և ի պաշտօն հաստատեալ կրթել զնոսա. քանզի չունէին ըղկատարեալ վստահութիւն յիմաստասէրս, և հաւատքն ընծայեալք առ բազումանցին իմաստասիրացն կարի տկարք էին, փոփոխականք. քանզի՝ որքան իմաստնագոյնք էին, միշտ ամփոփեալ գոլով միտք՝ սխալական էին։ Եւ ոչ երբէք հաստատուն ինչ ծխիւք և դաւանութեամբ պաշտօն մատուցանել զօրէին ունել զժողովուրդն. նա մանաւանդ անթիւ և անհամար առասպելաբանութեամբ և ազգի ազգի զազրութիւնս անգամ պաշտօն համարէին։ Աստի Աստուածք եղեն դոցցես ամենայն մոլութեանց և ի մի և ի նոյն տաճար առաքինութեանց Աստուածոյն, մատուցանէին և ամենայն մոլութեանց Աստուածոց զպաշտօն՝ զզոհս՝ են։ Եւ որքան անձինք էին ի հեթանոսութեան այնքան և պաշտամունք զանազանք ի միմեանց, որ է ապացոյց անժխտելի տկարութեան մարդկային մտաց՝ և կարօտութեան նորա էականապէս աստուածային վերին այցելութեան, նմին իրի ասաց սուրբն Թովմաս (*) զիմաստասիրացն և զհեթանոսացն անյայտ և անպիտան ուսմանց. « Հարկաւոր եղև դաստիարակ լինել մարդոյն աստուածային յայտնութիւնն և յայնս՝ զորս մարդկային միտք յուզել զԱստուծոյ հնար էր, քանզի ճշմարտութիւնն զԱստուծոյ բնական բանիւն յուզեալ ի փոքունց (և ի սակաւուց) ոմանց, և այդ յետ բազում ժամանակաց և խառնման բազում սըխալմանց առ մարդիկ ժամանէր՝ յորոյ մինչ ճշմարտութիւնն կախէր ծանօթութենէ, բովանդակ մարդկային փրկութիւն, որ յԱստուած է ». ուստի և տեսաք ոմանք ի հեթանոսաց հաղիւ թէ՝ և այն ոչ առանց սխալմանց կարէին հասանել ճշմարտութեան։ Ուստի առ ի զարժանն մատուցանել զպաշտօն և հասանել տիրապէս ի գիտութիւն ճշմարտութեան՝ բարոյապէս հարկաւոր է յաստուածուստ օժանդակութիւն՝ այն է յայտնելով զճշմարտութիւնս իւր ի մեզ, զորս բնական լուսովն չկարէաք ճանաչել

(*) Բովանդ. Աստուածաբ. Մասն Ա. Խնդ. Ա. Յօդ. Ա.

և հաստատելով զմիտս Աստուածային վկայութեամբ՝ ալինդ-կալ, զորս ծանուցեալ էաք տկարութեամբ մտաց ։ Արդ զհարկաւորութիւն ընդունելոյ զԱստուածային յայտնութեան ցուցանեմք ։

ՆԺԹ. Նախ՝ միտք բանական բնութեանս ամփոփեալ են. ուրեմն հարկս լցին ճշմարտութիւնք, զորս ճանաչեն միտք ։ Եւ են բազումք զորս ո՛չ կարեն ճանաչել, և սահման կարողութեան մտաց անդ է, ուր դադարի կարողութիւն ճանաչելոյ նորա զառարկայս, և զճշմարտութիւնն որ անսահման է առարկայար յԱստուած ։ Երկրորդ՝ ճշմարտութիւնք են ի գիտել հարկաւորք, նոքին՝ որ աստուածային բնութեան՝ որք բարեկարգութեան կենցաղոյ և վերջին վախճանիս վերաբերին ։ Արդ Արարչին իմաստութեամբ և նախախնամութեամբն առեղծաք վասն գերագոյն վախճանին, ճանաչելով զճշմարիտ ճանապարհ, որում հետևեալ ժամանել մարթիցեմք ի գերագոյն նըպատակդ անտարբեր ։ Արդ ճանապարհդ այդ է նոյն ճշմարտութիւնն՝ հարկաւոր նպատակիս. զի՞արդ կարէաք ժամանել այսոցիկ ճշմարտութեանց, և արտաքս բառ այսմ ճշմարտութեան գլորդ և զպատիւ մատուցանել Արարչիս տանց մանաւոր յայտնութեան նորա ։ Երրորդ՝ նոքա որք ոչն ընդունին զյայտնութիւն դեր քան զբնութիւն ի վերուստ, կամ չընդունին զայն՝ զի անհնար է այդ առ Աստուած, կամ զի չէ հարկ այնմիկ, և կամ զի վնասակար է մարդկային մտաց և մարդկային կարողութեանց ։ Եւ ոչ միոյն ի յերից ունին զհիմն. նախ՝ չիք իմն անհնարին, քանզի զի՞նչ ընդդիմութիւն Աստուծոյ իջանել առ արարածս իւր, և յայտնել նոցա զբազում ճշմարտութիւնս, աղաքէն և ոչինչ. Երկրորդ՝ հարկ է, քանզի միտք մարդկան չկարեն տիրապէս ի գիտութիւն ճշմարտութեան հասանել, որպէս տեսաք ի վերոյ. և բառ սորոյն Թոմայի, վասն տկարութեան մարդկային մտաց և անդրամնդրութեան բնութեանն յաջողակի յուղմունս, զի հոգք աշխարհի, պղերգութիւնն, և մարմնաւոր կիրք և ցանկութիւնք որք յետինքդ խաղաղ կուրացուցանեն զմիտս ։ Եթէ նոյն



Փիլիսոփայք հեթանոսութեան յետ բազում վաստակոց և ժամանակի ի գիտութիւն ուղղապէս գոյութեան Աստուծոյ չկարեն ժամանել, ուր թողցուք զխառնիճաղանճ և զխանդարեալն, բազումք և վարուք, զաղգս՝ զոր քաջ ի միտ առցես ի Կիկերոնի բանիցն (*) ։ Արդ զկայծս եդ մեզ բնութիւն փոքունս, զորս վաղվաղակի չարութեամբ բարուց և պակասութեամբ բանից այդպէս շիջուցանեմք, մինչև ո՛չ երբէք երևիլ լուսոյն . . . . . մինչև դոգցես զապականութիւն մտաց և բարուց ի ստեանց անտի դաշեկացս ընդ կաթին ծծեալ իցեմք և գիւրինք յամենայն մոլութիւնս չաղախիմք, ևն. ևն.։ Երրորդ՝ ո՛չ միայն չէ վնասակար բանական բնութեանս, այլ և հարկաւոր, և անմռութեամբ է բանն հակառակորդաց Աստուածային յայտնութեան, իբր թէ ընդ ոտիւք հարկանին միտք և մարդկային ազատութիւն. քանզի՝ զօրօրինակ միացեալ ի լոյս ճրագի լոյս արեգական ո՛չ շիջուցանէ զնա, այլ աչք մեր գերագոյն լուսոյն գիպելով չունին պէտս տկար լուսոյ ճրագին, նոյնպէս ո՛չ թէ նուազի բնական լոյս մըտաց մերոց, այլ միացեալ ընդ լոյս Աստուածային՝ պայծառագոյն ընդ նմա փայլին և լուսաւորեն զմեզ, որպէս եթէ ի փոսն փոքր իջեալ խառնէին առատ ջուրք Եփրատայ ո՛չ զի նուազէր այլ առաւելոյր և գերագոյն քան զառաջինն լինէր վիճակն երկրորդ. ուրեմն առ ի զարծանուոյն մատուցանել վերնոյն զպաշտօն, կարօտիմք մեծապէս օժանդակութեան երկնից ։ Եւ հուսկ ուրեմն վայելուչ իմն է զի կերպն և պարտաւոր եղանակ Աստուածային պաշտամանն յԱստուծոյ անտի սահմանեսցի և կարգադրեսցի, որպէս զի վստահութեամբ և աներկբայ արարածքն զպաշտօնն Աստուծոյ մատուսցեն, քանզի թէ չէր երբէք գերբնական յայտնութիւն հաստատեալ զբնական լոյս և ամրացուցեալ զհաւատս՝ ո՛չ երբէք զերծ մնայաք ի տարակուսանաց և յերկիւղէ. արդեօք պաշտօնդ զոր մատուցանեմք Աստուծոյ, նմին արժա՞ն իցէ,

(*) Տուսկոլ. Գիրք, Գ. Գլ. Ա ։

արդեօք չիցէ ընդդէմ սրբութեան նորա, մեծվայելչութեան նորա, իրաւանց նորա, են. բայց քաջ ծանուցեալ զնորա էութիւն, զնորա բարութիւն, և զնորա ճշմարտութիւն ի վերին յայտնութենէ անտի, հարկադրիմք բարոյապէս ընդունել զգոյութիւն յայտնութեան հարկաւորապէս, և անտի մատուցանել Արարչին զերկրպագութիւն, զսէր, զյոյս, և զհաւատս: Նախ քան զամենայն վասըն Աստուածային վկայութեան նորա, և ապա յայտ է և անմտութիւն անտարբերութեան բազմատեսակ աղանդոց, որպէս թէ Աստուած զամենեսին ընդունի, զամենեսին կամի, թէպէտև միմիանց հակառակ, քանզի մի գոլով բնութիւն նորա, մի է և ճշմարտութիւն և զայն զայս ճշմարտութիւն յայտնէ արարածոյն միայն, և ոչ բազումըս միմիանց հակառակս, ապա թէ ոչ լինէր Աստուած երկպառակութեան և հակառակութեան, և զայն միայն պաշտօն ընդունիցի, որ յարմար է նորին մի և անբաժանելի ճշմարտութեանն: Աստանօր քաջ մեր գիք Կեսարացի Յատագովքդ, ճշմարտութեան երկաթաւն խաչապաշտիցն ըստ ռամիկ և մոլար առածից (ծն իբր խաչապաշտլարըն հէքեխի պիր ախր, մէջրէպէ պադալըմ). քանզի մի է Աստուած՝ մի է ճշմարտութիւն, մի յայտնութիւն, վասն որոյ պարտ է զի մի լիցի և հաւատ, մի պաշտօն, և յայդմ միութեան փառաւորանիցի Արարարիչն ամենեցուն. եթէ երկու պաշտամունք իցեն մի միանց հակառակ, հարկաւ Աստուած ըզճշմարտութեանն ընկալցի պաշտօն, և ճշմարտութիւն մի գոլով, որպէս և Աստուած՝ ոչ կարէ ճշմարտութիւն յերկուս բաժանել, զի մի է. որպէս Աստուած չկարէ բաժանել յերկուս, նոյնպէս և պաշտօնն՝ որ ոչ է այլ ինչ, եւթէ ոչ դաւանութիւն մի և անբաժանելի ճշմարտութեան զոր ուղղապէս զԱստուծոյ ասեմք, և հաստատեմք. զի՞րդ կարեմք զմի և զնոյն ճշմարտութիւն յերկոտասան միմիանց հակառակ դաւանութիւնս բաժանել, յորմէ և զերկոտասան ճշմարտութեանց պաշտօնս հնարել. բայց յայտ է՝ թէ ոչ ի խաղաղութիւնս և ի հակառակութիւնս Տէր: Եւ յետին անգիտութեան և անտարբերութեան գիրկութենէ



տմանց են կարծիքդ: Ուրեմն կնքեմք թէ բնական լուսովըն չկարէ բանական բնութիւն զարժանաւորն Աստուծոյ մատուցանել զպաշտօն և զպատիւ այլ օժանդակութեամբ և եթ Աստուածային յայտնութեան, որ հարկաւոր է, զի լոյս բնական՝ վարուցն մոլութեամբ աղօտացեալ՝ լուսաւորէ այժմ ի թանձր խաւարի ակար լուսով, բայց ծագեալ անստուեր լուսոյն զնմանէ, ցրուին ամենայն մոլութեանց նսեմութիւնք, և ի պայծառութիւն Աստուածային լուսոյն անայլթաք ընթացեալք ժամանեմք յաւիտենական երջանկութեան:

Նի. Կարեն առաջարկել մեզ միայն զհեթանոսութեան իմաստասէրս ոմանս և քանի քանի ճշմարտութեանց ժամանեցին. կարէին ուրեմն պաշտել զԱստուած ըստ արժանւոյն բնականապէս: Մեք բաց ի պատասխանւոյ սրբոյն Թովմայի որպէս ի վերոյ, յարեմք թէ ի խորին իմաստութիւնդ Սոկրատեսին, Թախմենեսի, Թալէսի, Պիւթագորայն, Պղատոնի, Արիստոտէլին, Թեմոսթենեայ, Կիկերոնի, և այլոցն՝ չէր մի միայն բնական լուսոյ մըտաց իւրեանց պտուղ՝ այլ զի ըստ մասին կարեմք ասել, թէ ընթերցեալ իցեն և կամ լուեալ զսուրբ գիրս՝ զորս զգուշութեամբ ի յոյն բարբառ էդ թարգմանեալ Պտղոմէոս Փիլադելփոս, ըստ սրբոյն Օգոստինոսի (*), այնէ յետ ՃԼԲ. Ովիմպիադին, յորմէ զամենայն ուսանել կարէին հեթանոսայն իմաստասէրք: Բ. Մերձ գոլով Երուսաղէմի Յունաստան, և Իտալիա, և ի յաւուրեայ տուրեւառութեանց ընդ Հրէայս, դարձեալ լսել և ուսանել կարէին զգլխաւոր մասունս Աստուածային յայտնութեան: Եւ գիտեմք թէ չէր ոչ մինն ի սոցանէ. աւանդութիւնն եղեալ առ նախահայրսն և առ որդիս նոցին՝ թէպէտ և խանգարեալ և ապականեալ՝ թողեալ էր զհետս, որոց հայեցեալ հեթանոսացն, ճըշմարտութեանն, հետևէին, և այդ ոչ ի պարզ զօրութենէ միայն մարդկային բնութեանս: Ի բաց թողումք, զի թագուհին Սաբայ եկն ի հեռաստանէ լսել զիմաստութիւն Սողոմոնի, և լուեալ դարձաւ ի տեղին, ասացեալ զի-

(*) Յաղագս քաղաքին Աստուծոյ Գիրք Ը. Գլ. 2:

տութեամբ զարմանալի իմն սիրով իմաստութեան վառեալ հարկաւ քարոզեաց և զամենայն ունելով մարդկային նըպաստից և ընչից հարկաւ եդ. և եբաց ճեմարանս վասն անթերի պահելոյ և ուսանելոյ զիմաստութիւն զանձուցն զոր այնքան վաստակօք և ծախիւք ստացեալ էր։ Ի բաց թողումք զանունն ի կին իւր Սողոմոնի զդուստր Թագաւորին Եգիպտացւոց, յորմէ Հրէից յԵգիպտոս և այսրէն յանդր բազմացան երթևեկութիւն, և կենցաղավարութիւն։ Ի բաց թողումք և զի մանաւորի ճանապարհորդութիւն Պիւթագորայն և Պղատոնի յԵգիպտոս՝ զի պարապեսցին յուսմունս և ի գիտութիւնս, զորոց զբազումս ուսուցեալ և թողեալ էին Հրէայք յԵգիպտոս. «զի կենցաղավարելով ընդ նոսա՝ զինչ պարփակէին յինքեանս սուրբ գիրք ըստ կար զօրութեան ի միտ առնուին». այսպէս սուրբն Օգոստինոս (*)։ Եւ ըստ սրբոյն Թովմայի ի Հեթանոս Աստուածային նախախնամութիւն ոչ երբէք պակասեցաւ, այլ ի այլ ի գերբնական ազդեցութեամբ և մարգարէիւք այց առնելով նոցա, մին իրի և յարարողութիւնս և ի ծէսս պաշտաման կուոցն անգամ նշմարէին հետս Աստուածային յայտնութեան և Հրէական ծիսից. այսպէս զոհք և պատարագք երնջոց և զուարակացն և խնկարկութիւնք և սրբութիւնք։ Ուստի մի ի զուր աշխատեսցին ջատագովք բանական բնութեան և միայն, որք կարօտին էականապէս և հարկաւորապէս Աստուածային գերբնական յայտնութեան, առանց որոյ չեն պաշտամունք Աստուածահաճոյք։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

## ՅԱՂԱԳՍ ՊԱՐՏՈՒՑՆ ԵՒ ՊԱՇՏՄԱՆՑ ՄԱՐԴՈՅ ԱՌ ԱՆՁՆ ԻՒՐ

ՆԻԱ. Բնական օրէնք և կարգ բնութեան, ոչ միայն պատուիրեն զի արարածք Արարչին իւրեանց վասն իրաւանց և արդարութեան իւրոյ ի վերայ իւրեանց կատարեսցեն զպարտս և զպաշտամունս, այն է զյարգ և զպատիւն պարտուպատշաճ մատուսցեն Արարչին. այլ և նոյն օրէնքդ և իրաւունք պարտաւորեն զմարդ, զի իւրաքանչիւրն անձին իւրում զպարտս կատարեսցէ, քանզի մարդս վասն Աստուծոյ արարաւ, ամէն իրի անմահութեամբ զարդարեալ է հոգին և ազատութեամբ և միօք՝ որովք ըստ կարգի բնութեան գործեալ են և ի վերայ այդր կարգի բընութեան ընթացեալ անայլթաք անստերիւր ժամանէր այդմ վախճանի. արդ՝ որ ընթանայ ըստ կարգի և օրինացն բնութեան՝ հարկաւ կատարելութեամբ հոգւոյն լըցցի, զի ամենայն կատարելութիւնք են ի գործողութեանցըն այնոցիկ, որք լինին և կատարին ի հոգւոյն ըստ պատուիրանաց բնական օրինացն և ըստ կարգի բնութեան։ Դնելով Աստուծոյ ուրեմն ի կարգի բնութեան, և հաստատելով վախճան զինքն այսմիկ կարգի բնութեան, հարկաւորապէս առանց հետևի թէ իւրաքանչիւրոց բնութեան եդ զկարողութիւն և զիրաւունս պահանջելոյ յանձնէ ըզգործողութիւնս զայնոսիկ՝ որք պահեն անխախտ զայս կարգ և զանձն ունին յայս կարգ բնութեան։ Իսկ արդ գործողութիւնքդ՝ որք ունին զմարդն ի կարգի բնութեան և ըստ օրինաց բնութեան՝ ամենեքին են կատարելութիւնք, և տան ժամանել զհոգի մինչև ցվախճանն այսր կարգի։ Ուրեմն իւրաքանչիւր ոք ունի իրաւունս ի բնութենէ անտի պահանջելոյ զկատարելութիւնս իւրոյ հոգւոյն։ Ուրեմն պարտք են ծանունք ի վերայ իւրաքանչիւր անձին, զի զազատս իւրոյ ընտրութեան՝ զամենայն մարդկային գործողութիւնս կարգեսցէ և համաձայնեսցէ կարգի և օրինաց բնութեան և հետևաբար կատարելութեան և բարութեան հոգւոյն։ Կարգել զգործս ի բարութիւն այլոց, է կամիլ նմա ըզբարութիւն, այն է սիրել զնա. ուրեմն սիրել զանձն պարտք են իւրաքանչիւրոցն սուրբք և օրինաւորք, բայց չեն պարտք մարդկային բնութեան, թէ նախ չիցեն օրէնք և իրաւունք պահանջելոյ զայդպիսի պարտս «սիրեա զանձն քո ըստ կարգի բնութեան». ուրեմն է ձայն բնութեան, ո-

(*) Յաղագս քաղաքին Աստուծոյ Գիրք Ը. Գլ. Բ.

րում պատասխանէ և միւսն՝ պարտէ հնազանդիլ իրաւանց բնութեան ։ Բայց գիտելի է թէ բնութիւն մարդկային յերկուց բաղկանայ էականապէս ի հոգւոյ և ի մարմնոյ, որպէս իրաւունս տայ բնութիւն սիրելոյ և կատարելագործելոյ զանձն ի հոգեկան բարիս, նոյն իրաւամբ կարեմք տալ զմարմնոյ բարութեանց. զի թէ՛ հոգւոյն՝ և թէ՛ մարմնոյն եդ բնութիւնն իրաւունս պահանջելոյ յանձանց իւրեանց զպահպանութիւն բարեացն իւրեանց, թէպէտև ըստ տեսակին հոգւոյն բարութիւնք գերագոյնք և առաջինք լիցին քան զմարմնոյն ։ Բարութեանցըս այսոցիկ յափշտակիչք և վնասակարք կարեմք լինել ոչ մեք միայն, այլ և այլք ոմանք բարուք և վարուք անկարգք, ուստի բնութիւնն տայ իրաւունս ոչ միայն սիրելոյ զանձն, այլ և զկարգաւորութիւն արժանաւոր և օրինաւոր եղանակաւ ի բաց վարելոյ զայլս և վնասել անգամ այլոց ։ Ուստի յերիս առաջարկութիւնս տրոհեմք զներկայ յօդուածդ. Նախ՝ զպարտուց և զպաշտամանց իւրաքանչիւր ուրուք կատարելագործելոյ զանձն՝ ըստ մասին բարութեանց հոգւոյն ։ Երկրորդ՝ զպարտուց պահելոյ և կատարելագործելոյ զանձն ըստ մասին բարութեանց մարմնոյ ։ Երրորդ՝ զիրաւանց պաշտպանելոյ զանձն յանիրաւի յարձակմանց մարդկան ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

Պարտ է պահել և կատարելագործել զանձն՝ ըստ մասին բարութեան հոգւոյ ։

ՆԽԲ. Պարտք պահելոյ կամ կատարելագործելոյ զբարութիւնս հոգւոյ կայանայ ի կատարելութիւն մտաց և կամաց մարդոյ գլխաւորապէս ։ Կատարելութիւն մտաց է յուղիղ սկզբունս ճշմարտութեանց, իրաց, սկզբանց, և օրինացն, և կամ յստացումն ծանօթութեանց ճշմարտի և բարւոյ. քանզի միտք ըստ որում ճանաչեն՝ այնպէս առաջարկեն կամաց զառարկայս ։ Առ ի անսխալ ընթանալ իդատողութիւնս իւր և ի մարդկային գործողութիւնս



պարտի մարդն մեծապէս աշխատ լինել և ընդ երկար ժամանակս և հարցմամբ զմիտս իմաստուն և խոհեմագոյն արանց, և այնպէս գտանել զճշմարտութիւնս իրացըն. և հարկ մեծ ի վերայ կայ մարդոյ նախ առարկայից այնոցիկ ճշմարտութեան ի քննին մտանել և հետազօտել և զգիտութիւն ստանալ անտի, որք մեծապէս հարկաւորք են ստացման գերագոյն վախճանին, այն է, զգոյութենէ գերագոյն էակին՝ զմիութենէ նորա և զբընութենէ նորա, զգիտութենէ, զկարգաւորութենէ, զնախախնամութենէ, և զբարութենէ, և զարդարութենէ, ենյորոց ի ծանօթութենէ բղխին ի մեզ ներգործութիւնք յուսոյ, սիրոյ, հաւատոյ, Աստուածային երկիւղին, և պարտուց և պաշտամանց արարած բնութեանս առ Արարիչն ամենեցուն ։ Դարձեալ՝ զուն գործել և վաստակել յստացումն ծանօթութեան հոգւոյս, բնութեան նորա, անմահութեան նորա, ազատութեան նորա, և ուղիղ սկզբանց մտացս, և կիրառութեան քաջ տրամաբանութեանն, ազդեցութեանց ուղիղ խղճի մտացս՝ յորոց կախին ուղղութիւն վարուցս, առաքինութիւնք հոգւոյս. քանզի ըստ լուսաւորութեան կամ ազդեցութեան մտացս՝ կամք շարժին և փափաքին առ բաղումս ։ Բայց զայդ այնպէս իմանալ պարտ է որքան ներէն մեզ մարդկային տկարութիւն և կենցաղոյս պարագայք և վիճակ և թէութիւնք կենացս, քանզի ոչ ամենեքին կարեն ի մի և նոյն աստիճան գիտութեանց ժամանել, և ոչ ամենեցուն ներքին կազմուածք բնականք ի մի և նոյն աստիճան գիտութեան հասանել, և ի մի և նոյն չափ ժամանակի այդց գիտութեանց պարապիլ, այլ միայն զհարկաւոր գիտութենէ և զծանօթութենէ սակս, և զոնէ ըստ բանի և ազդարարութեան ուրուք, մերձեցելոցն առ Աստուած պարտէ՝ զի գիտասցեն թէ Աստուած է և՛ ամենեցուն ըստ գործս վարձահատոյց և՛ արդարութեան դատաւոր ։

ՆԽԳ. Նկատմամբ կատարելութեան կամաց պարտի մարդ ըստ ուղիղ ազդմանց և լուսոյ խղճի մտաց՝ անսալ գերագոյն առաջնորդի կամաց, այսինքն մտացն. քանզի

Աստուծոյ շնորհեալ է մեզ յուղիղ բնութիւն բարեացն ի չարեաց, ուստի պարտին կամքն ընտրել զբարին և խորշիլ ի չարէս, ընտրել զբարին, որ այնպէս է և ոչ միայն զկերպարանս ունիցի բարւոյն, այլ բարի ըստ ամենայն պարագայից. այն է ըստ առարկային՝ յորմէ տեսակաւորին մարդկային գործողութիւնք, բարի ըստ պարագայից և բարի ըստ վախճանին։ Քանզի բարի կոչի այն ամենայն որ յարմարի կարգի բնութեան և վախճանին, և ըստ կարգի բնութեան՝ որ գերագոյն է ի բարիսդ՝ նախադասել պարտի նուաստից. քանզի են բարիք՝ որք սիրին. վասն զի յարմարին առարկայից, կարգի և բնութեան, և հետեւաբար վերջին վախճանին մարդոյ. են բարիք՝ որք չունին զյարաբերութիւն անմիջապէս ընդ այս վերջին վախճան և երջանկութիւն մարդոյ, այլ անմիջապէս. զորօրինակ՝ սիրեմք զկեանս վասն առաքինութեանց ստացման, և սիրին առաքինութիւնք՝ զի ունին յարաբերութիւնս անմիջապէս ընդ գերագոյն վախճանի մարդոյ և յաւիտենական երջանկութեան։ Նա՛ յաւէտ՛ են ի մարդն բարիք հոգեղէնք և ազնուագոյնք մտաց և բանին որք և կոչին վերին մասն մարդոյ, և են բարիք ըստորին մասին մարդոյ, այն է զգայական բարիք. նոքա առաւել են քան զոսա, որպէս հոգին քան զմարմինն, և խնդրին զգայական բարիք վասն հոգեւոր բարեաց, մերթ հոգեւոր բարիքն վասն յաւիտենական երջանկութեան։ Որքան ուրեմն անմտութիւն է կամաց նախադասել զստորին բարիս մարմնոյ՝ վերին հոգեղինացն այնոցիկ. քանզի վախճան զգայական մասին բարութեան կեանք մեր են սոսկ՝ մերթ հոգեղինայն են յաւիտենական կեանքըն։ Մի միայն ի մարմնի հոգին բանական և միջնորդութեամբ մարմնոյն կարէ զարգիւնս ստանալ. ստացողն ոչ մարմինն է այլ բանական բնութիւնն, կամ հոգին. ուստի գործիք միայն առաքինութեանց են անդամքս, և այդևեթ է ընծայելն ըստ ազդեցութեան ուղիղ մտացն, ոչ թէ նոքին ստացողքն են՝ կամ որք յօրինեն զպտուղս առաքինութեանց։ Ուստի կամք և կամացն բարութիւնք և



կատարելագործութիւնք ստացմանն՝ ևեթ ամենայն գործողութիւնք համաձայն գոլին կարգի բնութեան և ունիցին զյարաբերութիւն ընդ վերջին վախճանի մարդոյ՝ Գտանի մարդ ի բնութեան, և հաստատնէ զպարտաւորական պաշտօն անձին իւրում։ Սիրոյ արդարութեամբ առաքինութիւնն, սիրէ զանձն ըստ բնութեանն օրինաց և կարգի բնութեան, և ոչ առաւել քան զկարգ բնութեան, որ է առաքինութիւն ժուժկալութիւն. արիութեամբ անարգէ զուժգին ստիպմունս ստորին մասին, զորս վերնոյն հնազանդ առնէ, որ է առաքինութիւն արիութիւն. Հուսկ ուրեմն որ ըստ կարգի բնութեան սիրէ զանձն, և զկամս և զազատութիւն այնպէս ընդ մէջ բարեացն և չարեաց կացեալ զբարին ընտրէ անշփոթ, և անվեհեր զերկամտէ ի գերագոյն վախճանն՝ կոչի իմաստութիւն. որք են բնական առաքինութիւնք կամաց մարդկան և բարիք բնութեան։ Զառաքինութիւնս զայսոսիկ ի կիր առնելոյ կամաց պարտք են ծանունք ի վերայ մարդոյ յամենայն արարս և ի գործողութիւնս մեր, զորս զամենեսին ի փառս միոյն Աստուծոյ կարգել պարտիմք, որք մի միայն իբրեւ զարծիւ թեւս տուեալ բանական բնութեան, ըստանալ տան նմա զերջանկութիւն ճշմարիտ և զմշտնջենաւոր։ Իսկ ընդ հակառակն ևեթ զստորին բարիս գերադասնիցեն վերադասիցեմք՝ առաւելոյ կարգի ստանդութեամբ և ի մոլար շաւիղս գնացեալ չափ զմեզ մուծանեմք, և յանկարգութեան կեամք, և անկարգ և զուրկ ի բարեմասնութեանց բնութեան լինիցիմք. և անկարգք գոլով՝ ընդդէմ օրինաց գործել հարկադրիցիմք, ոչ միայն անօրէնք լիցուք՝ այլև օրինազանց. բայց անտի ծագեսցին տղա թշուառութիւնք հոգւոյս զրկեալ և արտաքսեալ ի կարգէն և ի վախճանէն բնութեան, դատապարտիմք՝ ուր յաւիտենական տանջանք և անողորմ կեանք։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

Պարտ է դնել և յառաջադրել ընդ՝ սոյն հիմն բարոյականութեան օրինաց։

Նիւթ. Բաժին. Բարոյականութեան օրինաց՝ ամփոփէն իմանան

զինչս և զստացուածս, զորս յանձն [illegible] արժան է կոչել՝ զորոց ասա. բուն խնամս մարմնոյ բարութեան է կեանք մարդոյ, զօրութիւն նորա, առողջութիւն նորա, են, են: Եւ մեծագոյնն ստոր բարեաց կեանք մարդոյ կոչի. որպէս ի բնութենէ շնորհեալ են իրաւունք բանական հոգւոյս՝ և իրաւանցն պարտ և պաշտօն հաստատման ի վերայ ամենայն անձանց, որոց կամք իցեն անսալ ձայնի և օրինաց բնութեան. նոյնպէս յԱստուածուստ կամ ի բնութենէ շնորհեալ են իրաւունք մարդկային բովանդակ բնութեան. և զայդ կամին Աստուածային խնամութեամբն հաստատեալ կարգ բնութեան իրացն: Զօրութեամբ այսր իրաւանց և կարգի բնութեան պարտիմք բաղումս ի կատարելութիւն և ի պահպանութիւն կենացս և մարմնոյս: Քանզի փախճանն մարդոյ յերկիր աստ որ է [illegible] առացեալ լինի երկոցունցն ի միասին համաձայնութեամբ, քանզի ո՛չ հոգին զատեալ ի մարմնոյ [illegible] է և ո՛չ մարմինն ի հոգւոյ [illegible] է. այլ [illegible] կոչի [illegible]. ուստի պարտիմք բաղումս և՛ պահպանութեան և՛ առողջութեան կենացս, և որքան զօրեմք՝ բաւական միջնորդութեամբ պարտիմք փախչել ի տկարութիւն կամ յարատեւութիւն իւր. քանզի մի միայն թէութիւն զառաքինութիւնս սանձելոյ յասոր կեանս և հետեւաբար յաւիտենական երջանկութեան ժամանելոյ՝ է լինելն ի կեանս. դադարեալ կենացն՝ դադարեսցին հարկաւ և առաքինութիւնք: Ուստի պարտք ի վերայ մեր կան ծանունք աշխատելոյ՝ զի առաքինութեամբ ստացուք զգերագոյն փախճանն մեր, պարտիմք յամենայն զօրութենէ անձինս խնամ տանել, զի միջնորդաւ այդքան գերագոյն, գերագոյն կենաց, կեցցէ, ո՛չ դադարեսցի կամօքն, ո՛չ ընկճեսցի՝ քան զարժան չափն: Քանզի բաղումք ի շնորհս և ի սէր հոգւոյն բարեաց, նուաղել մարմնոյն ազգի ազգի զրկողութեամբ՝ ճաշակելեացն, զբօսանացն. զուարճութեանցն, խորին մտածութեամբ զԱստուածային բնութեան կատարելութեանց, զխորհրդոց, որք սաստիկ հակառակ են մարմնոյն հանճա-



ցից: բայց այդքան ի կարգէ և յօրինաց բնութեան շնորհեալ է:

ՆԺԵ. Սակայն թշուառութիւն և անզգութիւն զարմանք է՝ զի յայժմեան ժամանակի են բաղումք ո՛չ ի սէր գերագոյն իմն հոգւոյն բարութեան. այլ յետին անհաւատութեան կամ շիջման բնական լուսոյ ի նոսա, զի ազատեսցին ի կենացն անձկութեան և տառապանաց սմանց, մեղկք և փոքրոգիք՝ զանձինս բռնի զրաւեն ի կենաց, այսպիսի գործողութեանց տամք զանուն [illegible], գործողութիւն յիրաւի անաստուածոյ և յանձն անգութ ընդդէմ բնական օրինաց՝ և կարգի բնութեան, ընդդէմ իրաւանց Աստուծոյ, անձին՝ և հասարակութեան, զոր այսպէս ցուցանեմք: Նախ՝ է անհնազանդութիւն ընդդէմ Աստուածային իրաւանց, քանզի նա միայն ունի զգերագոյն իշխանութիւն ի վերայ գոյութեան մարդոյ, և որ ոք բառնայ զայս առարկայ իշխանութեան իւրոյ, ընդդէմ կայ Աստուածային իրաւանց և իշխանութեան, բառնալով և յափշտակելով զնիւթ իշխանութեան իւրոյ. երկրորդ՝ Աստուած միայն է բացարձակ տէր և իշխան գոյութեան մարդոյ, և ո՛չ մարդ. քանզի չետուն նմա զայդ կարողութիւն ո՛չ Աստուած և ո՛չ բնական օրէնք և կարգ ի վերայ մարմնոյն, այլ ետուն նմա զգործածութիւն կամ զկիրառութիւն մարմնոյն, իբրեւ միջնորդ բաւական բարոյական փախճանի մարդոյ, որ բռնութեամբ առ դոյզն երկիւղի տայ անձին իւրում զմահ ճաշակել, այնպիսին ո՛չ ըստ կարգի՝ և օրինաւորապէս ի կիր առնու զկարողութիւն իւր, այլ չարաչար զայդ խանգարելով և քան զկարողութիւն զանցանելով՝ մնայ է Աստուածային իրաւանց՝ և արդարութեան, յափշտակելով զայլոց իրաւունս, կամ ինքեան սեփականելով զայն, որ իւր չեն. քանզի Տէր կեցուցանէ, և Տէր մեռուցանէ. իջուցանէ ի դժոխս՝ և հանէ: Ասոր հետեւի, դարձեալ ընդդէմ Աստուածային նախախնամութեան և պահպանութեան ելանէ անձնասպանն. քանզի սահմանող իրացն Աստուած է, և պահպանողն Աստուած, և նախախնամո-

զմն ինքն . նա կամեցաւ և որոշեաց ցայդ վայր ընթանալ, զայսքան ժամանակ կալ , և այսպիսի զօրութեամբ և զօ-յացութեամբ կալ · որով իրաւամբ զայդ առնել մարդ յանդգնիցի , ոչ ևիք , եթէ ոչ անիրաւութեամբ և անըզգամութեամբ ։ Քանզի ասաց Կիկերոն . « գերագոյն քան զԱստուած չիք այլ ինչ , ինմանէ ուրեմն վարիլ պարտ է տիեզերացն , և զինչ է նախախնամութիւն Աստուածային՝ եթէ ոչ կարգադրութիւն իրաց առ պարտուպատշաճ վախճանն՝ բաւական միջոցիւք վախճանին այդմիկ ժամանելոյ » . ոչ ապաքէն նախատինս մեծամեծս դնէր մարդ Աստուծոյ իմաստութեան և նախախնամութեան իւրոյն չնչին մտօք և կամօք ։ Երկրորդ՝ այդ եղեռնդ անձնասպանութիւն՝ է ընդդէմ իրաւանց անձին, և անգթութիւն ընդդէմ իւր . քանզի բարութիւն կենաց կամ կեանքս՝ ձծ և այլոյն [illegible] է . և հիմն ամենայն առաքինութեանց՝ և ամենայն բարեաց, բարոյականացն և ֆիզիգականաց . քանզի մի միայն ի կեանըս սոսամբ զարդիւնաւոր գործողութիւնս և յօրինեմք վասն անտի կենաց զպսակս վարձուցս անթառամելիս , որովք և ժամանեմք տիրապէս յաւիտենական երջանկութեան, արդ ի սէր և ի շնորհս այդքան բարեաց փափագեմք երկար կենացս, և որքան ընդ երկար կեամք՝ պարտիմք մեծագոյն բարեաց ստացողք լինել՝ և փառաւորագոյն պսակաց ակնկալուք ։ Արդ որ բռնութեամբ ընդդէմ անձին յԱստուածուստ ինքեան շնորհեալ իրաւանց ելանէ՝ և բառնայ զայս կեանս , զառիթն և զհիմն ամենայն բարեացն , ոչ ապաքէն անձնատեաց դատի և անգութ և անողորմ ընդդէմ անձինն . ապաքէն ընդդէմ բնութեան ապստամբ զանձն հռչակէ, և անկարգ համարի յամենեցուն ։ Զի եթէ անկարգութիւն է վնասել այլոցն իրաւանց և պաշտամանց, մեծագոյն անկարգութիւն է վնասել անձին իւրում , որում ի կարգի բարութեան պարտի նախ բարիս գործել, և ապա այլոցն իբր նման այլոցն ըստ հռչակեալ առածին , բարութիւն առաջին լիցի նախ անձին։ Ուրեմն ընդդէմ պարտուց և պաշտամանց



և իրաւանց անձին է՝ զրկել զանձն բռնութեամբ ի կենացըն մեծագոյն բարւոյն . եւ քանզի ստեղծեալ է մարդն յԱստուծոյ վասն երջանկութեան , ուրեմն վնասելով իրաւանց անձինն վնասին և նորա իրաւունքն Աստուածային ։ Երրորդ՝ անձնասպանութեան եղեռն է ընդդէմ իրաւանց մարդկային ընկերութեան կամ հասարակութեան . քանզի հասարակութիւնն է բովանդակութիւն անհատից , եթէ ամենայն անհատից արժան չէ, և ոչ ամենայն հասարակութեան . բայց ի կարգէ բնութեան՝ ըստ որում մարդս ի բնութենէ է ընկերական , շնորհեալ են իրաւունք բովանդակ հասարակութեան՝ զի անթերի և ամբողջ պահիցի . ապա թէ ոչ չժամանէր իւրումն սեփական վախճանին , այն է ընդհանուր բարութեան և վերջաւոր յաւիտենական երջանկութեան ։ Ահա՛ սորին վասն է՝ զի ոչ է արժան անձնասպանութիւն ի մարդն՝ ըստ որում մասն և անդամ այսր հասարակութեան . քանզի վնասէ ամբողջութեան բարոյական միութեան , զօրօրինակ վշտացեալ ձեռացն՝ վշտանան և ընդ նմա ամենայն անդամքն , նոյնպէս իրաւունք հասարակութեան առ սա լինին պակասութեամբ ընդդէմ բնութեան միոյ մասին հասարակութեան , և զօրօրինակ իւրաքանչիւր ոք վասն բարոյական և արդիւնաւոր գործողութեանցն իրաւունս ունի վարձս հատուցման պահանջելոյ՝ թէ՛ իւրաքանչիւր մասանէ և յանհատէն հասարակութեան , և թէ՛ ի գլխաւորէն բովանդակ հասարակութեան , նոյն օրինակ՝ որ անձինն վնասէ մահուամբ կամ այլով իւիք , մահու չափ վնասէ իրաւանցն և ամենայն և իւրաքանչիւր անհատից հասարակութեան և բովանդակ հասարակութեան հաւաքմամբ առեալ . զի իւրաքանչիւր ոք պարտս ունի ծանունս հասարակութեան՝ քանզի յիւրաքանչիւր անհատիցն պարտուց ծագին ընդհանուր պարտք և պաշտամունք առ հասարակութիւն . զորս ամենեւին ի ձեռս բերեալ՝ երջանկապէս կեայ և հասարակութիւն , և ժամանէ [illegible] վախճանին ։ Թէպէտ և պակասութեամբ պաշտամանց անհատից ումանց ոչ վնասի իսպառ և ընդհանուր հասարա-

կութեան բարութիւն, բայց միշտ ճշմարիտ է թէ հասարակութիւն, որ է բարոյական անձն կամ անձնաւորութիւն իմն, ոչ պահի յամբողջութեան իւրում ։ Ցուցել եմ՝ զի անձնասպանութեամբ իւրաքանչիւրն այլոց անդամ անդամոց և մասանց հասարակութեան օրինակ կայ չարութեան, որև տարածել կարէր ի բովանդակն հասարակութեան, և կործանել կարէ զամենայն բարութիւն և ըզջինուած ։

ԼՈՒԾԱՆԻՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Նախ. Առարկեն ։ Ա. Կամեցողին և հաւանողին լինի անիրաւութիւն և ոչինչ. ուրեմն իւրաքանչիւր ոք կարէ զրկել զանձն ի բարութենէ կենաց ։ Բ. Անձնասպանութիւն ոչ է պատուիրան բացասական օրինաց՝ այլ ստացական՝ որ ոչ միշտ և հանապազ պարտաւորէ զհպատակս ։ Գ. Վասն կենցաղոյս և անցաւոր բարւոյն չէ պարտ յետադասել հոգևոր և յաւիտենական բարւոյն, զորօրինակ համեստութեան, կուսութեան, ողջախոհութեան ևն։

Պա. Առ. Ա. Զանազանեմ զասացեալդ, կամեցողին զընդ իշխանութեամբ իւրով եղեալսն և ընդ իւրն հաւանողին՝ ընդունիմ. կամեցողին ընդդէմ իրաւանցայլոց՝ զայլոցն՝ ուրանամ. և ուրացեալ զհետևութիւնդ՝ ասեմ. իշխանութիւն սպանանելոյ զանձն կամ լուծանելոյ զմարմնոյ կապս գոյականս ի հոգւոյ ոչ է երբէք շնորհեալ մարդոյ, այլ միայն կիրառութիւն մարմնոյ յատացումն առաքինութեանց, և սպանողն և կեցուցանողն Աստուած է և ոչ մարդ ։

Առ. Բ. Ասեմ ուրանալով զեզրակացութիւնդ, քանզի՝ որպէս ծանուցաք ընդ Սուարէզի՝ ամենայն ստացական պատուիրանն օրինաց պարփակէ յինքեան և ըզբացասականն. քանզի զորօրինակ ի պատուիրանի «սիրեա զԱստուած» պարփակի՝ չէ՝ պարտ ընդդէմ կալ այնց որ սիրեն զԱստուած, նոյնօրինակ՝ ոչ երբէք արժան է և ոչ վայրկեան մի ժամանակի ատել զԱստուած ։



Առ. Գ. Ասեմ. յետադասել զհոգևոր բարին անցաւորին որ է կենացս բարութիւն՝ չէ արժան. բայց մերթ վասն բնական համեստութեան, կուսութեան, և առ ի չկորուսանել զպատիւ անգին առաքինութիւնս հոգւոյ՝ ի վտանգ արկանեմք երբեմն զկեանս մեր կամ վիրաւորեմք զմեզ կամ ևս կամօք զմահ ճաշակեմք, այդ չէ արգելեալ ի բնական օրինաց և իրաւանց. քանզի բնական օրէնք և իրաւունք անձին սիրոյ և իրաւանց՝ չտարածին ցայդ վայր (ՅՂԵ. ՅՂԶ). զի հրամայեն սիրել զանձն ըստ կարգի բնութեան, այդ բնութիւն աւէ յերկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի. և որն յերկուց փոքրագոյնն է, կորուսանել զանցաւոր կեանս, թէ զհոգևորն կեանս՝ որ յաւիտենական է. բայց զորօրինակ և կորուսանել ըզկուսութիւն նիւթականապէս և բռնի յայլոյն, ոչ է կորուսանել զհոգևոր բարութիւն՝ այն է զառաքինութիւն կուսութեան, քանզի յանցանք ի կամացն կերպաւորական հաւանութենէ անտի է, ոչ թէ յորժամ բռնութեամբ թոյլ տամք կուսութեանն նիւթական կորստեան. Նոյնպէս վասն ճշմարտութեան յաւէտ պարտիմք հաւանել ընդբառնալ կենացս նիւթականապէս քան թէ ընդ ուրանալըն զճշմարտութեան ։ Արդ յորժամ ի սէր առաքինութեան՝ մերթ սուրբ ի մերձաւոր վտանգի կան, և բարոյապէս հաւաստի եմք հաւանել ընդ այն՝ գտեալ յայդպիսի պարագայս, յորժամ ասեմ, ի սէր առաքինութեանց և ճշմարտութեան և հոգևոր և յաւիտենական կենաց յաւէտ զմահ տամք ճաշակել անձանց, կամ յաւէտ թոյլ տամք այնմ, այդ առաքինութիւն է՝ և ոչ յանցանք անձնասպանութեան. և արդէն պատուիրեն մեզ բնական և աստուածային օրէնք, գործել և զհետ լինել առաքինութեանց՝ ի սէր երջանկութեան անձին. ուրեմն ոչ գործեմք յայնժամ զանձնասպանութիւն, այլ կատարեմք զառաքինութեան և գերազանց կամ գիւցազնական առաքինութեան զգործս ։ Այսպէս գիտելով չափ իմաց մատնեն հզօրք զանձինս ի ճակատ պատերազմի վասն հայրենեացն իրաւանց. այսպէս վասն յաւիտենական փրկու-

թեան ընկերին մերձաւորի՝ յանձն առնուն բազումք մեռանիլ. որպէս ի ժամանակին՝ պաշտօն և սպաս մատուցանեն ախտացելոցն վտանգիւ կենացն՝ են։ Այսորիկ չեն արգելեալ ի բնական օրինաց, այլ անձնասպանութիւնն՝ ըստ որում ընդդէմ օրինաց և մեղք են, ոչ թէ յայսոսիկ դիպողութիւնս՝ որք դիւցազանց են սեփական գործք և առաքինութիւնք։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Գ.

Պարտ է դարձուցանել զանձն յանկարծ ամենեցուն հարցման։

ՆԺԷ. Բնական օրէնք՝ որպէս հրամայեն զանձն սիրել թէ՛ ըստ հոգւոյն բարութեանց, և թէ՛ ըստ մարմնոյ բարութեանց. տան եւ կարողութիւն և իրաւունս իւրաքանչիւրոյն՝ զի կատարեալ զպարտս և զպաշտամունս առանձինս իւրեանց՝ ի բաց բարձցեն զամենայն արգելս և զառիթս որք ուղղապէս վնասեն անձին։ Արդ իւրաքանչիւր ոք կարէ բառնալ ի բաց կամ եղծանել զայն ամենայն առիթս՝ որք ընդդէմ եղանեն յանիրաւի բարութեան կենացս կամ զայնոսիկ որք յանիրաւի յարձակեալ ի վերայ մեր՝ դիտեն բառնալ ի մէնջ զկեանս. բայց եղանակաւորեալ լինելոյ՝ և վասն պաշտպանութեան անձին։ Գիտել պարտ է՝ ի պաշտպանութեան անձին առ ի արդարութեամբ զօրութեանն՝ զօրութեամբ կամ բռնութեամբ հակառակ կալ, թէութիւնք պահանջին։ Նախ՝ զի չիցէ ընդդիմութիւն այլով վախճանաւ, այլ վասն պաշտպանութեան անձին և եթ, ոչ վասն հակառակութեան, ոչ վրէժխնդրութեան են։ Երկրորդ՝ ընդդիմութիւն զինուք կամ այլով իւիք ի կիր արկցի միմիայն ի ժամ անիրաւ յարձակմանն թշնամւոյն և ոչ յառաջ քան զպիտոյն այդըր ընդդիմութեան։ Երրորդ՝ զի ընդդիմութիւնդ լիցի այդքան, որքան բաւական է բառնալ զզօրութիւն կամ զբռնութիւն. զորօրինակ հասանել զձեռն չէ պարտ՝ զի հասցես զոտս կամ զգլուխն անգամ սոսկից. զի բառ-



նին ամենայն զօրութիւնք նորա հասանել կամ վնասել ձեռացն։ Ի ցոյց ճշմարտութեան առաջարկութեանս այնոքին են փաստք՝ զոր վասն կենացն պահպանութեան յառաջ բերաք. զի բնութիւն տուեալ է իրաւունս խափանելոյ զամենայն արգելս և զառիթս վնասակարս պահպանութեան կամ ամբողջութեան կենաց, որ է մեծագոյն բնական՝ քան զայլ բնական բարիս։

ՆԺԸ. Սակայն՝ որպէս ասացաք, ի սէրն յաւիտենական կենաց թշնամւոյն, զի մի յանիրաւութեան անդ իւրում մեռեալ՝ յաւիտենական մահուամբ դատապարտեսցի, կարէ թող տալ՝ զի զինքն սպանցէ թշնամին. կարէ թող տալ ասեմ՝ բայց ոչ պարտաւորի յիրաւանց, որպէս և ոչ անգամ պարտաւորեն կամ պատուիրեն բնական օրէնք և իրաւունք զի սպանցէ զանիրաւ յարձակողն, այլ թող տալ այդպիսի գործողութեան։ Ուստի որ յանձն առնու յաւէտ սպանանիլ ի թշնամւոյն՝ քան սպանանել զնա՝ վասն հոգեւոր և անանց կենաց երջանկութեան, դիւցազնական առաքինութեանց տացող լինի. միայն թէ ինքն խղճիւ մտացն անպատրաստ իցէ զիւր փրկութենէ, և այդ մաքրութեամբ հոգւոյն ի ծանր մեղաց. ապա թէ ոչ՝ անգթութիւն մեծ էր դատապարտել զանձն ի սէր այլոցն, որ չէ կարգադրեալ սէր, այլ միայն կարէ ոք սիրել զընկերն իբրև զանձն, և ոչ աւելի քան զանձն։ Բայց որպէս ասացաք ոչ ամենայն ոք պարտաւորի առ դիւցազանց առաքինութիւնս, այլ իւրաքանչիւրն պահանջէ զիրաւունս իւրոյ հոգւոյն և կենաց և բարութեանց։ Բայց՝

ՆԺԹ. Բազումք չարաչար մեկնելով զայդ՝ համարձակին մի միայն ի ջնջել զգիր նախատանաց կամ անպատուութեան, զոր այլ ոք արարեալ իցէ նոցա, համարձակին ասեմք եղանել ի մենամարտութիւն։ Սակայն ամենեւին ընդդէմ բնութեան օրինաց՝ իրաւանց՝ և կարգի. քանզի վասն պատւոյն բարութեան կորուսանել զմեծագոյն բարին՝ այն է զկենաց, է ի շնորհս փոքրագոյն և նուաստագոյն բարւոյ կորուսանել զմեծագոյն և զազ-

նուազոյն բարին, որ ոչ միայն է ընդդէմ իրաւանց և ուղիղ սկզբանց մտացն, այլև ընդդէմ կարգի բնութեան։ Սակայն գիտել պարտ է՝ թէ ո՛չ ամենայն մենամարտութիւն արգելու ի բնական օրինաց, այլ այն որ լինի առանձինն իշխանութեամբ, ոչ իշխանութեամբ հասարակաց, զայդ հրամայողաց, քանզի հասարակութիւն կամ տէրութիւն ունի զիշխանութիւն, զի մի բազմաց արիւն հեղցին՝ յաւէտ ի մենամարտութիւն հաճին։ Բայց պարտաւելի մենամարտութիւն այն է որ լինի յառանձինն անհատից կամաց և հաճոյից, որ սահմանի «Երկուց կամ բազմաց մարտ առանձինն դաշնաւոր և առանձինն իշխանութեամբ, ընդդէմ յառաջագոյն պայմանաց, նոյն և զատաստանին, տեղւոյն և ժամանակին յորում մենամարտիցեն»։ Զոր առեմք ընդդէմ ուղիղ սկզբանց մտացն, անիրաւ ամենեւին և անօգուտ նպատակին։ Նախ՝ ընդդէմ ուղիղ սկզբանց մտաց է ի մեծ վտանգ արկանել զմեծ բարութիւն իմն առ ի ստանալ ըզփոքրագոյն. զի առաջինն բարութիւն բնական և մեծագոյն են կեանք մարդոյ։ Երկրորդ՝ ընդդէմ է իրաւանց. քանզի միմիայն իշխանաց կամ թագաւորաց հասարակութեան շնորհեալ են յԱստուածուստ իրաւունք ընդ պատուհասի մահու կամ կտտանաց արկանել զմնասողս այլոց իրաւանց։ Ուրեմն որ զայդ պաշտօն իւրեան սեփականէ յայտնապէս յափշտակէ զոր չէ իւրն։ Երրորդ՝ անօգուտ է այդ նպատակին, քանզի իմաստնոյն և արիագոյն արանց է թողուլ և ներել անիրաւութեանց այլոց, ո՛չ թէ առ ի ձեռս բերել զպարկեշտի իմն բարութիւն ի տարակոյս ձգել և ի մեծ վտանգ զբարութիւն զոր աներկբայ և արգեամբ ի ձեռս բերեալ են, յորում և վայելեն։ Դարձեալ իմաստնոյն է կարգել զմիջոցս ի ծառայութիւն վախճանին, ո՛չ թէ զվախճանն ի ծառայութիւն գործեաց կամ միջոցաց. արդ պատիւն փափաքելի է վասն հանգստութեան և երջանկութեան կենացս յայսմ աշխարհի, ո՛չ թէ կեանք պահանջին վասն պատուոյն, և զայս առեմ եդեալ և ոչ ընկալեալ՝ թէ սպանանելով վասն նախատանաց անձինն զայլ՝ ստանայ ոք զպատիւ, քանզի այնու



գործողութեամբն զոր ինչ ստանայցէ ոք յանիրաւի ստանայ, և ստացեալն և ստացողն առ հասարակ զարմելի. զի՛նչ պատիւ վասն նախատանացն բառնալ զկեանս այլոց ուրուք, զի՛նչ փառք՝ և պատիւ իցեն ձգել զբարութիւն կենաց զաճաւիժարար ի վտանգ խայտա զրաւելոյ ի կենաց. գործողութիւն ո՛չ մարդկային՝ այլ յաւէտ գազանային. գործողութիւն ո՛չ իմաստնոյ՝ այլ յանդգնոյն և անխոհեմ վիճակի և թէութեան յանձնեալ զարուն՝ որ իբրեւ ի կատարն հասեալ մարդկային գիտութեան և կըրթութեան և գիտութեանց դարու զանձն. և երանի՛ թէ խաւարն հեթանոսաց յայսմ մասին մեզ վիճակէր՝ քան թէ ի լոյսն անօրէնութեան ընթանայաք, նոքա հեթանոսք ծանեան խաւար տգիտութեամբ զգործս բնութեան օրինաց, և մեք լուսով ծանեաք զայս ռամկական պատերազմն զոլով պատուիրան բնական օրինաց. գիտ զովելի և զարմացման արժանի . . . ։

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ՅԱՂԱԳՍ ՊԱՐՏՈՒՑ ԵՒ ՊԱՇՏԱՄԱՆՑՆ, ՈՐՈՎՔ ԿԱՊԵՄՔ ԸՆԴ ՄԱՐԴԻԿՍ ԲՆՈՒԹԵԱՄԲ, ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՎԱՒՃԱՆԱՒ ՄԵԶ ՆՄԱՆՈՂՍ Ի ԲԱՐԻՍ ԲԱՂԴԻՆ

ՆԼ. Որպէս իրաւունք են ի մեզ պահանջելոյ ի մէնջ զպաշտամունս և զպարտս թէ՛ նկատմամբ բարութեանց հոգւոյ՝ և թէ՛ մարմնոյ և բաղդի, նոյնպէս այլքն իրաւունք են յայլ մարդիկ. քանզի եթէ յիմ են, քանզի մարդ եմ, նոյնպէս և յայլսն լինին. պարտ է՝ քանզի և նոքա մարդ են։ Ուստի բնութիւնն շնորհելով այլոց մարդկան իրաւունս կատարելագործելոյ զանձինս իւրեանց, ըստ երրակի բարութիւնսդ հոգւոյն և մարմնոյն և բաղդին իրաւանց՝ պատասխանեն և պարտք և պաշտամունք բարութեանցդ այդոցիկ չմնասելոյ մերձաւորն, նա յաւէտ

կատարելութեան, և վասն պահպանութեան դոյն գործելոյ և օժանդակելոյ գրականապէս։ Իրաւունքդ՝ որպէս սկզբունքդ բնական օրինաց, այլք են առաջինք՝ և այլք երկրորդ՝ և այլ երրորդ դասուն. իրաւունքդ անձանց ըղբարութենէ հոգւոյ և մարմնոյ իւրաքանչիւրոյն՝ առաջինք են կարեւորք սոսա. և բարութիւնքդ բաղդին՝ ծագեալք յառաջնոյն անտի, և կամ զառաջինն բացարձակ կոչեմք իրաւունս, և զանտի ծագեալսդ՝ այն է զիրաւունս բարութեանց բաղդի՝ երկրորդականս կամ թէականս կոչեմք, զորոց յերկուս առաջարկութիւնս առեմք։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

*Պարտ է մեզ խոստովանել զհաւասարութիւն իրաւանց առ մարդիկ բնութեամբ, կատարելութեամբ և վիճակաւ մեզ նմանս։*

ՆԼԱ. Կարգ բնութեանն պատուիրէ սիրել զընկերն. և պատճառն է, քանզի որպէս և որով իրաւամբ անձն մեր իրաւունս ունի պահանջելոյ ի մէնջ զսէր, զանձին կամ զանձնասիրութեան իւրոյ զկատարելութիւնս, նոյին իրաւունք եւս չնորհեալ են ամենեցուն, քանզի ունին ըզ մարդկային բնութիւնն. այսինքն է կատարելութեամբքն և ստորոգելեօքն այնուքիմբք որք են ի մեզ։ Նա յիրաւի ամենայն մարդ ունի զկենդանութիւն և զկատարելութիւն մտաց կամ բանականութեան, զյիշողութեանն և զազատութեանն կարողութիւն։ Արդ որ ունի զմիտս, զկամս, զբանական՝ ոչ զանբան՝ հոգին, և որ ստեղծեալ և որոշեալ է ի ժառանգութիւն գերագոյն վախճանին, զոր ցուցանէ անմահութիւն հոգւոյ նորա, մեզ նման է՝ թէ՛ բնութեամբ, թէ՛ կատարելութեամբ և թէ՛ վախճանաւ. ուստի նոյն իսկ կարգ բնութեանն, որ առաջէն զմեզ սիրել զանձինս՝ բաղխեսցէ զիւրաքանչիւրն զմեզ սիրել զմիմեանս՝ այն է բարեկամութեան սիրովն. քանզի առած է՝ նմանն սիրէ զնման իւր. որ ընդդէմ կայցէ այսմ պատուիրանի և ատեսցէ զմարդն, կոչի մոլութեան անուամբն *մարդատեաց*,



այսինքն՝ որ ընդդէմ կարգի բնութեան և բնական զգայութեան գտանի, և զուրկ է ի բարեմասնութեանց և յատկութեանց բնութեան, վասնորոյ և հրէշ և անճոռնի ինչ դատի յամենեցունց, քանզի առանց փնտռելոյ կատարելութեանն անձին՝ չկարէաք ընդդէմ կալ կարգի բնութեան։

ՆԼԲ. Գիտել պարտ է՝ թէ իւրաքանչիւր ոք անհատից մարդկային սեռի զանազանի իւիք յայլմէ. են՝ որք ուշիմամիտք են, աշալուրջք, խորագէտք, երջանիկք յիշողութեամբ են, են. և են այլք ոմանք թանձրամիտք, հանդարտաբարոյք, պարզամիտք են. որք խափ ինչ դնելով կատարելութեանցն այսր կամ այնր, պատճառ տան մեզ տարբերութիւնս դնելոյ ընդ մէջ կատարելութեանց և կատարելութեանց. սոքա ամենեքին՝ գոգցես ի քաջ կրթութենէ անտի կախին, և պակասութիւնքդ՝ քաջ կրթութեամբ դառնան ի կատարելութիւնս, և կատարելութիւնք ի պակասելոյ նորին կրթութեան ի պակասութիւնս անհանդուրժելիս. բայց զանազանութիւնդ այդ և տարբերութիւն ոչ է ի կատարելութիւնս մարդոյ էականս այլ ի պատահականս միայն։ Քանզի որ ինչ էական է մարդկային բնութեանն՝ այն է յստորոգելիս, գտանի յամենեսին, բայց սրամտութիւն միոյն գերագոյն է քան ըզ միւսն կամ Պետրոսի յիշողութիւնն լաւագոյն քան զՊօղոսին, անտի ոչինչ ինչ հետեւի, քանզի կամ ի կազմուածոց անդամոցն և ի յարմարութենէ և հաղորդակցութենէ երակացն և ջղաց կախի, և կամ ի քաջ կրթութեանն պակասութենէ, որք ամենեքին պատահականք են։ Պատահականք՝ բայց առ հասարակ պատճառ են բարոյական կենաց, և պատւոյ և ընչից և փարթամութեան կամ մեծութեան, քանզի աշալուրջք և խոհեմք առ հասարակ աշխարհի իսկ պատուեալք են՝ նոյին հետեւին և յաջողութեան գործոցն և արհեստից և տուրեւառութեանց։ Եւ առ թանձրամտութեանն և անխոհեմութեան և անզգուշութեան և անմտադրութեան բազմաց, պատահին ձախողութիւնք։ և սնանկութիւնք, և աշխարհի ամենայն

ողբալ արժանի վիճակք բիւրազգք։ Ահա ասոր է ազգի ազգի վիճակացն ծնունդ։ Ասոր են՝ զի այլք իշխանք կոչին և տէարք, և այլք ծառայք և մշակութեան ընդ լծով։ Սակայն ճշմարիտ ազնուութեան վիճակն և փառքն ճշմարիտ, ոչ չափին ի բազմութենէ ընչիցն և ի բարութենէ ազգին, այլ յաւէտ ի հոգւոյն կատարելութենէ և ի բարոյական բարեմասնութենէ կենացն, որով ոք խնամ տանի ըստ արժանւոյն բարութեան. վասնորոյ կեայ անձին, հասարակութեանն՝ յորում կեայ, և մասին մերձագոյնս վախճանին և ճշմարիտ երջանկութեան։ Բայց ամենայն մարդ ըստ որում գործ Աստուածային կամաց և իմաստութեանն կարգեալ ի վախճանն գերագոյն ամենեցուն հասարակ, այն է կատարեալ երջանկութեանն ի հակաւորս առ անսայթաք ժամանել բանական հոգւոյն կատարելութեանցն լրման և նպատակին, ոչինչ իւիք նուազի. ամենայն ոք միտս ունի, ամենայն ոք զբանաւորութիւն ունի, ամենայն ոք զյիշողութիւն ունի, ամենայն ոք զազատութիւն ունի, միով բանիւ ամենայն ոք առ անսայթաք հասանել վախճանին իւրում, նպաստս ունի և կատարելութիւնս և իրաւունս՝ որք հասարակք են ամենեցուն, որք և զարդարեալ զանձինս իւրաքանչիւրոցն, Աստուածային իմաստութեան գործ և Աստուածային փառացն և վարձուցն ժառանգութեան արժանի գտանին և առնեն զնոսա, միայն թէ նպաստիցն և կարողութեանցն գործողութիւնք գիցեն ի համաձայնութիւն կարգի բնութեանն, օրինաց բնութեանն և իրաւանց բնութեանն։ Ուստի՝

ՆԼԳ. Կարգ բնութեանն և իրաւունք կամին զի բարիս խնդրեսցուք ընկերաց մերոց ըստ բնութեան. և կարգ բնութեանն պահանջէ զի ընկերին գերագոյն բարեացն պաշտամունք և պարտք յառաջագոյն ի կարգի դասեսցին և ապա պարտք և պաշտամունք նուաստ բարեացն։ Եւ նախ՝ բարիս պարտիմք առնել և ցանկալ ընկերին ըստ բարոյական բարութեանց և արժանաւորութեան անձինն պարտիմք ունել զնա իբրև գերագոյն պատուոյ յԱստուածուստ վիճակեալ՝ այն է վասն յաւիտենական կենաց։



Երկրորդ՝ մեծարել զնա իբրև վախճան անթիւ և անհամար արարածոց, որք ի շնորհս նորա արարեալ են, գերագոյն պարտիմք ունել զնա, քանզի մեզ նմանէ, և որով իրաւամբ և արժանապատուութեամբ յարդարեալ իցեմք մեք ի բնութենէ՝ և զընկերին նոյին արժանապատուութեամբ պաշտել պարտ է և արժան զյարգ և զպատիւ, ոչ երբէք ատել զնա, քանզի որ ատէ զընկերն, հարկաւ ատեսցէ զանձն իւր, և զպատկեր իւր ատէ՝ նա՛ մանաւանդ զԱրարչին իւրոյ ատէ զպատկեր, որ ատէ զընկերն՝ ատեայ և զկարգ բնութեանն. զի յարաբերութիւն ընկերին ընդ Աստուծոյ, ի մի և նոյն կարգի կայ բնութեան, յորում անձինք մեր, և ոչ ոք կարէ գերագոյն ունել զանձն յէականն քան զընկերն։ Նմին իրի ընդդէմ բնութեան է և օրինացն և իրաւանցն՝ ամբարհաւաճութեամբ կենաց վարիլ ընդ ընկերին։ Դարձեալ արժանաւորութիւն անձին ընկերին կայ յազատութեան անդ. զի իւրաքանչիւր ոք՝ միայն թէ բանական բնութեամբ զարդարեալ է՝ ազատ ծնեալ է, և ընդդէմ իրաւանց բնութեանն է նուաստագոյն ունել զընկերն, որ նման է նմին յամենայն յատկութիւնս և ի կատարելութիւնս հոգւոյն. զի որ զամենեցուն զհասարակ իրաւունս ոտնակոխ առնէ, և զանձինն, քանզի ամենեքին բնութեամբ, կատարելութեամբ և վախճանաւ մի եմք, չի՛ք խտիր։ Արդ եթէ չունիմք իրաւունս նուաստագոյն ունել զընկերն մեզ, եւ առաւել և ծանրագոյնս մեղանչեմք ընդդէմ արդարութեանն և օրինաց և իրաւանց բնութեանն՝ յորժամ դնեմք զնա ի կարգ բարեացն բաղդի կամ ընչից, հրամայեմք նմա, ծառայեցուցանեմք զնա, բառնամք զարտաքին ազատութիւն նորա, և ընդ անբան անասնոցն կարգ եդեալ գիտեմք զնա, և իբրև գերի վարեմք ընդ նմա յընտանեկան գործողութիւնս մեր։ Այդ ի բնութենէ արգիլեալ է ամենեւին և է նախատինք անձանց մերոց. զի նովիմբ՝ որով նախատեմք զընկերն մեր՝ նախատեմք զարժանապատուութիւն անձանց մերոց, յայտնապէս ուրացեալ և մոռացեալ զօրէնս և զիրաւունս բնութեան մերոյ։ Ահա

անմահութեան փառայն արժանի են բնակիչք Հիւսիսային Ամերիկայի հասարակապետութեանն, որք ի պատիւ և ի պաշտպանութիւն օրինաց և իրաւանց բանական բնութեան և կարգի, և յամենայն զօրութենէ անձին արք և կանայք զամս չորս են ի ճակատ պատերազմի չխնայելով հասարակապետութեան ի կեանս և յարիւն որդեկայն և ոչ ի յանսահման ծախս, ի բառնալ զանիրաւ զօրէնս գերութեան ընիկ ժողովրդեանն հարաւային Ամերիկայ, քաջ ի մտի եդեալ թէ բարձեալ այդպիսի անիրաւ օրինագգերութեան, բառնին իսպառ նախատինք եղեալք բանական բնութեան։ Նախատինք են իմիք՝ յորժամ որ գերագոյն է բնութեամբ և վախճանաւ այլոցն իրաց, դիցի ի կարգ նուաստագոյն իրաց, և բանական բնութիւնն մարդկային հասարակ և հաւասար գոլով ամենեցուն չկարէ յոմանս իրաւամբ իւրով վայելել և յոմանս զրկիլ յիրաւանցն. յիրաւանցն զոր չետուն բարձողացն և նախատողացն յանդուգն և անիրաւ կամք և հաճոյք, ուստի կնքեմք՝ ընդդէմ է բնութեանն իրաւանց չարել զընկերն և ստնակոխ առնել զնա և զիրաւունս, նա՛ մանաւանդ ծանր պարտաւորութիւն կայ ի վերայ ամենեցուն սիրել զընկերն՝ եթէ կամք իցեն մեզ ըստ օրինացն բնութեան ընթանալ և ի կարգի կալ բնութեանն։ Բայց,

ՆԼԴ. Ոչ միայն բնական օրէնք և իրաւունք պարտաւորեն զմեզ կատարել զպարտս մեր ի խնամել զբարութիւն ընկերին ըստ հոգւոյ և անձին արժանաւորութեան՝ այլ և ըստ մարմնոյ, նմին իրի չէ՛ արժան մեզ նախ վնասել բարութեան կենաց ընկերին, քանզի հիմն է և թէութիւն առանց որոյ ո՛չ յառաջումն առաքինութեանց և յաւիտենական կենաց։ Նա՛ մանաւանդ պարտիմք ո՛րչափ ի ձեռս մեր է պաշտպանել զընկերին զկեանս, ի բաց խափանել զամենայն աւիթս և զվտանգս կենացն. և ի շնորհս կենացն և զօրութեամբ իրաւանց նորա, չէ՛ պարտ ո՛չ վէրս դընել մարմնոյ ընկերին, ո՛չ հարկանել՝ ո՛չ յանիրաւի զրկել, գանիւ, բանիւ. և պատճառն է՝ քանզի ընդդէմ արդարութեան է վնասել այլում ի մարմնի ո՛չ միայն ի



մարմնի՝ այլ յոր և իցէ մասին զի և բնական օրէնք հըրամայեն զայդ. « այլում մի՛ վնասեր, և զոր քեզ առնել չկամիս այլում մի առներ »։ Եւ ևս քանզի չունիմք իրաւունըս բնաւ ձեռս դնել ի մարմնի մերում, և սպանանել կամ վիրօք նմա վնասել, քանզի այդ ընդդէմ է կամացն Աստուծոյ նախախնամութեանն. և ո՛չ զայլոցն մարմնոյ և կենաց վերայ ունիմք իրաւունս։ Դարձեալ վնասէ ոք ընկերին մարմնոյն անզգութեամբ վարելով ընդ նմա ծառայեցուցանելով զնա անխնայ և առանց գթութեան, միով բանիւ զոր ինչ արասցուք միջապէս կամ անմիջապէս ընդդէմ և առողջութեան կենաց, ընկերին ընդդէմ եղանեմք իրաւանց թէ՛ բնութեանս, թէ՛ Աստուծոյ, և թէ՛ հասարակութեանն՝ որոյ անդամ է. այս չափով չարանամք, և այդ առապականութեան բարուց և վարուց ժամանակիս զի թէ չունիմք լսել ձայնի բնութեանն, սիրել զընկերն և զնմանն քո, գոնէ լուիցուք բացասականին այնըմ հնչեալ ի նոյն բնութենէն, մի՛ վնասեր այլում։

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

Պարտ է մեզ խորհել յաղագս և պաշտպանութեան՝ որոց բնութեամբ, կամ ընկերութեամբ, և ընծայեալ մեզ Նախախնամութեան են ի կարգէ իւր բարեաց բաղդի։

ՆԼԵ. Նորին իրաւունք և կարգ բնութեանն պարտաւորեն զմեզ սիրել կամ բարիս խնդրել ընկերին նոյն իսկ նկատմամբ բարեացն բաղդի, որք թէ ոչ են շնորհեալ բնութեան ի բնէ անտի իւրեանց, սակայն մարդս բընական եղանակաւ իմն, և կամ հաւանութեամբ երկուցն կամ բազմաց իրաւունս ստացեալ իցէ զնոցանէ և ինքեան սեփականեալ է, որք և բղխին ի նոյն բնական օրինաց և իրաւանց։ Երկակի կարէ ոք ստանալ զբարիս բաղդին գլխաւորապէս. կամ ծնողացն ընչից յետ նոցա իրաւունք բնականապէս իջանեն յորդիսն, քանզի բնութիւն սոցա ի նոցանէ է բնականապէս, նմին իրի և ինչք և ըստացուածք բաղդի բնականապէս լինին որդւոցն՝ և կոչի ժա-

նոյն ժառանգութեան իրաւունք. և կամ հաւանութեամբ եր-
կուց կամ բազմաց և կամօք իրաւունք չնորհին ումեմն
թէ՛ տիրելոյ իրացն և թէ՛ կեր արկանելոյ զնոսա յօգուտ
իւր ։ Նկատմամբ առաջնոյն ո՛չ ոք ունի իրաւունս յափշ-
տակելոյ և կամ վնասելոյ զինչս և զիրաւունս ընկերին.
Նա յաւէտ պարտի իւրաքանչիւր ոք ճանաչել զայլոց ի-
րաւունս և տալ իւրաքանչիւրոցն զիւրն, զի իւրաքանչիւր
ոք կարօտի նպաստից այլոցիկ իրացն, որք միմիայն մի-
ջոց են և առիթ պահպանութեան կենացն և ի նախախ-
նամութենէ Արարչին է՛ զի եդ իրաւունս և կարողութիւն
բնութեանս ստանալոյ զնպաստս և զինչս որովք կարասցէ
կեալ և վախճանին ժամանել. առեղծանել զբնութիւն առ
վախճան մի, և չտալ նմա զբաւական միջոցս հասանե-
լոյ այնմ վախճանի՛ ո՛չ է իմաստուն ճարտարապետին գործ.
և ամէն իրի առեմք, ամենայն ոք ի բնութենէ անտի ունի
իրաւունս ստանալոյ ինչս. և յիրաւանց անտի ծագի ի
մեզ պարտաւորութիւն ճանաչելոյ զայդ, և չյափշտակե-
լոյ զայն, այլ նպաստելոյ և պահպանութեան այնր ։

ՆԼԶ. Եւ նկատմամբ հաւանութեանն երկոցունց կա-
մաց, կամ դաշանց որ չէ այլ ինչ, եթէ ո՛չ երկոցունցն
կամ բազմացն կամաց յայտարարութիւն պարտաւորելով
զմիմեանս միմեանց տալով իրաւանց զմի և զնոյն իրացն,
յայտ է թէ չնորհել զիրաւունս այլոցն, ո՛չ է չնորհել ըզ-
բացարձակ իրաւունս, այն է զհոգւոյն բարութեանց կամ
զմարմնոյն և զկենացն որք չեն ի ձեռս մարդոյ, այլ պարտ
է իմանալ զերկրորդական իրաւանց, որք ծագին յառաջ-
նոցն քանզի միշտ պէտս ունիմք այլոցն սատարու-
թեանց, տալով զմանս յինչիցս, և զփոխանակն առնլով ։
Եւ այդ ի բնութենէ է՛ որով անպակաս են առիթք կա-
րօտութեան միոյն առ միւսն, վասնորոյ և մեծաւ սիրով
բնութեամբ պարտիմք բերել առ միմեանս, հասանելով
կարօտութեանց իւրերայն ։ Սակայն թէութիւնք են հար-
կաւորք դաշնադրութեանց այդորիկ, որով կարիցէ պար-
տաւորել զամենայն ոք, ընդ որ դնիցին նախ [illegible]
[illegible]՝ զորմէ լիցի [illegible] [illegible] յերկուց իսկ կող-



մանցն, [illegible] [illegible] նոցա, [illegible] և [illegible]
իւրին. յորոց միոյն պակասելով՝ պակասի և դադարի ա-
մենեւին պարտաւորութեան իւրն ։ Ցաւէ՛լ և զհաստատ-
մութիւնն ի պահպանութիւն դաշանց, որ չէ այլ ինչ ե-
թէ ո՛չ պահել զխոստմունս իւր հաստատ եղանակաւ ։ Եւ
դաշնակցութիւնք այդ պարտաւորէ մինչև յարատեւեն
կամք դաշնակցացն գոնէ միոյն ըստ օրինի և ցհատուցու-
մըն իրաւանցն միմեանց. դադարի ևս եթէ յառաջ քան
զհատուցումն չնորհեսցէ մինն միւսոյն զիւր իրաւունս՝
առանց հատուցման ։ Եւ կամ ևս եթէ կորիցեն իրքդ՝
զորմէ եղեն դաշնակցութիւնք՝ և հատուցումն նորա ան-
հնարին լիցի բարոյապէս, քանզի առ անհնարինն ո՛չ ոք
պարտաւորի ։ Եթէ իցեն տիրապէս ամենայն թէութիւնք
դաշինն և չիցեն եղծիչ պատճառք հատուցման իւրն՝ ամե-
նայն ոք պարտաւորի լնուլ զպարտս իւր զօրութեամբ բնա-
կան օրինացն և արդարութեան՝ « լեր հաւատարիմ, պահեա
զդաշինս և զխոստմունս քո, և մի այլում վնասեր, տուր
իւրաքանչիւրոյն զիւրն » են, են. որք ամենեքին պար-
տաւորեն զմարդն ի սէր ընկերին ըստ ամենայն մասին,
և հոգւոյ բարութեանն՝ և կենացն՝ և բաղդի, և կատա-
րեալ հատուցման իրաւանցն ։ Զայս կամին և կարգ բնու-
թեանն, յորում եթէ պակասէր իւրաքանչիւր ոք՝ չմնայր
կարգն բարուց և հաւատարմութեան, և լուծանէր այն
որ է գլխաւոր կապ ամենայն մարդկային կենաց և գոր-
ծոց, և վրդովէին բարոյական և քաղաքական կեանք մար-
դոյ, զորմէ հեռեւին ։ Բայց որ բազմացն փափագիցի հա-
սանել ծանօթութեանց զդաշանց ճառն ընթերցցի, ի բա-
րոյական Աստուածաբանութիւնս սրբոյն Լիկորեայ, կամ
Պիլլարտի, ուր գտցէ ընդ երկար խնդիրս, զորս աստ առ
համառօտութեան գործոյս ստիպիմք թողուլ, և ի կարե-
ւորագոյնն նկրտել ։

# ԳԼՈՒԽ Բ.

## ՑԱՂԱԳՍ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԻՐԱՒԱՆՑ ԵՒ ՊԱՇՏԱՄԱՆՑ

ՆԼԷ. Ասացաք թէ մարդս կամ առանձինն առեալ լինի, և կամ ըստ որում յընկերութեան մարդկան։ Ըստ որում առանձինն, խորհելով զմարդկային անհատից ըստ էական յարաբերութեանցն և կարգի բնութեանն զի՞նչ իրաւունս ունէր և զորպիսի՞ պարտս և պաշտամունս, յո՞րս իցեն իրաւունքդ և քանի՞ պատիկ և ո՞րոց իրաւանց պարտք և պաշտամունք մեր, և թէ քանի՞ պատիկ էին՝ տեսաք։ Արդ զառանձինն վիճակ թողեալ մեր, մտանեմք զուարթունք ի բազմախուռն ընկերութիւն մարդկան, և տեսցուք զի՞նչ իցէ ընկերութիւնն, և քանի՞ պատիկ, զի՞նչ իրաւունք յայս կամ յայդ անդամ ընկերութեանըն, և ո՞ւմ ումեք պարտիմք պաշտօն մատուցանել, զի՞նչ սկիզբն, բնութիւն, արդիւնք, և վախճան նորա մի առ մի տեսցուք։ Բայց նախ զի՞նչ իցէ ընկերութիւնն բացայայտեսցուք, «բարոյական միաբանութիւնն բազմաց ի մի հասարակ վախճան գործակցաց»։ Կոչի բարոյական միաբանութիւն, քանզի ի մարդկանէ՝ որոց գործողութիւնք միայն կարեն բարոյական լինել և ո՛չ միաբանութիւն անբանից՝ յորմէ զուրկ են։ Կոչի ֆիզիքական, քանզի են բաղում միաբանութիւնք ֆիզիքապէս, բայց ո՛չ միացեալ են ի մի ընդհանուր վախճան ամենեցուն հասարակ, այլ իւրաքանչիւրն վասն իւրոյ առանձինն նպատակի, որք իսկապէս չկարեն կոչիլ միաբանութիւն, այն է ունել զմիութիւն բանի և վասն միոյ բանի ամենեքին հաւանին, և կամ միացեալ վասն միոյ բանի, որ ամենեցուն հասարակ լիցի։ Ասի բազմաց ֆիզիքական, այն է բաղում մասանցն ի մի ինչ հասանել և հաւաքել՝ զի եթէ մի է, զիա՞րդ միաբանիլ կարէ։ Ի մի հասարակ ամենեցուն վախճան գործակցաց, քանզի չէ բաւական միաբանիլ ֆիզիքապէս միայն, այլ և բարոյապէս, այսինքն է ամենեքին վասն վախճանի իւիք պարտին վաստակել ըստ մասին, և ըստ կարի իւրեանց յայն վախճան զգործս ուղղել, և յայն ինչ հաւանիլ, և ընդ այն հաճիլ, յորմէ հարկաւորապէս ծագի գեղեցիկ ներդաշնակութիւն նպատակին և գործեաց ի մի վախճան. քանզի հաճութիւն և հաւանութիւն ամենեցուն բարոյապէս պատճառ դառնի, և մինչ ամենեցուն սիրտ և հաւանութիւն միաբան է՝ հարկաւ միաբանութիւն պատճառին ծնցի զմիաբանութիւն, կամ զներդաշնակութիւն միջոցաց՝ և գործեաց. և անօրինելի է յաջողութիւն և երջանիկ ելք վախճանին։ Պաշտօն խնամ տանելոյ ներդաշնակութեան միջոցացն ի սէր վախճանի, և անվրդով ի ձեռս բերելոյ՝ զհաւատարմութիւն, զարդարութիւն, զսէր ի մասունս միաբանութեանն պատկանի իշխանին, որ խնամ տանիցի այսմիկ միաբանութեան, յորմէ կախի հասարակաց միաբանութիւնն, և հասարակապետութեանն կամ ընկերութեանն երջանկութիւն։ Աստէն յայտ է, թէ բանք մեր են զայնմ ընկերութենէ, որոյ վախճանն ամենայն մասանց նորին հասարակութեանն հասարակ է։ Ուստի բիւրաւոր այդ տեսակ և եղանակ ընկերութեանցն ի մի և նոյն հասարակութեանն, որոց վախճանն մասնաւոր է, չէ յայսմ հասարակութեան, և ո՛չ բանք մեր լիցին զնոցանէ, այլ տարածին այս՛ զնոցանէ բայց յայնմ մասին, յորում միաբան են ընդ իւրաքանչիւր անհատս բովանդակ հասարակութեանն ի գործ և ի վախճանն, ո՛չ յայն մասնաւոր գործս և ի վախճան իւրեանց։

ՆԼԸ. Բնութիւն և վիճակն ընկերութեան ի բնական օրինաց է, որ պատուիրէ սիրել զընկերն՝ և առնել ընկերին զոր փափաքիմք՝ զի մեզ արասցեն ընկերքդ, և այնու աղագաւ զի նման սիրէ զնման իւր։ Արդ որպէս բազումս ասացաք, մարդկային բնութիւնն առ ի յանդորրութեան և ըստ բնութեանն կարօտութեանց կեալ, պարտի միանալ յընկերութիւն այլոց իւրոց նմանեացն, յորմէ կատարելութիւն մեծագոյն։ Ուստի կարգ բնութեանն՝ և յարաբերութիւն պահանջեն զընկերական կեանս, ընկերական կեանք պահանջեն զպարտութիւն ընկերութեանն

առ հասարակ, զլաւութիւն ուրախ և իցէ տեսակի՝ թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական, որոց երկոցունցն պէտս ունի բնական բնութիւնն։ Գիտելի է թէ հաւանութիւնն ամենեցուն ի մի ինչ փախճան՝ ծնանի զմիաբանութիւն բազում մարդկան ի մի ինչ. իսկ արդ՝ որ մի է, և ունի զմնանաւոր եղանակ լինելոյ, և անհաղորդելի ծնոյ այլում՝ կոչի [illegible] կամ [illegible], ամէն իրի միաբանութիւնս այս՝ բազում մարդկան ի մի նպատակ գործակցացըն՝ արդարութեամբ և իրաւամբ [illegible] կոչիլ կարէ. այսու տարբերութեամբ, զի իւրաքանչիւր մարդ ինքնիշխան գոլով գործողութեանց և իրաւանց իւրոց, կոչի [illegible], և ըստ նմանութեան փիզիքական անձինք բազումք, որք մի են ի գիտաւորութիւն, ի գործողութիւն, և ի նպատակ՝ կարեն բարոյական [illegible] կամ [illegible] կոչիլ, և իրաւանց և պաշտամանց անձին ենթակայ լինել։ Ուրեմն բարոյական միաբանութիւն կամ հասարակութիւնն ըստ որում [illegible] [illegible]՝ ունի իրաւունս և պաշտամունս, և որքան ընդհանուր իցէ ենթակայն՝ այնքան գերագոյն լիցին իրաւունք նորա և պաշտմունք. ըստ այսմ և արժանաւորութիւն բարութեանցն և բարութեանց, ընդհանուր բարութիւնն հասարակութեան և առանձինն՝ կամ մասնաւոր բարութիւնն անհատից. և ըստ այսմ կարգի բնութեան և օրինաց, յընդհարկանել հասարակութեանն բարութեան՝ յաղթեսցէ և նախադաս լիցի մասնաւորացն բարեաց, և ի պարտաւորութիւն պաշտամանց հասարակութեանն և այնց մասնաւորացն. իրաւունք հասարակութեանն նախ և յառաջ պահանջեն զպարտս ըզպաշտամունս իւրեանց, քան զիրաւանցդ անհատից և մասնաւոր պաշտամանց։

ՆԼԹ. Բարութիւնն այն է՝ որ պահանջէ զբովանդակ կենաց մարդոյ զգործողութիւն և զօժանդակութիւն, և յայդ փախճան բազումք բարոյապէս, այս է ի խորհուրդս ի հաւանութեան, ի կարծիս և ի գործս միաբանին՝ փախճան է և պատճառ, և կայուցանէ ինքն միայն զկատարեալ վիճակ ընկերութեանն։ Եւ ոչ բարութիւնն որ զօրող և զահմանել իւր չափ խնդրէ գործողութեանցն։ Ամփոփ ընկերութիւնն մարդկան միաբանեալ ի մի՝ կոչիլ կարէ հասարակութիւն կամ ընկերութիւն անկատար։ Առաջնոյն կայ հասարակութիւնն և ընկերութիւնն կատարեալ, որ յերկուս տեսակս բաժանի, այն է յընտանեկան ընկերութիւնն և ի քաղաքային ընկերութիւնն։ Զորոց կարգաւ,



---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

## ՅԱՂԱԳՍ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆԽ. Ընտանեկան ընկերութիւնն՝ ըստ որում ունի զնպատակ բարութեանն մինչև ցփախճան՝ տիրապէս կոչի ընկերութիւն, որ երեք եղանակաւ լինել կարէ և յերիցըն բաղկանայ առ հասարակ. Նախ յ[illegible] [illegible], միաբանութեամբ առն միոյ ընդ կին մի հաւանութեամբ կամացն ըստ օրինաց բնութեանն, որ և սկիզբն է՝ հիմն, և պատճառ ընտանեկան ընկերութեանն։ Երկրորդ՝ ի [illegible] [illegible]՝ որ կայ ընդ մէջ ծնողաց և որդւոցն։ Երրորդ՝ ի [illegible] [illegible], որ կայ ընդ մէջ տանուտեառն և սպասաւորացն, որք կամօք կամ վարձիւք պարտաւորեն զանձինս պաշտօնի ծառայելոյ տեառն իւրեանց, ի գործս՝ զորս հայրն՝ և որդիք չեն կատարելոյ բաւական։ Զորոց երրակի առաջարկութեամբ խօսեսցուք։

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

[illegible]

ՆԽԱ. Բնութիւն մարդոյ յԱստուածային իմաստութենէ անտի այնպէս կարգադրեալ է, զի զարդարեալ գտանի այն ամենայն մասամբ թէութեանց և բարեաց, որովք և եթ կարէ կալ սեռն մարդկային. Նմին իրի ի բնութենէ անտի է՝ և ի բնական կարգէ, զի բանական

կենդանեաց բնութիւն յերկուս տեսակս կամ յաւէտ յերկուս այլանեալ տեսակս բաժանեալ գտանի, [illegible] և ի [illegible], և ի միաբանութենէ սոցա կախի հարկաւորապէս յարատեւութիւն և բազմութիւն ազգի մարդկան. յորմէ առանձինն կենաց անդորր և հանգիստ, և հաստատուն նպաստ և օժանդակութիւն միմեանց։ Ուստի եթէ բնութիւնն զարդարեալ է զանհատս մարդկային սեռին, որպէս և զսեռս ամենայն կենդանեաց, այնպիսի թէւութեամբ, զի առանց միաբանութեան երկոցունց այլանեալ տեսակացն անհնարից ընդ միմեանս, անհնար է առնել զյարատեւութիւն մարդկային սեռին, զերջանկութիւն կենացս աստ, այն է զանդորրութիւն կենաց, և զխաղաղութիւն, և զշինումն ամենայն մարմնաւոր կարօտութեանց. ուստի միաբանութիւն կամ հաւանութիւն առն և կնոջ ի բնութեանն օրինաց է՝ և ի կարգէ՝ վասն այսորիկ բարեաց։ Եւ վախճանն իսկ Աստուածային ճանաչի ի գործոց արարչութեանն. քանզի արու և էգ բնութեամբ ստեղծեալ են և փափագմամբ բաղձանալոյ. և չիք ինչ աւելորդ և անվախճան ի գործս ամենիմաստ ճարտարապետին կամ արարչութեան։ Սակայն միաբանութեանս այսմիկ պահպանութեանն պատճառ, նա մանաւանդ հիմն և բակիզբն այսր միաբանութեանն՝ է սէրն այն բնութեան, որ մղէ զենթակայն յայդ միաբանութիւն գոյացական. և սէրդ այդ է ի բնութենէ [illegible], առանց սիրոյ չիք կատարեալ ինչ միաբանութիւն։ Աստի յայտ է՝ թէ միաբանութիւնդ այդ, ոչ լիցի [illegible]՝ այլ [illegible] ըստ որում մարդկային գործողութիւն և ըստ որում բարոյական, հետևի թէ պարտ է զի ազատութեամբ լիցի երկաքանչիւրոցն կամաց հաւանութիւնդ և միաբանութիւնդ, որ և յերկուց ֆիզիքական անձանց բաղկացեալ մի է և կացուցանէ զմի բարոյական անձնաւորութիւն։ Եւ քանզի մի անձնաւորութիւն է՝ անհնար է չիրել զմիմեանս և ընդդէմ բնական օրինաց է՝ և ընդդէմ իրաւանց, անդամք կազմողք և յօրինողք զմիութիւն, կամ բաղկացութիւն ինչ չյօդիլ ընդ միմեանս էականապէս



և չիրել զմիմեանս և չօժանդակել միմեանց ի գործառութիւնս, որք պատկանին միաբանութեան նոցա, և կամ չլինել ցաւակից միմեանց։ Յայսոցիկ ամենեցուն քաջ ճանաչի բնութիւնն և սահմանն ամուսնական միաբանութեան կամ ընկերակցութեան, որ առ հասարակ ասի դոլ [illegible] կամ [illegible], կամ [illegible] և [illegible], [illegible] և [illegible]։

Նիւթ. Յորմէ յայտ է. Նախ՝ թէ ընդդէմ բնութեանն օրինաց և ընդդէմ բարւոյն ամուսնութեան է Ա. [illegible] կամ կնոջ միոյ լինել երկուց կամ բազում արանց. քանզի յանստոյգ վիճակի մնային զաւակք, թէ արդեօք ո՞յր ի նոցանէ իցեն. և ընդդէմ արդարութեան և իրաւանց իւրաքանչիւրոցն լինէր զոր ձեզ թողում իմաստասիրել։ Բ. [illegible] անդամ ըստ իմիք բնութեանն ամուսնութեան ընդդէմ է, քանզի չլինէր կատարեալ միաւորութիւն առն և կնոջ՝ այլ յաւէտ մասնաւոր, որ է ընդդէմ բարոյական անձնաւորութեանն միութեան։ Երկրորդ՝ անտի հեռ և նախանձ, դժտութիւնք և թշնամանք և երկպառակութիւնք անհնարինք, զոր իւրաքանչիւր ոք ի ձէնջ կարէ իմաստասիրել ի հանապազօրեայ այլազգեացն արկածից բազմակնութեան մինչև զմիմեանս կորուսանել։ Երրորդ՝ ընդդէմ օրինաց և իրաւանց բնութեան է լուծումն ամուսնութեան, քանզի ամէն իրի [illegible] ասացաք [illegible] երկոցունց ընկերակցացն և զխոստումն նոցա. զի միաւորութիւնդ է բոլորովին և անվախճան, այսինքն մինչև ցմահ, որ կարէ միայն լուծանել զխոստացեալ դաշըն սրբութեան։ Եւ յաւել զի և զաւակացն հաւասար են իրաւունք կրթելոյ և սնանելոյ յերկոցունց իսկ ծնողացն, եթէ լուծանէր՝ զխափէին իրաւանց որդւոց. ասանօր բանք մեր են զլուծմանէն բնականապէս, և յայնս՝ որք հետևին և սնան ազդեցութեանց բնութեանն օրինաց. յորս եթէ կամօք և հաճութեամբ խոստացաւ կենացն միութիւն յերկուց կողմանցն, ամուսնութիւնն ինքնին ո՛չ լուծանի և ո՛չ կարէ լուծանել ի կամաց բարի ընկերակ-

ցացն, քանզի միշտ անսան և հետևին բնական օրինաց. ուստի չկարէ լուծանել՝ եթէ ոչ յայնցանէ, որ չանսան օրինացն, կամ ի կողմանէ անօրինացն։ Բայց ո՞ ոք ուրասցի, եթէ վարք և ընթացք անօրինացն՝ չկարեն զանօրէնութիւն՝ յօրէնս և յարդարութիւն դարձուցանել. այո՛ լուծանեն՝ բայց ընդդէմ օրինացն, և գործք նոցա ապօրինաւոր են, և կան ներհակ Աստուածային օրինացն հաստատութեան կամ պատուհասից։ Արք՝ արդարութեանն թշնամիք և օրինազանցք զայդ առնեն, զի մոլութեանցն՝ ապականեալ բարուցն և հեշտութեանց լաւագոյն ևս ծառայելով՝ անձանցն արժանաւորութեան անարգուք, զանձինս ընդ շունս յաւէտ դասել հաճին։

ՆԽԳ. Սակայն զայդ ևս պարտ է գիտել՝ թէ առ պէս պէս պակասութիւնս և տկարութիւնս մարդկային վիճակին, պատահին պարագայք յորս անարատ կողմն՝ կամ այր լիցի կամ կին՝ կարէ յետս կալ ի միաբանութենէ յանցաւոր ընկերին ի պատիժ և ի պատուհաս նորա անիրաւութեանն, և այսպէս մեկնիլ և լուծանիլ ի նմանէ կամ ժամանակ մի և կամ ցվախճան կենաց. միայն թէ կապեալ ունիցի զանձն իրաւամբ յանցաւոր ընկերին և նմին իրի չկապեսցի ընդ այլ ոք՝ մինչև մեռցի մինն յերկոցունց՝ որով և լուծանին կապանք ամուսնութեանն իրաւանց։

ՆԽԴ. Եւ նկատմամբ ցուցանողական իմն և բացարձակապէս փաստի ի բնութենէ առ ի ցուցանել զանլուծանելիութիւն ամուսնական դաշնադրութեան կամ ամուսնութեանն, ասեմք՝ թէ վերոյիշեալ փաստքն բաւրյապէս ցուցանեն՝ թէ ամուսնութիւնն անլուծանելի է, բայց «եթէ խորհեսցիմք զամուսնութենէ իբրև զպարտուց բնութեանն ի բազմացուցանել զզաւակս, դժուարին է ցուցանել, կամ տալ պատասխանի, առ ինչ վասն ամլութեանըն կողակցին՝ չլինէր արժան արձակել զնա, կամ զայլն առնուլ. են». այսպէս Պեռլարմինոս (*)։ Յաւել և զընդ

(*) Յաղագս ամուսնութեան. Գիրք. Ա. Գլ. Դ.



երկար խօթութիւնս ընկերակցին. ուստի ասեմք, բառ բնական օրինացն անլուծանելի է կապ ամուսնութեանն, բայց հաստատագոյն է ցուցումն առեալ ի յաւիտենական բանից. և մեք ցնծամք ընդ ստուգութիւն շնորհացն վիճակի. վասնորոյ ո՛չ երբէք պարտիմք տարակուսիլ, թէ օրէնք բնութեան՝ հակառակ կարիցեն կալ շնորհաց և աւետարանին օրինաց, մինչև օրէնք բնութեանն են նոյն օրէնք յաւիտենական՝ զոր ասացաք գոլ [illegible] Աստուծոյ։

ՆԽԵ. Դարձեալ՝ օրէնք բնութեանն եղծանեն բառ իմիք զամուսնական դաշնադրութիւնն յենթակայս, որք արեամբ կամ ազգականութեամբ մերձաւորագոյնք են. զի ընդդէմ վախճանի ամուսնութեանն կամ բանաւոր պատճառի է, քանզի հարցեալ զվախճանէն առ ի՞նչ իցէ ամուսնութիւնդ այդ, պատասխանեսցէ՝ առ ի գտանել զօժանդակութիւն ուրուք յընթացս կենաց, և զանդորրութիւն, և զխաղաղութիւն. իսկ արդ մերձաւորքն արեամբ կամ արենակիցքն արդէն ի բնական իրաւանց և օրինաց պարտաւոր են յայնս առ միմեանս. ուրեմն չեն պէտք դաշնադրութեամբ իւիք առնել զայդ իրաւունս. դարձեալ ընդդէմ է բնական յարգանաց և կարգի, զի իշխեսցէ ոք իւրում արենակցի, են։

ՆԽԶ. Զայսոսիկ այսպէս ծանուցեալ զէութենէ ամուսնութեանն կամ զմարդկային ձորդ և բնական ընկերութեանն, զպարտուց և զիրաւանց երկաքանչիւր կողակցացն ևս սակաւուք։ Անդ անմիջապէս զկնի դաշինն զոր եդին ընդ միմեանս երկաքեան, պարտին ի կատարումն ամենայն խոստացելոցն միմեանց՝ նկատմամբ կատարեալ սիրոյ, նկատմամբ կատարեալ հաւատարմութեանն, յարգանաց օգնութեան, և ամենայն պարտուց և պաշտամանց, որովք կապիմք և պարտաւորիմք առ անձինս, պարտին և կային առ միմեանս կողակից և դաշնակից ընկերքն։ Եթէ ո՛չ հաճիմք՝ զի օրէնք բնութեանն և իրաւունք և արդարութիւնն առնակոխ լիցին. ուստի ընդդէմ բնական օրինաց և արդարութեան են անմաքուր

տուփանք և ցանկութիւնք առ այլս, ընդդէմ են միանգամայն և ամենայն գիջութիւնք, պոռնկութիւնք, և այդ ամենայն գործք մեղացն, որք ընդդէմ կարգի բնութեանն և բարութեանց և վախճանի այսր: Բ. Դաշնադրութեան և սուրբ պաշտաման բնութեանն. որպէս հաճոյ թուեցաւ ումեմն, սուրբ կոչել զնոցայն անկողինս: Նախ և յառաջ իրաւունք առն պահպանեսցին, և յետոյ կնոջն, և երկոքինն չունիցին իշխեաս այլ եւս զիրաւունս իւրեանց, զոր իրերաց ետուն հանդիսիւ ծանր պարտաւորութեան: Այնպէս զի որ ընդդէմ միումն յիրաւանցս յայսցիկ յարիցէ և առնիցէ՝ անիրաւ կոչեսցի. և նկատմամբ մարմնոյն իրաւանց, գործողութիւնն շնութիւն, և գործողն շուն, և նմին հաւասար, քանզի չունի իմն խարութեան. են: Առն պարտք են զկին իւր սիրել, մնուցանել, պաշտպանել, կրթել, և ամենայն մասին կատարելութեանն թէ՛ հոգւոյն՝ և թէ՛ մարմնոյն խնամ տանել.« Կնոջ պարտք են, սիրել, մեծարել, հնազանդիլ, և յամենայն մասին բարութեան թէ՛ հոգւոյն և թէ՛ մարմնոյն ըստ կարի գուն գործել և խնամ տանել, զի գեղեցիկ միաբանութեամբըն իւրեանց զամենայն բարութեան արդասիս դիւրաւ ի բնութենէն, և յԱրարչէն բնութեանն ընկալցին »:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

Պարտք հօրն առ որդին, և որդւոյ նորին իրաւունք և պարտուց պահպանութիւն:

Նախ. Յամուսնական միաբանութենէ ծագին և միաբանութիւնն ի մէջ որդւոյն և ծնողաց, քանզի ամուսնութիւնն է պատճառ ծննդեան որդւոց, ուստի երկոքին ծնողքն հաւասարապէս պարտին խնամ տանել որդւոյն, որք ծնեալ՝ անդէն ի կարօտութեան են խնամոց ծնողացն, ուստի ապա ըստ օրինաց բնութեանն և իրաւանց, պարտին իրաւանց որդւոյն պաշտօն մատուցանել յայն ամե-



նոյն իմաստս և բարութիւնս թէ՛ հոգւոյն և թէ՛ մարմնոյն մինչև պահանջին օրէնք և իրաւունքդ այդ բնութեանն, այսինքն ի տիս հասակի բաւական բնութեանն: Բայց ի միջոցի դաստիարակութեան որդւոյն՝ ունին ծնողքն զիրաւունս և զպարտաւորութիւն ուղղելոյ զեղանակ այնր դաստիարակութեան և նպատակից և կանոնաց՝ և ըստ կատարելութեանցն սիրոյ և վարձուց՝ և ըստ պակասութեան և յանցանացն պատժոց և պատուհասից: Սմին իրի և ի կողմանէ որդւոյն պարտք և պաշտամունք են կատարեալ հպատակութեան, յարգ և մեծարանք, և երախտագիտութիւն, և սէր՝ ըստ պատուիրանաց բնական օրինացն և իրաւանց պետին հարց: Եւ զկնի ելանելոյ ի հայրենի իշխանութենէն և մինչդեռ ի նմին կան որդիք՝ պարտին ըստ կարի նպաստաւորել ծնողացն, որք զկնի արարչին բնութեանն, են առաջին պատճառ գոյութեան նոցա. վասնորոյ պարտիմք և ի պահանջել հարկին բնական օրինօք նախ զանձինս պաշտպանել և անձանցն նպաստաւորել, և անմիջապէս զկնի՝ ծնողացն հասանեն իրաւունք հատուցանելոյ: Այսոցիկ այսպէս եղելոց, քանի՛ քանի՛ աղետալի կենաց ծառայեն որդիքն ի զրկելն ի հայրենի դաստիարակութենէն: Քանի՛ քանի՛ ամք անցանեն ողբոց և արտասուաց ծնողացն յանհոգութենէ նոցա. և քանի՛ ի խորին սրտից հառաչանք և կոծ որդւոյն ի պակասութենէ անձկալի կրթութեանն, մերթ այլք մոռացեալք զանուն և զպատիւ հայրենի՝ ի յետին վիճակի կան անառակութեան, և այլոցն վերահասեալք օրինացն արդար վրէժխնդրութեան և պատուհասի՝ բանտարգեալք ի կըրտանս՝ զմահ ճաշակեն. և այլք անթիւ ողբալի անցք, որոց ծնունդ և պատճառ է պակասութիւն հայրական խընամոց՝ և քաջ կրթութեանն, յորոց բազմիցս, երանի՛ թէ չէին ծնեալ տխրութեամբ հառաչանք լսին հանապազ: Սակայն և Աստուածապաշտ ծնողացն մանկունք ամենայն՝ թէ՛ հոգւոյն և թէ՛ մարմնոյն բարեմասնութեամբն զարդարեալք՝ ցնծութեան և բերկրանաց ծնողացն պատճառք են. որպէս զտունկս ձիթենեաց շուրջ զսեղանովք հարցն

իւրեանց « որդիք քո երբեւ զտունկս ձիթենեաց շուրջ զսեղանովք քովք », ըստ որում ցնծութեամբ երգէր ի յառաջնոց անտի ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Գ.

Պարտ է տերանց առ գործակալս կամ ծառայս, և սոցին առ նոսա հնազանդութեան և գործունեայ ծառայութիւն ։

ՆԽԸ. Ընտանեկան կամ գերդաստանական ընկերութիւնն բաղկանայ ոչ միայն ի միաբանութենէ ծնողաց ընդ միմեանս՝ և որդւոց ընդ ծնողս, այլ և ի ծառայից կամ պաշտօնատեարց ընդ նոսա. որ լինի դաշնադրութեամբ իւիք ի կողմանէ տեառն վարձուցն հատուցմամբ՝ որով եղանակաւ և իցէ, ի կողմանէ ծառայեն հաւատարմութեամբ պաշտօն մատուցանելոյ Տեառն իւրում և ամենայն գերդաստանին, յայն գործողութիւնս, որոց վասն լեալ իցէ դաշնադրութիւնդ ի բարութիւն գերդաստանին ։ Աւասի ի կողմանէ նախ տեարցն, և յառաջ պարտին սէրն հայրական առ ծառայսն. քանզի բնութեամբ և վախճանաւ և կատարելութեամբ նման են նոցա. և գիտելով չափ՝ թէ ծառայն ոչ է գերի և ստրուկ, այլ ազատութեամբ և արժանաւորութեամբ անձին յարգարեալ՝ և ազատութեամբ յանձն առեալ զպաշտամունս, պարտին գթութեամբ վարիլ ընդ նոսա, և գուն գործել ոչ միայն վարձուցն պարզապէս հատուցման, այլ և բարոյական բարութեանն. քանզի երբեւ զորդի՝ ունի իրաւունս պահանջելոյ ի տեառնէ զխնամս պահպանութեան բարոյական կատարելութեանց անձինն, քանզի թէութիւն է զօրութեամբ ենթադրել առանց որոյ ոչ օգուտ ծառայեն ի դաշինդ այդ, ոչ վնասելոյ անձին՝ այլ ի բարութիւն անձին թէ՛ ըստ հոգւոյ և թէ՛ ըստ մարմնոյ, և ի բարոյական բարութիւն անձին տեարց իւրեանց ։

Դարձեալ յընտանեկան պաշտամունս մի՛ անգթու-



թեամբ, մի՛ անխնայ, մի՛ բարձրայօնութեամբ ի բարս և ի վարս, և մի՛ խստիւ վարիլ ընդ նոսա, այլ քաղցրութեամբ, մեծարանօք, և բարոյական և խաղաղութեան կենացն վայելուչ եղանակօք, ըստ տեղւոյն՝ ըստ ժամանակին՝ ըստ անձանց՝ և ըստ արժանապատուութեան պաշտօնին չափել զբանս, երբեմն խստիւ՝ և երբեմն քաղցրութեամբ. այնպէս զի սիրով յաւէտ տացեն նոցա գործել, և ոչ երբէք բռնութեամբ. միով բանիւ մարդկային արժանաւորութեան անձինն միշտ անմոռաց՝ վարիցի ընդ նոսա ։ Եւ այդ են իրաւունք, որոց ի հպատակութիւն տեարցն ։

Ի կողմանէ ծառային ամենայն հաւատարմութիւն պարտաւորի ի կատարել զարդար հրամանս և զպատուիրանս տեարց իւրեանց, ոչ հոգւոց հանելով և դժկամակութեամբ, ևն ։ Սակայն չեն պարտք զի ի մոռացօնս լիցին վախճանի դաշնադրութեանն, այն է օգուտ հոգեւոր և մարմնաւոր թէ՛ բովանդակ գերդաստանին և թէ՛ անձանց իւրեանց ։ Սորին վասն ոչ պարտաւորին երբէք ի հրամանս անիրաւս տեարց իւրեանց ի կատարումն, և այնց ամենեցուն՝ որք վնասեն բարուց և բարոյական կատարելութեանց տեարց իւրեանց, և առ բազումս ևս բաց ի չպարտաւորելոյ առ կատարումն վնասակար հրամանաց տեարցն, պարտին ընդ հակառակն խոչնդոտ լինել, և ընդդէմ կալ գործողութեանց նոցին, ևն. ևն ։

ՆԽԹ. Ասացաք ի վերոյ թէ ծառայութիւնն ոչ է գերութիւն, զայս գիտել պարտին տեարք ի մասնաւորի, որպէս զի մի՛ մինչ դաշինս կապեն ընդ այլս նմանս նոցին ի ծառայական պաշտամունս և ի բարութիւն իւրեանց միաբանին, միաբանութիւնդ այդ զրկիցի ի վախճանէն և ի վնաս դարձցի բնական օրինաց և իրաւանց և կարգի բնութեանն, և հետեւաբար անձանցն օրինազանցութեան, և անիրաւութեան, և անկարգութեան ։ Քանզի իրաւունք տեարցն պահանջելոյ ի ծառայիցն զպարտս և զպաշտամունս ոչ է ծագեալ ի բնական օրինաց, զի օրէնք բնութեանն ամենեքին հաւասարապէս և մերկ ի բարեմասնու-

թեանց առաւ բարեաց մտանէն յաշխարհ, և իւրաքանչիւրն հաւասարութեամբ վիճակին, և յամենայն յատկութիւնս կացուցիչս մարդկային բնութեան նմանս արարան. ուստի ոչ ի բնական օրինաց են ծագեալք իրաւունքդ իշխելոյ ծառայից, այլ դրական իմն զօդցես օրինօք կամաց և ազատութեամբ մարդկան. այլք առ քաջութեան խելաց, հնարագիտութեան, աշալրջութեան, մտադրութեան, և մարդկային խոհեմութեան՝ ընդ փարութեամբ բաղդին՝ յորմէ առեալս մեծութիւն, փարթամութիւն ճոխութիւն, պատիւ, են: Եւ այլքն առ պակասութեան վերոյիշեալցն՝ վերնոցն կարօտին. և ահա առաւ է վիճակին և վիճակին անհաւասարութիւն, ոմանք մեծատունք և՛ կենաց և՛ բաղդի բարութեամբ լցեալք, և ոմանք տնանկք և կարօտեալք: Սակայն և այս ճշմարիտ է, թէ բազմացըն ի վերոյիշեալ թէութեանց և մարդկային խոհեմութեանց պակասին և ոչինչ, և ի վերայ այսր ամենայնի ձախորդութեանցն ենթակայք գտանին. և ընդհակառակն բազմացն ի թէութեանցդ և ո՛չ մին՝ և ռամկայն ոճիւ խօսելով բաղդն զամենայն գործառնութիւնս նոցա ի բարին յաջողէ. մեք բաց ի վերին անքննելի նախախնամութենէ Արարչին չտամք զայդ արկածս այլում իմիք դիպողութեան և աներորդապաշտութեանցն ո՛չ երբէք, և բաղդն որ լոկ յամենայն տեղիս, չէ այլ ինչ, եթէ ո՛չ Աստուածային անյայտ նախախնամութեանն պէս պէս վըճիռ և կարգադրութիւն, որ ո՛չ բառնայ զմարդկային ազատութիւնն՝ նա՛ յաւէտ ենթադրէ զամենայն մարդկային խոհեմութեանն զնպաստս: Ուստի զայս քաջ ի մտի ունելով տեարցն, մի [illegible] ունիցին, քանզի անիրաւութիւն է ընդդէմ անձնաւորական արժանաւորութեան, որ յամենայնի մի է. և զի զոր քեզ առնել ո՛չ կամիս, այլոցն մի՛ արասցես: Դարձեալ մարդս է վախճան բազում իրացն, այլ վասն ստեղծան յԱրարչէն. արդ ընդդէմ կարգի բնութեանն է զվախճան առնել միջոց կամ գործիք, ուր միայ զի ազատութեամբ սոքա զանձինս մատուցանեն ի ծառայութիւն՝ առ հարկի զա-



նազանութեան և կատարելութեան վիճակացն ի վիճակաց, ո՛չ թէ իրաւամբ պատերազմի նուաճեալք և ի գերութիւն ածեալք են, յորս իսկ ո՛չ է արժան, բայց միայն մինչև ցվախճանն պատերազմի: Այսքան զընտանի ընկերութենէն չաս. յորում եթէ այրն և կին զպարտս, ծընողք և որդիք զիւրեանցն, և տէրն ընդ ծառայս և պաշտօնեայս, և յետինքդ առ առաջինսն ըստ իրաւանց ըզպարտս կատարեսցեն՝ ընտանեկան կամ առանձինն կեանք մարդոյ կատարելագործի, բայց ո՛չ ըստ ամենայնի և ըստ ամենայն կարօտութեանց բնութեանն: Ուստի

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆԾ. Միմիայն ընտանեկան ընկերութիւնն և պահպանութիւն անհատից չէ բաւական, այլ բազում են կարօտութիւնք՝ զորս լնուլ ո՛չ զօրէն այդուիկ պարզ և նախնի ընկերութեամբն, այլ բազմացն ի մի հաւանութեան և միաբանութեան պէտս ունիմք, և նոցին նպաստիւքն և օժանդակութեամբն և եթ կարեմք լնուլ զկարօտութիւն բնութեանս կամ կենաց ըստ արժանւոյն. որում ժամանել կարեմք միաբանութեամբ բազմացն և եթ ի մի բնակութիւն և ի մի վախճան: Զայդ բնականապէս արար բնութիւնն, զի իւրաքանչիւր ընտանեկան ընկերութիւնքն կամ գերդաստանքն ի մի հաւաքեալք կամ բազմացեալք, նախ սակաւք ոմանք, ապա ի բազմանալն գեօղս յօրինեալ. ապա բազմացեալ գիւղօրէից և ի մի հաւաքեալ քաղաքս յօրինեցին. և քաղաքացն բազմացեալ ազգս և տէրութիւնս և թագաւորութիւնս կանգնեցին, յորոց մարդկային կենացն երջանկութեան նըպաստք յամենայն մասին. և ընդլայնմամբ ընկերութեանցըն, ընդլայնեցան և նպաստք և ազգի ազգի միջոցացն

զիւրութիւնք, եւ այնպէս կեանք մարդոյ ի յանձուկ սահմանէն՝ յորում կայր յընտանեկան վիճակին՝ արտաքս ելեալ, եւ տարածեալ զօգցես անսահման եղև։ Զայդ՝ բնութեանն հարկ եւ կարօտութիւն արար, նա՛ զի նմանն սիրէ զնման իւր, եւ սէրն կապէ զնոսա ընդ միմեանս. ահա սկիզբն քաղաքային ընկերութեան, որ է կատարեալ ժողով մարդկան ի վայելումն իրաւանցն եւ հասարակաց բարութեանն ի մի հաւաքեալ։ Արդ ժխտեն Րօսօ եւ Հօպպէզիոս՝ թէ մարդն բնականապէս բերի յընկերութիւնն։ Երկրորդ՝ ոմանք զայս վախճան եւ ոմանք զայդ հեռի ի ճշմարտութենէ դնեն քաղաքային ընկերութեանս՝ կամ հասարակութեանն, բայց որքան անիրաւիցեն ընդդէմ մարդկային բնութեանն՝ յայտ լիցի յառաջարկութեանցս զորս մի առ մի։ Նախ՝ ընդդէմ Հօպպէզիոսին եւ Րոսսօյին առեմք՝

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

### Մարդս բնականապէս ընկերական է կամ բերի յընկերութիւն։

ՆՇԱ. Այդքան անմտութիւն ո՛չ լուաւ երբէք, եւ ո՛չ ի հեթանոսացն աղջամղջին զարս ի վիճակն անգիտութեան, նա՛ յաւէտ պտուղ է մերոյ վիճակին եւ ժամանակիս յառաջադէմ գիտութեանցն չարաչար կիրառութեան, եթէ մարդս բնութեամբ գազանաբարոյ է եւ անտառային։ Ստութիւն մոլար եւ յանդուգն արտասանութեանցս ցուցանի. Նախ՝ յամենայն ժամու, յամենայն տեղիս, եւ յամենայն ազգս. մարդիկ կազմեալ զընկերութիւնս միաբանութեամբ կան, է՛ զի քաղաքային կրթութեամբ յառաջադէմք, եւ է՛ զի ըստ կարի եւ կարօտութեան անդամոցն ընկերութեան. չիք իմն տեղի յորում բնակիչք չիցեն յընկերութեանն. եւ ո՛չ ի ներքին Ամերիկա, յԱւստրալիա եւ յԱփրիկէ բնիկ վայրենաբնակքն մարդիկք զուրկ կան ի միաբանութենէ, թէպէտև վայրենիք՝ բայց ի վայրենի ընկերութեանն։ Ուստի վայրենաբարոյ ազգք անգամ յընկերութեան կան, եւ ազգս կազմեն եւ թագաւորութիւնս։ Ու չիք իմն ազգաց հնախօսութիւն, որ հաստատիցէ՝ թէ մարդիկ երբեւ զերէս եւ զգազանս անձնատեաց կացեալ իցեն յանապատս եւ կամ յանտառս եւ ի լերինս։ Երկրորդ՝ նոյն իսկ կարօտութիւն եւ պիտոյք մարդկային բնութեանն հարկաւորապէս պահանջեն զհասարակացն միաբանութիւն եւ զկեանս։ Քանզի ծնեալ մարդոյ ամենեւին կարօտի ընկերութեանն, սնուցման, բնակութեան, եւ պաշտպանութեան. զծնեալ մանկունս եթէ արկցես ի լերինս՝ անդ մեռան, եւ թէ յանապատի՝ անդ մեռան. եւ երանի՜ թէ մեռցին անդ անշարժ իբրեւ զքարինս, այլ նուաղեալք մեռանին։ Ու գիք թէ հասեալ իցեն ի չափ հասակին, միթէ հնար ի՞նչ իցէ կալ նոցա առանձնապէս ընդ երկար ժամանակ առանց կարօտութեան։ Ազգի ազգի թէ՛ կենացն վտանգից, թէ՛ մարմնոյն խօթութեանց՝ թէ՛ բաղդի կամ ընչից բարութեանցն կորստեան եւ վտանգի ենթակայ կան, զիա՞րդ կարիցէ մանուկն զարման մատուցանել ինքնին այնքան կարօտութեանցդ։ Ո՞չ ապաքէն մարդկային կենացն կարօտութեանց եւ պիտոյից բովանդակ հասարակութեանն իւրաքանչիւրն ըստ մասին օժանդակէ եւ նպաստաւորէ, զիա՞րդ անհատ ոք կարէ զամենայն արհեստս ի ձեռս բերել, ապաքէն յայտ է՝ թէ ոմն այսուիկ եւ այլ ոմն այնուիկ մարդկային կարօտութեանց բնութեանն եւ կենաց հասանեն ի նպաստ։ Դարձեալ եւ կենդանեաց եւ անբան անասնոց ի վայրենի գազանաց երամք երամք եւ տեսակք տեսակք ըստ սեռին միաբանեալք կան ի միասին։ Միթէ վիճակ բնական բնութեանն չարագոյն լիցի քան զանբանիցն, քա՛ւ լիցի։ Յաւել եւ ըզփաստդ առեալ ի բարբառոյ, եթէ մարդս բնական զօրութեամբ բնութեանն զարդարեալ է յօրինել իւրեան զմիջնորդ եւ զմիջոց արտաքս յայտնելոյ այլոցն զներքին խորհրդածութիւնս եւ զծանօթութիւնս սրտին, միթէ ամենիմաստ ճարտարապետն յումպէ՞տս զարդարեալ իցէ զբնական բնութիւնն այսու կարողութեամբ։ Հուսկ ուրեմն բնական իրաւունք եւ բնական սէրն պահանջեն զընկերութիւն,

քանզի միով մտաց գերագոյն են խելամտութեամբ, և խորին իմաստութեամբ իւրեանց. Եթէ բնական է մարդոյ փափաքն կատարելութեան՝ թէ՛ մտացն ի գիտութիւն ճշմարտութեան ժամանել և թէ՛ կամացն ժամանել ի բարութիւնս, մինչ ցնորեա՞լ իցեմք ասել և հաստատել թէ իւրաքանչիւր ոք առանց հասարակութեանն և գերագոյն ճեմարանացն դաստիարակութեան՝ ունի զամենայն գիտութիւն. և նմանապէս թէ իւրաքանչիւր ոք ունի զամենայն բարեմասնութիւնս թէ՛ հոգւոյ և թէ՛ կենաց, այն է զճոխութիւն, զանդորր զխաղաղութիւն, ևն. Յայտնցիկ ամենեցուն յայտ է՝ թէ օրէնք բնութեանն և կարգ պահանջեն զի որ բնութեամբ կարօտի իմիք՝ և ինքնին անկար է առ այդ, այլ միայն ընկերութիւն և միաբանութիւնն բազմաց կարեն լնուլ զպիտոյս կենացն՝ թէ՛ ըստ հոգւոյն և թէ՛ ըստ մարմնոյն, պարտի ընդ ծանր պարտաւորութեամբ բնութեանն և կարգի, զի յօգնեսցէ զանձըն ի բազմութիւն մարդկան նորին կարօտութեանցն ձեռընհաս եղելոց. Սմին իրի դարձեալ իմաստութեամբ ասէ Կիկերոն, (*) չիք ինչ գլխաւորին Աստուծոյ ի մարդկային իրս այնքան հաճոյական՝ եթէ ո՛չ զի մարդիկ ի մէջ իւրեանց ունիցին զկարգադրեալ և զկատարեալ միաբանութիւն, որ կոչի քաղաք. Ուստի

**ՆՄԲ.** Մեծաւ անիրաւութեամբ նախատեցին ապականեալքն ի բարս և ի վարս զմարդկային բնական բնութիւն, և առ ոտն հարեալ զբարութիւն բնական օրինացն և իրաւանց, համարձակեցան ընդդէմ ելանել և հաստատել՝ թէ մարդս բնականապէս վայրենի է, և թէ բնութիւն մարդոյ մարդատեաց է և գազանային. Զորոց չէ արժան և ոչ իսկ զցնորս առարկութեանց յառաջ բերել և լուծանել, քանզի դէմ ընդդէմ հակառակ գոլովբանիցն մոլար վարդապետութիւն նոյն գործոց նոցա, հրաժեշտ տամք և նահանջեմք անգամ մեք, քանզի եթէ մարդս բնութեամբ անտառային էր՝ առ ի՞նչ արժան հա-

(*) Յաղագս բարեկամութեան.



մարթիցի կեալ Ռուսսոյին ի դեր քան զամենայն քաղաքս աշխարհի ի փառաւորեալն Փարիզ, ո՞չ ապաքէն պարտ էր գազանային և անտառային բնութեանն մեկնիլ ի մարդկային քաղցր կենակցութենէն և ընդ գազանս Գաղղիոյ բնակիլ.

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

Քաղաքական ընկերութեան վախճանն է արտաքին բարեկարգութիւն կամ հասարակաց բարութիւն՝ հիմնեալ ի բարոյական բարեկարգութեան.

**ՆՄԳ.** Յառաջ քան զմտանել ի ցոյց առաջարկութեանս՝ գիտել պարտ է, վախճանին ծանօթութիւնն է որոշակի՝ որ տայ ըստ բարեկարգութեան, ընթանալ հպատակայն ի պարտս և ի պաշտամունս, քանզի որպէս ի համաբնաքանութենէ անտի յայտ է, վախճանին ազդաւ կամ ի շնորհս և ի զօրութիւն ձեռնամուխ լինիմք իւրաքանչիւր ի գործողութիւնս. Նոյնպէս և քաղաքային ընկերութիւնն՝ որ է գերագոյն քան զամենայն գործողութիւնս ըստ իմիք ի հարկէ ունի զներգործիչ պատճառն, կամ զվախճանն, յորոյ զօրութիւնն մղէ զմեզ բնութիւնն յայդ գործողութեան, իսկ արդ եթէ բնութեամբ բերիմք յայդ զօդ և միաբանութիւն, ի հարկէ վախճանն բնութեան բարի ինչ լիցի. Արդ բարութեանցս այսոցիկ երկու կարեն լինել տեսակք. կամ պարզապէս բարութիւնն արտաքին և ֆիզիքական՝ այն է յանդորրութեան ապահով ինչ վիճակ կենացս և խաղաղութիւն իւրաքանչիւր անհատից հասարակութեանն, և կամ այս այդ արտաքին բարեկարգութիւնն կամ բարութիւն՝ որ ամենեցուն է, սակայն բարութիւն ըստ որում յարմար է բարոյական բարութեանն, քանզի չէ՛ բարութիւն այն՝ որ չունի զբարոյականութիւն, և կամ որ չիցէ համաձայն բնական օրինաց և խղճի մտաց. Ուստի անհնար է զի վախճանն քաղաքային ընկերութեան լիցի միմիայն արտաքին պարզ յանդորրութիւն և խաղաղութիւն կենաց զուրկ ի բարու-

թեան բարոյից. զայս զառաջինն ծանուցեալ. Արդ ի ցու-
ցումն արտասանութեանս ասեմ.

ՆՄԴ. Նախ և առաջին նպատակ հաւանութեան բաղ-
մացն ի մի ընկերութիւն է՝ զի զարտաքին կենացն բա-
րեկարգութիւն ստասցի և գտցի յիւրաքանչիւր ոք. քան-
զի ամենեցուն հաւանութիւն մի գոլով, ի մի վախճան իւ-
րաքանչիւր ոք պարտաւորէ զանձն ըստ կարի և չափուն
դուն գործել ի ժամանել վախճանին, և մինչ այս ոք դուն
գործէ ժամանել վախճանին՝ այլ ոք չկարէ ընդդէմ կալ
կատարման պարտուցն, և ամենեցուն հաւանութիւն մի
գոլով՝ ամենեցուն ի մի հաւաքեալ կամօք և իշխանութեամբ՝
բռնութեամբ յետս նահանջի, և ի սէր բարեկարգութեա-
նըն ընդ պատժով պատուհասի անկանի, զոր ո՛չ այլ իմն
առնէ եթէ ոչ վախճանն հասարակութեան։ Երկրորդ՝ վախ-
ճանն քաղաքային հասարակութեան պարտ է զի յօգուտ
և բարութիւն հասարակաց լիցի. քանզի ամենեցուն հա-
ւանութեամբ կամեցեալ բարութիւնն պարտ է զի ամե-
նեցուն օգտակար լիցի, և ո՛չ թէ ումեմն յօգուտ և ու-
մեմն ո՛չ. քանզի բարութիւնն այն յամենեցունց նմին ի-
րի կամեցեալ է, քանզի վախճան լիցի յանդորրութիւն
անձանց անդամոցն հասարակութեան. ուրեմն խնդրի վախ-
ճանդ այդ վասն անձանց իւրաքանչիւր անհատից անդա-
մոցն հաւասարապէս, կամ ի բարութիւն իւրաքանչիւր
մասին հասարակութեանն. ուրեմն բարեկամութիւնդ կամ
բարեհաճութիւնդ է առ ամենայն ոք, և պարտք իւրա-
քանչիւրոցն է՝ բարի հաճիլ և կամիլ ամենեցուն։ Երրորդ՝
բարեկարգութիւնդ այդ արտաքին պարտի հաստատիլ ի
բարոյական բարութիւնն, քանզի չէ բարութիւն այն՝ որ
չիցէ համաձայն բնութեան մարդկան և օրինացն. և չիք
գործողութիւն ի մասնաւորն անտարբեր ի բարոյականու-
թիւնն։ Եւ միով բանիւ ասեմք, ամենայն վախճան մեր
և բարութիւնք աստի կենացս են երկրորդական վախճան
կամ յուէտ միջոց և գործիք վասն վերջին վախճանի կա-
տարեալ երջանկութեանն։ Այլին բաղդի բարութիւնք
վասն կենաց բարութեանն, կենաց բարութիւնն՝ վասն ա-



ռաքինութեանց, առաքինութեանց բարութիւնն վասն յա-
ւիտենական երջանկութեանն, և յաւիտենական երջանկու-
թիւն վասն փառացն Աստուծոյ։ Ուստի ամենեւին ընդ-
դէմ ճշմարտութեան է կարծիք Գանթի և Գանթեանց՝
թէ վախճանն քաղաքային ընկերութեան է ամփոփումն և
չափաւորութիւն ազատութեան իւրաքանչիւրոցն և ներ-
դաշնակութիւն նորա յընկերութեան մարդկան։ Քանզի
նախ՝ ազատութիւնդ այդ միայն ամփոփի նկատմամբ ար-
տաքին գործոց հասարակութեանն, և ո՛չ երբէք ներքին
գործոց իւրաքանչիւրոցն, որք նմանապէս ունին զյարա-
բերութիւն առ հասարակութիւնն. զորօրինակ անձնա-
պանութիւն՝ հայհոյութիւն և գողութիւն, որք ո՛չ հակա-
ռակին ազատութեան մարդկան. քանզի երկրորդ՝ արտա-
քին ամփոփումն ազատութեան և կամաց մարդկան չու-
նի տեղի, բայց միայն զի առ բազումս յետս կասիմք ի
գործողութեանց ոմանց՝ քանզի հակառակ է կամեցողու-
թիւնն մեր ներքին կարգի բնութեան և իրացն, և պար-
տաւորութիւնք խղճի մտացս արգելուն զմեզ, ո՛չ թէ
մարդկային պատիժք՝ կամ պատուհասք և կամ այլոցն
կամաց ազատութիւն։ Ուրեմն դարձեալ ճշմարիտ է՝ թէ
վախճանն հասարակութեան քաղաքայնոցն, է արտաքին
բարեկարգութիւն, օգուտ և բարութիւն ամենեցուն, որ
չափաւորի այնպէս լինել ի բարոյական կարգէ և ի բա-
րութենէ բնութեանն։ Այլև իբր գրեալ Աստուածարեալ
ումն (*) զի իշխանքն «ոչ են յերկիւղ բարեաց գործոց այլ
չարեաց, կամիս չերկնչել յիշխանութենէ անտի՝ զբարիս
գործեա և ընկալցիս գովութիւն ի նմանէ, զի Աստու-
ծոյ պաշտօնեայ է քեզ ի բարիս, ապա՝ եթէ չար գործի-
ցես երկի՛ր, զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ
մէջ... վասնորոյ հարկ է հնազանդիլ, ո՛չ միայն վասն
բարկութեանն, այլև վասն մտացն խղճի»։

---

(*) Հռոմ ԺԳ. 3. 4. 5։

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

### ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՐՑ, ՈՐՔ ԿԱԶՄԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ԿԱՄ ԱՆԴԱՄՈՅ ՄԱՐՄՆՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Նմն․ Տարերք քաղաքային ընկերութեանն են իշ-
խանն և բազմութիւն հպատակացն․ Քանզի ընկերու-
թիւնն է [illegible] և [illegible], այն է համանու-
թեամբ և հաճութեամբ բազում բնտանեկան կամ առան-
ձինն ընկերութեանց ի մի փախճան միաբանութիւն․ Եթէ
ի ֆիզիքական անձն պարտ է՝ զի գլխաւոր անդամ լիցի,
զորմէ այլ ամենայն անդամք կախիցին և հարկաւորապէս
էականապէս զօդեալ իցեն ընդ գլխաւորագունին իւրեանց՝
այնպէս զի եթէ բարձցի կապդ այդ ֆիզիքական և կա-
խումն, հարկաւ ցրուին այլ անդամքն․ և այսմ գլխաւոր
մասին մարմնոյ՝ յորմէ զկենդանութեանն իւրեանց առ-
նուն զմասն և զհաղորդակցութիւն՝ տան զանուանդ [illegible]։
Նոյնպէս ի համարակաց ընկերութիւնն, որ է բարոյական
[illegible] կամ [illegible], առ ի միութեան ունել զանհատս
և զմասնաւորս այսր բարոյական բաղադրութեան, պարտ
է՝ զի իցէ գլուխ իմն, որ ունիցի ի բնութենէ անտի
միաբանութեանդ զկար զօրութեան ի մի ունելոյ զայլ ա-
մենայն անդամս, և այսպիսի [illegible] [illegible] [illegible] [illegible]-
[illegible] [illegible] առամբ զանուանդ [illegible] կամ [illegible]-
[illegible] կամ [illegible]։ Ուստի տարերք բարոյական կազմուա-
ծոյ համարակութեանն են, նախ՝ բազմութիւն կամ հաւա-
քումն բազում առանձինն գերդաստանական ընկերու-
թեանց․ երկրորդ՝ գլխաւորն կամ մեծաւորն կամ իշխանն
այսր բազմութեան․ և յայտ է թէ կազմուածդ այդ բա-
րոյական ի բնութենէ է, ըստ որում տեսաք և ցուցաք,
թէ մարդն բնականապէս բերի յընկերութիւնն, եթէ բը-
նական է այդ բարոյական միաբանութիւնն անդամոց ընդ
գլխոյն իւրեանց․ Հետևի թէ բնական օրինաց յիրաւանց



և ի կարգէ բնութեանն տուեալ են իրաւունք և պաշտա-
մունք երկոցունցն անդամ, գլխաւորին կամ իշխանին զի-
րաւունս իշխելոյ անդամոցն և ի միասին զպարտս խնամե-
լոյ զամենայն անդամս և ի միութեան պահելոյ․ և բազ-
մութեանն անդամոց այնր համարակութեան, զպարտս հը-
պատակելոյ սիրելոյ և ի միասին զիրաւունս պահանջելոյ
ի գլխոյն և յիշխանէն զխնամս, զբարեկարգութիւն, զսէր,
զարդարութիւն․ քանզի խնամով, սիրով, բարեկարգու-
թեամբն և արդարութեամբ համարակութիւնն կարէ կալ,
և փախճանին ժամանել։ Ուստի քաջ մտա դիցեն իշխանք
և թագաւորք համարակութեանն, թէ ունին զիշխանու-
թիւն ի բնութենէ, այն է իշխելոյ անձանց՝ ոչ թէ տի-
րելոյ անձանց, և իշխելոյ անձանց՝ ոչ յամենայն գործո-
ղութիւնս առանձինս և մասնաւորս, այլ յայնս՝ զոր պա-
հանջեն համարակաց ընդհանուր բարոյական բարեկարգու-
թիւնն, որ փախճան է այսր ընդհանուր միաբանութեան։
Ուրեմն իշխանին իրաւունք կամ իշխանութիւն է դնել զբա-
րեկարգութիւն անձանց հպատակացն յօգուտ համարա-
կութեանն՝ ոչ թէ միմիայն անձին․ և յայսմիկ զանա-
զանի իշխանութիւնն ի տէրութենէն, կամ իշխելն ի տի-
րելոյ․ զի նախ՝ տիրելն զիրաց վայելէ, կամ ընչից՝ և ոչ
բանական կենդանեաց՝ կամ անձանց․ երկրորդ՝ տիրելոյն
փախճան զիրաց՝ է յօգուտ ոչ համարակութեանն, այլ յօ-
գուտ առանձին իւր․ Մինչ իշխելն անձանց՝ է դնել զբա-
րեկարգութիւն յօգուտ համարակացն․ Դարձեալ՝ տիրե-
լոյն կիրառութիւն յառաջ գայ ի կամացն ազատութենէ
և ոչ ի պարտուց և ի պաշտամանէն, մինչ իշխանութի-
ւնըն ի պարտուց իշխանին և յիրաւանց հպատակացն՝ որ
ծագին յօրինացն անտի բնութեան, որ է կարգ կամ մեքե-
նայն․ Եւ սորին վասն հպատակացն մեծակ ոչ երբէք
պարտի լինել իբրև զիրացն՝ որ է ընդդէմ կարգի բը-
նութեանն և փախճանին համարակութեան, քանզի ամե-
նայն հպատակ՝ թէ նուաճէ զանձն իշխանին օրինաց յօ-
գուտ համարակաց՝ այդուիկ հպատակութիւն իւր նմին
դառնայ ի բարութիւն, զի և ինքն մասնակից է այդր ընդ-

հանուր հասարակութեանն բարութեան, անդամ և մասն գոլով նորին. և որ զհասարակաց բարութիւնն ջնջեալ է յիւր անձինն և եթ բարութիւն՝ մեծապէս վնասէ փոխճանին բովանդակ հասարակութեանն, որ հաւասարապէս և արդարութեամբ ամենեցուն տրոհէ և բաշխէ զբարութիւնս իւր։

ՆԾԶ. Գիտել պարտ է թէ տարբերք այդոցիկ՝ պարտ է զի լիցին ըստ բնական ընթացից և կարգի իրացն. և ո՛չ յաղագս և յանտարբեր կամեցողութենէ մարդկան ընդդէմ Ռոսսոյի, քանզի անդամք հասարակութեան կամ ժողովրդեանն բազմութիւն յընկերութեանն՝ չեն բաղկացեալ յանհատից պարզապէս առեալ, այլ ի մանաւոր և յառանձինն ընտանեկան ընկերութեանց բնականապէս, քանզի անհատ առանձինն մարդ չկարէ պահել զկատարելութիւն անձին և մշանջենաւոր լինել, այլ սոյին պարտ է՝ զի դոնէ յամուսնական ընկերութեանն լիցին. ուստի ընդհանուր հասարակութիւնն բաղկացեալ է ըստ պահանջելոյ բնական օրինաց և կարօտութեանց ի բազում գերդաստանական ընկերութեանց՝ որք յանհատից իցեն։ Դարձեալ գիտել պարտ է՝ թէ մարմինն այսր քաղաքային ընկերութեան բաղկացեալ է [illegible]՝ ոչ թէ [illegible] եղանակաւ, այսինքն է կազմուած հասարակութեանն մարմնոյ՝ յօրինեալ է ի բազում անդամոց իւրեանց սեփական զօրութեամբ յարդարելոց, այսպէս մարմինն մարդոյ կազմողական է, քանզի բա՛ց ի բովանդակ մարմնոյն գործողութեանց, որ ամենայն մարմնոյն հասարակ է, զորօրինակ շարժիլ, զգալ, են, են, և յիւրաքանչիւր անդամս սեփական գործողութիւնք, այսպէս աչք տեսանեն, ականջք լսեն են, սակայն ամենեցուն գործողութիւն յօգուտ բովանդակ անձին համարի, և ի մի վախճան ծառայեն մարդկային բնութեանն. այսպէս և զբարոյական անձնաւորութենէն, որոյ միաբանութիւնն չէ պարտ զի գործիքական լիցի, այսինքն բաղկացեալ ի մարմնոյ և ի մասանց՝ որք իւրեանց զուրկ ի գործողութեանց և անտարբերք ի շարժել իցեն՝ և կարօտ լիցին արտաքին իմն պատճառի և զօրու-



թեան ի շարժել զգործին՝ կամ զմեքենայն։ Այլ իւրաքանչիւր ոք ունի զսեփական գործողութիւնս, և անհատք մանք միաբանեալք ի մի մի ընկերութիւնս արհեստից, տուրևառութեանց, ուսմանց, գիտութեանց, են. որոց ամենեցուն անձանց ի շահ և ըստ իմիք հասարակութեանն անդամ դառնան ի բարութիւն։ Եւ աստի է հասարակութեանց՝ և հասարակութեանց, ազգաց՝ և ազգաց, քաղաքացըն՝ և քաղաքաց, միոյն՝ քան զմիւսն արժանաւորութիւն և կատարելութիւն և պատիւ. զի մինն քան զմիւսն ընդմերձեցեալ կատարելութեանց, գիտութեանց, արհեստից, տուրևառութեանց յառաջադէմ գտանին՝ և գերագոյն, սորին վասն և վայելչութիւն կենաց նոցին քաղցր և ախորժելի, ընդ նմին և բարք և վարք և կենցաղավարութիւնք նոցա ցանկալի, և համեստութեամբ զարդարեալ։

---

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### ՑԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ՆԾԷ. Ժամ է արդ խօսել զգերագոյն քաղաքային իշխանութենէն. արդ սահմանի [illegible] կամ [illegible] [illegible] կամ [illegible] ու [illegible] [illegible]՝ և [illegible]։ Կոչի [illegible] և [illegible], քանզի յայլմէ արարած իշխանութենէ չըկախի։ Կոչի [illegible]՝ կամ [illegible], նախ՝ քանզի զանազանի ի ֆիզիքական զօրութենէ, կամ բռնութենէ. երկրորդ՝ [illegible], քանզի յառաջ գայ ի մասաց անտի, որ ազդ առնէ իւրաքանչիւր ումեք, արժան է ուղղել զանձն առ վախճանն ի բնութենէ անտի որոշեալ. քաղաքային գործողութիւնքն են նիւթ և առարկայ այսր իշխանութեանն և բարութիւնն հասարակաց նորին վախճան։ Ուստի, նախ՝ պարտիմք խօսել զաղբերէն կամ զսկզբնէ այսր գերագոյն իշխանու-

թեան. երկրորդ՝ ընթակայէն այսր իշխանութեան. երրորդ՝ պատճառէն՝ որ որոշէ ընթակայն այսր իշխանութեան. չորրորդ՝ զպէսպէս ձևոց այսր իշխանութեան։ Ռուսոյն խռովութեան և ապստամբութեանն Գաղղիոյ ջատագով, զգերագոյն իշխանութեանն բնութիւն այսպէս գեղեցիկ հընարեաց, իւրաքանչիւր ոք զազատութիւն իւր ըստ ամենայն մասին տայ քաղաքականացն՝ և ամենեքին միմեանց զազատութիւնն տալով, ոչինչ իմն կորուսանեն. քանզի որքան շնորհեցին այնքան և ընդունին. սակայն շնորհումըդ այդ չէ պարտ զի լիցի միում կամ առանձինն անհատին, այլ բովանդակ հասարակութեանն, և ի շնորհելոյ սատ իրաւանցս և ազատութեանս ծագի բոլորն կամ ընդհանուր ազատութիւն իմն՝ և կամք, որ կայ մի միայն ի հասարակութեան կամ ի ժողովրդեանն՝ զոր և անվեհեր կոչէ [illegible], որ և զօրութեամբ և ընդհանուր կամօք իւրովք հաստատէ զիշխանս, զթագաւորս, զծերակոյտ, և զայլ ամենայն իշխանաւորսն, յորոց կարէ ըստ հաճոյս և ըստ ժամանակին առնուլ առանց ապստամբութեան՝ անուամբն առ առեալս։ Ընդդէմ որոյ ասեմ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ա.

Քաղաքային իշխանութիւնն անմիջապէս յԱստուծոյ անտի է։

ՆԾԸ. Քաղաքային ընկերութիւնն նախ՝ հաւաստապէս պահանջէ զի իցեն անդամք բաղկացուցիչք այսր ընդհանուր և բարոյական անձնաւորութեան, որ է հասարակաց միաբանութիւնն, և երկրորդ՝ հարկաւորապէս կամի զի անդամքդ այդոքիկ կախիցին և ի կենդանութեան կեցցեն, և միմիայն կենդանութիւնն անդամոց է զլուխն՝ զօրութեամբ որոյ մարմինն բովանդակ կենդանի է։ Զայս տեսաք ի վեր անդ (ՆԾԵ). իսկ տեսաք եւս թէ մարդկային և քաղաքային ընկերութիւնն բնական է, և բնութիւնն որ զինչ և իցէ շնորհեալ յԱստուծոյ անտի է անմիջապէս. ուրեմն քաղաքային գերագոյն իշխանութիւնն անմիջապէս յԱստուծոյ անտի է։ Երկրորդ՝ անհնարին իմն է երևակայել մը-



տաց զքաղաքային ընկերութիւնն՝ առանց քաղաքային բարձր իշխանութեան։ Եթէ կարօտութիւն, բնութեանն օրէնք և իրաւունք կամին զայս միաբանութիւն բազմաց՝ ընդհանուր իմն է դնել զբնական իմն հակումն ի բնութեան առ քաղաքային ընկերութիւնն և չդնել կամ շնորհել ընդ բնութեան պարգևս և զզօրաւոր զմիմեայն բաւական միջնորդ և առիթ այսմ ընկերութեան՝ անհնարին. քանզի որ կամի զվախճանն կամի և զգործիս հարկաւորս առ վախճանն. զի՞արդ հնար լիցի ի բարութիւն և ի վախճան իւր ժամանել հասարակութեանն առանց զօրութեան և իշխանութեանն, որ ի միութեան ունիցի զանթիւ անդամոցն զկամս և զմիաբանութիւն։ Նա զի՞նչ գործի կոչիցեմք զգերագոյն իշխանութիւնդ հասարակութեան, նա մանաւանդ է էական մասն կացուցիչ բնութեան հասարակութեանն։ Ուրեմն անմիջապէս ի բնութենէ գոլով քաղաքային ընկերութիւնն, լիցի հարկաւ և իշխանութիւնն՝ էական մասն քաղաքային ընկերութեան։ Դարձեալ՝ Աստուած կամի զի կարգ բնութեանն պահեսցի. իսկ արդ կարգ բնութեանն և ամենայն բարեկարգութիւն իշխանութեամբդ ստացեալ լինի՝ և պահպանի. ուրեմն յԱստուծոյ անտի է իշխանութիւնդ։ Ո՞ւր թողուցումք զիմաստս մեթաֆիզիքականս, թէ ամենայն բարութիւնք յԱստուծոյ անտի են՝ եթէ բարձրագոյն իշխանութիւնն է բարութիւն՝ պարտ է զի յԱստուծոյ անտի իցէ։ Ո՞ւր թողուցումք զի Աստուած համընթացող անմիջապէս ամենայն գործողութեանցդ մարդկան։ Սմին իրի ասաց ոմն՝ յԱստուծոյ անտի ի գիմաց. « Ինև թագաւորք թագաւորեն և հզօրք գրեն զարդարութիւն » (*). և այլ ոմն « քանզի ո՛չ ուստեք է իշխանութիւն եթէ ո՛չ յԱստուծոյ, և որ են յԱստուծոյ կարգեալ են, այսուհետև որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ, և որք հակառակն կան անձանց դատաստանս ընդունին » (**) զի Աստուծոյ պաշտօնեայ է, քեզ ի բարիս . . . զի Աստուծոյ սպասաւոր

(*) Առակաց 2։

(**) Հռովմ. Գ. ԺԳ. 1. 2. 4. 6։

է վրէժխնդիր ի բարկութիւն այնմ, որ զչարն գործիցէ. վասն որոյ հարկ է հնազանդիլ ո՛չ միայն վասն բարկութեանն՝ այլ և վասն մտացն խղճի։ Վասն այսորիկ և հարկըս հարկանէք, զի Աստուծոյ սպասաւորք են ի նոյն կանխեալք։ Արդ եթէ Աստուծոյ սպասաւորք են, Աստուծոյ պաշտօնեայք են, և եթէ ո՛չ ուստեք է իշխանութիւնն եթէ ո՛չ յԱստուծոյ, և եթէ հարկ է հնազանդ լինել, և ես այդ ոչ վասն բարկութեանն, այլ վասն մտացն խղճի. ուրեմն իշխանք չեն սպասաւորք ժողովրդեանն, չեն պաշտօնեայք ժողովրդեանն, և իշխանութեան նոցա հզօրութիւն՝ չէ ըստ քմաց և հաճոյից ժողովրդեանն, և ո՛չ յազատութենէ իւրաքանչիւրոյն բղխեալ կամ ծագեալ, այլ ի վերնոյն տեսչութենէ։ Նա՛ զի ո՛չ ոք կարէ միայն, թէ կամիցի մարդ լինել, բաժանել կամ զատել յինքենէ զէական հոգւոյն զյատկութիւն, կամ զստորոգելի. ապա թէ ո՛չ ընդ իշխանութեամբ բազմութեանն ժողովրդոց չըլինէին ընկերութիւն մարդկան և հպատակաց, այլ յաւէտ անբան կենդանեաց. զոսա յայնցանէ ազատութիւնն դլխաւորապէս որոշէ, հիմն և սկիզբն ամենայն բարոյականութեան. ուրեմն հակառակ կայ ճշմարտութեանն՝ վարդապետութիւն խռովարարին և անօրինին Ռուսոյի։ Եւ ոչինչ ինձ օգուտ այնու ճշմարիտ սկզբամբդ՝ թէ թագաւորն է վասն ժողովրդեան, ո՛չ ժողովուրդն վասն թագաւորին։ Այո՛ յԱստուծոյ անտի է իշխանութիւնն թագաւորին առ ի խնամ տանիլ ընդհանուր բարութեան և երջանկութեան ժողովրդեանն, ո՛չ թէ իշխանութիւն թագաւորին ի ժողովրդենէ անտի է կամ իշխանն կախի ի ժողովրդենէ անտի։

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Բ.

Ենթակայ [illegible] գերագոյն իշխանութեանն ո՛չ է ժողովուրդն։

ՆԾԹ. Անմիջապէս յառաջելոյն հետեւի թէ ժողովուրդն չկարէ ենթակայ լինել այսր գերագոյն իշխանութեան ընդդէմ Գրոտիոսի և Պուֆֆենտորֆի և Ռուսոյի ջատագովացն ազատամտութեան և ռամիկ ժողովրդեանն։ Նախ և յառաջ ընդդէմ է թէ՛ ուղիղ սկզբանց մտացն, քանզի ժողովուրդն լինէր ի միասին հպատակ և իշխան, մեծ և փոքրր, գլուխ և անդամ, հովիւ և հօտ, կամ լինէր և չըլինէր ի միասին՝ որ ընդդէմ է, և՛ հակառակ բնութեան ընկերութեան, քանզի երկու էական տարերք բաղկացուցիչք ընկերութեանն կամ ընդհանուր անձնաւորութեան են բազմութիւն և իշխանութիւնն վարիչ բազմութեան և ունող ի միութեան։ Զի՞ արդ հնար է պահել ընկերութեանն՝ եթէ իշխանութիւնն յամենայն ոք լինէր։ ո՛չ ապաքէն առ ի հասանել վախճանին մարդոյ հարկաւորապէս կարօտի գերագոյն իշխանութեանն, ընդ հովանեաւ որոյ և օրինօքն կառավարեսցի։ Յաւել և զանփոփոխելի, զընդհանուր, և զհաստատ սովորութիւնս՝ զոր անցեալ դարուց ազգացն հնախօսութիւնք և աւանդութիւնք անկեղծ և անստերիւր մեզ ցուցանեն։ Ո՞րբ լուաւ, և յո՞րում ազգի՝ թէ ժողովուրդ ինձ առանց իշխանութեան մընացեալ իցէ, և կամ ժողովուրդ առանց ծերակուտին, առանց ազգապետին՝ ազգ, այլ յաւէտ զհակառակն լսեմք և ընթեռնումք և ուսանիմք ի գրոց և յաւանդութեանց և ի հնախօսութեանց, թէ ամենայն ազգք ի հաստատութենէ անդ իւրմէ, կալան զիշխանս իւրեանց, այսպէս Քաղդէացիք թագաւորօքն իւրեանց, Իսրայէլացիք դատաւորք և թագաւորօք իւրեանց, Եգիպտացիք, Հայք, Յոյնք, Հռովմայեցիք, են են. որք փաստից անգամ չունին ինչ պէտս՝ գոլով հնախօսութեանցն ազգաց յաղթական կամարացն, սեանց, և անդրեաց վկայից, թէպէտ անմտունքն՝ սակայն յաւիտենականք և լռութեամբն յայտ խօսունք, և կենդանիք։



### ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Գ.

Պատճառն՝ որ [illegible] և [illegible] Ենթակայ գերագոյն իշխանութեան [illegible] [illegible]՝ է գերագոյն [illegible], և [illegible]՝ [illegible] [illegible] ժողովրդեան։

ՆԿ. Տեսաք թէ իշխանութիւնդ ո՛չ բղխի ի ժողովրդենէ և ո՛չ ի հաճոյից կամ յազատութենէ նոցա, այլ

յԱստուծոյ և եթ, որ իմաստութեամբ կարգեաց զբնութիւնն՝ զկարգ, և զօրէնս բնութեան։ Արդ զի՞նչ պատճառն այն իցէ, որ յաւէտ այսմիկ ումեք, և ո՛չ այնմիկ տայ զիրաւունս իշխելոյ բովանդակ հասարակութեանն, կամ զայս յաւէտ ենթակայ՝ և ո՛չ զայն գլուխ և իշխան կացուցանէ ի վերայ այլոց։ Եթէ անսամք ձայնի և օրինաց կարգի և իրաւացն բնութեանն, պարտիմք ասել՝ թէ որ ի բնութենէ անտի զաւել և զգերագոյն իրաւունս ունիցի, նոյն պարտ և արժան է՝ զի գլուխ կացցէ ի վերայ բովանդակ հասարակութեանն, արդ ի խնդիր մտեալ բընութեանն օրինաց՝ կարգի և իրաւանց ասել տեսցուք, թէ Քանզի քաղաքային հասարակութեանն կամ ընկերութեանն կարգ հետևի նախկին պարզ և հայրենական ընկերութեանն, և քանզի բնականապէս վասն գերագոյն իրաւանց իւրոյ գլուխն ընտանեաց հայրն է, և ի հայրն կայ իշխանութեանն. Նոյնպէս ի քաղաքային ընկերութեանն, որ առաջինն է իրաւամբ և գերագոյն հասարակութեանն՝ նոյնն բնականապէս ունի իրաւունս իշխան կալոյ բովանդակ հասարակութեանն. Իսկ արդ որ ունի զգերագոյն իրաւունս ի քաղաքային հասարակութեան՝ է նոյն, որ էր գլուխ ընտանեկան ընկերութեանն՝ ուրեմն։ Ցուցանի փորձագոյն. քանզի հասարակութիւնն յառաջ գայ յընդլայնմանէ ընտանի ընկերութեանն, որ տակաւ տակաւ աճեցեալ և բազմացեալ, յորդւոց յորդիս, ի թոռանց ի թոռունս՝ զեղուն արտաքս յընտանի ընկերութեանըն սահմանաց և տանէն ի գեօղն՝ յայսմանէ ի գիւղաքաղաք, յայսմանէ՝ ի քաղաք, յայսմանէ՝ ի գաւառ, և յայսմանէ՝ յերկիր կամ թագաւորութիւն. զայս չափ բնութիւնն անայլայլ առաջնորդ ցուցանէ մեզ, զնոյն՝ ընտանեկան իշխանութիւնն ըստ արձակելով, և ինքն ըստ բազմութեան ըստ այն տարածեալ զօրութեամբն զամենեսին ի միութեան ունելով. սակայն չէ՛ պարտ իմանալ իբր թէ անձն իշխանին ի մասնաւորի ի բնական օրինաց որոշի կամ սահմանի, այլ այդ իշխանութեանն կերպաւորութիւն և ստացումըն գրական կախի յազատ գործողութենէ կամաց մարդկան։



ՆԿԱ. Եւ բազմիցս պատահի՝ զի կամ իշխանն մեռանի և ո՛չ մնայ յարժանաւոր սերնդոյն և ոչ մի, և կամ վասն ընդհանուր ներքին իմն շարժման քաղաքայնոց վրդովելով՝ այսպէս սասանի ի հիմանց թագաւորական ցեղին, և կամ նուաճեալ եղեալ՝ և յերկիր անծանօթ անկեալ՝ կամ եւ ազատութեամբ իւրեանց և ի սէր տուր և առութեանն՝ կամ որո՛յ և իցէ արժանաւոր պատճառին եղեալ բազում անհատ ընտանեկան ընկերութեանց և գերդաստանաց, և յանբնակ երկիր վայր իջեալ՝ կաբեն յայնժամ ըստ հաւանութեան կամացն ընտրել զոք իւրեանց ի գլուխ։ Եւ յայնժամ պատճառն զենթակայն իշխանութեան որոշելոյ՝ է մի միայն կամք և հաճութիւն ընտանեկան այդ փոքրիկ իշխանութեանց։

ՆԿԲ. Գերագոյն իշխանութիւնդ երբեմն փոխադրել կարէ յենթակայէն յայլ ենթակայ. կամ օրինաւոր ժառանգութեամբ, կամ նոր իմն ընտրութեամբ, և կամ յարդար պատերազմի նուաճեալ զթշնամին՝ տիրել կամ իշխան կալ ի վերայ։ Սակայն և զայս գիտել պարտ է՝ թէ կամք և ազատութիւն մարդոյ կարէ մի միայն սահմանել և ընտրել զենթակայ այսր իշխանութեան ո՛չ թէ տալ ենթակային զայդ իշխանութիւնդ, որ չէ ի ժողովրդեանն. քանզի չկարէ ոք տալ զոր ոչն ունի՝ այլ ընտրեալ միանգամ ի ժողովրդենէ անձինն՝ յԱստուծոյ անտի անմիջապէս առնու զիրաւունս և զիշխանութիւն վարելոյ զհասարակութիւն վայելուչ և կարևոր նպատակ ցվախճանն։ Ասացի ընտրեալ ի ժողովրդենէ, քանզի ամենայն իրաւունք և կարողութիւնք առ ի զօրութենէ ի գործն, կամ յարդիւնս մտանել պէտս ունի գրական իմն գործողութեան, այսպէս հօրն բնականապէս այրելոյ ունի բընութեամբ զզօրութիւն, բայց առ ի զօրութենէ ի գործ մտանել կամ յարդիւնս պարտ է զի գրական իմն կամաց մարդոյ կամ այլոյ պատճառին գործողութիւն պատճառ լիցի այդր բնական հօրյ զօրութենէ։ Այսպէս մարդս բընականապէս իրաւունս ունի բազմանալոյ ազգաւ ամունական ընկերութեան՝ զիրաւունս զայս ածէ ի գործադը-

բութիւն գրական իմն մարդկային կամաց հաւանութեանն գործ՝ կամ դիպողութիւն ։ Այսպէս մարդս գործոյն արարչութեան ի կարեւորութենէ գայ ի գոյութիւն , նոյնպէս թէպէտ և բնութեանն չափ՝ զի որ գերագոյն է իրաւամբ՝ նա կացցէ գլուխ և իշխան ի վերայ այլոցն . սակայն բընութեանն օրէնք ո՛չ կարեն ի զօրութենէ անցանել ի գործ և յարգիւնս՝ առանց գրական ազատ իմն մարդկային գործողութեան կամ դիպողութեանն փաստի ։ Այսպէս առաջիք և զքաղաքային ընկերութենէ , առ որ թէպէտ և մարդ բնականապէս բերի , սակայն առ ի քաղաքային ընկերութիւնն արդեամբ կայացանել՝ և զիշխանութիւնդ յենթակայ ոք՝ կամ ի թանձրացեալն որոշել՝ մարդկային իմն ազատ գործողութեան կամաց պէտս ունի , որ հարկաւ պահանջի ի սկիզբն կամ ի ծնունդ ամենայն իշխանութեանց և թագաւորութեանց , զորս մի առ մի յուզել պատմագրացն է կամ միաբան հաւանութիւնն բազում միմեանց հաւասար գերդաստանաց , որք յօգուտ իւրեանց ընդդէմ թշնամեացն երկիւղի՝ և կամ այլով որպիսի և իցէ պատճառաւ միաբանեցան ։ Նոյնպէս որոշել զգերագոյն իրաւանց ենթակայն՝ տէր և իշխան բովանդակ քաղաքային հասարակութեանն՝ պէտս ունի գրական իմն կամաց գործողութեան ։ Ուստի չէ պարտ չփոթել զայս գըրական գործն կամաց և զընտրութիւն այսր կամ այնր անձին՝ զոր բնական օրէնք և իրաւունք ո՛չ երբէք որոշեն , ընդ իշխանութեանն թագաւորին՝ որ հաստատի և հիմնեալ է ի բնութեան օրէնս և իրաւունս ։

ՆԿԳ . Աստանօր զերկուս առաջարկեն մեզ նորաղանդք ։ Նախ՝ թէ ամենեքեան էականապէս հաւասար են միմեանց , և բնութիւնն չկարէ որոշել զայս ոք կամ զայն ոք իշխան ։ Երկրորդ՝ զքաջին Սուարէզի զվարդապետութիւն , որ ասաց (*) « ի հասարակութեանն լինել այսր իշխանութեան ի բնութենէ իւրմէ , այնպէս զի չէ ի ձեռս մարդկան ժողովել և արգելուլ զայս իշխանութիւն » ։ Որում

(*) Յաղագս օրինաց · Գիրք · Գ · Գլ · Բ ։



առաջնոյն պատասխանեմք ։ քերաւի իւրաքանչիւրոք բնութեամբ [illegible] հաւասար է , բայց այլ է հաւասար լինել ի յատկութիւնս կամ ի կատարելութիւնըս բնութեան ներքինս , և այլ յարտաքինսն գործողութեամբ իւրք յառաջեալսն . քանզի չասեմք՝ թէ անհատից պակաս կամ իրաւամբ մարդկային բնութեանն անկատար գոլով պարտին հպատակ կալ իշխանացն , այլ յայնպիսի իրաւունս բնութեան , որք բաց ի կացուցանելոյ զմարդն կատարեալ ի բնութեան մասին , առացեալ լինին և յաւելուն ի բնութիւնն . այսպէս , ո՛չ ոք կարէ յանդգնութեամբ ասել թէ և ես իրաւունս ունիմ իշխան կալոյ ի վերայ այլոցն , քա՛ւ լիցի , իրաւունս ունի միայն զանձն [illegible] մարդկային բնութեան հաւասար կատարելոյ ամենեցուն , իսկ որք իշխանք կան այլոցն՝ այդ վասն առաւելութեան յաւելեալ կամ զօրութեամբ գործողութեան իրիք առացեալ իրաւանցն է . քանզի են իրաւունք բնութեանն առանելոյ , որում պէտս ունի բնութիւնն ի կեանս և ի կատարելագործութիւն կենաց վիճակին ։ Այսպէս իրաւունք հայրենի իշխելոյ ի վերայ որդւոցն՝ և թոռանց , իրաւունք ընչից , կալուածոց են ։

Առ Վարդապետութիւն մեծիմաստ Աստուածաբանին ասեմք , Սուարէզ չասաց թէ իշխանութիւն [illegible] ի կամաց ժողովրդեանն է , կամ ի դաշնադրութենէ անհատից հասարակութեանս , այլ թէ իշխանութիւնն անմիջապէս յԱստուծոյ է և ո՛չ յանհատս ժողովրդեան՝ ոչ անհատապէս առեալ իւրաքանչիւրոցն և ո՛չ բովանդակապէս , այլ միայն ի հասարակութիւնն՝ [illegible] ։ Եւ այս հասարակութիւնս կարէ զառ ի վերուստ առեալ իշխանութիւնըն փոխադրել ի մի անձն ի մարդկանէ և կամ ի ծերակոյտ ժողովրդեանն ի բարութիւն հասարակաց ։ Արդ յարգեմք և մեք զկարծիս նորա , թէպէտ և չհետեւիցիմք նըմա . նա՛ մանաւանդ՝ նա ինքն հակի յաւէտ ի մեր կարծիս՝ ասելով գոլ հասարակ կարծիս թէ իշխանութիւնն յԱստուծոյ է , և թէ հասարակութեանն է միմիայն բնա-

րութիւն անձին իշխանի ։ Դարձեալ թէ իշխանութիւնդ այդ ոչ այնպէս ի հասարակութեանն է՝ մինչև անայլայլելի կամ անփոխադրելի լինի յայլ ոք , փոխադրութեամբ իշխանութեանն ի թագաւորն՝ նովաւ թագաւորն գերագոյն կայ քան զթագաւորութիւնն , որ ետն զայդ . զի տալովն զինքն ենթարկեաց , և ի նախկին ազատութենէն զրկեցաւ ։

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Դ.

Ի միապետութեանն և եթէ այլ բռնաւոր են յետ կամ եղանակս երկրորդ իշխանութեան ։

Նկդ . Վասն ձեւոյն իշխանութեանս խնամելը զազգի ազգի ենթակայս այսր իշխանութեան , որ ի թանձրացեալն առեալ ի կիր արկանի ։ Արդ խնդիր է՝ թէ արդեօք բաց ի բնական ձեւոյ իշխանութեան իցեն և այլք ոմանք ըստ արժանւոյն . Նախ՝ եթէ իշխանութիւնդ այդ իցէ ի միմիայն անձն՝ կոչի միապետութիւն , և անձն ինքնակալ կայսր՝ կամ թագաւոր . եթէ իցէ ի գլխաւորս ոմանս ժողովրդեանն՝ որք կամ ժառանգութեամբ հայրենի իրաւանց և կամ ընտրութեամբ և հաւանութեամբ ժողովրդեանն՝ կամ հասարակաց՝ կոչի հասարակապետութիւն որ և նոյն է ընդ երրորդին՝ այն է ժողովրդական իշխանութեան , որ նմանապէս կայ ի գլխաւորս ոմանս՝ որք ընտրեալք իցեն յիւրաքանչիւր գերդաստանէն մեծամեծաց ։ Ոչ թէ իշխանութիւն ռամիկ և բազմախուռն ժողովրդեան , որոյ ոչ երբէք հնար նշմարել ի վէպս ազգաց ։ Իւրաքանչիւրոցն անդամ ձեւ օրինաւորք են , նմին իրի և արժանաւորք՝ միայն թէ արդարութեամբ հաստատեալ իցեն. սակայն մերձաւորագոյն բնութեան է միապետութիւնն , և իւրաքանչիւրն , միայն թէ արդարութեան օրինօքն վարեսցեն ըղ հպատակս , մին քան զմիւսն գերագոյն է , և կատարելութիւն միոյն քան զմիւսն , կամ արժանապատուութիւն առեալ չափի ի սահմանադրութենէ նոցին , այն է օրինայն



զօրութենէ և յաղթութենէ և ի ճիշդ պահպանութենէ ։ Իւրաքանչիւրոյն են և պաշտօնատարք՝ այլք այլոյն գերագոյնք՝ ըստ պաշտամանցն զանազանութեան և ծանրութեան . որոց ի միմեանց կախմամբն արժանաւորել հպատակութեամբ ծագի անձկալին այն ներդաշնակութիւն և օրինայն պահպանութիւն , յորմէ և եթ հպատակացըն ցանկալի երջանկութիւն ։ Սակայն դիւրագոյն իմն եղանակաւ ծագել կարէ բռնութիւն իշխանութեան ի միապետութիւնն քան յայլսն , քանզի անձն միապետական իշխանութեանն արձակ և բացարձակ է և ինքնօրէն գոլով կամ եթէ արհամարհեսցէ զխորհուրդս իմաստնոց , դիւրաւ խանգարել կարէ ամենայն բարեկարգութիւն ։ Մինչ ի հասարակապետութեանն ոչ այդքան , սակայն են եւ բարութիւնք միապետութեանն՝ զի ըստ ժամանակին և հարկի և պարագայիցն բացարձակ գոլով՝ փոխել կարէ զօրէնսդ երբեմն յօգուտ հասարակութեան և ի փոփոխել պարագայից վնասակարք . մերթ յայլս այդ դժուարին իմն է , զի պարտ է ի ձեռս բերել զհաւանութիւն բովանդակ ժողովրդեանն կամ ծերակուտին , որ չէ այդքան երջանիկ յեղն և ի կատարածն ։

## ՅՕԴՈՒԱԾ Ե.

### ՅԱՂԱԳՍ ԿԻՐԱՌՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ

Նկե . Որոշեալ գոլով ըստ իրաւանց ենթակային իշխանութիւնն մարդկային կամ դրական իմն գործողութեամբ և իշխանութիւնն ի թանձրացեալ ենթակայն, պարտ է զի եղեալ յայսմանէ՝ իբրև վարիչն կառաց զկառս ներգործութեամբն վարէ , նոյնպէս վարեսցէ զամենայն հպատակս . զի իշխանութիւնն է յԱստուծոյ վասն հասարակաց և չէ և չէ իշխանութիւն կատարեալ այն , որ ոչ

երբէք ի զօրութենէ անցանէ ի գործ և յաղդինս ։ Նա՛
մանաւանդ իշխանութեանն զօրութեամբ և վարչութեամբ
կարէ կալ միայն համաձայնութեամբ քաղաքական անձնաւո-
րութիւն ի բարեկարգութեան, որ է վախճան նորա ։ Արդ-
պաշտօն կամ զօրութիւնն իշխանութեան երրակի եղա-
նակաւ կամ միջոցիւ կարէ առնուլ զբարեկարգութիւնն ,
Նախ՝ օրէնս դնելով կամ կանոնս, որովք կատարեսցին ա-
մենայն գործողութիւնք հպատակացն՝ որք բարի լինին
յորժամ ըստ օրինացդ են, և չար՝ յընդդիմութեանն ։ Երկ-
րորդ՝ զգուշալ օրէնս հրատարակելով ժողովրդեանն , և
ի գործ դնելով ։ Երրորդ՝ այնոցիկ, որք հակառակք կայ-
ցեն արդար օրինացդ , և ոչ [illegible] այլ [illegible] սոցին գործի-
ցեն՝ դատաստան առնելով, պատժելով զնա թէ ըստ ան-
ձին՝ թէ ըստ իրացն իւրեանց , և կամ դատ առնելով և
վերջ տալով դժտութեանցն պէսպիսեաց ընդ մէջ մասան-
ցըն հասարակութեան ։ Յորոց ծագին երրակի մասունք
էականք բաղկացուցիչք գերագոյն իշխանութեանն . օրէնս-
դրական իշխանութիւնն , գործադրական իշխանութիւնն ,
և դատաստանական իշխանութիւնն ։ Որք ամենեքին քան-
զի ի կամաց և ի մտաց անտի իշխանին յառաջ գան՝ [illegible]
կամ մարդկային օրէնք կոչին , և ի նոյն կամաց փոխել
կարեն , զորոց մի առ մի ։

ՆԿԶ. Նախ՝ իրաւունք օրէնս դնելոյ ենթակային
բարձրագոյն իշխանութեան պատկանի միայն . քանզի նո-
րայն պարտք են բնականք ի սէր բարեկարգութեանն օ-
րէնս և կանոնս դնել , կամ վստահել վասն բարեկար-
գութեան և բարութեանն հասարակաց ։ Ուրեմն յայն նիւ-
թս և առարկայս միայն կարէ օրէնս դնել , փոփոխել զեղ-
եալսն , և յաւելուլ ի նոսա , որք միջոց և կանոն են վախ-
ճանին հասարակութեանն ։ Չկարեն ուրեմն ինքնակալն ,
կայսրն , թագաւորք , ծերակոյտ իշխանք , կղերութեանն
սահմանադրութիւն հիմնական և զօրգէն հաստատեալն՝
փոփոխել , են . քանզի այդ ո՛չ պատկանի իշխանութեանն
և եղանակաւ ինչ սկիզբն անկախ է յիշխանութենէն՝
զի թագաւորք ո՛չ կացուցին առ քաղաքս սահմանադրու-



թիւն տէրութեանն , այլ սահմանադրութիւնն զթագա-
ւորն կացուցանէ . և վախճան գերագոյն իշխանութեանն
է դնել զքաղաքական և զարտաքին կարգ գործողութեան-
ցըն հասարակութեան , ո՛չ թէ փոխել զսահմանադրու-
թիւն հասարակութեանն ։ Ուստի քաջ մտա եդեալ առ որս
տարածել մարթասցի զօրէնսդրական իշխանութիւնն՝ ըստ
վախճանին քաղաքային ընկերութեանն դիցէ զօրէնս , այ-
սինքն է արտաքին բարեկարգութիւն ի բարութիւն հա-
սարակութեանն յեցեալ ի քաղաքական բարութիւնն . ո՛չ
երբէք ուրեմն օրէնք դրականք թագաւորացն կարեն թէ՛
բնական օրինաց և թէ՛ Աստուածային օրինաց հակառակ
լինել . որ ոք ուրեմն ի դրական օրինացն հակառակ լիցի
նոցին օրինացն բնութեան , չեն օրէնք , կանոնք համե-
ստութեան , այլ յաւէտ անօրէնութեան , և չիք ի նոսա
հաւասար զօրութիւն պարտաւորելոյ զհպատակս . քանզի
բնութիւնն պարտաւորէ զհպատակս օրինաց հնազանդիլ,
բայց նոցին օրինաց՝ որք բարութեան բնութեանն կանոնք
են և պատճառ , ո՛չ թէ չարութեան , քանզի ո՛չ ոք պար-
տաւորէ զանձն զչարն խնդրել ։ Դարձեալ՝ քաջ մտա դը-
նել պարտին թագաւորք արտաքոյ քան զվախճանն հասա-
րակութեան չեղուլ՝ օրէնս դնելով, որոց չիցենն յարա-
քին քաղաքայնոցն բարեկարգութենէ . զորօրինակ այնոցիկ
իրաց և մարդկային գործողութեանցն՝ որք ներքին հոգ-
ւոյն և խղճի մտաց , այլ միայն զարտաքին զգրութիւն
գործոյն հրամայեն դրական օրէնք , և ո՛չ զվախճանն կամ
զխիղճ մտացն ։ Սակայն թէպէտև խիղճ մտացն ուղղա-
պէս չանկանիցի ընդ իշխանութեամբ դրական օրինա-
ցըն , քանզի ամենայն իշխանութիւն յԱստուծոյ անտի է ,
վասնորոյ պարտի իւրաքանչիւր ոք հպատակել զանձն թա-
գաւորացն օրինաց , ո՛չ միայն [illegible] , այլ և [illegible]
[illegible] . բայց և անուղղակէս բնական օրինօքն պար-
տաւոր է հպատակել օրինացն գլխաւորին հասարակութեան։
Եւ իշխանն ուղղակէս չկարէ օրէնս դնել այն մասին գոր-
ծոց՝ որք չունին ինչ յարաբերութեան ընդ արտաքին
վախճանի հասարակութեանն , այլ միմիայն ներքին և հոգ-

ւոյն յարաբերութիւնք են ընդ Աստուծոյ, որոյ գործո-
ղութեանցն օրէնս դնել վերաբերի՝ որոց խնամ տանին հո-
գեւոր բարեացն հպատակաց, որք կոչին եկեղեցականք,
և իշխանութիւնն՝ բարոյական կամ եկեղեցական իշխանու-
թիւն. և միով բանիւ օրէնք դրականք քաղաքայինք յա-
մենայնի պարտին համաձայն լինել բնութեանն օրինաց և
իրաւանց։ Նա՛ մանաւանդ առ բազումս զօրս հրամայեն
դրական օրէնք՝ են նոյին բնական օրինացն պատուիրանք,
եւ որոշեալք ի մասնաւորի և յայտնեալք՝ հաստատեալք
կամ բացատրեալք։ Յորժէ հետեւի, թէ դրական օրէնքդ
պարտին բարի կամ [illegible] լինել, հասարակութեանն [illegible]
[illegible], [illegible], այն է՝ ամենեցուն ի բարութիւն ընդ-
հանրապէս և ո՛չ [illegible] [illegible] [illegible], և զամենեսին հա-
ւասարապէս պարտաւորիցէ՝ ո՛չ [illegible] [illegible], այլ
իրաւանցն։ Նոյն իսկ ինքն օրէնսդիրն, ըստ որում ան-
հատ ոք և անդամ հասարակութեանն և յօրինակ բարի
այլոցն՝ պարտ է զի զանձն անդամ հպատակեսցէ օրինաց
իւրոց։ Նա՛ զի օրէնքդ այդօրիկ առ բազումս պատուի-
րանք են բնութեան՝ իրաւանցն և օրինաց, և զբարութիւն
պատճառեն գերագոյն, այն է՝ զկատարելութիւն հոգւոյն։
Յաւե՛լ և և՛ս՝ յատկութիւնք օրինացն լիցին պարզ և դիւ-
րին, որպէս զի ամենեքին ձեռնհաս լիցին ի միտ առնուլ
զնոսա, [illegible] [illegible] և [illegible], զի մի ձանձրութեան հը-
պատակացն պատճառ, և գործողութեանցն արգելս դի-
ցեն, [illegible]՝ [illegible]՝ և [illegible], որոց աղագաւ մեծի
խոհեմութեան և գիտութեան պէտս ունի, և իմաստուն
և խոհեմազարդ ծերակոյտ ունիցի և պաշտօնեայ, յամե-
նայն գործողութիւնս ո՛չ դաժանաբար, ո՛չ անխորհրդա-
բար, ո՛չ բարկութեամբ, ո՛չ բարձրայօնութեամբ, են.
խորհեսցի, ընթասցի, և հրամայեսցէ զօրէնս են, են, են,
այլ զամենայն ինչ արդարութեամբ արասցէ։

ՆԱԸ. Երկրորդ, « ո՛չ յարկեալս օրէնք, այլ ի հրապա-
րակս օրէնք » ասաց քաջն Տուլլիոս. դնել օրինացն՝ պարտ
է՝ զի հրապարակաւ ըստ որում սովորութիւն Թագաւո-
րութեանց կամ առհմանադրութեանցն պահանջէ՝ ի լուր



ամենեցուն ընթերցցին, և հետ բաւականաչափ հրապարա-
կութեան՝ ի գործ դնել պարտին. օրէնք առանց գոր-
ծադրութեան է դի անկենդան, որպէս գերագոյն իշխա-
նին իրաւունքն են՝ և պարտք օրէնս գրելոյ, նոյնպէս ի-
րաւունք են զգրեալդ ի գործ դնելոյ, և այդ հարկա-
ւորապէս. քանզի գործողութիւնք հպատակացն հարկաւ
լիցին, գործողութիւնք առանց կանոնի գործողութեանց
զիա՞րդ լինել հնար է, և եթէ օրէնք լիցին և չգիցին
ի գործ, ընդ ոտս հարկանի և արհամարհի նոյն գերա-
գոյն իշխանութիւնն։ Ըստ այդպիսի գործադրութիւն
պարտի [illegible], [illegible], և [illegible] լինել. [illegible]՝ այն
է ամենայն հաւասարմութեամբ, և ըստ ամենայն ի-
մաստին բարոյապէս պարտաւոր եղելոցն, և ոչ թէ ըստ
իմաստին՝ կամ հնչման բառից բնականապէս, որ պարտի
լինել՝ ըստ կարի և զօրութեան իւրաքանչիւր անձին. և
[illegible], քանզի հեռին ճշդութիւնն կամ յեռին արդա-
րութիւնն է յեռին անիրաւութիւն, զօրօրինակ ամե-
նայն ոք ի հարկաւորութեան պարտաւորի զէնս առնուլ,
և ի ճակատ ելանել անիրաւ թշնամւոյն. մինթէ միաք օ-
րինաց են զհիւա՞նդս անգամ, և զմանկտի՞ս, կամ զկա-
նա՞յս, ո՛չ երբէք։ Այլ յաւէտ ըստ տեղւոյն, ըստ պարա-
գայից, ըստ ժամանակին, ըստ անձանց, և դադարեալ
վախճանին օրինաց՝ պարտ է՝ զի և օրէնքդ՝ կամ բոլորո-
վիմբ, կամ ըստ մասին դադարեսցին։ Եւ երբեմն նկատ-
մամբ այսր կամ այնր պարագայի առ ժամանակ մի դա-
դարեսցին ի պարտաւորելոյ օրէնքդ, և երբեմն յընդ-
հանուր պարտաւորութենէ ի բաց առնլով զայս ոք. Նա՛
մանաւանդ օրէնքդ ընդհանուր գործողութեանց են՝ և ո՛չ
իջանեն ի մանրամասն գիպողութիւնս, որք յանձնին խո-
հեմութեան և իմաստութեան պաշտօնէիցն այսր գերա-
գոյն իշխանութեան։ Պարտի [illegible] լինել գործադրու-
թիւնդ, այն է իմաստուն և արիասիրտ, և խոհեմ պաշ-
տօնէիցն և զինուց զօրութեամբն յարդարեալ, և զօ-
րականօքն ամրացեալք՝ որով կարիցեն նուաճել զսամ-
բակն և զվրդովիչս ընդհանուր բարեկարգութեան։ Նաև

գլխաւորապէս խնդրի կատարեալ հպատակութիւն զօրացըն պաշտօնէիցն, և սոցին իշխանայն իւրեանց՝ կամ թագաւորաց, որք են սկիզբն ամենայն գործողութեանց և շարժմանց։ Նա եթէ չիցէ ներդաշնակութիւնդ, և ոչ միաբան՝ միաբերան՝ կամ միակամ ընդ ժողովրդեանն, անհնարին անտեղութիւնք և վնասք բառ ամենայն տեսակին ի վեր երևեցին՝ զրկեցեն զբովանդակ հասարակութիւնն ի վախճանէն։ Դարձեալ՝ առ ի դիւրագոյնս ի հպատակութիւն օրինաց ածել զմարդիկ և զօրէնսդ ի կատարեալ գործադրութիւն, պարտի զի օրէնքդ մնայ եւդէգ սկզբանցն և բնական օրինաց և իրաւանցն համաձայն լիցին, համոզիչք վայելչութեանն և աստիճանի գերագոյն իշխանութեան անվկանդ պահելով. քանզի մնացն համոզմունք ոչ սակաւս նպաստեն օրինացդ գործադրութեան, և ես ոչ դժուարացուցանէ զկամս իւրաքանչիւր հպատակաց, այլ հաւատարս ունի և մեծարէ այնու զնոսա, և սէրն է անկայծ կայն, յոր անհնարինքն զինուք՝ սիրով և միաբրութեամբ հնարաւորք լինին և ընդելանան, միայն թէ մի գերքան զչափն, որով արդարութիւնն ամբողջ պահեսցի։

ՆԿԸ. Երրորդ՝ յընդդիմութեան իրաւանց և իրաւանց անհատից ի մէջ իւրեանց, և ի գործողութիւնս ստահակացըն ումանց ընդդէմ օրինացն, որք յանցանք իսկ կոչին՝ անփական իրաւունք են և կարողութիւնք յարդարել զգըժտութիւնս և զյանցանսդ ընդդէմ օրինաց գործեալն՝ ըստցին օրինաց դրական հաստատութեամբ՝ այն է պատժոց կամ պատուհասից նպատակքն և զյանցեալն ի հպատակութիւն ածել, և զաւերեալ բարեկարգութիւնն ի մասին վերանորոգել, կամ յառաջին վիճակ վերադարձուցանել։ Արդ կարողութեանդ այդմիկ՝ դատելոյ ըստ արդարութեանն ընդ մէջ իրաւանց այսր կամ այնր անհատի քաղաքային ընկերութեանն, և ընդ մէջ անարդութեան օրինացն՝ տամք զանունդ [illegible], որ և սրահի ի [illegible] և ի [illegible]։ Առաջնումն դատի զիրաւունս քաղաքայնոցն. Երկրորդաւն զյանցանս նոցա։ Արդ առ ի սկայապէս



ի կիր արկանել զդատաստանական իշխանութիւնն՝ և զայդ ըստ արդարութեան, պարտ է՝ զի քաջ, խոհեմ, գիտուն և իրաւագէտ արանցն ժողով հաստատեալ իցէ ի բարձրագոյն իշխանութենէն, որք ի սէր արդարութեանն և ի բարութիւնն հասարակացն իրաւանց՝ դատ արասցեն ընդ մէջ իրաւանցն և իրաւանց յընդդիմութեան. վասնորոյ պարտին բազումս ի խնդիր լինել ճշմարտութեան դժուարութեանն, և միտ դնել յո՞ր կողմն իցէ ճշմարտութիւնն։ Դատողութեանն թէութիւնք ի կիր արկցին՝ անկողմնապահութիւն, դատողացն գիտութիւն երկուց կողմանց, կամ ճանաչել զենթակային և զգերագոյն յարմարութիւն՝ և զյատկութիւնս, որով և եթ դատողութիւնն ուղիղ և ճըշմարիտ լինի։ Դարձեալ՝ պարտի առ այդ երկար զննութիւն պարագայից, տեղւոյն, ժամանակին, անձանց, և իրացն՝ յորմէ սահմալ կարէն զգիտութիւն, կամ զտեղեկութիւն առարկային, մի զմի կողմն և եթ լսեալ՝ դատել, այլ զերկոսին անգամ, համարձակութեամբ թոյլ տալ պարտ է երկուցն իսկ առաջարկել զփաստս. ամէն իրի հրամայեսցին կարգել փաստաբանս, և այնպէս ունելով առաջի զբարութիւնն հասարակաց, և զարդարութիւնն՝ դատեսցեն և սահմանեսցեն այսր կամ այնր լինել ճշմարտութեանն։ Յաւել և ես միջս ըստ սահմանադրութեան գրութեանն պարտին ժողովք լինել ծերակուտին և դատաւորաց զանազանք՝ և այլք այլոցն գերագոյնք, որով եթէ հակառակողքն զփոքր ժողովոյն դատաստան ոչ ընկալեալ՝ այլ նախանձեալ՝ բողոքեսցին առ գերագոյնն, ժողովք լիցին՝ զի բողոքմանն իրաւունք շնորհեալ են իւրաքանչիւր անհատից հասարակութեան, այն է ոչ ընկալեալ զդատաստան առաջին դատաստանի, կամ ժողովոյն՝ փախագրեսցէ և ձգեսցէ զվէճն և զդժարութիւնն յերկրորդ մեծագոյնն և հուսկ ուրեմն ի գերագոյն և ի բարձր դատաստան իշխանին։ Սակայն կարէ ոք ընդոստամբ անգամ ընդդէմ դատաստանական ընթացից յառաջնոյն ցգերագոյն դատաստան ձգել զդժարութիւնն, և այդ յիրաւանց է։ Սակայն որ յառաջնոյն յերկրորդն, և ապա յերրորդ ի գերագոյ-

նըն հանէ զվէճն՝ կոչի ընթանալ ըստ օրէնի դատաստանական ընթացից. որ այլ ազգ յառաջնոյն ցգերագոյն ընդատանու՝ կոչի բողոքումն ըստ ափփէլ։ Սակայն գործողութիւնն բողոքելոյ անգամ ունի զօրէնս, այն է ի ծանր իրողութիւնս և եթ, և ո՛չ ի փոքրիկ և ի չնչինս։ Եւ ևս առ ի չբառնալ զուռն արձակ իւրաքանչիւրոյն բողոքման՝ կարէ և սովոր է գերագոյն դատաստանն ձգել վերստին յերկրորդ կամ յառաջին դատաստանն՝ և կարէ հրամայել զայդ առնել. ապա թէ ո՛չ՝ յաւելուին նախատինք բազումք անտի դատաստանացդ և վերջաբար գերագոյն իշխանութեանն։

ՆԿԹ. Սակայն երբեմն ի հասարակութեան անդամս պատահի՝ զի ո՛չ միայն իրաւունք հպատակացն ընդդէմ ելանեն միմեանց, այլ և զի գործողութիւնք հպատակացն ընդդէմ գերագոյն իշխանութեանն օրինաց ելանեն, որոց յանցանս ապօրինաւորս և անվաւերս դատիմք. և քանզի օրէնք են ի բարեկարգութիւն հասարակաց և բարեկարգութիւնն վրդովի կամ խանգարի յանցանօքն, նմին իրի առ ի հաստատութիւն օրինացն և բարեկարգութեանն պատուհասիւ իշխանութեանն ի վերայ հասանէ պետութիւնն ըստ բնութեան և ազգի և սովորութեան սահմանադրութեանն՝ որ զատամբական պատժէ, եղթիւրեալն ի հասարակաց կարգէն վերստին ի կարգ ածէ՝ և ստիպէ ազգի ազգի միջոցիւ պատուհասից յանդիմանութեան, տանջանաց և բարձմամբ կենացն անգամ, որով կատարէ զընկերական պաշտամունս և զպարտս իւր պետութիւնն՝ որ առ յանցաւորսն, առ ընկերակից անդամսն, և առ Արարիչն։ « Այսպէս իշխանութիւնն կատարէ զառաջին ընկերական պարտս իւր, թէ՛ նկատմամբ յանցաւորին, թէ՛ ընկերակից անդամոցն՝ և թէ՛ Արարչին։ Նկատմամբ յանցաւորին. քանզի զրկելով զնա ի նիւթական բարեաց՝ ինքնին տայ նմա յարուցանել զզգացումն ինչ ի բարութիւնն համեստութեան՝ որ է ճշմարիտ բարութիւն մարդոյ սա ի յերկրի։ Նկատմամբ ընկերակից անդամոցն. քանզի ուղղէ զի միւս իւրեանց անկարգութիւն դատողութեանն ծնեալ



ի պատրողական յանցանաց։ Նկատմամբ Արարչին և գերագոյն կարգադրին ընդհանուր ընկերութեանն. քանզի անքննելի ունի զբնական արդարութեան իմաստս, յորոյ վերայ կանգնեցաւ ընդհանուր ընկերութիւնն յարարչութեան անդ իւրում։ Այսպէս պատսպարեալ պահի երրակի եղանակաւն կարգն աւերեալ ի յանցաւորէն, ի մասնաւորին՝ յընկերականն՝ և յընդհանուրն ». (*) ասէ Թափառելլի Յիսուսեան։ Եւ ևս բայց ի բնական արդարութենէն որ պարտաւոր է զիշխանն, միութեանն իմաստ զայդ պահանջէ, քանզի ամենեցուն իրաւունք են անդամոցն պահանջելոյ ի գերագոյն իշխանութենէ՝ զի ի միութեան ունիցի զանդամոց զօրութեամբ իւրով. որ ոք ընդդէմ օրինացն գործէ, արտաքսէ զանձն ի միութենէ կամ ի բարոյական միաբանութենէն, զոր բնութիւնն ետ իւրաքանչիւրոյն։ Ուստի արդարութեամբ՝ և իրաւամբ յոտն կանգնեալ, կարեն զմիութեան կարգին զդարման տանել. որ ո՛չ լինի այլով իւիք եթէ ո՛չ վրիժուց և պատժոց հատուցմամբն ըստ գործս իւրաքանչիւր անկարգութեան։ Աստի յայսցանէ յայտ է՝ թէ պատժողական իշխանութիւնն որպէս կայ յիշխանն և նպատակ նորա գործողութեանցն՝ այն է պատժոցն՝ է ի բժշկել, ի պատսպարել՝ և յօրինակ ընկերութեանն լինել։ Սմին իրի առեմ՝ մեծի խոհեմութեան պէտս ունին իշխանք ի դնել զպատիժս ի վերայ հպատակաց. ո՛չ ամենայն յանցանք նոյն եղանակաւ պատժին, և ո՛չ ամենայն օրէնք զամենայն հպատակս միով եղանակաւ ունին. այլ ըստ կրթութեան և կատարելութեան բարուցն, ըստ զանազանութեան պատուոյն. և աստիճանի պարտ է. այնպէս զի յաղագս՝ որքան գիտութիւնք և քաղաքավարութիւնք յաւելուն՝ այնքան նիւթական պատիժք նուազել պարտին։ Ումեմն բանք դժուարինս ազդեն, և ումեմն միով բանիւ, ումեմն աքսոր, ումեմն յորդոր, զոմն յանդիմանութեամբ և զոմն տանջանօք, զոմն ի բարիս բաղձին յինչս իւր, և զոմն ի մեծագոյն բարին ի կեանս իւր։

(*) Ճաշակ յաղագս Բնակ. Իրաւ. Բան. Գ. Գլ. Զ։

ՆՀ. Աստ խնդիր է ուրացողայն զքաղաքային գերագոյն իշխանութիւնն, թէ ունիցի՞ արդեօք՝ թէ ո՛չ սա զիշխանութիւն պատժոյ կենացն նուաճելոյ կամ ի հպատակութիւն ածելոյ զապստամբն օրինաց ի յանցանս իմանըս, և յանկարգութիւնս, որք մեծապէս վնասեն բարութեան հասարակացն. պատասխանեմք՝ ստորասելով, քանզի նախ՝ իշխանութիւն յԱստուծոյ անտի է ի բարութիւն և ի պաշտպանութիւն մարդկային հասարակութեանն. երկրորդ՝ բազումք ո՛չ բարոյական չարութեամբ յետս կան ի չարութենէ իւրեանց՝ այլ միայն երկիւղիւ և զգայութեամբ կենացն կորստեան. երրորդ՝ տրամաբաշխական արդարութիւնն պահանջէ՝ զի համեմատութիւն լիցի կատարեալ, քանզի արդար է այնմ բառնալ զկեանս, որ բառնայ զայլոց զկեանս. ո՞ ոք ո՛չ ցնծայ ընդ բառնալ զկենաց չար և անգութ զաւակին, որ բարձեալ իցէ զհայրն և զմայրն ի կենաց, ապաքէն չասեմք՝ թէ դժուարի բնութիւնն ընդ այդ, այլ և բերկրի և ի խորին սրտէ «արդար է և արժան» գոչէ։ Ընդունայն են փաստք ո-ախացն ասելով՝ լաւագոյն է ցկեանս արկանել զայնպիսին ի բանտ, կամ տալ վաստակել նմա հանապազ վասն հասարակութեանն. քանզի բազումք զգայութեամբ տեսեալ աչացն զցաւալի մահ յանցաւորին՝ խորշին յայդպիսեաց, և ոմն իբր ի տեսութիւն այլոցն գնին գխակունք արդարութեան օրինացն վճռեալ։ Ապա թէ ո՛չ բազումք յաւէտ ընտրէին ցկեանս կալ ի բանտին ստելութեամբ լցեալք, միայն թէ բառնայցեն զկեանս այլոցն։ Յաւե՛լ և ընդհանուր սովորութիւն ամենայն թագաւորութեանց՝ թէ՛ հեթանոսացն և թէ՛ Քրիստոնէից, որոց մեզ վկայք կան օրէնք և վիպասանութիւնք։



ՅՕԴՈՒԱԾ Զ.

## ՑԱՂԱԳՍ ՊԱՇՏԱՄԱՆՑ ՀՊԱՏԱԿԱՑՆ ԵՒ ԻՇԽԱՆԱՑ ՄԻՄԵԱՆՑ

ՆՀԱ. Պաշտամունք և պարտք մեր լինէին այլոցն, եթէ չէին պատճառք պարտաւորիչք մեր՝ այն է իրաւունք յայլս։ Արդ՝ իրաւունքդ այդպիսիկ կամ յայլս են՝ իբրև յառանձին անհատս քաղաքային ընկերութեան, կամ իբրև յընդհանուր անդամս բաղկացուցիչս այսր քաղաքային ընկերութեան, և կամ է յիշխանութեանն վարիչ այսր քաղաքային ընկերութեան։ Քանզի յարաբերութիւնք են մեր ի կարգէ բնութեանն և քաղաքային ընկերութեանն առ երեսին ի նոսա, և ի յարաբերութեանցդ ծագին և իրաւունք նոցա, որովք պարտաւորիմք առ նոսա ի քաղաքային ընկերութենէն։ Սակայն անդամոց ի պարտուց և ի պաշտամանց առ գերագոյն իշխանութիւնն՝ ծնանին և պարտք և պաշտամունք սորա առ նոսա. որպէս անդամոցն պարտք են առ գերագոյն մասն իւրեանց զգլուխն, նոյնպէս սորայն առ նոսա են պարտք ծանունք և պաշտամունք։ Նախ զառաջնոցն ասասցուք՝ և ապա զպաշտամանց գերագոյն իշխանութեանն։

ՆՀԲ. Նախ՝ նկատմամբ պաշտամանց հպատակացն առ միմեանս՝ իբրև առանձին անդամս ընդհանուր միաբանութեանն, որպէս ասացաք, ի բնութեանն օրինաց զոր ինչ իրաւունս ունի իւրաքանչիւր ոք՝ վասն բնութեամբն, կատարելութեամբն նման լինելոյն մեզ, մեծարել պարտիմք, և պաշտօն մատուցանել նոցա, որպէս նոքա մեզ։ Երկրորդ՝ զոր ինչ իրաւանց ստացեալ իցէ ի գերագոյն իշխանութենէն, նմանապէս վասն խղճի միայն ճանաչել և մեծարել պարտիմք. և նա՛ մանաւանդ զի յօդիւ միաբանութեան կապեալ ընդ մեզ՝ մի միաբանութիւն՝ մի անձն բաղկացուցանեն բարոյական, և քաղաքակիցք են, վասն զի ո՛չ ամենայն ոք զնոյն ստորիճան պարտուց և պաշտամանց

կարէ պահանջել ի մէնջ ։ Այլ զայնմ առ որս օրէնք բը-
նութեանն պարտաւորեն զմեզ ։ բայց ո՛չ առ ամենեսին
պարտիմք ի քաղաքային իրաւունս պաշտօն մատուցանել ,
այլ առ քաղաքակիցսն իւրաքանչիւր ոք ։

ՆՀԳ․ Երկրորդ՝ նկատմամբ պաշտամանցն առ բովան-
դակ հասարակութիւնն , իւրաքանչիւր ոք պարտի պաշտօն
մատուցանել այնմ հասարակութեան՝ յորում ծնաւ ․ վասնորոյ
զոր ինչ ունին , ի հասարակութենէ անտի ունին ի հարցն իւ-
րեանց կամ ի ծնողացն , որք անդամք էին քաղաքակիցք այնր
հասարակութեան ։ Եւ քանզի բնական պարտք են մեր սիրել
զհարս և զմարս՝ զոր օրէնք հրամայեն թէ՛ Աստուածա-
յին բնական՝ և թէ՛ մարդկային դրական ․ Նմին իրի սի-
րոյն այնմիկ ծնողաց սէր զանունն տամք , և տեղւոյն կամ
հասարակութեանն՝ յորում կեցին և կեանն , ծնողն կամ
հայրն , սէր հայրենեաց ։ Ուստի հայրենեաց սէրն չէ պարտ՝
զի ցամաք երկրին միայն նուիրեսցի , այլ յաւէտ հասարա-
կութեանն , որք կեանն յայն երկիր հայրենեաց ։ Արդ հայ-
րենիք են վիճակն այն , որոյ ոք անդամ է քաղաքային ։
Եւ սէրն հայրենեաց ո՛չ է սէր անկարգ՝ այլ կարգա-
դրեալ , այն է սիրել զնա վասն իրաւանց իւրեանց՝ և ըստ
չափու իրաւանց իւրոց , ո՛չ թէ այնքան սիրել , մինչեւ
վեր քան զհայրենիս իւր չճանաչել զայլոցն , այլ զիւրն
գերագոյն միայն , զիւրն պայծառագոյն միայն ։ Ուստի
կանոն կարգադրեալ սիրոյն է , նախ՝ ո՛չ նիւթական երկրին
միայն՝ այլ գլխաւորապէս բանական կենդանեացն , որք
կեանն՝ և են ի նմա քաղաքային միաբանութեամբ ։ Երկ-
րորդ՝ չունիմք իրաւունս պահանջելոյ յամենեցունց սիրել
զմեր հայրենիս , այլ իւրաքանչիւր՝ոք զիւրն՝ և այդ ո՛չ
տղայական սիրով զամենայն ինչ սեփականելով իւրումն
միայն՝ այլ ըստ աստիճանի կատարելութեանց և յառաջդի-
մութեանց , բարուց , վարուց , արհեստիցն և գիտութեանց
և քաղաքային կրթութեանց ․ մին քան զմիւսն իրաւունս
ստանայ պահանջելոյ զպարտապաշտօն յարգ և մեծա-
րանս ըստ աստիճանի կատարելութեանն՝ և յառաջադի-
մութեանն յառաջելոյ ։ Եւ ես վասն հայրենեացն ընդ-



հանուր բարութեանց պարտս ունիմք ծանունս ի վերայ՝ ո՛չ
միայն վասն յառաջադիմութեան նորա կատարելութեանց
ի կատարելութիւնս , այլ և վասն ամբողջութեանն ․ ո՛չ
միայն ընչիւք և ստացուածովք մերովք ըստ կարգի , այլ
և կենաց մերոց վտանգիւ , քանզի արդար է և արժան
տալ ամենայն ի բարութիւն այնր՝ որ ետ մեզ զնոյն
ի բարութիւն մեր ։ Զոր և ուղիղ սկզբունք մտացն ուսու-
ցանեն , թէ առանձին բարութիւնն մեր ի հասարակաց
բարութիւնն վանեսցի ։ Միով բանիւ իւրաքանչիւրոք
թէ ըստ հոգւոյ բարութիւնս թէ ըստ մարմնոյ և թէ ըստ
քաղաքայնոցն պարտի կեալ և գործել յօգուտ հասարա-
կացն և տէրութեան՝ յոր գտանի ։

ՆՀԴ․ Երրորդ՝ նկատմամբ իշխանութեան պարտի
իւրաքանչիւրոք զկատարեալ հպատակութիւն գերագոյն
իշխանութեանն , այն է ըստ օրինաց նորա , որք են ի հաս-
տատութիւն , ի պաշտպանութիւն և ի բարեկարգութիւն
հասարակութեանն ․ գիտելով չափ թէ ամենայն իշխանու-
թիւն յԱստուծոյ անտի են և ո՛չ ի զուր աճէ ընդ մէջ
զսուսերն , չեն պարտ իւրաքանչիւրոյն համարձակիլ ընդ-
դէմ կալ այսմ գերագոյն իշխանութեան , ո՛չ միայն թէ
արդեօք արդեամբ և արդարութեամբ ստացեալ իցէ ըզ-
գերագոյն իշխանութիւն թէ ո՛չ , արդեօք օրէնքդ զորս
պատուիրէ պահել յամենեցունց արդա՞ր իցեն թէ ո՛չ ,
յօգո՞ւտ իցեն հասարակութեանն թէ ո՛չ , այլ ամենայն
հլու հնազանդութեամբ , յարգանօք , ո՛չ յօգուոց հանելով՝
այլ զուարթութեամբ , ուրախութեամբ սրտի , ո՛չ վասն
երկիւղի բարկութեան նորա՝ այլ վասն մտացն խղճի ․ ո-
րում զհարկն՝ զհարկ , որում զպատիւ՝ պատիւ , են ։ Սա-
կայն այդ և՛ ճշմարիտ է և՛ յիրաւանց , զի եթէ ընդհա-
նուր միաբանութեամբ և հաւանութեամբ կամաց անդա-
մոցն՝ կամ ըստ մեծի մասին՝ աղերս արկանել կամիցին
գերագոյն իշխանութեանն վասն այսր կամ այնր հրամա-
նի , այսր կամ այնր օրինաց , մարթին աղերս արկանել
ո՛չ ապստամբութեան եղանակաւ՝ այլ աղաչել զգերագոյն
իշխանութիւնն , ցուցանելով նմա՝ թէ յաւէտ օրինօքդ այ-

գործիմացաւորի կարգաւորութիւն և երջանկութիւն տէրութեանն, քան թէ օտարի։ Աղերս արկանել իշխանին, քանզի պաշտօնեայ Աստուծոյ է, պատուաւոր Տեառն է. Հաճութեամբ և կատարեալ հոգւոյն խոկ հպատակութեամբ հնաճել զանձն նոյն խոկ հաստատութեան օրինացն՝ որպէս արժանապատուութեանց, իշխանութեանց, նոյնպէս պատժոց և արդարութեանն պատուհասից։ Յաւէլ եւ հպատակութիւնք այդ և ոչ միայն առ հրամանս նորա, այլ և առ անձն մեծվայելչութեան նորա, քանզի հասարակաց հայր է և բարերար ամենեցուն, քանզի զտիւ և զգիշեր վաստակի և խնամ տանի իւրաքանչիւր անդամոցն հասարակութեան։ Ոչ միայն յիւրաքանչիւր անձանց իբր առանձինն անհատից առեալ, այլ և իւրաքանչիւրոցն իբրև ի բարոյական անձնաւորութենէ. յորոց ամենեցուն յայտ է թէ քանիցս ընդդէմ բնութեան տէրութեանն յարիցէ ոք, քանիցս վրդովմութեան ընդհանուր բարեկարգութեանն յարիցէ առանձին ոք, քանիցս գործս դաւաճանութեան ընդդէմ հայրենեացն, իշխանութեանն, և անձին գերագոյն իշխանին խորհեսցի կամ յարուցէ՝ անկանի ի քրէական յանցանս, և ըստ ծանր տէրութեան եղեալ յօրինացն հաստատութեամբ պատժեսցի։

ՆՀԵ. Քանի օ՞ն և որպիսի՞ք են պարտք և պաշտամունք իւրաքանչիւրոցն առ հասարակութիւնն և առ գլուխն, նոյնգունակ և նոյնքան են և հասարակութեանն՝ կամ իշխանին առ հպատակսն։ Գիտել պարտ է նախ՝ թէ իւրաքանչիւր իշխան պարտ է նախ՝ զի քաղաքային իրաւանցն և գիտութեանց ուսանող եղեալ իցէ, և քաջ ի միտ առեալ, որք լոյս տան շաւղացն իւրոց, և ճանապարհ հարթեն նմա ի ծանրագոյն ընթացս պաշտամանց իւրոց։ Դարձեալ՝ զայնքան պաշտամունս առ ի անդորրել կառավարել, չեն բաւական նմա միմիայն գիտութիւն և օժանդակութիւն մտաց իւրոց, այլ և խոհեմ, իմաստուն և առաքինի արանցն խորհրդոց պէտս ունին ի խորհուրդս, ի բանս և յամենայնի ի գործս իւր։ Դարձեալ գիտել պարտ է՝ զսահման երկրին կամ հպատակացն՝ զորոց կա-



րէ տարածել զբարձրագոյն իշխանութեան իւրոյ զհրամանս և զօրէնս։ Քանզի բաց ի քաղաքային ընկերութենէն՝ են և պարտ է զի լիցին և յիւրաքանչիւր պետութիւնս ընկերութիւնք ոչ միայն քաղաքայինք և մարմնաւոր բարեացն գործողք, այլ և ընկերութիւնք միաբանեալք ի բարութիւն հոգւոյն. զի զորօրինակ մարդս յերկուց մասանց բաղկացեալ է՝ ի հոգւոյ և ի մարմնոյ. նոյնպէս և ի մարդկանէ քաղաքային ընկերութիւնքն։ Արդ որպէս ի բարութիւնն մարմնաւոր բնականապէս մարդս է ընկերական, նոյնպէս ի բարութիւնն հոգւոյ այդպէս լիցի զի հոգին առաւել է քան զմարմինն. Արդ իշխանին հարկ է ճանաչել զհոգեւոր բարեաց ընկերութիւնս՝ առ որս չտարածի զօրութիւն իշխանութեան նորա, սակայն կից է մարմինն հոգւոյն, և սա զօրութեամբ իւրով վարէ և շարժէ զայն, և ոչ նա զսա։ Յաւէլ և ես թէ ի գերագոյն իշխանութեանց և յընտանի ընկերութեանն են գործք և իրք, որք առանձինն առեալ ըստ ներքին ընտանեկան կամ հայրական իշխանութեան, ոչ կախին ի բարձրագոյն իշխանութենէն, այլ յորտաքինն, այն է ի քաղաքայինն միայն։ Որպէս զի սուրբ և անվրդով կացցեն հայրենի իրաւունք ի վերայ գերդաստանացն իւրեանց, վասն որոյ չունին իմն իրաւունս ընդխառնելոյ թագաւորացն յիրս ներքինս՝ ոչ միայն հոգեւոր բարութեանցն ընկերութեան՝ զորս եկեղեցականս կոչեմք, այլ և ոչ ընտանի՝ կամ հայրենի ընկերութեանն իրաւանց և գործոց, նա մանաւանդ՝ յարգանաց և պատւոյ արժանի են, զի ամենայն բարեկարգութիւնն հասարակաց յեկեղեցական սկզբանց անտի է բղխեալ, և ամենայն ընկերութիւնք քաղաքաց և տէրութեանց ի հայրենի ընկերութեանցն բազմութենէ։ Ուստի զայնոսիկ քաջ առաջի աչաց ունելով, նկատեմք

ՆՀԶ. Կիրառութեան պաշտամանցն արդեամբ, նախ՝ ծանիցէ հարկաւ թագաւորն կամ իշխանն գերագոյն՝ զամենայն հպատակաց զիրաւունս թէ՛ բնականս՝ և թէ՛ ստացեալս, և խնամ տարցի պաշտպանել զնոսա. քանզի գլխաւոր վախճան քաղաքային ընկերութեանն այս է, զը-

տանել պաշտպանութիւն իրաւանց իւրոց։ Ուստի պաշտպանեսցեն թագաւորք զհպատակս իւրեանց ըստ ամենայն իրաւանցն, և արդարութեամբ և ճշմարտութեամբ դատ արասցեն ի գժտութիւնս անձանց և իրացն կամ ստացուածոց իւրեանց, և գերագոյն իրաւունք նուաստագունիցն նախադասեսցին հասարակացն անհատից. զի լաւ է կորնչել միոյն թէպէտ և անմեղին, քան բովանդակ հասարակութեան։ Ոչ միայն պաշտպանեսցեն, տացեն իւրաքանչիւրոյն իւրք, այլ և խնամ տարցին յառաջադիմութեան նոցա՝ հրամայելով, օրէնս դնելով, գործադրելով ըստ ամենայն տեսակի և մասին բարութեանցն թէ՛ բարոյականին և թէ՛ քաղաքայնոյն կամ բաղդին. ազգի ազգի տուրեւառութեանց սկիզբն հպատակացն տալով՝ յորդորելով և օժանդակելով։ Նա՛ և առաւել ընդհանուր բարութեանն հասարակաց, վասն որոյ հարկս արկանել ի վերայ քաղաքաց և գաւառաց՝ ըստ կարօտութեան թագաւորութեանն, և ըստ կարի զօրութեան հպատակացն, յիրաւանց անտի և օրինաց։ Դարձեալ՝ ըստ բարութեանցն, ոչ միայն նիւթականացն, այլև տեսականացն գիտութեանց և բարի վարուց գուն գործեսցէ իշխանն զի գործօղն՝ խրատուք, յորդորանօք, և հրամանաւն՝ գիտութեանցն ճեմարանք հաստատեսցին. և առաքինութեանց առիթք յորդարեսցին, Աստուածային պաշտամանցն կատարեալ ազատութիւն և գրականապէս նպաստ, քանզի անգիտութեամբն տգիտութիւն, և առաքինութեամբն բարուցն ուղղութիւն ծագին։ Սմին իրի կարի յոյժ պէտս ունիմք կրօնական պաշտամանցն կիրառութեան, քանզի ճշմարիտ բարութիւնն և անդորրութիւն յայնմ ընկերութեան կամ ազգութեան կայ, որ զպաշտամունս կրօնի հաստատուն ունի։ Միմիայն կրօնք են պատճառն և աղբիւրն ամենայն առաքինութեանցն և առաքինի հասարակութիւն, և միմիայն անձկալին է այն հասարակութիւն, որ պահէ զարդարութիւն և զսէրն, յորոց վերայ իբրև ի վերայ սեանցն ճշմարտութեան և բարութեան հաստատեալ կայ բովանդակ բարեկարգութիւնն հասարակու-



թեան։ Եւ քանզի պարտք են ծառայք իշխանին խնամ տանելոյ գիտութեանցն, ճշմարտութեան իրացն և բարի վարուց, որ կամի զվախճանն՝ և կամ որ պարտաւորի առ վախճանն, պարտաւորի և առ առիթս և նպաստս վախճանին. ուստի արգելուլ պարտի զներհակս ճշմարտութեան կամ զմոլար վարդապետութեանց աղբիւրս և բղգրեանս, նոյնպէս և զապականեալ բանս և զգիրս անօրէն արանց՝ որք բառնան ի հասարակութենէ զառաքինութիւնս, ըստ որում «ապականեն զբարս քաղցունս՝ բանք չարք»։

---

## ԳԼՈՒԽ Գ.

### ՅԱՂԱԳՍ ԱԶԳԱՑՆ ԻՐԱՒԱՆՑ ԵՒ ՊԱՇՏԱՄԱՆՑ

ՆՀԷ. Բնութիւնն յամենայն մարդ մի է, և ամենայն մարդիկ բնութեամբ նման են միմեանց. բայց անտի յայտնանէ, զի առ նմանութեան բնութեանն ծագին անկեղծ սէր ի սիրտս իւրաքանչիւրոյն առ նմանն միմեանց, յԱստուածուստ անտի է՝ զի կարօտիմք անգամ այնոցիկ նմանեացն մեզ։ Ահա՛ այս եղեւ պատճառն որ միաբանեաց զնախկին հայրենի ընկերութիւնն. այս պատճառ որ միաւորեաց զբազում հայրենի ընկերութիւնս ի միաբանութիւն ընկերական և քաղաքային. և հուսկ ուրեմն նոյն սա է՝ որ տայ առիթ միաբանելոյ քաղաքային զանազան ընկերութեանցն կամ ազգացն ընդ միմեանս, զոր և իրաւունք կոչեմք ազգաց։

ՆՀԸ. Արդ յերկուս վիճակս ազգք կարեն ի միասին լինել, կամ ի վիճակի խաղաղութեան և կամ ի վիճակի պատերազմի։ Ի վիճակի խաղաղութեան՝ ազգի ազգի յարաբերութիւնք են՝ կամ պաշտամունք և իրաւունք ընդ միմեանս։ Ի վիճակի պատերազմի՝ այլ իրաւունք և պաշտամունք, զորս երկու յօդուածովք բացայայտեմք։

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### ՅԱՂԱԳՍ ԱԶԳԻ ԱԶԳԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ, ՊԱՇՏՕՆԱՑ ԵՒ ԻՐԱՒԱՆՑ ԱԶԳԱՅՆ Ի ՄԻՋԻ ԻՒՐԵԱՆՑ Ի ՎԻՃԱԿՆ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ՆՀԹ. Նախ և յառաջ՝ ազգք բազումք անկախք ի միմեանց, սակայն անսալով բնութեանն ձայնի և օրինաց՝ միաբանին դրական իմն եղանակաւ ընդ միմեանս ի պաշտամունս, ի տուրևառութեան, ի դաշնագրութիւնս։

Պարտք և պաշտամունք կան ծանուցք ի վերայ ամենայն ազգաց ընդ միմեանս միաբանելոյ՝ ի բնական օրինաց և յիրաւանց անտի, զոր քեզ չախորժես՝ այլումն մի՛ արասցես. տո՛ւր իւրաքանչիւր ումեք զիւրն։ Բնական օրինացն պատուիրանք կատարին նախ ի չվնասել այլում՝ բառ ամենայն բարեաց՝ յանիրաւի զօրագոյն յարուցեալ նախ ի վերայ այլոյ ուրուք տկարագունի յափշտակեսցէ զիրաւունս նորա. քանզի ընդդէմ բնական արդարութեան է, ո՛չ նուաղեսցէ զայլս ի բարութիւնս իւր՝ նախանձու բանսարկուին. քանզի որով պարտաւորութեամբ արգելու իւրաքանչիւրոք ի վնասելոյ այլում անհատի, նովիմբ պարտաւորին և այլ ազգք և պետութիւնք առ միմեանս յամենայն մասին՝ թէ՛ ի բարութիւնս հոգւոյն, գիտութեանց, արհեստից, յառաջադիմութեանցն և թէ՛ ի բարութիւնս կենաց և բաղդին. վասն որոյ ընդդէմ բնական օրինաց է՝ զրկել զայլս ի կենաց՝ յստացուածոց, յերկրէն։ Յաւելլ և ևս զի են ազգացն ինչք, կալուածք և ընտացուածք. պարտի ամենայն թագաւորութիւն մեծարել զայդ իրաւունս, և ոչ երբեք զբարձր և զգերագոյն իշխանութիւն՝ տալ նոցա ի կիր արկանել զիշխանութիւնն. քանզի յիւրաքանչիւրն մինն միայն կարէ լինել գերագոյն իշխանութիւն, այլ՛ ունել զնոսա երբեք զանհատս իւրոյ իշխանութեան։

ՆԶ. Դարձեալ՝ իւրաքանչիւր ոք պարտի զայլ ազգս



սիրով բարեկամութեան մեծարել. քանզի ժխտողական են՝ զոր անձինդ ատենել չախորժես այլումն մի՛ արասցես, զկնի դոյ՝ զոր քեզ ատենել ախորժես այլումն զայդ արասցես։ Զայդ եթէ արասցեն ամենայն ազգք միմեանց, զոր վասն անձանց իւրեանց կամին, սուղ իւ հաստատի ամենայն բարեկարգութիւն։ Բայց բազմացն չարաչար հեռանելով ապականութեան բարուցն, այնու աղագաւ զի զզայական զարդն հակամիտ ի ներհական օրինաց բանական մարդոյն՝ բաց ի զանձինն խնդրելոյ, զայլոց չլինելով երբէք փոյթ նմա, յափշտակեն անիրաւք զայլոց իրաւունս և զերկրն և մերկացուցանեն զընկերն. վասնորոյ իմաստութեամբ ասէ Կիկերոն. «զոր քաղաքայնոցն միայն խորհեալ՝ զայլոցն ժխտեն, սոքա եղծանեն զհասարակ մարդկային սեռի զընկերութիւնն, ընդ բառնալ որոյ, բարերարութիւն, առատաձեռնութիւնն, բարութիւնն, արդարութիւնն ևս արմատաքի բառնին. որոյ բարձողքն՝ նոյն անգամ ընդդէմ անմահ Աստուածոցն անզգամք դատելի են տիրապէս, քանզի զառ ի նոցանէ կանգնեալ հասարակութիւնն վեր ի վայր տապալեն» (*)։ Ահա յայտ սատի է անիրաւութիւն և տմարդութիւն ազգին այնորիկ՝ որ զիւրն խնդրէ միայն շահ և զօգուտ՝ և յաւուրս մեր արդեւս լինել ջանան ոմանք մեծի բարեգործութեանն մարդկային սեռին՝ այն է միաբանութեան կարմիր և սպիտակ ծովուն. բարերարութիւնդ միայն արժանի Գաղղիական պետութեանն է։ Եւ որք զօրաւորք իցեն և միահեծան պետութիւնք, միշտ և յամենայն ժամու պարտին խնդրել զմիմեանց երջանկութիւն և զհաստատութիւն։ Նախ՝ զի նմանութիւն բնութեանն մշանջենաւոր կայ միոյ յաւիտեան, որ պարտաւորէ զազգս սիրել զմիմեանս։ Երկրորդ՝ զի մեծութիւն աշխարհիս այսորիկ կորստական և անցաւորք են, ո՛չ աւաւել քան զամպս երկնից և կամ յաւէտ երբեւ զալիս ծովուն՝ որք ելանեն բարձրանան՝ իջանեն դաշտանան, զայրացեալք ընդհարկանին ընդ ժայռս և ցրուին։ Այսպէս

(*) Յաղագս Պաշտօնից. Գիրք. Գլ. Ա։

ազդ երթայ՝ և ազդ գայ, փոփոխեալ ժամանակի և բաղ-դի պարագայից ոխարքն զգենուն զզօրութիւն, և զօրաւորքն կարօտին՝ որոց արհամարհէին։

ՆՁԱ. Որքան ազգք են յերկրի՝ կամ պետութիւնք, մինչ միով իւիք պակասին և պէտս ունին միմեանց, քանզի ըստ յառաջդիմութեան գիտութեան և արհեստից կամ բնական արդասեաց և բերքմառորութեանց այսր և այնր՝ տէրն բնական կամի՝ զի կարօտեալքն լիասցին այնուիկ յոր պակասին։ Արդ բարութեանց այսոցիկ տուրեւառութիւն՝ կամ ազատ ճանապարհաւ իմն և լաւերայն համութեամբ և հաւանութեամբ տէրութեանն լինել կարէ, և կամ բնականապէս դաշինս և թէութիւնս դնելով այնմ լինել կարէ. պարտ է և արժան զի ո՛չ ոք յազգացըն արգելու լիցի այլոցն արդար տուրեւառութեան ընդ ծով և ընդ ցամաք, քանզի յերթեեկութենէ ազգացն յազգս՝ ծնանին բազում բարութիւնք. զի կամ ուսանին և կատարելագործեն զանձինս յերկիրն յոր երթեն, և կամ ուսուցանեն և պատճառ լինին կատարելագործութեան այլոցն, յորոց զուրկ և թափուր գտանէին։ Ո՛չ միայն ազգի ազգի արհեստից ճանապարհք յարդարին՝ և նիւթական կամ բաղդի բարութեանցն, այլ և մտաւորական և տեսական գիտութեանցն առայմամբ, քանզի ո՞ ոք ուրասցի՝ թէ ի սերկեան աւուրս ազգք են գերագոյնք և փարթամք յարհեստս կամ ի գիտութիւնս ոմանս, յորոց զուրկ են այլք բազումք։ Ուստի իրաւունք են յամենայն ոք հաղորդակից լինելոյ բարութեան, անդորրութեան կենաց, գիտութեանցն, պայծառութեանց և երջանկութեան ազգին այնորիկ՝ ընդ որում հաղորդի։ Եւ չէ իսկ արդար և արժան՝ զի խտրութիւն դիցի ազգաց և ազգաց, թէ ո՛չ վասն արդար և իրաւացի պատճառին զրկելով ըզմին, և զմիւսն հրաւիրելով։ Այսպէս

ՆՁԲ. Իրաւունք են բնական ազգաց՝ յերկուս այլարկածս պահանջելոյ զօժանդակութիւն այլոց ազգացն. նախ՝ ի սով, յորժամ ի բազում պատճառաց, զօրօրինակ պակասութեան անձրեւաց ընդ երկար ժամանակս, կամ



ժանտախտի, եւ, ազդ իմն այնպէս զրկի ընդհանրապէս յընչից և յարդասեաց, ի հնձոց և ի պտղոց, և յորոց հարկաւ պահանջին ի պահպանութիւն կենաց, մինչև և ո՛չ գտանել զաւուրն պարէն. վասն որոյ և ոմանց ի հրապարակըս և ի փողոցս նուաղեալ խումբ խումբ յանօթութենէ ըզմահ ճաշակել, և ոմանց ի լերինս և յանտառս անկեալ վընասակար և մահաբեր խոտեղինօք կերակրիլ։ Յայսպիսի դըժբաղդ ժամանակի և պարագայս, նախ՝ յիրաւունս ազգացն՝ պարտ է յօժանդակութիւն հասանել կարօտելոյ ազգին և կանգնել զանկեալն. երկրորդ՝ բնական արդարութեամբ պարտաւորին, քանզի ի յետին հարկաւորութեան ամենայն ինչք և ստացուածք հասարակաց են, այն է ո՛չ հասարակութեան միոյ ազգին այլ հասարակաց, այն է ամենայն մարդկան բնութեամբ և կատարելութեամբ հօգւոյն միմեանց նմանելոյ. և երրորդ՝ է ընդդէմ ուղիղ սկզբանց մտացն և կարգի բնութեանն, զի մինչդեռ վերադասեսցի իւրումն վախճանի, քանզի ամենայն ինչ վասն մարդոյ է, և ո՛չ մարդ վասն ընչից։ Եւ զի գերագոյնն նախադասելի է ըստորնոյն, ուրեմն ի յետին հարկաւորութեան ազգաց, միմեանց պարտին նպաստամատոյց լինել։

ՆՁԳ. Երկրորդ՝ և նոյնպէս իրաւունք են ազգաց միմեանց յօգնութիւն ժամանելոյ, յորժամ այնքան անօրէնութիւնն զօրանայ հպատակայն, և գերագոյն իշխանութիւնն անարգի, և նորին օրէնք դրականք և իրաւունք ընդ ոտս լինին, մինչև զհիմն թագաւորութեանն սահմանադրութեան վեր ի վայր տապալել. որպէս զանիրաւ յարձակիչսն յետս դարձուցանելոյ իւրաքանչիւր անդ եղելոց պարտք են և օրէնք բնութեան, նոյնպէս զազգս յապստամբացն յուզմանց և յընդհանուր խռովութեանց պահպանելոյ այլոց ազգացն պարտք են և պաշտամունք՝ յօգնութիւն հասանելոյ գերագոյն և Աստուածային իշխանութեանն։ Քանզի, որպէս ի վերոյ ասացաք, ո՛չ ոք յազգաց և ի տէրութեանցս հաստատ և մշտնջենաւոր կայ, այլ ամենայն վտանգից և փոփոխութեանց ժամանակի և պարագայից ի ներքոյ անկանիլ կարեն և են ենթակայք. վասն

որոյ ի հաստատութիւն չեն մեզ պէտք յառաջ բերել զվէպս և զհնախօսութիւնս միահեծան պետութեանցն և թագաւորութեանց Բաղդէացւոցն, Եգիպտացւոցն, Ասորեստանեայց, Յունաց, Հռովմայեցւոցն, Հայոց, Պարսիցն են, են. զորոց այսօր զհետս նշմարեմք միմիայն ի պատմութիւնս նոցին մատենից, և որք էնն այսօր, չէին յերեկն և յեռանդն։ Բայց չլինէին այնպէս, եթէ օրէնք և իրաւունք ազգացն հիմնեալք ի վերայ բնութեանն օրինաց՝ և իրաւանց անվկանդ յամենեցուն պաշտպանեալ պահէին. զոր ասացաք զաւեր և զներքին յուզմանց ազգացն՝ ասեմք և զամենայն ընդհանուր հարկաւորութեանց և կարօտութեանց ազգացն, յորս մինն միւսոյն պարտի ի թիկունս հասանել։

ՆԶԴ. Սակայն ի շնորհս այսր փոխադարձ տուրևառութեանց, կամ այլ որ և իցէ յարաբերութեանց՝ թէ՛ բարեկամութեանն և թէ՛ թշնամութեանն ժամանակի դաշնադրութիւնք լինել կարեն ի մէջ ազգացն կամ թագաւորութեանց և թագաւորութեանց։ Եթէ իցեն դաշինք ընդ մէջ ազգացն, ապաքէն ամենայն ազգք դաշնակիցք արդարութեամբ պարտաւորին՝ ըստ նիւթոց ի դաշնադրութեանդ պարփակելոց՝ պաշտօն մատուցանել միմեանց, միայն թէ բարձրագոյն իշխանութեամբ լիցին՝ որ ինչ դաշնադրին, և ո՛չ յառանձինն անձանց կամ ի միաբանութեանց. քանզի արժան է դաշինս դնել այնմ միայն՝ որ զհասարակաց բարութեանէն խնամս ունի ընդ այլ ումն։ Նըմանապէս որ գերագոյն իշխան կայ կամ կան ի վերայ թագաւորութեանց։

ՆԶԵ. Առարկայք զորոց լինին դաշինք՝ պարտին նախ՝ զի ի բարութիւն լիցին հասարակաց կամ հպատակաց իւրոց, և ոչ երբէք չարութեան իցեն ո՛չ միայն յառարկայն. այլ և ամենայն պարագայիւքն և վերջին վախճանաւն։ Եւ թէ բարի իցեն՝ թէ չարք, այդոքիկ՝ զորոց դնին դաշինքդ, դիւրաւ ճանաչին անտի յայնմանէ մինչ հաստատեցին ի բնական օրինաց և յիրաւանց՝ և ի կարգէ բնութեանն, յորմէ քաջ ճանաչի ուղղութիւն նոցա, որք և



վաւերացուցանեն բնականապէս զդաշինսդ. և տան զբարոյական զօրութիւն ամենայն դրական օրինացն թագաւորաց՝ և ծանր պարտաւորութեամբ կապեն և պարտաւորեն զդաշնակից ազգս, ո՛չ վասն բարկութեան՝ այլ և մտացն խղճի. քանզի եթէ «օրէնք բնութեանն են միտք մեծին Աստուծոյ՝ ըստ Տուղղիոսի, զոր և Աստուածք մեզ շնորհեցին», յայտնութեամբ լուսոյն Աստուածային երեսաց ի մեզ, զի «նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց՝ և թէ յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և եթէ՛ որ պարտաւորեն զմեզ նոքին օրէնքդ և վկայութեամբ խղճի մտացըս», յայտ է թէ թագաւորացն դրական օրէնք պարտին ի համաձայնութեան գոլ նոցին Աստուածային բնական օրինաց, ապա թէ ո՛չ չլինէին բարի։ Եւ որ չարն է՝ ո՛չ պարտաւորէ, նա՝ զի ի նա թագաւորք թագաւորեն, պատգամք են մեծին Աստուծոյ, և հզօրք գրեն զարդարութիւն։ Ուրեմն եթէ նոքաւ՝ առանց նորա չկարեն կալ։ Դարձեալ՝ պարտ է զի առարկայք դաշանցդ չլիցին ի կանգնումն ումանց՝ և ի կործանումն այլոց, այլ ամենեցուն ի բարի, միայն թէ բարութիւնդ այդ հրամայեալ և պատուիրեալ իցէ ի բնական օրինաց ամենեցուն, ո՛չ թէ անտարբեր և ծնունդ ազատ կամաց ազգացն և ազգաց։ Քանզի են բազում բարութիւնք որք չեն ի բնական օրինաց հրամայեալք և պատուիրեալք, այլ կախին յազատութենէ նոցա, զորս ամենեցուն մատուցանել և ընդ ամենայն ազգս դաշինս դնել չեն պէտք և պարտք։ Ուստի գիտել պարտ է թէ՝

ՆԶԶ. Են առարկայք՝ առ որս բնական օրէնօք պարտաւորին ամենայն ազգք, և են՝ որք դրականք են՝ կամ կամաւորք։ Առաջինքն թէպէտ և հրամայեալք և պարտաւորեալք ի բնական օրինաց, սակայն և ի դրական օրինաց պարտաւորիլ կարեն։ Իսկ սոքա կամաւորքն են, յորժամ կամօքն հաւատարմութեամբ խոստման պահել կամ պարտաւորել զանձինս առ այդ՝ զօրութեամբ բնական հաւատարմութեան «լե՛ր հաւատարիմ ի խոստմունըս»։ Դարձեալ՝ տրոհին դաշինք [illegible]

կ—ն ։ Առաջինն պարտաւորէ զիշխանութիւնն առ այլ ոք, երկրորդն անձնաւորական գոլով զանձն միայն իշխանին պարտաւոր է առ այլ ոք. ուստի դադարեալ կամ մեռեալ անձինն՝ դադարի և պարտաւորութիւնն, բայց ոչ այդպէս իրականն, որ պարտաւորէ նոյն իսկ զբովանդակ թագաւորութիւնն ընդ յաջորդիւն իւրով՝ թէպէտ և դադարեսցի կամ մեռցի իշխանն ինքն դաշնադիր ։

ՆՁԼ. Ըստ այսմ դադարին կամ լուծանին ամենայն պարտք ի մէջ դաշնակցացն, եթէ առարկայքն վասն պարագայից ումանց փոփոխիցին բարոյապէս քանզի կարէ մի ևնոյն իմն որ յառաջն բարի էր՝ դադարիլ ի բարութենէ իւրմէ՝ ի փոփոխիլ առարկային և պարագայից նորա և վախճանի նորա ։ Երկրորդ՝ դադարին կամ լուծանին ամենայն պարտաւորութիւնք դաշանցդ և անտի ծագեալ իրաւունքդ՝ յորժամ կամ ամենայն դաշնակիցք կամօքն և հաճութեամբ իւրեանց բառնան զպարտաւորութիւնդ-դայդ, և կամ յորժամ մինն յերկուց կողմանց դադարի՝ հարկաւ դադարի կամ լուծանի պարտաւորութիւնն և ի միւսոյն ։ Դադարին երրորդ դաշինքդ՝ եթէ ժամանակաւորք էին՝ ի լնուլ ժամանակին ի կամաց դաշնակցացն սահմանելոյ, դադարին պարտաւորութիւնք՝ եթէ թէականք էին դաշինքդ՝ ի կատարիլ կամ ի գնիլ թէութեանց և կամ ի բառնիլ թէութեանցն, ընդ որում հաւանեալ իցեն կամք դաշնակցացն ընդ գնիլ կամ ընդ բառնիլ նոյին թէութեանցն ։ Հուսկ ուրեմն՝ լուծանին պարտաւորութիւնքդ, յորժամ մինն յերկուց կողմանց անկար իցէ բացարձակապէս առ պահպանութիւն դաշանցդ. Եւ առ անկարելին ոչ ոք պարտաւորի ։

ՆՁՐ. Իրաւունք են ազգացն կամ ազանց՝ ի պահպանութիւն և ի բարեկամութիւն յարաբերութեանցն՝ հաղորդութիւն, զի իւրաքանչիւր ոք յազգացն ի գերագոյն իշխանէն կարգեալ առաքեսցէ զմի ոք ի պաշտօնէից իւրոց՝ և կամ զբաղումս առ այլ ազգս ։ Սոցին տամք զանունունդ դեսպանաց կամ նուիրակաց կամ հրեշտակաց ։ Ապաքէն յայտ է թէ անձինք դեսպանացն և հրեշտակացն



են գերագոյնք յարժանապատուութեան, քանզի բարձեալ զիւրև բերեն զազգի իւրեանց զբարձր հրամանս, առ ի հաղորդել զկամս հայրենի պետութեանն՝ ազգին՝ առ որ առաքեցանն ։ Եւ քանզի միշտ պարտք են նմա վասն հայրենեացն երջանկութեան գուն գործել և վաստակել, և խաղաղութեան միջնորդ կան ի մէջ ազգացն և ազգաց, նմին իրի հրեշտակաց ունին զանուն, յորս որքան մեծ է արժանապատուութիւն և պաշտօն, նոյնքան պարտ է՝ զի գտցի ազգասիրութիւն՝ հաւատարմութիւն, և խոհեմութիւն. զի հասարակաց և հայրենեացն իւրեանց բարութիւն նկատմամբ ազգին, ընդ որում կան միաբանութեամբ և սիրով բարեկամութեան, նոցին յանձնեալ է՝ և ի նոցանէ կախի ։ Երկրորդ՝ հարազատութեամբ և անկեղծութեամբ հոգւոյ յարդարեալք՝ պարտին լինել. Մի՛ և մի՛ երբէք ապականեսցին ուռճկացն բազմութեամբ, և ընդդէմ բնութեանն օրինաց և իրաւանց զիւրեանց առանձինն բարութիւն և զշահ վերադասեսցեն՝ քան զհասարակաց և զհայրենեացն բարութիւն, անվեհեր և վեհանձն վարիլ պարտին դեսպանք ընդ այլ իշխանութիւնս, առ որս առաքեալ իցեն, անվեհեր մինչև զկեանս դնել վասն հայրենեացն բարեաց ։ Դարձեալ՝ ծանր պարտաւորութիւն ի-վերայ կայ և պաշտամունք, մի՛ հոգւով խռովութեան՝ և թշնամանաց վարիլ ընդ ազգս, նա յաւէտ խոհեմութեամբ և ուշիմութեամբ իւրեանց յամենայն զօրութենէ անձինն վաստակեսցին անվրդով և հաստատուն պահել զխաղաղութիւն և զբարեկամութիւն. Այսոքիկ են պարտք և պաշտամունք նոցա ։ Սակայն

ՆՁԹ. Ի կողմանէ ազգացն՝ առ որս առաքեալ իցեն դեսպանքն գերագոյն պաշտօնիւ պետութեան իւրեանց՝ պարտք են յիրաւանց ազգաց ի վերայ ամենեցուն ծանուցք, զի ամենայն յարգանօք և ազատութեամբ կացցեն և կեցցեն, յոր և իցէ ժամանակի թէ՛ խաղաղութեան՝ և թէ՛ պատերազմի. քանզի միջնորդ են նոքա միաբանութեան և խաղաղութեան ազգացն, որոց բերեն զպատգամս. վասնորոյ յամենայն ժամանակի և յամենայն ազ-

գըս մեծաւ յարգանօք ընկալեալ են հրեշտակք ի թագաւորացն՝ և որք կալեալ զհրեշտակս ազգի ազգի նախատանօք՝ կամ արհամարհեն կամ ի տանջանս և ի մահ մատնեն զնոսա, նոքա նախ՝ զանձինս նախատեն, բարբարոս գոլով և բնական օրինացն անարգուք, և վատ անձինք։ Սակայն չէ արժան, և ընդդէմ իրաւանց ազգաց է, ձերբակալ առնել զդեսպանս ազգացն, յորժամ նոքա ի սահմանաց պաշտամանն չելանիցեն՝ այլ ուղղապէս զայդ առաջարկել՝ կամ կատարել ջանայցեն, բայց եթէ գաղտ և նենգութեամբ անցեալ զսահմանաւ պաշտօնին, վասակիցի ի կորուստ ազգին առ որ առաքեալ իցէ, դաւաճանութեամբ ներքին յուզմանց, թելադրութեամբ և ապըստամբութեան, արդարև արժան է ունել զնա, և արդարութեամբն օրինօք դատել զնա. բայց գովութեան արժանին այն է, եթէ կալեալ զնա ի յանցանս առաքեացեն առ իւր սեփական ազգ կամ տէրութիւն, յորմէ դատիցի ըստ արժանւոյն, և այդ եթէ գործ նորա չիցեն թելադրութեամբ իւրոյ տէրութեանն, ապա թէ ո՛չ դատին ի տեղին՝ յոր ըմբռնին։

---

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### ՅԱՂԱԳՍ ԱԶԳԻ ԱԶԳԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ. ՊԱՇՏԱՄԱՆՑ ԵՒ ԻՐԱՒԱՆՑ ԱԶԳԱՑ Ի ՄԻՋԻ ԻՒՐԵԱՆՑ Ի ՎԻՃԱԿՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՆՂ. Պատերազմն փափաքի վասն խաղաղութեան՝ ասաց սուրբն Օգոստինոս. զի՞նչ իցէ խաղաղութիւնդ այդ և վիճակ խաղաղութեան, ասացաք ի վերոյ. արդ առ ի տանել զայդ վիճակ՝ հարկադրին ազգք յառնել յազգի վերայ և թագաւորութիւնք թագաւորութեանց։ Քանզի՝ որպէս ասացաք՝ ի պահպանութենէ պարտուց և պաշտամանց և իրաւանց ազգացն՝ ծագի կատարեալ խաղաղութիւնն, և յընդդիմութեան նոցա կամ ի պակասել



այնց պաշտամանց և իրաւանցն՝ կորնչի հաստատութեանն խաղաղութիւն, կամ ընդ ոտս լինին իրաւունք ազգաց՝ և կորնչի ամենայն բարեկարգութիւնն՝ ի նորոգութիւն որոց ամենեցուն, այն է պաշտամանցն և իրաւանց ազգացն. բընութիւնն տայ իրաւունս իւրաքանչիւր ազանց պաշտպանել և պահանջել զօրութեամբ զինուց զանարգեալ պաշտամունս և զիրաւունս. Ահաւասիկ յայտնիկ միայն կայանայ վախճանն պատերազմի. Եւ թէ ուստի՞ իցէ իրաւունքդ այդ ազգաց պատերազմի ի բնութենէ անտի օրինաց։

ՆՂԱ. Քանզի զորօրինակ իւրաքանչիւր անհատին բնութիւնն իրաւունս շնորհեալ է անձինս և անվտանգպահելոյ և պաշտպանելոյ զիրաւունս իւր զինու անգամ զօրութեամբ, իւրաքանչիւր ումեք՝ մերթ չիք հնար այլով իւիք եղանակաւ զայդ ի ձեռս բերելոյ։ Նոյն օրինակ և առաւել իրաւամբ ընդհանուր և բարոյական անձնաւութիւնն, բովանդակ հասարակութիւնն՝ կարէ պահանջել զսուրբ իրաւունս իւր, և վրէժխնդիր լինել ընդհանուր խաղաղութեանն կորուսելոյ և բարեկարգութեանն խանգարելոյ յանիրաւութենէ թշնամեացն, ի սէր որոյ անհատք բնութեամբն՝ զօրութեամբ ի զօդ ընկերութեամբն միաբանեցան կամօք՝ և սրտիւ՝ և հոգւով. «օրինաւոր պատճառ արդար պատերազմի է, ասաց Օգոստինոս, անիրաւութիւնն ընկալեալ, եթէ այլով եղանակաւ ի ձեռս բերել չէ հնար թէ ո՛չ զինու զօրութեամբ»։

ՆՂԲ. Արդ՝ եթէ վախճան պատերազմին է բարութիւնն և իրաւունք հասարակաց աւերեալ անիրաւութեամբըն՝ պատերազմն անգամ պարտի բարի լինել և արդար, ըստ որում բարին յամբողջ պատճառէն, որպէս վախճանըն բարի է, նոյնպէս պարտի բարի լինել և գործն, որով ստացեալ լինի վախճանն՝ որ է պատերազմն և սահմանի՝ խանգարեալ բարեկարգութեանն վերահաստատումն կամ [illegible]. սակայն և զայս գիտել պարտ է թէ ո՛չ ամենայն զժտութիւն միոյն ընդ միւսն յանիրաւի՝ կարէ պատերազմ կոչիլ, այլ այն միայն՝ որ արդարութեամբ լինի, կամ վասըն արդար պատճառաց։ Նախ՝ պատերազմն բաժանի ի

ժողովրդականն և ի դեսպոտականն, այն է մինչ զօրու ծանու խաղայ անարգեալն ի վերայ կամ յերկիր անարգողին. և պաշտպանողականն է՝ յորժամ ընդդէմ անիրաւ յարձակմանց այլոցն զէն ի ձեռին զօրու ընդդէմ կայ յարձակմանն: Երկրորդ՝ կարեմք արոհել զպատերազմն ի Ժողովրդականն և ի Բռն [illegible]. Նա լինի՝ յորժամ զի մի՝ բազմաց արիւն հեղցի՝ իշխանութիւնն կարգէ զմի ոք անհատ զի ի մարտ մտցէ ընդ այլ ումն անհատ. Սա՝ յորժամ բազումք ընդ բազումս, որպէս սովոր է: Երրորդ՝ կարեմք արոհել զնոյն պատերազմն յերիս ժամանակս, յակիզբն պատերազմին, ի մէջ պատերազմին, և ի վերջին պատերազմին: Արդ՝ զարդարութենէ պատերազմին բազում թէութիւնք են նշանակեալք:

ՆՂԳ. Նախ՝ յակիզբն պատերազմին պարտի արդար լինել պատճառն՝ ասէ սուրբն Թուլլիոս (*). այն է՝ բանալ մարտ պատերազմի վասն ծանր յանցանաց կամ անիրաւութեան, ոչ թէ վասն զինչ և իցէ յանցանաց, այլ այնը՝ որով վիրաւորեալ իցէ ընդհանուր բարութիւնն հասարակութեան: Երկրորդ՝ ասէ անդ նոյն սուրբ վարդապետն, զի պատերազմն լիցի ձեռնտուութեամբ և կամօք գերագոյն իշխանութեանն որ անկախ է այլոց իշխանութեանց. այսպէս թէ ոչ՝ ասէ սուրբն, պատերազմն պակասէր օրինաւոր և արդարացուցիչ թէութեամբ իւրով: Երրորդ՝ ասէ՝ մարտնչողացն կամ պատերազմողացն միտք և դիտաւորութիւն ուղիղ և անխարդախ լիցի, այն է՝ վասն միմիայն եղեալ անիրաւութեան դարման տանելոյ և վերատանելոյ զայն, ոչ չարութեան վախճանաւն՝ վասն որոյ ասէր Կիկերոն «այդպէս պատերազմն դիցի, զի ոչ այլ ինչ այնու, բայց միայն խնդրիլ խաղաղութեանն տեսանիցի, ոչ թէ փոխելոյ՝ առնելոյ զվրէժ՝ ջնջելոյ զայլն», են, են: Չորրորդ՝ որպէս յառաջքան առնել զդատաստան պարտք են և պաշտամունք դատաւորին՝ լսել փաստից երկոցունց կողմանցն անդամ, և ապա առնել նոցա զդատաստան, նոյնպէս յառաջքան ի պատերազմ ելանել՝ պարտ է զի այլ

(*) Ե. Ե. Խրոց. Ե.



մարդկային խոհեմութեանն միջնորդիւք դուն գործիցէ ի նորոգումն և յատացումն կորուսեալ բարութեանն կամ նահանջման և հատուցման անիրաւութեանն. և յայնժամ կամ ի լրումն այլ ամենայն միջնորդաց՝ յետինն լիցի այն զինու զօրութեանն: Հինգերորդ՝ խնդրի զի հրապարակաւ կամ պաշտօնական ընթացիւք և եղանակաւ հրատարակեսցի ձայն կամ ժամանակ պատերազմի, ոչ յանկարծակի յարձակելով ի վերայ թշնամւոյն: Յաւել և ես յայժմեան ժամանակի ի կարգի աղդայն իրաւանց՝ են և զէնք և մեքենայք ամին իրի՝ այնպէս փառակարք և եղծիչք մարդկան բազմութեանն, մինչև անողորմ և անհամեմատ վախճանին տիրապէս դատիցին. նմին իրի հաւանութեամբ և կամօք ամենայն աղգաց կիրառութիւնք նոցա խափանեալք են:

ՆՂԴ. Ցարդար պատերազմի, յայտ է թէ պարտք են ծանունք ի վերայ զօրացն և զօրապետին, զի այնքան փասեսցեն թշնամւոյն, մինչև բաւական դատիցի վախճանին՝ ոչ յաւելուլ ի պարտեալն և նուաճեալն զանողորմ ձեռս և զանգթութիւն ընդդէմ մարդկային բնութեան, ոչ խողխողելով այլ վիրաւորելով զթշնամին եթէ վերջն զօրէն նուաճել զնա: Եւ ի մոտ ունիցին և ակնարկեսցեն զթշնամւոյն խաղաղութեան զձայն՝ և զդրօշակ: Սակայն քաջ զօրացին, հաստատունք և անյողդողդք, և անվեհերք կացցեն, զի վասն իրաւանց և արդարութեանն զինեալք են. վասնորոյ, և Տէր զօրութեանց ի թիկունս նոցա հասցէ: Եւ ես ճակատ ի ճակատ յարդարեալ իբրև պատգամաւոր Աստուծոյ պատարագ՝ և զուարթք անուայցեն ձայնից հրամանաց և շարժմանց ըսպարապետին իւրեանց, վասն իրաւանց և վասն հայրենեաց սպասցին ի վերայ թշնամեաց, աշխոյժք և ամենայն զօրութենէ անձին՝ հարեալ, հատեալ, կոտորեալ, նուաճեալ, իբրև զշանթս շանթեալք, յաղթական հանդիսացին թշնամեացն: Անկեալքն ի մարտի յանուս անթարշամ արդարութեան պսակաւն, և յաղթողքն սատի փառացն պարծանեսցին: Սակայն յերկուց կողմանցն իսկ պարտի հա-

ւատարմութիւն ի խոստմունս դադարման զինուց՝ և ցորքան ժամանակ, որք միշտ լինին ի կարօտութենէ նոցին, թէ՛ վասն թաղման անկելոցն քաջաց ի մարտ պատերազմի, և թէ՛ հանդարտի կամ պատերազմական յարաբերութեանց հրեշտակացն և այլոցն սոյնպիսեաց։

ՆՂԵ. Յերկուց կողմանց անդամ ձեռբակեալ լինին՝ և անկանին ի գերութիւն. ամենայն մարդկային բնութեանն վայելուչ եղանակաւ պարտ է վարիլ ընդ նոսա, մի՛ արհամարհել, կամ խոշտանգել զնոսա, այլ իւրաքանչիւրոցն ըստ պատույ և աստիճանի զպատիւ և զկարգ և զկենացն պարէն մատուցանել պարտ է. որպէս սովոր են ազգք ընտիրք և ի մարդկային կրթութեան և քաղաքավարութեան օրէնս յառաջադէմք։ Դարձեալ՝ մինչև տացեալ իցէ արդար կողմն զյաղթութիւնն՝ կարէ անխտիր սպանանել զթշնամիս, ունել, բանդել, յաւար առնուլ և գերել, միայն թէ այդորիկ ամենայն լիցին վախճանաւ յաղթութիւն ստանալոյ, ոչ թէ յորժամ կարեմք առանց զայդ գործելոյ յաղթող հանդիսանալ։ Դարձեալ՝ ի պատերազմի ոչ երբէք վնասել այլոցն՝ թշնամւոյն սահմանակից ազգաց, ոչ ուղղապէս և ոչ անուղղապէս։

ՆՂԶ. Ի վերջ պատերազմի յաղթեալ և նուաճեալ զթշնամին՝ պարտին զէնք և մեքենայք պատերազմին բառնիլ ընդ նմա, և ես այդ ամենայն բռնութիւնն կամ զօրութիւնն յետ հասանելոյ վախճանին՝ և արտաքոյ վախճանին ի կիր արկեալ քանիցս լիցին՝ յումպէտս և ընդդէմ օրինաց են. քանզի միջոցք այդորիկ վախճանաւն կամ պատճառաւն բարի համարէին, բարձեալ պատճառին՝ և դադարեալ վախճանին, չկարեն առանց անցանելոյ զօրինօք և զիրաւամբք ազգաց՝ ի կիր արկանիլ։ Քանզի ի հատուցանել անիրաւութեան և առ ի ստանալ զաւերեալ բարեկարգութիւնն և զխաղաղութիւն հայրենեացն՝ արդար և արժան դատեցաւ այնքան արեանց հեղութիւնն պատերազմի և արդարութեան և խաղաղութեանն կորուստ՝ ստիպեցին զհասարակութիւնն ի մարտ պատերազմի։ Ըստ այսմ սուրբն Օգոս. « զխաղաղութիւնն ունել պէտք են կամաց,



զպատերազմն՝ հարկաւորութեան. այլ աղաչեսցէ ի հարկաւորութենէն Աստուած և ի խաղաղութեան պահեսցէ։ Զի ոչ խնդրի խաղաղութիւնն, զի պատերազմ լիցի՝ այլ պատերազմ լինի, զի խաղաղութիւնն ստասցի. լե՛ր ուրեմն ի պատերազմիլդ անդամ խաղաղարար, զի զայնոսիկ ընդ որս մարտնչիս ի միութիւն խաղաղութեան յաղթեալ ձգեսցես»։ Ուրեմն ի հատուցանել անիրաւութեանն՝ և յստացումն խաղաղութեան հասարակաց՝ ձեռբակալքն ամենեքին և գերի անկեալքն՝ յազատութիւն իւրեանց վերադարձցին։

ՆՂԷ. Եւ արդեօք զերկիրն նուաճեալ և զօրութեամբ արդար պատերազմին ի ձեռս բերեալ առանց անիրաւութեան կարիցէ՞ յաղթողն միշտ ունել և տիրել նմա, կամ զինքն կորզել կամ սեփականել, զազգն նուաճել բռնանդակալես, և այդ որո՞վ իրաւամբ եթէութեամբ, և յո՞րպիսի պարագայս. յայտ է նախ՝ թէ պատերազմն ի մեր ժամանակս կարի նուազեալ է քան զոր միանգամ ի հեթանոսս էր, և կարեմք ասել թէ մերքն յաւէտ մրտօք կամ խելացն հնարիւք, քան թէ զօրութեամբ բազկի մարտնչին. և ամենայն ազգք քրիստոնէից յօրինաց և յիրաւանց գիտութեանն յառաջադէմք՝ առանց զանցանելոյ զօրինօք՝ և զիրաւամբք բնութեանն, չկարեն յաղթել միումն ի թշնամեաց, իսպառ իրաւամբ և արդարութեամբ իւրեանց սեփականել զայն. այլ այս միայն է յիրաւանց ազգացն շնորհեալ, զի յաղթողն իբրեւ օրինաւոր դատաւոր՝ պարտի դատել զնուաճեալն, և քանզի ըստ սրբոյն Օգոստինոսի պատերազմն խնդրի վասն խաղաղութեան և ի հաստատութիւն ստանալ բարեկարգութեանն և արդարութեան, նախ իւր չկարէ զայն պահանջել, եթէ ոչ հատուցանել վասն անիրաւութեանն, զոր արար։ Երկրորդ՝ զամենայն ծախս, և զվնաս ի պատճառս պատերազմի եղեալս և անտի ծագեալս՝ դաշինս վերստին դնելով և զխաղաղութիւն և զմիաբանութիւն ընդ իւր պահանջելով. թէպէտ և Սուարէզ զաւաւելն շնորհէ (*), այն

(*) Յաղագս Օրինաց Գիրք Գ ։ Գլ . Դ ։ Յօդ . Գ ։

է կարէ՛ ասէ, տիրել խաղաղ հաստատութեանն, և սորին պարտք են հպատակելոյ զանձն վասն յանցանաց. բայց միայն՝ եթէ պատերազմն արդարութեամբ իցէ։ Սակայն են ես

ՆՂԸ. Այլ թէութիւնք, այն է յորժամ նուաճեալն յաղթեալ և ի յառաջնմէ անտի քաջ ճանաչի, թէ միշտ անմիաբանութեամբ կացցէ և յորէ յոր ջանայցէ ի կործանումն այլոցն պետութեանց, և չիք հնար բառնալոյ զչարն ի միջոյ, եթէ ոչ տիրելով նմա խաղաղ, յայնժամ արդարութեամբ և իրաւամբ յարուցեալ ի վերայ պատերազմաւ և նուաճեալ զնա՝ կարէ բառնալ և ըղձերագոյն իշխանութիւն նորա, որ է յայնժամ թէութիւն հայրենեացն խաղաղութեան [illegible]։ Եւ ես զնոյն ասել պարտիմք զբարբարոս ազգացն, զոր նուաճեալ ուրուք արդար պատերազմաւ՝ կարէ իրաւամբ խաղաղ բառնալ զանունդ և զանկատար իշխանութիւն նոցա, և օրէնս դնել յառաջադիմութեան մարդկային կենցաղավարութեան և բարեկարգութեան խուժադուժ և բարբարոս ժողովրդեան։ Դարձեալ՝ և ըստ մեծիմաստին Սուարէզի անդ՝ յորժամ թագաւորութիւն իմն նուաճի՛ բայց յանիրաւ պատերազմի, յայնժամ չունի երբէք իրաւունս յաղթօղն անիրաւ՝ խաղաղ բառնալոյ զիշխանութիւն նուաճելոյն, և ոչ ունի զիշխանութիւն օրէնս դնելոյ նմա, եթէ միշտ և հանապազ հակառակ կայցեն կամօք և հոգւով իշխանութեան յաղթողին իւրեանց՝ ոչ երբէք՝ ոչ ընդ սոսնայ սա զիշխանութիւն տիրելոյ նոցա կամ թագաւորելոյ։ Իսկ եթէ ապա հաւանութեամբ իւրեանց ընկալցին զնա դրականապէս, յայնժամ իշխանութիւն օրինաւոր լինի այնուիկ և յաղթողին իրաւունք ծնանին պահանջելոյ ի հպատակացն զկատարեալ հնազանդութիւն, այսպէս Սուարէզ անդ։

ՆՂԹ. Արդ տեսաք և փորձիւ անգամ ի նմին կամք, թէ առ կարօտութիւն բնութեանն, այն է ի բարութիւն կենացն և ի պահպանութիւն բնութեանն՝ բնականապէս երբեք մարդն ի միաբանութիւն այլոց ուրուք ընկերի՝ զոր



բնութիւնն արար և կարգեաց, և ծագեցաւ անտի բնտանեկան ընկերութիւնն. սակայն չեղև բաւական այդ առամենայն կարօտութիւն մարդկան, այլ բնութեան կարօտութիւնն արար՝ զի բազում բնտանեկան ընկերութիւնք ի մի հաւաքեալք՝ միաբան և միահաւան դրականապէս ամենեքին ի միասին վասն հասարակ իմն վախճանի և բարութեան յօրինեցեն զքաղաքային ընկերութիւնս ազգաց, յորմէ բազում ազգք և ազինք և թագաւորութիւնք. սակայն ի վերայ այսր ամենայնի մարդկային բնութիւնն այդքանեօք ոչ շատացաւ, այլ պէտք եղեն զի ամենայն ազգք յարաբերութեամբ և սուրբ աւաթեամբ մարդկային կենացն վիճակին՝ ընդ ցուն զկարօտութիւն ամենեցուն միաբանութեամբ, յորմէ ծագեցան և իրաւունք ազանց։ Միաբանեցան անգամ ազգք ի մի վախճան և բարութիւն, սակայն և ոչ այնու յագուրդ մատուցաւ մարդկային բնութեանն, քանզի այդ ամենայն յողդողդք և անցաւորք են։ Զի՞նչ առնել պէտք իցեն ուրեմն այսմիկ մարդկային անյագ և անհանգիստ բնութեան, եթէ ոչ զի միաբանեսցին ամենայն ազգ և ազինք յերկնիցն այն գերագոյն բարութիւն, անանց բարութիւն, և մշտնջենական բարութիւն։ Քանզի անդ հանգչի միայն, յորմէ ել միանգամ, այն է ի յաւիտենական երջանկութեանն յԱստուծոյ, որ սկիզբն է և վախճան ամենեցուն։

ՇՃ. Առ որ ժամանել մարթիք, միայն ճշմարտութեամբ և բարութեամբ զորոց ըստ կարի տկարութեան մերում՝ մանկունք ի Քրիստոս սիրեցեալք, յայս ընթացս Բանական Փիլիսոփայութեան խօսեցաք. յուսամք զյայս ճըշմարիտ՝ թէ այցելութեամբ վերնոյն ի շաւղայն ճշմարտութեան չիցեմք ստերիւրեալ. այլ թէ իցեմք՝ զայդ նահանջեմք և յետս կոչեմք հլու հպատակութեամբ կամացս և մտաց, առաջարկելով զխոստակդ գլխոյն և աղբերն ամենայն ճշմարտութեան Հռովմէական Սրբոյ Եկեղեցւոյ։

ՎԵՐՋ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿ
ԲԱՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ։

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

## Բ. ՀԱՏՈՐՈՑ

## ՏԱՐԵՐԱՑ ԲԱՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

---


ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ ԲԱՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ. ՅԼԹ. ՅԽ ։ 3

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍՆ Ա. ՅԱՂԱԳՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ. ՅԽԱ ։ 5

ԳԼՈՒԽ Ա. Յաղագս վախճանի մարդկային գործողութեանց. ՅԽԲ ։ 6

ՅՕԴ. Ա. Յաղագս բնական զօրութեան հարկաւ առբերելոյ ընդհանուր բարութիւնն իբրեւ ի վախճան մարդկային գործողութեանց. ՅԽԳ ։ —

ՅՕԴ. Բ. Թէ բարութիւնք արարածք կարեն լինել ըստ մասին միայն վախճան, և ո՛չ թէ ճշմարիտ առարկայ մարդկային երջանկութեան, կամ վերջին վախճան մարդկային գործողութեանց. ՅԽԴ ։ 8

Առաջարկութիւն՝ «Թէ յարարած բարեացն ո՛ր և իցէ և ո՛րպիսի և իցէ բարին չկարէ առարկայ լինել մարդկային վերջին վախճանի, կամ կատարեալ երջանկութեան». ՅԽԵ ։ 9

Լուծանին առարկութիւնք. ՅԽԶ ։ 11

ՅՕԴ. Գ. Յաղագս առարկայի մարդկային երջանկութեան. ՅԽԷ ։ 14

Առաջարկութիւն՝ «Թէ միմիայն Աստուած է առարկայ մարդկային երջանկութեան». ՅԽԸ ։ 16

Լուծանին առարկութիւնք. ՅԽԹ ։ 18

ԳԼՈՒԽ Բ. Յաղագս մարդկային գործողութեանց. ՅԾ ։ 25

ՅՕԴ. Ա. Յաղագս թէ զի՞նչ է և քանի՞պատիկ մարդկային գործողութիւնն. ՅԾԱ-ՅԿ ։ —

ՅՕԴ. Բ. Յաղագս բարոյականութեան մարդկային գործողութեանց. ՅԿԱ-ՅԿԳ ։ 34

ՅՕԴ. Գ. Յաղագս սկզբան մարդկային բարոյական գործողութեանց ։ 39

Առաջարկութիւն Ա. «Թէ իցեն արդեօք ոմանք ի մարդկային գործողութեանց անտարբերք». ՅԿԴ ։ —

Առաջարկութիւն Բ. «Բարոյականութիւն մարդկային գործողութեանց ո՛չ կախի ի կարծեաց ժողովրդեան, և ո՛չ ի մարդկային օրինաց». ՅԿԵ. ՅԿԶ ։ 41

Առաջարկութիւն Գ. «բարոյականութիւն մարդկային գործողութեանց ո՛չ կախի յաստուածային ազատ կամաց» . ՅԿԷ ։ 44
Առաջարկութիւն Դ. «բարոյականութիւն մարդկային գործողութեանց կախի անմիջապէս յիրացն առարկական կամ ի զգական կարգէ ի մտաց մերոց ըմբռնելոյ, և միջնապէս և հեռաւորաբար յաստուածային մտացն և էութենէն». ՅԿԸ ։ 45
Լուծանին առարկութիւնք . ՅԿԹ ։ 47
ՅՕԴ. Դ. Յաղագս վերագրելոյ մարդկային գործողութեանց գործողին, ուր և յաղագս արդեանց և ապարդեանց նոցին . ՅՀ-ՅՀԵ ։ 51
ԳԼՈՒԽ. Գ. Յաղագս օրինաց, կամ կանոնի և սկզբանց պարտաւորութեան մարդկային գործողութեանց . ՅՀԶ ։ 57
ՅՕԴ. Ա. Յաղագս խղճի մտաց . ՅՀԷ - ՅՀԹ ։ 59
ՅՕԴ. Բ. Յաղագս ծանօթութեան օրինաց և ի մեզ գոյութեան նորա . ՅՁ-ՅՁԱ ։ 63
Առաջարկութիւն Ա. «Թէ են յաւիտենական օրէնք» . ՅՁԲ ։ 66
ՅՕԴ. Ա. Յաղագս խղճի մտաց . ՅՀԷ ։ —
ՅՕԴ. Բ. Յաղագս ծանօթութեան օրինաց և ի մեզ գոյութեան նորա . ՅՁ ։ —
Առաջարկ. Ա. Թէ «են յաւիտենական օրէնք». ՅՁԲ . ՅՁԳ ։ —
Լուծանին առարկութիւնք . ՅՁԳ ։ 70
Առաջարկ. Բ. Թէ «են բնական օրէնք ի մեզ» . ՅՁԴ . ՅՁԶ ։ 73
Լուծանին առարկութիւնք . ՅՁԷ ։ 78
Առաջարկութիւն Գ. «բնական օրէնք պարտաւորեն զմարդն խղճիւ մտաց» . ՅՁԸ ։ 80
ՅՕԴ. Գ. Յաղագս հաստատութեան բնական օրինաց . ՅՁԹ ։ 82
Լուծանին առարկութիւնք . ՅՂ ։ 85
ՅՕԴ. Դ. Յաղագս յատկութեանց և ազգերն օրինաց . ՅՂԱ ։ 88
Առաջարկութիւն Թէ «օրէնք բնութեան ընդհանուրք են, անփոփոխք են, յաւիտենականք են, հարկաւորք են». ՅՂԲ ։ 89
Լուծանին առարկութիւնք . ՅՂԳ ։ 91
ՅՕԴ. Ե. Յաղագս ընդհանուր սկզբան կամ պատուիրանի օրինացն, առ որ բերին իբրև յաղբիւր և ի կանոն այլ ամենայն սկզբունք և պատուիրանք օրինաց և իրաւանց. ՅՂԴ-ՆԲ ։ 96

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍՆ Բ . ՅԱՂԱԳՍ ԻՐԱՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԳ-ՆԵ ։ 109

ԳԼՈՒԽ. Ա. Յաղագս առանձինն իրաւանց և պաշտամանց մարդոյ . ՆԶ-ՆԺ ։ 112



ՅՕԴ. Ա. Յաղագս կրօնի . ՆԺԱ . ՆԺԲ ։ 118
Առաջարկութիւն Ա. «կրօնք, բնական լոյսն և կարգ բնութեան պահանջեն, զի զներքին պաշտօն մատուսցուք Աստուծոյ՝ նկատմամբ հոգւոյն յարաբերութեանց ընդ Աստուծոյ». ՆԺԳ ։ 120
Առաջարկութիւն Բ. «կրօնք, բնական լոյսն՝ և կարգ բնութեան պահանջեն, զի մատուսցուք Աստուծոյ զարտաքին պաշտամունս կրօնի նկատմամբ մարմնոյս յարաբերութեանց ընդ Աստուծոյ». ՆԺԴ ։ 123
Լուծանին առարկութիւնք ընդդէմ առաջին առաջարկութեան . ՆԺԵ ։ 125
Լուծանին առարկութիւնք ընդդէմ երկրորդ առաջարկութեան . ՆԺԶ ։ 127
Առաջարկութիւն Գ. «բնական միտք մարդոյ ո՛չ կարեն ինքնին ըստ արժանւոյն հաստատել զպարտուպատշաճ պաշտօն, առանց մասնաւոր իմն Աստուածային օժանդակութեան» . ՆԺԷ-ՆԻ . 129
ՅՕԴ. Բ. Յաղագս պարտուցն և պաշտամանց մարդոյ առ անձն իւր . ՆԻԱ ։ 136
Առաջարկութիւն. Ա. «պարտ է պահել և կատարելագործել զանձն՝ ըստ մասին բարութեան հոգւոյս». ՆԻԲ ։ 138
Առաջարկութիւն Բ. «պարտ է պահել և կատարելագործել զանձն՝ ըստ մասին բարութեան մարմնոյս». ՆԻԳ-ՆԻԵ ։ 141
Լուծանին առարկութիւնք . ՆԻԶ ։ 146
Առաջարկութիւն Գ. «պարտ է պաշտպանել զանձն յանիրաւ յարձակմանց մարդկան» . ՆԻԷ-ՆԻԹ ։ 148
ՅՕԴ. Գ. Յաղագս պարտուց և պաշտամանցն, որովք կապիմք ընդ մարդիկ բնութեամբ, կատարելութեամբ և վախճանաւն մեզ նմանողս ի բարիս բաղդին . ՆԼ ։ 151
Առաջարկութիւն Ա. «պարտ է մեզ կատարել զպաշտամունս բացարձակս առ մարդիկ բնութեամբ, կատարելութեամբ և վախճանաւ մեզ նմանողս» . ՆԼԱ-ՆԼԴ ։ 152
Առաջարկութիւն Բ. «պարտ է մեզ կատարել զպարտս և զպաշտամունս՝ որոց բնութեամբ, կատարելութեամբ, և վախճանաւ մեզ նմանողքն են ի կարգի իսկ բարեացն բաղդի» . ՆԼԵ-ՆԼԶ ։ 157
ԳԼՈՒԽ. Բ. Յաղագս ընկերական իրաւանց և պաշտամանց . ՆԼԷ-ՆԼԹ ։ 160
ՅՕԴ. Ա. Յաղագս ընտանեկան ընկերութեան. ՆԽ ։ 165
Առաջարկութիւն Ա. «Յաղագս ամուսնական ընկերութեան

իրաւանց և պաշտամանց ընկերակցաց» . ՃԽԱ-ՃԽԶ ։ —
Առաջարկութիւն Բ . «պարտ է հարց առ որդիս , և սոցա նոյին իրաւանց և պարտուց պահպանութիւն» . ՃԽԷ ։ 168
Առաջարկութիւն Գ . «պարտ է տեարց առ պաշտօնեայս կամ ծառայս , և սոցին առ նոսա իրաւանց և պարտուց և պաշտամանց պահպանութիւն» . ՃԽԸ . ՃԽԹ ։ 170
ՅՕԴ. Բ. Յաղագս քաղաքական ընկերութեան . ՃԾ ։ 173
Առաջարկութիւն Ա. «մարդս բնականապէս ընկերական է կամ բերի յընկերութիւն» . ՃԾԱ . ՃԾԲ ։ 174
Առաջարկութիւն Բ . «քաղաքական ընկերութեան վախճանն է արտաքին բարեկարգութիւն վասն հասարակաց բարութեան՝ հիմնեալ ի բարոյական բարեկարգութեան .» ՃԾԳ-ՃԾԴ ։ 177
ՅՕԴ. Գ. Յաղագս տարերաց , որք կազմեն զքաղաքական ընկերութիւն , կամ անդամոց մարմնոյ ընդհանուր անձնաւորութեան հասարակութեան . ՃԾԵ . ՃԾԶ ։ 180
ՅՕԴ. Դ. Յաղագս քաղաքական գերագոյն իշխանութեան. ՃԾԷ ։ 183
Առաջարկութիւն Ա . «քաղաքական ~~ընկերութիւն~~ իշխանութիւնն անմիջապէս յԱստուծոյ անտի է» . ՃԾԸ ։ 184
Առաջարկութիւն Բ . «ենթակայ քաղաքական գերագոյն իշխանութեանն ո՛չ է ժողովուրդն» . ՃԾԹ ։ 186
Առաջարկութիւն Գ . «պատճառն՝ որ որոշէ և կացուցանէ զենթակայն գերագոյն իշխանութեան բնականապէս՝ է գերագոյն իրաւունք , և պատահմամբ՝ ազատ [illegible]ութիւն ժողովրդեան» . ՃԿ-ՃԿԴ ։ 187
Առաջարկութիւն Գ . «ո՛չ միապետութիւնն և եթ , այլ բազումք են ձևք կամ եղանակք գերագոյն իշխանութեան» . ՃԿԴ ։ 192
ՅՕԴ. Ե. Յաղագս կերպարանութեան քաղաքային գերագոյն իշխանութեանն. ՃԿԵ-ՃՀ ։ 193
ՅՕԴ. Զ. Յաղագս պաշտամանց հպատակացն և իշխանաց առ միմեանս . ՃՀԱ-ՃՀԶ ։ 203
ԴԼՈՒԽ. Գ. Յաղագաս ազգաց իրաւանց և պաշտամանց . ՃՀԷ-ՃՀԸ ։ 209
ՅՕԴ. Ա. Յաղագս ազգի ազգի յարաբերութեանց , պաշտամանց և իրաւանց ազգաց ի մէջ իւրեանց ի վիճակին բնական կամ խաղաղութեան . ՃՀԹ-ՃՁԹ ։ 210
ՅՕԴ. Բ. Յաղագս ազգի ազգի յարաբերութեանց , պաշտամանց և իրաւանց ազգաց ի մէջ իւրեանց ի վիճակին պատերազմի . ՃՂ-Ճ ։ 213

# ՅԱՆԿ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ

Առ ի դիւրաւ գտանել յընթացս գործոյս զնիւթս , և զզատական ոճս և զզանազանութիւնս նմանս , զորոց ո՛չ միանգամ յօղուածովք այլ ի պահանջել հարկին միայն խօսեցեալ եմք ։


Ա.

Ազատութեամբ Աստուած սիրէ զարարածս որպէս և հարկաւորութեամբ , ճհգ—ճզր .
Ազատութեան զանազան տեսակք , մհթ .
Աթոռ հոգւոյն , մձէ .
Աղբիւր ճշմարտութեան , ծթ—կ .
Աղքատութեան և փարթամութեան պատճառ , նխթ—նյբ .
Ամբարիշտն և հայհոյիչ յի՞նչ տարբերին , նժզ .
Ամուսնութիւն անլուծանելի , նխա—նխզ .
Անգիտութիւն , ծ .
Անդրադարձ հաւաքարանութիւն , խա .
Անձն , ճժգ—յզ .
Անձնասպանութիւն , նծե .
Անձնաւորութիւն , նխե .
Անձնաւորութիւն բարոյական , յզ .
Անձնաւորութեանց կամ անձանց են գործողութիւնք , —
Անուն , համբաւ , յխե .
Առաջարկութիւն , իէ .
Առաջաւորութիւն սկզբան՝ ժամանակի են զի՞նչ , ճլա .
Առարկայ , ժա—ժբ—ժգ .
Աստուած հարկաւորութեամբ թէ ազատութեամբ սիրէ զառարկայս , ճրգ—ճրզ—յիթ .
Արդիւնք ըստ արժանւոյն և ըստ յարմարութեան , յհբ .
Աւանդութիւն , ձա .

Բ.

Բազմակնութիւն արգիլեալ ի բնական օրինաց, նխզ-նխե-նխզ-ևն .
Բազմայրութիւն կամ միոյ կնոջ լինել բազում արանց , նխբ—ևն .
Բազմաստուածութեան պատճառ , հգ .
Բաժանմունք Աստուածային կատարելութեանց իւրն յԱստուած և զի՞արդ , ճզթ .
Բաժանումն , իզ .
Բան՝ աղբիւր ճշմարտութեան , կը .
Բանաւորութիւն , —
Բանաւորութիւն մտաց , մկ .
Բան բանաւորեալ և բանաւորիչ , ճժը .





Բան տարանեալ և տրամաբանող , ճժը .
Բախդ , ղբ .
Բառ , ծթ .
Բարեխառնութիւն նիգ .
Բարեհաճութեան կամք յԱստուած , ճղբ .
Բարիք ստորին մասին մարդոյ և բարիք վերին և ազնուագոյնք , նիգ .
Բարոյական չարութիւն , մգ .
Բարոյական Փիլիսոփայութիւն, գ .
Բարութիւն , միութիւն , ճշմարտութիւն էակաց , զե .
Բացայայտութիւն ( տե՛ս ստուգութիւն ) , ծգ—ծե .
Բացասական ոչինչ (տե՛ս դրական ոչինչ) , ղգ .
Բնազանցական էութիւն Աստուծոյ , ճծթ .
Բնական զգայութիւն՝ իբրև աղբիւր ճշմարտութեան, հբ .
Բնութիւն , և զանազան իմաստք իւր , ճծ .

Գ.

Գաղափարագիտութիւն զի՞նչ է , յծա .
Գաղափարք և տեսակք նոցին , ժ .
Գերազանցական փառք ([illegible]) , ժէ—ժը—ծ .
Գերազանցօրէն զի՞արդ գտանին ի մեզ կատարելութիւնք , ճկգ .
Գերութեան վիճակ արգելեալ ի բնական օրինաց , նլգ—նլդ .
Գիտութիւն և իմաստութիւն , կթ-ևն-մկ-մկա .
Գոյացականապէս հոգին ներկայ է ամենայն մասանց մարմնոյն , մձթ—ևն .
Գոյացութիւն զի՞նչ է , ճը .
Գոյացութիւն էական և պատահական , ճը .
Գոյացութիւն և միութիւն հոգւոց և մարմնոց ո՛չ է պատահական , մխէ .
Գոյացութիւն զի՞նչ է , ճժա .
Գոյն , ճը .
Գոյութիւն զի՞նչ է , ճէ .
Գոյութիւն Աստուծոյ , ճէ .
Գործիական միաբանութիւն և բնական կամ բարոյական միաբանութիւն կամ միութիւն , նծզ .
Գործողութեանց մարդկայնոց սկզբունք , յծա .
Գործողութիւնք մարդկային զի՞նչ են , յծա .
Գործողութիւնք մարդոյ , յծա .
Գործողութիւնք անձնաւորութեանց կամ անձանց են , յզ .

Գործք հրամայեալք մարդոյ զի՞նչ են , մհթ (առ) ր .

Դ.

Դաշնադրութիւնք յիրաւանց ծագին , նլե—նլզ .
Դատարկ , ճիգ—ճիե .
Դատողութիւն , դատումն , և դատաստան , իէ—իը-են .
Դատողութիւն տեսական և դատողութիւն գործնական
հարկաւոր կամացն որոշման , մհթ .
Դրական օրէնք , նկե .
Դրական ոչինչ (տե՛ս բացասական ոչինչ) , ղգ .

Ե.

Եզրակացութիւն ( տե՛ս հետեւութիւն են ) , լգ .
Եղանակ իրաց , ճը .
Եղելութիւն , ճը .
Ենթադրութիւն , ճժա .
Ենթակայ , իթ—ճժա .

Զ.

Զանազանութիւն իրական չիք յԱստուած և ի
կատարելութիւնս իւր և յստորոգելիսն , ճկթ .
Զանազանութիւն կատարելութեանց և վիճակաց
և բարութեանց միայն քան զմիւսն , նլը—նխթ .
Զգայական բարիք , նիգ .
Զգայարանք ո՛րպէս միջոց են մեզ ճշմարտութեան , հզ .
Զգայութիւն արտաքին աղբիւր ճշմարտութեան , հե .
Զգայութիւն բնական իւր աղբիւր ճշմարտութեան՝ , հը .
Զգայութիւն ներգործական և կրաւորական զի՞արդ
լինի անդ ցաւք . և վիշտ , հաճոյք մարմնոյ և
տանջանք , յգ .
Զգացմունք են զգայութիւն ներքին , ծթ—են .
Զօրութեան առաքինութիւն , նիգ .
Զօրութեամբ կամ ունակութեամբ ունել զիմն , մծգ .

Է.

Էական յատկութիւն իրաց , ճգ .
Էականն յատկութիւնք , զե .
Էութիւն մեթաֆիզիքական իրաց զի՞նչ է , ճե .



Էութիւն իրաց են անփոփոխք , անբաժա-
նելիք և յաւիտենականք , ճե .
Էութիւն իրաց , ճզ .
Էութիւն պատահական և երկրորդական , հը .
Էութիւն տրամաբանութեան , լե .

Ը.

Ընդդիմութիւն առաջարկութեանց , լգ—լդ .
Ընդհանուր , և առանձինն են , ժե .

Ժ.

Ժամանակն զի՞նչ ներկայ , ապառնի , և անցեալն , ճհզ .
Ժառանգութիւն բնական , նլե .

Ի.

Իմաստասիրութիւն ( տե՛ս փիլիսոփայութիւն ) , ա—բ .
Իմաստութիւն և գիտութիւն զի՞նչ են , կթ .
Իմաստութիւն , մկ—մկա .
Իմացական կարողութիւն զի՞նչ է , մկա .
Ինքնակացութիւն , ճժա .
Իշխել և տիրել յի՞նչ տարբերին , նծե .
Իրաւանց սխալանք և տեսական , յհը .

Լ.

Լեզուք մարդկան , խա—խբ .
Լոքին մոլորութիւն զէական յատկութեանց իւրին , ճղ .

Խ.

Խիղճ մտաց նախընթաց , հետադայ , մոլար , ուղիղ են , յհը .
Խոհեմութիւն , նիգ .
Խորհուրդք բնականք փիլիսոփայութեան , յձգ—յա.

Ծ.

Ծնողաց պարտք առ որդիս , նխէ .

Կ.

Կանոն ճշմարտութեան զի՞նչ է , ձգ .

Կանոնք զգայարանաց և Թէութիւնք , հէ .
Կանոնք հաւաքարանութեան , ճը—են .
Կատարելութեանցն գաղտական զանազանութիւնք , ճկզ .
Կատարելութիւնք գոանին յարարածս , ե .
Կարգ ի գաղտական ուսմունս հետևեալ , խզ—խէ .
Կարծիք , ծզ—ծե—են .
Կացուցիչ Աստուածային բնութեան զի՞նչ է , ճծէ—ճծը—են .
Կերպարանք իրաց , ճը .
Կերպաւորապէս կամ ըստ ձևոյն ո՛րպէս է , ճկզ .
Կերպ կամ ձև , մձա .
Կրօնք զի՞նչ է , նժա .
Կրօնք տեսական և պաշտօն զի՞նչ է , նժբ .

## Հ.

Հակասութեան սկիզբն , ձէ .
Համարձարանութիւն և տեսակք իւր , խբ .
Հայեցողական գիտութիւն , ճծա—մկ .
Հայեցողապէս տեսանել զԱստուած , յխը .
Հայհոյիչն և ամբարիշտ յի՞նչ տարբերին , նժզ .
Հարկաւորութեամբ առ ի՞նչ բերէ Աստուած , ճըզ—ճըզ .
Հարկաւորութեան իւրոյ , հետազայ , Թէականապէս
զի՞նչ է , ճիզ—ճիէ .
Հարկաւորութիւն իւրոյ և ի յառաջնմէ զի՞նչ է , ճիէ .
Հարկաւոր էակ և պատահական զի՞նչ է , զ .
Հաւանականութիւն , ծե—ծզ-են .
Հաւաքարանութիւն , լէ-են .
Հաւաքարանութեան կանոնք , ըը—խա .
Հաւատարութիւն , ճժէ .
Հաւատք և տեսակք նորա , հթ .
Հեղինակութիւն մարդկային , հթ-են .
Հետևութիւն , հետևեալն կամ եզրակացութիւն , լզ .
Հոգեփոխութիւն և գհոգւոյ զանազան մոլար կարծիք , մխե—մխզ-են .
Հրամայեալ գործք զի՞նչ իցեն , մհթ (առ) բ .

## Ձ.

Ձեռնարկութիւն , լզ .
Ձև տրամաբանութեան , լե .
Ձև մարդոյ և կերպ , մձա .
Ձեք Բանթեանք , ճթ .



## Ճ.

Ճշմարիտ ( տե՛ս գերազանցական փառք ) ժէ—ժը—ծ—ծա-են .
Ճակատագիր , զբ .
Ճշմարտութեան աղբիւր , ծթ—կ—կա .
Ճշմարտութիւն , ծ—ծա-են .
Ճշմարտութիւն մի է , Աստուած մի է , վասն որոյ
և պաշտօն մի և հաւատք մի , նժ-են .

## Մ.

Մակածութիւն , խզ .
Մասն ստորին մարդոյ ո՞յք են , յ .
Մասունք մարմնոյ բաղադրիչք պարզ ե՞ն Թէ բաղադրեալ , ճիզ .
Մարդոյ գործք և մարդկային գործողութիւն զի՞նչ են , յծա .
Մարդկային գործողութեանց սկզբունք , յծա .
Մեծագոյն առաջարկութիւն , լզ .
Միամարտութեան Թէութիւնք , նիը—նիթ .
Մէթաֆիզիքական կարգ , իզ .
Մէթաֆիզիքական չարութիւն , ձբ .
Մէթաֆիզիքական էութիւն իրաց զի՞նչ է , ճե .
Մէթաֆիզիքական էութիւն Աստուծոյ , ճծթ .
Մէթաֆիզիքական չարութիւն զի՞նչ է , ձբ—մզ (առ) ե .
Միջնորդ , լզ .
Միջոց , ճիզ—յլզ-են .
Միտք՝ իմացական կարողութիւն , կզ .
Միտք՝ բարձրագոյն մասն մարդոյ , յ .
Մոլար շրջան , խա .
Մոլար կամ սխալական խիղճ մտաց , յհը .
Մտածութիւն , մտարերութիւն , մկզ—մկե .

## Յ.

Յատկութիւնք իրաց , որք կացուցանեն զիրն , ճզ .
Յարաբերութիւն և յատկութիւնք նորա , ճժե .
Յարատևութիւն իրաց , ճհզ .
Յաւաձգական զօրութիւն , մլզ .
Յարմարութիւն և յարաբերութիւն զի՞նչ է , ճծզ .
Յաւիտենականութիւն իրաց և տեսակք նորա , ճհե .
Յիշողութիւն , մկզ—մկե .

## Ն.

Նախադաս, լէ.
Նախնեաց, լգ.
Ներկայութիւն Աստուծոյ յամենուրեք զիա՞րդ լինի, ճկը—ճկթ—ճհ.
Ներկայութիւն հոգւոյ սահմանաւոր և որոշակի է, մծթ.
Նշան ձայնից և գաղափարաց, ժթ.
Նոյնութեան սկիզբն և էութիւն զի՞նչ է, ձը.
Նուէր, յհը.

## Շ.

Շնորհք, յհը.

## Ո.

Ոչ ինչ գրական և ոչ ինչ բացասական, ղդղ—լմը—յիգ.
Ոչինչ իւր, և ոչինչ ենթակային զի՞նչ է, մղ—մէ.
Որդւոյ պարտք և իրաւունք առ ծնողս կամ հարս իւրեանց, խէ.
Ունակութիւն կամ զօրութիւն զի՞նչ է, մծգ.

## Չ.

Չարութիւն մետաֆիզիքական զի՞նչ է, ձր—մզ (առ) և.

## Պ.

Պայծառութիւն իրին՝ կանոն ճշմարտութեան է, ձգ.
Պաշտօն զի՞նչ է՝ և յի՞նչ տարբերի ի կրօնից, նժա—նժբ.
Պատահական գոյացութիւն, ճը.
Պատահական էակ զի՞նչ է, ղ.
Պատիւ, համբաւ, յխե.
Պատճառաց սկիզբն, ձթ—են.
Պատճառ և սկիզբն, ճլա—ճլբ.
Պատճառացն տեսակք, ճլգ—ճլե—ճլզ.
Պատճառք երկրորդականք բարոյապէս գործեն, ո՛չ մեքենայաբար, նախ իրի և նոյին գործոյն արդիւնք սեփականին, ճլը.
Պատճառ է և փախճանն, ճխ.
Պատճառ բարոյական և պատճառ մեքենական, ճլը—են.
Պատմութիւնն զի՞նչ է, ձա.
Պարապն և դատարկն զի՞նչ, ճխգ—ճխե.



Պարգև և Նախապարգև, յհբ.
Պատուէր զի՞նչ է և օրէնք զի՞նչ, յձ.
Պարտք և իրաւունք զի՞նչ են, նգ—նդ—նե-են.
Պղատոնի սահման ժամանակի, ճհէ.

## Ս.

Սահման և բաժանումն, իգ-են.
Սէր, ժզ.
Սէր հայրենեաց, նհգ.
Սէր փափագման և սէր բարեկամութեան յի՞նչ տարբերին, նժգ.
Սխալել, վրիպել, իէ—յհը.
Սխալանք իրաւանց և վրիպանք, յհը.
Սկզբունք երրակի հաւաքաբանութեան, խգ.
Սկզբունք գործողութեանց մարդոյ, յծա.
Սկիզբն, ճլա—ճլբ.
Սկիզբն հակասութեան զի՞նչ է, ձէ.
Սկիզբն նոյնութեան կամ էութեան, ձը.
Սկիզբն պատճառաց, ձթ—են.
Սկիզբն բարոյականութեան, յկե.
Ստորին մասին մարդոյ բարիք, նիգ.
Ստորոգելիք բացարձակապէս, ճծը.
Ստորոգելիք ներքին, և արտաքին ստորոգելիք Աստուծոյ, ճծը—են.
Ստութիւն, ծր—են.
Ստորոգելիք (տե՛ս վերագիր), իթ.
Ստուգութիւն, ծե—են.

## Վ.

Վախճան, ճլգ-ճլդ-ճլե-ճլզ-յլա.
Վախճանն է պատճառ ներգործական, ճխ—ճխա—ճխբ.
Վախճանն գործոյ և վախճանն գործողին զի՞նչ են, յլա.
Վախճանն Աստուծոյ յստեղծանել զաշխարհ, յլբ.
Վերագիր կամ ստորոգելի, իթ.
Վերացեալ գաղափարք որք ո՛չ սահմանին, ժէ.
Վերին մասին մարդոյ բարիք, նիգ.
Վիշտք մարմնոյ զի՞նչ իցեն, յգ.
Վիպասանութիւն, ձա.
Վկայութիւն մարդկային, հթ—են.
Վկայք և տեսակ վկայից, հթ.

## Տ.


Տանջանք յանցաւորաց յաւիտենական զի՞արդ են , մխա—մխբ .
Տարակոյս , ծգ—ծե .
Տարածումն , խա .
Տարբերութիւն կատարելութեանց և բարու-
թեանց միայն քան զմիւսն , նլբ .
Տգիտութիւն , ծգ—ծե-են .
Տեսակ , ժե—ժգ .
Տեսակք պատճառաց , ճլա—ճլբ—ճլգ—ճլդ-են .
Տնկական կեանք , մլգ. յ .
Տրամաբանական ճշմարտութիւն , ծգ .
Տրամաբանութիւն, գ—գ—լե-են .
Տրամաբանութիւն բնական և արհեստական ,


## Ց.


Ցաւ մարմնոյ զի՞նչ իցէ , յգ .


## Փ.


Փիլիսոփայութիւն (իմաստասիրութիւն) , ա .
Փոքր փոքրագոյն , լէ .


## Օ.


Օրէնք զի՞նչ՝ և յի՞նչ տարբերի ի պատուիրանէն , յձ .
Օրէնք յաւիտենական և օրէնք բնական յի՞նչ տարբերին . յձե .


## Ֆ.


Ֆիզիքական չարութիւն զի՞նչ , մգ—մխ .
-մէթաֆիզիքականն զի՞նչ , ծբ—մգ .


---

| Եջ. | Տող | ՎՐԻՊԱԿ | ՈՒՂՂԻՂ |
|---|---|---|---|
| 5 | 22 | երկրորդ | Երրորդ |
| 9 | 10 | «երանութեան» | «երջանկութեան» |
| 15 | 26 | լինել | լինէր |
| 52 | 5 | «երկրորդականք» | «երկրորդական» |
| 57 | 28 | առաքինին | առաքինութիւնն |
| 55 | 12 | այդ անգամ | այդ անգամ |
| 72 | 9 | «պարտաւորական» | «պատասխանական» |
| 90 | 26 | յայտ եթէ | յայտ է թէ |
| 98 | 4 | գործողութիւնն | գողութիւնն |
| 102 | 12 | զբացական | զբացատական |
| 104 | 1 | «յԱստուածուստ» | «յԱստուածուստ» |
| 105 | 21 | պատճառեն | պատճառէն |
| 106 | 30 | պահանջեն | պահանջէն |
| 111 | 4 | ենթադրին | ենթադրեն |
| 114 | 12 | ունի | ունին |
| — | 7 | (Նա) | (ՆԱ) |
| 115 | 24 | կամ, «բնածինք» | կամ «բնածինք» , |
| 116 | 31 | լուծանել . զընդդէմ | լուծանել զընդդէմ |
| 118 | 20 | յակումն | հակումն |
| 121 | 24 | գիցէ | գիտիցէ |
| 124 | 21 | զգածմունս | զգացմունս |
| — | 24 | պաշտօնն Աստուծոյ | պաշտօնն՝ որ Աստուծոյ |
| 125 | 21 | ի պաշտելս | ի չպաշտելս |
| — | 29 | բատ չար | բատ կար |
| 126 | 10 | վարիլ | վաոիլ |
| — | 34 | արատցին | արատցեն |
| 127 | 5 | հպատակ է | հպատակէ |
| — | 13 | ադորիկ | այդորիկ |
| 128 | 19 | հրամայել | հրամայէ |
| 129 | 30 | կարեն | կարեն |
| 132 | 5 | յայտնութեան | յայտնութիւն |
| 134 | 22 | փառափանիցի | փառաբանիցի |
| — | 24 | մի միանց | միմեանց |
| 135 | 11 | առաջարկել | առարկել |
| 139 | 22 | ներէն | ներեն |
| 147 | 10 | այդ | արդ |
| 148 | 9 | «արձակմանց» | «յարձակմանց» |
| 151 | 2 | գորովելի | գորովելի |
| — | 18 | ԿԱԳԵՄԲ | ԿԱԳԻՄԲ |

| | | | |
|---|---|---|---|
| 155 | 51 | աշխարհի | յաշխարհի |
| 154 | 14 | անսայթագ | անսայթաք |
| 155 | 53 | Նախատմեք | Նախատեմք |
| 161 | 16 | Աստէն | աստի |
| 166 | 53 | Բելլարմինուս | Բելլարմինոս |
| 167 | 26 | Անդ | Արդ |
| 170 | 12 | ծառայեն | ծառային |
| 172 | 7 | աջալրջութիւն | աչալրջութիւն |
| — | 8 | փարութեամբ | բարութեամբ |
| 174 | 8 | Րօսսօ | Րուսսօ |
| 176 | 25 | ԽՄԲ | ՆՄԲ |
| 177 | 50 | ի բարութեան | ի բարութենէ |
| 190 | 10 | առի | առ ի |
| 201 | 9 | պարտաւոր է | պարտաւորէ |
| 205 | 5 | ՄԻՄԵԱՆՑ | ԱՌ ՄԻՄԵԱՆՍ |
| 210 | 8 | ազդ | ազդք |
| — | 6 | յառաջդիմութեան | յառաջադիմութեան |
| 214 | 21 | միմեանձ | միմեանց |
| 221 | 5 | Հինգերրորդ | Հինգերորդ |
| — | 21 | վերքն | վէրքն |
| 258 | 12 | ՂԴՂ—ւՄԷ—յԻԴ | ՂԴ—ՂԼ—ՄԷ—ՅԻԴ |

## ՑՈՒՑԱԿ ԱՆՈՒԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԱՑ

### ՈՐՔ ՅԻՇԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՍ

Բուֆֆէնտորֆ—յաղագս բնական և ազգաց իրաւանց։
Թափարէլլի (Հ.)—Ճաշակ Աստուածաբա. յաղագս բնակ. իրաւ.։
Թովմաս Ագուինա. (Ս.) բովանդ. Աստուածաբա։
« Վիճաբ. Ն. զճշմարտութենէ։
Կիկերոն — Յաղագս վախճանաց։
« — Բ. Փիլիպպեան։
« — Խօսք վասն Միլոնի։
« — Տուսկուլեան։
« — Յաղագս բարեկամութեան։
Բելլարմինոս — Յաղագս ամուսնութեան։
Սուարէզ — Յաղագս օրինաց։
« — Գիրք. ժա. Յաղագս Յաւիտենա. և բնակ. օրին.։
Քոօզ — Յաւելուած յաղագս բնական իրաց։
Օգոստինոս (Ս) Գիրք. իբ. ընդդէմ Փաւստոսի։
« — Գիրք խոստովանութեան։
« — Յաղագս Քաղաքին Այ։

ՎԱԽՃԱՆ
Բ. ՀԱՏՈՐՈՑ
ՏԱՐԵՐԱՑ ԲԱՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ
ԵՒ
ԲՈՎԱՆԴԱԿ ԳՈՐԾՈՅՍ

1485
1486

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0151454

ՀՀ Ազգային գրադարան
NL0151453